



Հայրերն անձնաւորոյ խորհրդանիշը
վերն է՝ Արարիւս:

Անոր հաւար անհասակուած բերուորնե-
րուն անն. ո ոյիին յուշածանկերդ՝ ձաիին,
ու աչիւ անհասակներուն վրեժը յոժած
վիշապախոյ դիցազունները:


Տեւիւ անխորհակ կամբը: Տանքեական մե-
ծալործութիւններու շաղախը: Հովերական
դիցազներգութիւններու սարերը: Մե՛կ:

Մեր ժողովուրդին յանրժողութիւնը ուղեկոյ
Արարաթին հաւար,

Նոյն հակապորձին տանքեական դժոխներ
ապրած բերուորներուն ի յուշ,

եւ մեռնողներուն ու սպրոկներուն դժոխք
արուքեակ խոյանկներով չեզոխացուցած հո-
ւերական խշերուն սո ի երախտագիտու-
թիւն,

Մեր աշխատակիցներուն, ընկերցողներուն
ու բարեկամներուն անունով սպրիլեակ
այս հաւարը ամբողջութեամբ կը կոտի-
րենք Ասորիեակ եղեռնի վերստորոգ խոր-
հարդին:



Բագրու

ընձիւղ ազգը, որում սրտին կորուստներուն կսկիծը չէ բուժուած անշուշտ, բայց նաեւ կեանքը իր կամքին ենթարկած ըլլալու հըպարտութեան մը տէր է նորէն. Հայաստանը քարտէսէն ու հայը աշխարհէն անհետացնելու յաղթական կայսրութեան մը պետական ծրագիրը վրիպանքի մատնած ըլլալու իր հարուածներով ու հրաշալի յարութեամբ:

«Հայաստան չկայ, որովհետեւ հայ չկայ», յայտարարեց՝ երեսուն տարիներու ընթացքին Կարմիր Սուլթանի ընել չկրցածը երեք տարիէն ըրած ըլլալու յոյսորտամբով սոնֆացոզ մարդակեր գազաններէն ծայրագոյն գազանը, Թալաթ, բայց իր սարքած կոտորածներէն գինով թուրֆօզլին դեռ շան սատակ չեղած ապրեցաւ իր շնական յայտարարութեան դառն հերքումը, նախ՝ Հայաստանի կապակցութեամբ, իր բանակներուն ջախջախումով, եւ ապա՝ մէկ հատիկ հայ չձգելու պետական իր ծրագիրը աւարտած կարծելէ ետք, յարուցեալ մէկ հատիկներուն ի լուր, մէկ հատիկներու բովանդակ վրէժը անձնաւորած մէկ հատիկին ի տես, վիշապաբադի անոր աչքերուն մէջ իր սատակին ուրուականը կրօնահած վերջին ակնթարթին...

Իրաւունքի ու ազատութեան մեր ժամանակներու յայտնի դրօշակիրներէն Քատերագիր Էօժէն Իոնեսքօ քանի մը տարի անսօջ «Յիկարօ» թերթին մէջ հրատարակած «Մարդոց ամօթը» խորագրեալ իր գրութեամբ կը ձազկէր թիրտերուն ամօթալի արարքները, յիշեցնելով ամէնուն սա ախտանանաչումը.

«Յաղթականը, — *կ'ըսէր վերջերս փիլիսոփայ մը,* — պարտեալին կը պարտադրէ իր «նշմարտութիւնը», իր «արդարութիւնը» եւ իր «կեանքի փիլիսոփայութիւնը» եւ երբ պարտեալը ընդունի յաղթականին փիլիսոփայութիւնը, այն ատեն իրապէս կը պարտուի ան»:

Պատմութեան ծանօթ են փիլիսոփային բնութագրած յաղթականին ու պարտեալին փոխյարաբերութիւններուն թէ՛ դառն հետեւանքները եւ թէ՛ փայլուն արդիւնքները: Յաղթականները երբեմն իրենց մէջ լուծած-վերջացուցած են սեփական փիլիսոփայութենէ գուրկ պարտեալները, բայց փիլիսոփային ընդգծած արժանիքին տէր պարտեալները յանախ - ջիմադրած են պարտադիր փորձութիւններուն եւ ի վերջոյ յաջողած են շարունակել կեանքի իրենց փիլիսոփայութիւնը:

Մենք՝ հայերս, այս վերջիններէն ենք: Ու մէկը՝ հաստատումը հիմնաւորող բազմաթիւ օրինակներէն: — Սասանեան պարսիկները մեր արիւնով ներկեցին Շաւարշանայ դաշտը, բայց չկրցան պարտադրել մեզի իրենց փիլիսոփայութիւնը, որովհետեւ արինաթաթախ Վարդանանքի գինակից Վահանեան կտրինները չընդունեցին իրենց պարտութիւնը եւ երեսնամեայ պայքարի մը իբրեւ արդիւնք արտօնուեցան շարունակել իրենց սեփական լինելութիւնը:

Փիլիսոփային հասկացողութեամբ արդարութեան զգայարանք մը չունէր թուրքը ու չունէր պարտադրելիք սեփական փառախորհրտութիւն մը. ան աշխարհին կը նայէր միայն մէկ փիլի-

սովալուքեամբ, անրի ու արիւնի տեսիլներով, իր «հարագատ» բանաստեղծներէն մէկուն տարագած հետեւեալ ախտագին պապակներով.

*Արդարութիւնը պիտի կապեմ սուրիս ծայրը,
Քաղաքակրթութիւնը՝ ձիուս պայտերուն,
Պիտի կործանեմ ամէն բան,
Քար քարի վրայ պիտի չեփողում:*

Ուրիշ ժողովուրդներու մէջ, երբ վայրագ քնագդներ հանդիսադրող դէմքեր տիրանան իշխանութեան, հանդէս կու գան Թահին իշխանները եւ կը հնչեցնեն խղմտամբին, արդարութեան, մարդկայնութեան զօղանջները, միևչդեռ թուրքերու պարագային, չհաշուած իշխանատենչութեամբ մրրկող իշխանագուրկներուն պարագայական ընդվզումները, ամէն ոք, անձնակ բանաստեղծները կը միանան հուրի եւ սուրի վարդապետութիւններ կիրարկող արարածներուն, ոնիր ու անր ու անար կ'որոնան շարունակ ու կը տնջան այնպիսի աներակներ տեսնել, որ, ինչպէս Քրօթըն կը յոխորտայ իբրեւ բանաստեղծութիւն վերի տողերը դուրս տուած արնածարաւ արարածը՝

«Ձանոնք տեսողները բան.— Հոսկէ թուրքեր են սնցեր»:

Միջերկրականի փոխումները պզծած իրենց առաջին օրերէն ի վեր այսպէս վարուեցան թուրքերը ամենայն տեղ, ուր հասաւ իրենց արնածոր եաթաղանը, եւ այլոց ստեղծած մեծ քաղաքակրթութիւնն ու մշակոյթները, անընդունակութեան իրենց բարդոյթը բարեխառնելու փոխարէն՝ թափ տուին կանգուն բան չծգելու իրենց ընդոծին մոլուցքին, որ անելի գարգացաւ «գարգացա՛ծ» ուղեղներու մէջ ու յանգեցաւ ցեղասպանութեան սառնասիրտ ծրագրին:

Այսպէս եղաւ, ու թուրքերը անր սփռելու արիւնաներկ նոյն տեսիլներով անցան նաեւ մեր երկրէն ու հոգեառութեան գործողութիւններով հրճուեցան ու յոխորտացին մեծով ու պրզսիկով, բայց...

Բայց մեռցնելը յաղթանակի նշան չէ տակաւին ու մեռնիլը պարտութիւն չի նշանակեր անպայման, նման արիւնտ փորձառութիւններէ ետք՝ ժամանակը տարբեր իրականութիւններ հաստատած է յանախ, փիլիսոփայի՛ն ըսածը, որ փիլիսոփայական վարկած մը չէ, այլ պատմական փորձառութիւններէ բխած անվերաբանելի նշարտութիւն մը, ուրիշներէ անելի մե՛ր ճշմարտութիւնը, որ վաղնջական անցեալ մը ունի ու այսօր կ'ապրի իր շառայուն լինելութիւնը՝ Արարատեան աշխարհէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր ծագերը...:

Մ. Ի Շ Խ Ա Ն

ԵՐԲ ՊԻՏԻ ԳԱՔ

«Բագին»ի այս թիւին իր մտա-
նակցութիւնը բերելու մեր առա-
ջարկին պատասխանելով՝ Մ. Իշ-
խան մեզի յանձնեց Մեծ Եղիա-
նի դուէրու յիշատակին հուիք-
ւած Հեանեալ քերթուածները,
որոնք նախապէս երևցած են իր
«Տառապանք» անուն Հատո-
րին մէջ:

Ամէն շիրիմ մեռելոցի այս օրով
հունկ աւ ծաղիկ կ'ընդունի,
Ես կ'որոնեմ իմ անխնայներս խոռով,
Թափառայած գերդ ոգի:

Ո՞ր ձուրթն մէջ, ո՞ր փայլին տակ անծանօթ
Ինկան անոնք ցիւ ու ցան:
Գիշեր չը նենգ դահիճի ձեռքն արիւնտ
Զիս տապալեց անկենդան:

Շա՛տ էինք մենք՝ պարսնակապ եւ անգո՛ւ՝
հումրն այլերու մահապարտ.
Ինկան ունեմք իրենց սրտէն վիրաւոր.
Եւ ուրիշներ գլխահատ...

Գիշերն ամբողջ եւ շնչեցի կիսամեռ
Դիակներու տակ ինկած,
Կեռ գաշոյնի եւ տապալի գոյգ նեղքեր՝
Կողիս վրայ լայնարաց:

Կը խլրտէր հողը իմ շուրջ տեսալէս
Մեռելներով դեռ արթուն.
Կը լսէի եւ կը լսեմ միշտ կարծես
Հոգեվարքի հանդիւն...

Մահը փակեց լոյսն աչքերու յախտեան
Եւ ալ երբե՛ք չտեսայ,
Թէ գիս յետոյ քանի՞ քայլուն ու զազան
Յօշոտեցին անխոյն...

Մեր բազմամարդ տան կարուանն ո՞ւր գնաց
Ան կը փալէ՞ դեռ անվերջ...
Լուծն արօրիս մնաց արտին մէջ լճուած
Եւ օճախիս հուրը՝ շէջ...

Ե՞րբ պիտի գաք եւ դառնաք տէր ճահտաակ
Անխնայներու ունիւրիւմ,
Դուք որ կ'ապրիք եւ ժառանգորդն էք միմակ
Իմ լուսեղէն երազիմ...

Յ Ի Շ Ե Տ Է Ի Ք Զ Ի Ս

Պիտի բախեմ, պիտի բախեմ այս գիշեր
 Երազներու դուռը փակ,
 Որ պահ մը գէթ ձեր ինչներուն հեշտասէր
 Խորունկ ինձնէն արթննամ:

Զէ՛ք ճանչնար զիս, ես այն մանչուկն եմ սիրուն,
 Որ յոգնասպառ, կիսամերկ,
 Անպատահ մէջ Տէր-Ջորի մտաւ շուն
 Եւ չարքեցաւ ալ երբեք:

Մի՛ սարսափի՛ք կմախակերպ իմ տեսէս,
 Հող չեմ մտած ես բնու,
 Կը շրջէի դիակներու մէջ ա՛յնպէս
 Միշտ անօրի ու ծարաւ...:

Սովի բու՛ւէն փոքս դարձած էր արդէն
 Ուտած թմբուկ ու կաշի,
 Եւ սրունքներս ալ մերկացած մտանէ՛մ՝
 Մէյ-մէկ ցպիկ նուագի...:

Օրեր անվերջ, կարօտ պատտա մը հասցի,
 Տեսայ արիւն, տեսայ մահ,
 Բոսստ այծի պէս միայն խօտ ծամեցի,
 Խոտն ալ յետոյ չգտայ:

Մեծը՝ ոչինչ, կը բու՛ւռի վերքը սուրին,
 Ոչինչ է վախն իսկ մահուան.
 Սարսափելին՝ երբ սովասանջ կը մարին
 Փոքրիկ տղաւ ինձ նման...:

Ո՛չ գարդ կ'ուզեմ եւ ոչ տաճուկ բրդեղէն,
 Կմախքներ միշտ մերկ կ'ըլլան.
 Բայց երբ առնէ՛ք տա՛ք հացիկներ դու՛ք փառէ՛ն
 Յիշեցէ՛ք զիս անպայման...:

Պիտի բախեմ, պիտի բախեմ շարունակ
 Մարդոց դռները բոլոր,
 Որ առնենայ ամէն մանչուկ, ազգնակ
 Կտոր մը հաց ամէն օր:

Մ. ԻՇԽԱՆ

Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

Թուրք ես...

Իրա՞ւ վաթսուն տարի եղաւ խորշակին մեզ բնակը ընելը... Հուստալս չի գա՞ր... Վաթսուն տարին քէնս ազգերու պատմութեան մէջ թուլէ մը իսկ չէ, բայց անհատներու կեանքին մէջ կեանքի լման շքեան մըն է... Ուրեմն ես, աւելի քան կէս դար է, կը մտածեմ պատմութեանս շրջանին ինձի հետ օտարութեան ու ճանի գերութեան մէջ ապրող տղաներուն եւ աղջիկներուն մասին, մէկ խօսքով՝ մեր մընացորդացին մասին, ու կը տանջուիմ, որովհետեւ բան մը չկրցանք ընել անոնց համար... Ի՞նչ պատուական տգա՞ւ ու աղջիկներ էին... Կը կոչուէին, իրենց հայու անուններով, Մեհապետի, Մարիամ, Հայկանոյշ, Վարդուհի, Արեւ, Խորէն, Գրիգոր, Երուանդ, Անդրանիկ ու Մակար: Ի՞նչ եղան անոնք հիմա... Ո՞ւր մնացին, ո՞վ մեռաւ ու ո՞վ մնաց... Տարիներով գրեցի իրենց մասին տեղով, անունով, տարիքով՝ ակնկալելով, որ բերեւս անանցմէ մէկն ու մէկը կ'ըլլայ ազատած, կը կարդայ գրածներս եւ բախտաւոր օր մը երկտող մը կը ստանամ իրմէ, աւետելով ինձի, քէ ինք Մարիամն է, կամ հորէնը, կամ Անդրանիկը ու ինձի ծանոթացած է լեռը չուպանութիւն ըրած պահուն, կամ այսինչ պէկին տունը՝ խրոնցի հարած պահուն...

Կը մտածեմ այս բոլոր աննման գերուածներուն մասին. կը մտածեմ Եւգենիէին մասին, որուն երբ իմացուցի, քէ մօտ օրէն կը վայելիմ, իր աշխարհը վա՞ւ կարծես, ողբաց, որ ինք մինակ պիտի մնա՞յ, չի կրնար իր գաւազները լինելով ազատարար խումբի մը միանա՞լ.

— Ես չեմ կրնար աս տունէն, աս տեղէն բաժնուիլ, երբեքայ ունիմ... Հետս առնել՝ թուրքին, քիւրտին քի՞տերը հետը բերաւ պիտ ըսեն, հոս գնեմ՝ չեմ կրնար... Իմ արիւնէս, իմ մարմնէս են ծնած... Փորիս մէջ են մեծցած ու կարս են ծծած... Կը սիրեմ գիրենք, կը հասկնա՞ս, կը սիրեմ գիրենք...

Ի՞նչ ողբերգութիւն...

Դեռ պատկերին միւս կողմն ալ կայ: Շատեր կը հաւա-

տան, թուրքերը անոնց այնպես են հաւատացուցած, թէ հայութիւնը սրբուած է երկրի երեսէն. ու երբ պատահական ճամբորդ մը անոնց կը բացատրէ, թէ աշխարհի վրայ հայեր կան, ունին Հայաստան մը, ուր կ'անին խաղաղութեամբ, փառք կու տան, կը փղձկին...

— Փառք քեզ, Տէ՛ր. փառք քեզ, Աստուած...

«Ո՛վ տնկեց ին կրծքին հաւատքի այդ հսկայ ծառը... Անցեալները, մեր դրացիներէն մէկուն իրոջ որդին եկած էր Անտառուէն՝ իր մօրեղբայրը տեսնելու: Լսեցինք ու ակնկալեցինք, որ իրիկուն մը մօրեղբայրը գայն կ'առնէ ու կու գայ մեզի: Ձեկաւ: Օր մը տեսայ գայն փողոցին մէջ ու յանդիմանեցի.

— Ի՞նչ տեսակ բարեկամ ու դրացի ես... Լսեցինք, որ իրոջ որդին եկեր է քեզ տեսնելու եւ սպասեցինք, որ իրիկուն մը առած գաս մեզի: Ձեկա՛ր, չեքուացի՛ր:

— Ձեկա՛յ, չեքուացի՛նք, դրացի՛, մի մեղադրեր զես... Երես չառնե՛ց... Մտէն անցաւ, բայց սիրտս չփաշե՛ց... Ի՞նչ ըսելով բերէի, իրոջ որդին իբրեւ Անտէս Մ՛տէնի՞նք ներկայացնէի ձեզի...

— Ի՞նչ կ'ըլլայ, իրոջ իր կամով շամուսնացա՛ւ այդ տղուն հօրը հետ... Ինչո՞ւ մեղադրելի ըլլան այդ խեղճերը, մեղադրելին մենք ենք, որ ազատ երկրի մէջ կ'ապրինք ու բան մը չկրցանք ընել անոնց համար, երբ անոնք անասան հաւատք ունէին. թէ երբ արտասահմանի հայերը լսեն իրենց գոյութեան մասին, թաշուկի թեւերով պիտի հասնին իրենց օգնութեան:

— Արդէն շատ ալ չհեցաւ, ո՛չ ան մեզմէ համ առաւ, ոչ ալ մենք իրմէ... Իրարու վրայ չկրցա՛նք տաքնալ, — ըսաւ, իմ փարզիս մտիկ ընելէ ետք:

Ու այսպէս հայու արիւնը խառնուեցաւ ու կը խառնուի, բարեխառնեց՝ ու դեռ կը բարեխառնէ անոր, Թուրքին, Սելճուէին, Մանկուլին արիւնը:

Թուրքը. դարերու ընթացքին իր հպատակ ժողովուրդներուն — հայուն, յոյնին, պուլկարին, ռումէնին, չեքէզին, արաբին ու ֆիւրսին արիւնին խառնելով իր արիւնը՝ կորսնցուց իր մոնկուլի դիմագիծը, դեզին գոյնն ու ցից այտուկները... Հիմա ես կը վախճամ, որ իր ուղեզն ալ բարեխառնուի ու դառնայ ֆաղափակըթուելու ընդունակ ազգ:

Այդ հեռանկարը կը սարսափեցնէ զես... Մինչեւ հիմա ձեռով մը կը մխիթարուէի, խորհելով, որ քուրճը, մեզ քնացնելով, կասեցա՛ւ ֆաղափակըթուելէ: Եթէ մենք հոն ըլլայինք, ան, հիմա, փոխանակ մուրացկան ըլլալու, կ'ըլլար ֆաղափակըթուած, բարեկեցիկ, ինքնաբաւ, նարտաբարուստականացած ու մարդկային մեծ ընտանիքին մէջ առնուելու արժանի ազգ: Մարդիկ, ելք բարբարոս արարքի մը առջեւ գտնուէին, արարքը գործողին չէին հարցնէր.

— Թո՛ւրք ես...

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն



1915 թուականին Արեւմտահայաստանում ու յարակից մարզերում իր սկզբունքային ու գործնական զագաթնակէտին հասած հաւաքական եղեռնագործութեան իրողութիւնը յիշեցնում է առհասարակ մարդկային պատմութեան ընթացքում այնքան յաճախ դրսեւորուած թէ՛ սովորական եւ թէ՛ արտասովոր բոլոր եղեռնագործութիւնները: Սովորականից աւելի յիշեցնում է արտասովորը, թէ՛ իր համատարած ծաւալով եւ թէ՛, մա՛նաւանդ, ժամանակային, այսպէս թէ՛ այնպէս, անակնկալ արտայայտութեամբ:

Անակնկալի հանգամանքը, ըստ իս, չի կարելի անտեսել: Դարերից ի վեր, ի հարկէ, յայտնի էր ճնշող եւ ճնշուող ուժերի փոխյարաբերութիւնը այդ միջավայրում: Յայտնի էր ճնշողների գազանաբարոյ էութիւնն ու քաղաքականութիւնը: Բայց եւ այնպէս, նոյնիսկ օսմանեան մարդաքինը պայմաններում, բնականոն մարդկային երեակայութիւնը չէր կարող անսահմանութեան գծի վրայ դնել եղեռնագործ ուժերի հնարաւորութիւնները, լիովին ճշդել հակամարդկային տարրերի բոլոր մտադրութիւնները:

Այն ժամանակ, երբ թու՛մ էր, թէ մարդկային համակեցութիւնից բխող եւ քաղաքակրթութիւն կոչուող իրականութիւնը աշխարհի գէթ որոշ առաջատար օղակներում ակնյայտ կշիռ ու հեղինակութիւն է ձեռք բերել, տեղի էր ունենում ճիշդ հակառակը՝ օրը ցերեկով եւ դրդագին հերքում էր քաղաքակրթութիւնը ու կարծես թէ ապացուցում բարբարոս հակամարդու ամենազօրութիւնը: Փրուպում էին ամէն կարգի մարդկայնական արժէքները, յուսահատութեամբ լցնելով մթնոլորտը եւ մարդկանց հոգիները:

Առաջին Աշխարհամարտի տարիներին եւ նրա հետեւանցով մարդկայնական փայփայուած արժէքների փրուպումը, պէտք է ասել, ամէնից շուտ եւ աւելի շատ նկատելի եղաւ հենց բուն եւրոպական աշխարհամասում, որտեղ դրանից առաջ քաղաքակրթութիւնը գրեթէ կայուն ու անսասան էր կարծում շատերի կողմից: Եւ այդ փրուպման գիտակցութիւնը առանձնապէս ցաւագին ու շեշտակի արտայայտուեց այնտեղ, քանի որ շատ մեծ էր վաղեմի վարդազոյն պատկերացումների եւ անակնկալ մռայլ իրականութեան հեռաւորութիւնը: Իսկ օսմանեան պայմաններում գործուած հայաքինը եղեռնագործութիւնը ընդհանուր փրուպման ու անկման տեղական, առաւել «հարստացուած» արտայայտութիւններից մէկն էր սոսկ:

Քաղաքակրթական ընդհանուր փուլական ամենամեծ կոհը, սակայն, դարձաւ հայութիւնը, իրերի հանրայայտ դասաւորման բերումով: Երեսոթը վերին աստիճանի նողկալի է՝ ո՛չ միայն զուտ ազգային, այլեւ առհասարակ մարդկային տեսակէտից: Դա անսքող ցեղասպանութիւն էր, — յղացումով, խօսքով ու գործով, — իսկ այդ ծաւալի ու նոյնիսկ դրա մէջ հարիւրերորդական չափով ցեղասպանութիւն ամէն օր չի պատահում, ոչ էլ բոլոր դարերում: Եւ ուստի միանգամայն իրաւացի են բոլոր նրանք, ովքեր ցեղասպանութիւնը ուղղակի ամբողջ մարդկութեան դէմ գործուող ոճիր են համարում: Քանզի դա ո՛չ միայն վայրենաբարոյ դաժանութիւն ու հաւաքական մարդասպանութիւն է, այլեւ այն բոլոր կենսական ու բարոյական նախադրեաների շնական ոտնակոխում ու ոչնչացում, որոնց վրայ հիմնուած է առհասարակ մարդկային համակեցութիւնը՝ իր բոլոր մակարդակներով:

Հայութիւնը պատերազմով շահագործուած ու կռուող կողմ չէր, վբաղ-ւած էր միայն իր կեանքի պայմանների ներքին կարգաւորման խնդրով ու հոգսերով: Այդ հայութիւնը անյիշելի ժամանակներից ի վեր ունէր իր հաւաքական կազմն ու ազգային էութիւնը եւ, ինչպէս ռեւէ այլ ժողովուրդ, չէր կարող կամովին հրաժարուել այդ էութիւնից, քանզի դա միաժամանակ նաեւ բընական ու մարդկային էութիւն է: Եւ ահա, ոճրագործների ձեռքով «պատմորում» էր ո՛չ թէ իր այսպէս ասած ապօրինի արարքների, այլ ուղղակի բնատուր ինքնութեան, էութեան ու մարդկային դիմագծի համար: Ոճրագործների կողմից միջոցների ու կոհերի միջեւ «խտրութիւն չղնելու» քաղաքականութիւնը բացատրելի է միայն այդ համապարփակ ու խելագար մտասեւեռման շրջանակում:

Այստեղ մենք հասնում ենք այն տրամաբանական կիպակէտին, որտեղ առաւել պարզութեամբ է երեւում մարդու ու հակամարդու էութիւնը, փոխյարաբերութիւնը, դիրքն ու վերաբերմունքը: Տուեալ դէպքում մարդն ու հակամարդը ներկայանում են իրենց ո՛չ թէ պարզ կենդանաբանական, այլ արժէքային՝ հոգեբանական ու ընդհանրացուած կերպարով: Քանզի եթէ մարդը միայն մարդ է, հակամարդն էլ այլ բան չէ, բան նոյն մարդու կերպարանքով ու նրա մէջ ծպտուած մարդածխտման սկզբունքը: Հակամարդը այն իւրայատուկ ու դաւադիր հինգերորդ զօրախնն է, որը երեւան է գալիս մարդկային հասարակութիւններում՝ մարդկային ստուգուած արժէքները պղծելու եւ այդ արժէքները կրողներին ըստ իր կարողութեան հալածելու կամ բնաջնջելու մըշտական պատրաստակամութեամբ:

Եթէ այդ մշտնջենական ներքին հակամարտութիւնը դիտելու լինենք 1915ի եղեռնագործութեան շրջանակում, դժուար չէ պատկերացնել, թէ որ կողմն էր ներկայացնում մարդուն կամ հակամարդուն: Եթէ մարդը առհասարակ որոշ դիմագիծ, դեր ու կոչում ունի այս աշխարհում, նա երբեք չի կարող շփոթուել ու նոյնացուել իր ճանապարհը փակողների հետ: Չի կարող նոյնաՆալ նմաններին միակողմանիօրէն ճնշելու եւ բնաջնջելու տրամադրութիւնների հետ, մա՛նաւանդ հաւաքական տարողութեամբ ցեղասպանութեան պարագայում: Երկուսի դիրքերն ու ճակատները միանգամայն պարզ են: Բոլոր դէպքերում հեշտութեամբ երեւում է մարդը հակամարդու դիմաց:

«Մարդ» եւ «հակամարդ» գործօնները կողք-կողքի դնելով եւ հակադրելով՝ բնաւ մտադիր չեմ մատչելի պատկերաւորութեան սիրոյն մթազնել կենդանի իրականութիւնն ու նրա իմաստը: Ոչ էլ մտադիր եմ վերաբժարծել աշխարհի բնականացական երկատուածութեան մանիքէական դրոյթը, լոյսի եւ խաւարի, բարւոյ եւ չարի, ինչպէս եւ այլ զատորոշ իրողութիւնների անհաշտ հակամարտութեան տուումով: Դա ուրիշ բնագաւառ է եւ մտածումների այլ ոլորտ:

«Մարդ» եւ «հակամարդ» ըստ էութեան բեւեռացուած արտայայտութիւնները տուեալ դէպքում պայմանականօրէն բացայայտում են ա՛յն՝ ինչ որ աներկբայօրէն գոյութիւն ունի իրականում մարդկանց մէջ եւ միջեւ, փոխադարձ յարաբերութիւնները որոշակի հունի մէջ դնելու հոգեբանական կանխորոշութեան մակարդակով: Ինչպէս մարդը, այնպէս էլ հակամարդը ըստ երեւոյթին եղել է ու կայ բոլոր ժամանակներում, բոլոր հորիզոնների տակ եւ բոլոր հասարակութիւնների մէջ, փաստօրէն առանց բացառութեան: Եւ որոշ վարքագծային յատկանիշների խտացման ու պայմանական ընդհանրացման ճանապարհով՝ ա՛յդ հասկացութիւնները ուկում եմ պարզապէս տեղադրել պատմական ու աշխարհագրական միանգամայն որոշակի շրջանակում, հայութեանը վիճակուած հանրապէս: Եղեռնի կասկածները:

Իր սեփական հայրենիքում եւ շրջակայքում ապրող հայութիւնը, իր բոլոր խաւերով, իբրեւ մարդ, ձգտում էր միայն իր գոյութիւնը ապահովելուն եւ սեփական ջանքերով այն բարելաւելուն: Դրան հակառակ, օսմանեան կայսրութեան մէջ թուական ու ռազմական գերակշռութիւն ունեցող թրքութեան վարիշները, իբրեւ հակամարդ, ո՛չ միայն խափանեցին հայութեան կեանքի բարելաման օրինական ճանապարհները ու վերացրին նրա միանգամայն մարդկային ցանկութիւնների իրագործման հնարատրութիւնները, այլեւ հարուածեցին ատելութեան թիրախ դարձուած ամբողջ հաւաքականութեան բուն գոյութեանը: Եւ այդ հակամարդկային ծրագիրը գործադրելուն, զազտնիք չէ, կամովին օժանդակեց թրքական նոյնքան ոճրամիտ ամբոխը:

Այս իրողութիւնից ոչ ոք, ի հարկէ, չի կարող եզրակացնել, թէ «մարդը» միայն հայութեան մէջ կար, իսկ «հակամարդը»՝ միայն թրքութեան: Կամ էլ, ընդհակառակն, «հակամարդը» բոլորովին բացակայ էր հայութեան, իսկ «մարդն» էլ՝ թրքութեան ներքառ: Ոչ մի խելահաս անձ չի կարող տարուել նրան մակերեսային ու խաբուսիկ պատկերացումներով: Բայց՝ երբ մի ամբողջ հաւաքականութեան նկատմամբ արմատական բնաջնջման ծրագիր է մշակուած ու գործադրուած մի այլ հաւաքականութեան կողմից, այլեւս անելորդ է մանրմունք երկրորդական վերապահութիւններով ծածկել բուն քստմնելի իրականութիւնը: Կանխատեսուած ոճրագործութիւնն ակնյայտ է եւ դա զոյց է տալիս, որ ոճիր գործած հաւաքականութեան մէջ գերիշխող է յատկապէս հակամարդը, իսկ ոճրի զոհ դարձած հաւաքականութեան մէջ էլ՝ անմեղ մարդը, երբ մահաանդ գիտենք այդ երկու հաւաքականութիւնների ընդհանուր քաղաքակրթական ու բարոյական պատկերը:

Սա այբբենական իրողութիւն է եւ ապացուցում է ո՛չ միայն 1915 եւ յաջորդ թուականների անմիջական իրադարձութիւններով, այլեւ պատմական ամբողջ անցեալով ու նաեւ հետագայով՝ մինչեւ այսօր: 1915 թուականի եղեռնը կարող էր յղացուել միայն հակամարդո՛ւ այլասերուած ուղեղում, եւ եթէ նոյնիսկ, ենթադրենք, առաջներում ոչ մի բռնութիւն գործադրուած չլինէր օսմանեան իշխանութիւնների կողմից հայութեան կամ ուրիշների նկատմամբ՝ այդ թուականը լիովին բաւական է մի ամբողջ ջարդարար հաւաքականութեան բուն ինքնութիւնն ու դիմագիծը ճշդելու համար: Մինչդեռ գիտենք, որ դա պարզապէս նախորդ նոյնաբնոյթ բռնութիւնների տրամաբանական շարունակութիւնն էր՝ առաւել ծանր ու մահացու հետեանքներով:

Թրքական նուաճողական տիրապետութիւնը բոլոր երկրներում նոյն բանն է ապացուցել, ինչ որ լայնօրէն արձանագրուած է պատմութեան էջերում: Դա աչքի է ընկել իր արտասովոր բրտութեամբ ու դաժանութեամբ, որը անկարելի է պարփակել նոյնիսկ «տիրողի եւ տիրուողի» դասական աննախանձելի փոխարաբերութեան շրջանակում: Այդ «ինքնատիպութիւնը» ե՛ս իր

հերթին անվիճելի է: Եւ նոյն մտայնութիւնը շարունակուով է մինչեւ օրս՝ ապշեցուցիչ հետեւողականութեամբ ու յամառութեամբ, դրսեւորուելով այնտեղ, որտեղ դրա համար առիթ ու ասպարէզ կայ: Այդ մտայնութեան «անմահութիւնն» է, որ բուն ցեղասպաններին յաջորդած նորահաս սերունդներին ներշնչում է կառչած մնալ նրանց ճանապարհին, այս անգամ՝ ցեղասպանութեան իրողութիւնը ուրանալու, ցեղասպանութեան կոհերին կրպարտելու եւ մի ամբողջ ազգի գոյութեան իրաւունքը շնականօրէն արհամարհելու յանդգնութեամբ:

Այսպիսով, հայ մարդը, ինչպէս երէկ՝ տասնամեակներ ու դարեր առաջ, այնպէս էլ հիմա, գտնուով է նոյն հակամարդու դիմաց: Եւ այս իրողութիւնը հերքող տուեալներ, դժբախտաբար, չկան: Հակամարդու ճամբարում սթափուելու, մարդանալու, բնականոն մարդկային հասարակութեան մաս կալմելու նշաններ ու տրամադրութիւններ բոլորովին չեն նկատուում, ինչպէս առհասարակ, այնպէս էլ մասնատրայէս՝ հայութեանը վերաբերող խնդիրներում:

Ուրեմն, հակամարդը եւս, ինչպէս երեսու է, դիմացկուն ու կենսունակ է եւ իր գործունէութիւնը ծաւայում է կենսի անխտիր բոլոր բնագաւառներում, արհամարհելով ժամանակի ու տարածութեան բոլոր սահմանները: Նա գործում է, նայած պարագային, թէ՛ բացայայտօրէն եւ թէ ծպտուած վիճակում, թէ՛ ռազմա-քաղաքական եւ թէ դիւանագիտական ասպարէզում, թէ՛ «մշակութային» եւ թէ նոյնիսկ «մարդասիրական» ոչորտներում: Ամէնուրեք հետապնդելով նոյն կործանարար նպատակը՝ թմրեցնել, դիմապրկել ու հարուածել իսկական մարդուն, կողոպտել ու բնաջնջել նրան, արմատախիլ անել կենսի ու ստեղծագործութեան ծիւերը:

Այս ամէնը կարելի է տեսնել այն ուժերի գործունէութեան մէջ, որոնք գտնուում են հայութեան արդար ճանապարհը առարկայօրէն խափանելու դիրքերում: Հակամարդու նախասիրած ասպարէզն, ի հարկէ, բացայայտ ճնշման ու բռնութեան իրականութիւնն է, երբ նրան աներիչ յատկութիւնների անկաշխմուղ դրսեւորման հնարաւորութիւն է տրուում: Բայց դրան կուգահեռ՝ նա չի խորշում եւ չաւելեալ ու մարդագրաւ՝ քաղաքակրթութեան հետ հեռուից կամ մօտիկից առնչուող բնագաւառներից, միայն թէ ժխտական ինքնադրսեւորման առիթներ լինեն: Եւ երբ, ամենայն պահարհնութեամբ, աչքի առջեւ ենք բերում թրքական անցեալ ու ներկայ իրականութիւնը, անմիջապէս տեսնում ենք, թէ նրա գրկում ինչպիսի՛ վարտուղի ճանապարհներով է իր նպատակը հետապնդում բուռն ու մարդատեաց ոգին:

Այդ կապակցութեամբ, այս անգամ բաւական եմ համարում նշել սուկ երեք մասնակի, իրարից անկախ իրողութիւններ, որոնք միմեանց լրացնում եւ միասնաբար բացայայտում են մի անխախտ օրինաչափութիւն:

Եղել են եւ կան մարդիկ, որոնք թէեւ ուղղակի չեն արդարացնում 1915 թուականի հայաջինջ եղեռնագործութիւնը, նոյնիսկ դատապարտում են, բայց պատահածը ջանում են բացատրել բացառապէս ինչ-որ գերմարդկային, առարկայական, «ազգային», պետական ու ռազմա-քաղաքական անյաղթահարելի հրամայականներով: Այնպէս է ստացուում, թէ եղեռնը նիւթողները այնքան էին մտահոգուած իրենց պետութեան ու ազգի ճակատագրով ու պահպանման հեռանկարով, որ նրանց ճանապարհին հայութիւնը բնաջնջելուց բացի ուրիշ ելք չէր մնում: Այդ մտածելակերպը առաջին հերթին արտայայտուում է հենց բուն եղեռնագործների գրաւոր՝ պահպանուած խոստովանութիւնների մէջ: Նրանցից անկախ՝ նաեւ ուրիշներն են շեշտում նոյն «անհրաժեշտութիւնը»: Բայց մի՞թէ դա բացատրութիւն է: Մի՞թէ ուրիշ ապգերի միջեւ վէճերի միակ նպատակալարմար լուծումը ամբողջ ապգեր միակողմանիօրէն

բնաբնություն մեջ է կայանում: Վերջին հաշուով, «ո՛վ» եւ ի՛նչ է պետութիւնը: Պետութիւնն է պայմանաորում մարդկանց վարքագիծն ու գործունէութիւնը, թէ՛ ընդհակառակն, մարդիկ են իրենց բնութիւնն ու ցանկութիւնները փոխանցում իրենց կողմից պահուող պետութեանը: Պարզ է, որ հենց ճիշդ այստե՛ղ է երեւում մարդու եւ հակամարդու առկայութիւնը, ինչ որ անպայման տարբեր կարգի ձակատագրական հետեանքներ է յարուցում:

Բացի այդ, երբեմն կարելի է փոքրիկ մեղադրանքներ լսել հայութեան հասցէին, թէ նա դարեր շարունակ թուրքերի կողքին ապրելով՝ իբր անծանօթ է մնացել «նրանց մշակոյթին» եւ գոհացել է միայն հիւանդագին ատելութեան: Եւ այդ նոյն հարեան թուրքերի նկատմամբ: Բայց որտե՛ղ է այդ մշակոյթը: Մի պահ ենթադրենք, թէ հաւերը իսկապէս «կոյր ատելութիւնից» զըրզուած չեն ճանաչել ու ճաշակել այդ կարծեցեայ մշակոյթի բարիքները: Իսկ ինչո՞ւ միս՝ աւելի անկախ ու «մեծահոգի» ազգերը ե՛ւս այդպիսի ուրեւէ մշակոյթ «չեն ճանաչում»: Կարելի է ամենայն համբերութեամբ թերթատել համաշխարհային մշակոյթն ու գրականութիւնը արտացոլող այլեւայլ հրատարակութիւններ եւ այդ կապակցութեամբ թուրքի անուան կա՛մ բնաւ չհանդիպել, կամ էլ, ծայրայեղ դէպքում, այդպիսին նշմարել միայն «քաղաքավարութեան համար» հրամցուած աննշան անկիւններում: Եւ ինչպէ՛ս կարելի է այս հանգամանքը պերճախօս չհամարել ու խորհրդածութեան նիւթ չդարձնել:

Աւելի՛ն. փանազան հատուկներ յիշատակումներից կարելի է կոհեղ, որ թուրք իրականութեան մէջ 20րդ դարում եղել են եւ այս կամ այն թուով բանաստեղծներ: Բայց ինչպիսի՞ բանաստեղծներ: Մանրամասնութիւնների համար եւ, անշուշտ, ի վիճակի չեմ վաւերական խօսք ասել: Սակայն տարբեր առիթներով հայերէն թարգմանուած ու մամուլի էջերում երեւցած յատկանշական նմոյշները հաստատ վկայում են, թէ իրականում ինչ գոյն ունեն այդ «բանաստեղծներից» շատերը եւ ինչով են շնչել ու շնչում նրանք: Նրանց «երկերում» առաւելապէս մռնչում է մերկապարանոց վայրագութիւնը, անմարդկային ու պայանդակ անբման մոլուցքը: Ռեբեմ, նոյնիսկ բանաստեղծութեան մէջ հակամարդը հակամարդ է մնում: Եւ որքան լաւ կը լինի, որ ձեռնհաս մարդիկ գիտակից ուշադրութեամբ հաւաքեն այդ նմոյշները՝ իբրեւ սուռեայ հաւաքակառուցութեան ներքին դիմագիծն ու պատկերն արտացոլող ախտաբանական վկայութիւններ, դրանք երբեւէ գիտականօրէն վերծանելու եւ հետազօտելու, համեմատելու եւ բնութագրելու համար:

Այնուհետեւ: Եթէ մէկն ու մէկը բացելու լինի հաստափոր «Միջազգային ազատ-որմնադրական բառարան»ը, որտեղ ներկայացուած է եւ «Ազատ որմնադիրները ժողովուրդների մշակութային ու պետական կեանքում» վերնագրով մի ցանկ, թրքական մշակոյթի ներկայացուցիչներին բոլորովին անտեղեակ կը մնայ, բայց անպայման կը հանդիպի որոշ թուով փաշաների եւ այլնի: Նա կարող է տեղեկանալ, օրինակ, որ 1909 թ. հիմնուած «Թուրքիայի Մեծ Արեւելք» օրթակի «Մեծ Վարպետն» էր «Թալաաթ փաշան», համապատասխան բարձր աստիճանով: Ես չգիտեմ, թէ այդ «փաշայի» մասին ինչ կարծիք ունէին կամ ունեն իր համազգի ու այլազգի «եղբայրները», բայց մի՞թէ բնորոշ չէ, որ նոյնիսկ մի այդպիսի փափուկ ու առանձնաշատուկ բնագաւառում Թալաաթնե՛րն էին իշխում: Ազատ-որմնադրական շարժումն սկզբից ի վեր ունեցել եւ ունի իր երդուեայ երկրպագուներն ու նոյնքան երդուեայ հակառակորդները: Եւ ես չեմ, որ իրարամերժ կարծիքներին նոր կարծիք պիտի աւելացնեմ: Բայց եւ այնպէս, բոլոր նրանք, ովքեր քիչ թէ շատ տեղեակ են այդ շարժման պատմութեանը, բնոյթին, ներքին ճիւղատրուումներին, գիտեն նաեւ, որ նրա դասանքի անքակտելի մաս են կազմել ու կազմում «համամարդկային եղբայ-

րութիւն», «փոխադարձ հանդուրժողութիւն», «հոգեւոր ապաստութիւն» եւ նըման դրոյթները: Եւ յանկարծ՝ մի ամբողջ կայսրութեան մէջ «Թալաաթ փաշան» այդ ամէնի բարձրաստիճան հովանաւոր... Ահա թէ ինչպէ՛ս են պղծ-ծըւում մարդկայնական նշանախօսքերով հիմնուած հաստատութիւնները հակամարդու կողմից: Եւ ըստ ամենայնի տխուր բան է՝ միեւնոյն ցանկում տեսնել Վոլտերի ու Մոնտեսքիոյի, Մոցարտի եւ Սիբելիուսի, Գէօթէի եւ Պուշկինի, Վաշինգտոնի, ռուս դեկաբրիստների եւ Գարիբալդիի, իսկ ապա նաեւ... «Թալաաթ փաշա»ի անունները: Նոյնիսկ ամենալայնասիրտ «հանդուրժողութիւնը» այդպիսի հակոտնեայ բեւեռներ չի կարող ընդգրկել, առանց ինքն իրեն հերքելու:

Սրանք տարբեր բնագաւառների վերաբերող փոքրիկ օրինակներ են, որոնք իրենց հերքին վկայում են, թէ ո՛ւմ կողքին էր ապրում հայութիւնն իր ժամանակ եւ ինչպիսի՛ ուժերի հետ է ստիպուած չափուել այսօր եւ ապագայում, այդ նոյն հայութիւնը:


Հայութիւնը, հաւատարիմ իր պապենական բնութեանը, ներկայանում է իր զերապանցապէս մարդկային յատկութիւններով ու պահանջներով: Իսկ նրա դիմաց գտնուում է մի ուժ, որի ներկայացուցիչների մտածելակերպն ու գործելակերպը խարսխուած են հակամարդկային նախադրեալների վրայ: Այդպէս էր դարեր առաջ, այդպէս էր 1915 թուականին եւ նրանից յետոյ: Եթէ այդպէս չլինէր, Եղեռնը ինքնին արդէն իսկ կը բացառուէր եւ տեղի չէր ունենայ, կամ էլ գէթ, աղէտը պայթելուց յետոյ, յաջորդ սերունդների կողմից հատուցման ու հաշտութեան եզր կ'որոնուէր: Բայց, ինչպէս յայտնի է, դրա ճիշդ հակառակը պատահեց:

1915 թուականի հաւաքական եղեռնագործութիւնը բացատրել միայն ռազմա-քաղաքական բնոյթի ժամանակաւոր ու անակնկալ հրամայականներով՝ կը նշանակի, ըստ իս, անտեսել հակամարդկային՝ տարբերային ու ծըրազրեալ գործօնների ամբողջութիւնը, որոնք արդէն իսկ տեւական հակամարտութեան աղբիւր էին ծառայում եւ խափանում պատուաւոր գոյակցութեան ճանապարհները: Եւ քանի որ գոյակցութիւնն անընդունելի էր համարում իշխողների կողմից, դատարարաբար ծրագրուեց, գործադրուեց եւ յետոյ էլ պանազան պատրուակներով «հիմնաւորուեց» գոյաջնջման քաղաքականութիւնը:

Մարդը հակամարդու դիմաց: Այդ կացութիւնը թէեւ հաճելի չէ, նաեւ՝ բոլորովին արտասովոր ու յուսահատեցուցիչ չէ: Կարեւորը իմանալն է, թէ ով ո՛վ է, ինչ դիրք ունի եւ ինչպիսի բնական հակումներ: Հակամարդն ամէն տեղ է եւ մարդ ստիպուած է անընդհատ պայքարել նրա դէմ, ապրելով յաղթելու համար, թէեւ ընդհանրապէս վերջնական յաղթանակն անկարելի է թըւում, քանի որ անընդհատ՝ ընկճուող ուժերին ուրիշ նորաբնոյթ ժառանգորդներ են յաջորդում: Եւ այդպէս փոխադարձ պայքարը շարունակուում է, անկասի նրանից, թէ երբ ինչով է նշանաւորուում: Հետեւապէս, տուժած եւ իր արդար իրաւունքներին զիտակ հաւաքականութիւնը առաջադրուած նպատակին հասնելու համար ջանում է նախ լիովին տեղեակ լինել հակառակորդի էութեանն ու գործելակերպին, առանց անելորդ պատրանքների ու վինաթափող բարեհոգութեան, ապա նաեւ համակարգել իր անկայ ու թաքնուած ուժերը բոլոր բընագաւառներում, ո՛չ միայն նիւթական, այլեւ հոգեւոր ու մշակութային մակարդակով:

L. ՄԿՐՏՉԵԱՆ

Յ. Գ Ե Ղ Ա Ր Դ




Լըռուփին կար խորախորհուրդ, քառասկուռ խաւար... Յանկարծ՝
 Ստորերկրեայ բոցեր քրքում պլլուեցան մէկվմէկու.
 Անպատներ անպարագիծ, հողամասեր մերկատարած՝
 Դըղրղազին ճաքճըբեցան գօտեմարտէն այդ ահարկու:
 Ու ճաքճըբած հողի սրտէն ծի՛լ-ծի՛լ լոյսեր ընծիւզեցան,
 Ու աճիւններ լուսաճաճանչ ելան հողէն՝ անծի՛ր դամբան:
 Գանկեր ժօռատ, թեւեր ջախջախ, ու սըրունքներ տապարահար՝
 Խօլամբրիկ հողմերու հետ, ցափ ճիչով, դարձան շուրջպար:
 Նըծոյզ մ'անցաւ կաշծակնավապ, թամբին ասպետն իր ջահակիր՝
 Կայծեր ցանեց խաւարին մէջ, իբր Յարդոդի նո՛ր ուղեծիր:
 Ու բազմացա՛ն ոսկերտոիքն, ու փարեցաւ մէկը միւսին,
 Կըմախքներու բազմահապար թափօրն արա՛գ անցաւ գործին.--
 Մամիկ մը սուրբ մատովն իր լոյս զըծեց տառեր հողին վըրայ,
 Զորս մանուկներ հեզեցին գերթ յաւերժահունչ ալէլուեա՛:
 Հարս մ'ըսպիտակ վապեց բոպիկ հին օրերու աղբիւրին քով,
 Յամբած գըտաւ. սափօրն ուսին լեցուց շողակ իր արցունքով:
 Ծեր մ'եղունգով հողը փօրեց, հանեց անմա՛ջ տան բանալին,
 Բայց տունն ո՛ւր էր... փըլա՛ծ պատեր, քարե՛ր միայն տեսաւ չորս դին:
 Ամէն մէկը տենդազալար փնտռեց օրրանն ու երզիքն իր,
 Գութաններու խոփեր գըտան, մաճի բեկոր, ու լոկ մոխի՛ր:
 Կըմախքները կտրած կըրակ հաւաքեցին մասունքն այդ թանկ,
 Ագուցեցին մէկվմէկու եւ շինեցին հնչուն մէկ պանգ:
 Խաւարն ի վեր լո՛ւռ, խորասոյգ գմբէթ մը կար կիսակործան,

Աղիքներով արեակէկ հիւսեցին ձի՛գ, երկա՛յն պարան,
Մէկը միւսին ելաւ ուսին, վանգն իսացուցին վանգակատուն
Ու քաշեցին պարանն ուձգին՝ կըմախքները խօ՛ւլ, գերարբուն:
Երկինքն եղաւ զմբէթ մ'անհուն, խոր արձագանգ տուաւ վանգին,
Ծովն յորդեցաւ իր ափունքէն, նոր կըմախքներ հանեց ափին,
Կըմախքներու ծովն քապիտակ գրկեց, ծածկեց հողը խաւար,
Լոյս մ'աճեցաւ ճերմակ ծովէն, փեռեկտեցաւ մուօը կապար:
Ու բարձրացան Արեւելէն գոյգ մը վեղար երկինքն ի վեր,
Հուշան տեղաց ու ճառագայթ վեղարներուն մարգարտայեռ.
Զոյգ կատարներն հսկայացան, աստուած դարձան քաղկատարած,
Կըմախքները ալետատան անշարժացան պահ մ'երկիւղած,
Փոթորկեցան ապա նորէն ու երգեցին ահեղաձայն՝
«Մենք չե՛նք մեռած, մենք չե՛նք մեռնիր, մե՛րն է անմահ հողն յաւիտեան»:
Փրփրակոհակ գետ մը վազեց այս համերգէն վերթ այսահար,
Արեւելէն մինչ արեւմուտք քանդէ՛ց մէջքէն կամո՛ւրջ, կամա՛ր:
Ու երեսաց, կանգնած ափին, կայծակնավազ ձի՛ն, քամակին՝
Պըղընձաձոյլ ասպե՛տն անյաղթ, բա՛րձր բըռնած Թուր Կէժակին:
Կըմախքները խոնարհեցան, լըռեցուցին վանգը տակա՛ւ,
Առկայծեցան փոսփորալոյս, իջան հողին գիրկը խոնաւ:
Եւ լուսանինչ այդ աշխարհին տէ՛ր մընացին երկնակարկառ՝
Ասպետակիր ձի՛ն հըրեղէն եւ լեռ արքան ձիւնակատար:

20 Ապրիլ, 1975

Յ. ԳԵՂԱՌԴ

Կ. Փ Օ Լ Ա Տ Ե Ա Ն



Կեցած՝ նոյն գիրքին մէջ:
 Ոտովայո՛ջ, բայց աներնք:
 Ո՛չ հասարակեք, ո՛չ արցունք:
 Այ իսկ թախիծ:
 Յասու՛մ:
 Մի՛ միայն ցտու՛մ:
 Ազամանդի պէս կարծր:
 Աւ աւա՛, որ կեցած էմ այդպէս, մթին գիշերին մէջ,
 ամառի փողոցի մը անկիւնը, յար եւ նման վարդապետի
 գրիքնիկսին:

Բար մը ձեռքիս:
 Ոտած եմ այդ արիւնստ ցարին մասին, տարիներ ա-
 ուալ, վեպի մը մէջ:

Աւ իննի կը թուի, դեռ մինչև հիմա, թէ այդ դըր-
 ւազը նուազ անյաբող ժողովին մէկն է այդ հին գիրքին,
 եւ թէ հարկ է կրկին գայն պատմել այսոր՝ թարմացնելու
 համար ոմանց յիշողութիւնը, տեղեակ պահելու ուրիշներ:

Տեղեակ պահելու՝ այդ օրերին ասդին հասակ նետած
 կրկնասարգութիւնը. ծաղկած ծառերու նման չգեղ մեր
 աղաքը: Արեւելքի եւ Արեւմուտքի մեր նոր, մեր ճեղքի
 տղաքը:

Ամէնէն տակի անոնց կը վերաբերի այս պատմութիւ-
 նը. ուստի, անոնց է որ կ'ուզղեմ, աւա՛, խոսքս.

— Տղա՛ք, տեսէ՛ք, հո՛ս, ճակտիս վրայ, խոշոր սպի մը կայ, մտնկու-
 քեմնս ի վեր:

Ա՛յ չի ցաւիր, բայց այդ ցաւին յիշատակը դեռ կ'ապրի, կ'արիւնի դեռ:
 Տեսէ՛ք, մեռած միջատի մը կը նմանի ան, քառած մորթիս վրայ ու հոն ալ
 չորցած:

Ամէն օր կը դիտեմ գայն հայելիին ընդմէջէն: Դարդոջուն մտաներով
 կը շոյեմ գայն ու այժեբս կ'իսախօսի՝ ամէն անգամ կ'երբքամ, ճակտիս վը-
 րայ հորիզոնական բացուած ակօսներուն ընդմէջէն, տարիներուն ընդմէ-
 չէն իս կ'երբքամ կը գտնեմ այն զգայուն ու կեանքով քարայրուն վէրքը, որ
 ան եղած էր օր մը, օրե՛ր:

Հին անցեալ մը ունի նակտիս սպին: Արիւնու անցեալ մը: Ան կը խորհրդանշէ ամբողջ ժամանակաշրջան մը, որ փակուած կը նկատուի շատերու կողմէ, մտացութեան փոշիներուն տակ թաղուած, պատմութեան անցած: Ինծի համար՝ ո՛չ: Ինծի համար վերին աստիճանի կարեւոր վաւերացիք մըն է ան, աւելի կենդանի ու աւելի խօսուն, աւելի վաւերական, քան անոնք, որոնք մե՛ծ-մե՛ծ անուններ կը կրեն եւ որոնք շատոնց դադրած են որեւէ արժէք ներկայացնելէ. օրինակի համար, եթէ խօսինք մեր դարուն մասին, *Վերսայլի գաշնադիրը* կամ *Սեւրիւրը*:

Իմ սպիս կը վերապրի անոնց, որովհետեւ գրուած է, ո՛չ թէ կարճատեւ եմք սպիս կը վերապրի սահմանուած թուրքի վրայ. այլ մարդկային մտքի. ի՛մ մտքիս վրայ եւ այնպիսի՝ մեկանով մը, որ ո՛չ կը ջնջուի եւ ո՛չ ալ կը խորհրդանշի:

Ճակատս իմ՝ արիւնագիր մագաղաթ:
Տղա՛ւ, «նոգի՛» տղա՛ւ, կը խնդրեմ ձեզմէ, որ չժպտիք: Գրականութիւն չէ բրածս եւ ո՛չ ալ կատակելու տրամադրութիւն ունիմ:

Լաւ է պատմեմ եւ դա՛ւք գտէք ո՛չն սերս կապը, որ իրապէս գոյութիւն ունի իմ նակտիս սպիսն եւ վերջին շրջանի մարդկային պատմութեան միջեւ: Վստահ եմ, որ դուք վերահասու պիտի ըլլաք, թէ ինչպէս այդ տնջան նկատուած սպիս կրնայ դառնալ ապագայ մարդկութեան համար շատ կարեւոր փաստաթուղթ մը՝ մեր շուրջը դարուն մէջ սայրած մարդաց չնաշխարհիկ բարեկերն ու կենցաղը լուսաբանող:

«Ո՛վ դարք, ո՛վ բարք»... Ինչե՛ր, ինչե՛ր, տղա՛ւ: Անհուատալի՛ր... Գազանային ի՛նչ արարներ, սեւաւոր ի՛նչ ճիւղներ: Ա՛յնքան բառմեղի եւ աներեւակայելի, որ մարդ ուղղակի կը սմէի ու ինքզինքին կը հարցնէ, թէ արդեօք որեւէ ձեւի յատկանշութիւն գոյութիւն ունի՞ քարանձաւներու մէջ բնակող ու վայրի կենդանիներու մտքը հագած մարդուն եւ այսօրուան բարեկիրք եւ ազնիւ ձեւացող, կոշտ մուշտակէ գլխարկը աւելի բարեձեւ գլխարկով մը կամ *Ֆէռով* փոխարինող մարդուն միջեւ:

Յառաջդիմութիւն, այո՛, ի հարկէ, մե՛ծ յառաջդիմութիւն՝ ճիւղը գործարդելու *Ճեթտահերուս* մէջ: Ըստ որակի եւ ըստ բանակի... Մե՛ծ յառաջդիմութիւն նաեւ ճիւղներուն ամէնէն գարեւորիները յաջողութեամբ գլուխ հանելէ ետք, գանձի արդարացնելուն, գանձի օրինակացնելուն... Օ՛, մեր դարու այդ մե՛ծ, այդ հանճարե՛ղ արուեստագէտները...:

Թերեւս ոմանք մտածեն, թէ կը չափազանցեմ, կը մեծցնեմ եղածները, թէ երեսակայութիւնս է, որ կը հեարէ այս պատկերները, որոնք կրնան անհիմն ու արտառոց թուիլ շատերու: Ուրիշներ գուցէ առարկեն, թէ այս բալորը ի՛նչ կապ ունին իմ նակտիս սպիսն հետ:

Ունի՛ն, ունի՛ն եւ ինչպէ՛ս:
Ըսած էի արդէն, որ ան խորհրդանշան մըն էր: Ուստի՛ կրնայ շատ բան ըսել անո՛նց միայն, որոնք աչք ունին եւ խիղճ:

Այսօր, հաստատապէս կ'աւելցնեմ նաեւ թէ ա՛ն, այդ նակտիս սպիսն, ակնարկուած այդ բոլոր ճիւղներուն կենդանի վկան է:

Աւելի՛ն նայնիսկ:
Միքրոֆիլի խոսացած ձեւին տակ հոն արձանագրուած են այդ ճիւղները, կէտ առ կէտ, մակրամտնօրէն: Գաղտնի սպասարկութիւնները այս ձեւով կը փախցնեն հիմա պետական եւ զինուորական գաղտնիքներ: Այդպէ՛ս եմ ըրած նաեւ ես: Թերեւս առանց գիտնալու, վաթսուն սարի առաջ: Ճակատիս մէկ անկիւնը պահած՝ հետս եմ բերած ոճրագործներու յանցապարտութեան անհերքելի փաստերը: Ահա թէ ինչո՛ւ կը պնդեմ, որ իմ

ճակտիս այդ սպին վերին աստիճանի կարելու վաւերաթուղթ մըն է՝ ներկայ եւ ասպագայ համայն մարդկութեան համար :

Մտփա մէջ, ես յաճախ գայն կը բաղդատեմ Աբիլլէսի կրօնկէն կամ Կըլոպատրայի քիթիէն հետ, որովհետեւ անոնց չափ պատմական է ան, պատմականօրէն ճակատագրական, անոնցմէ աւելի նշանակալից եւ անպայմանօրէն աւելի յուզիչ :

Կը նշմարեմ, որ ժպիտ ունիմ ձեր աչքերուն, տղա՛ք, հակառակ խնայանքիս :

Աւելի լաւ : Հիմա լսեցէք պատմութիւնը եւ շարունակեցէք ժպտի՛լ, եթէ կ'ուզէք, եթէ կրնաք :

Պատմական քարդեշտ էս աւերումը՝ շրջանի մը մէջ կ'ապրէիմք : Անոնցմէ մէկուն մէջ : Որովհետեւ, ինչպէս գիտէք, անոնք իրարու յարգանքով են գրեթէ առանց ընդմիջումի եւ կը կարգեն մեր ապրած դարուն պատմութիւնը :

Տէր-Ջօր տեսած այբուն մանուկ մըն էի : Հակառակ ասոր կային բաներ, որոնք անհասկնալի կը մնային դեռ ինծի : Մեծերը, շուրջս, կը խօսէին հրդեհուած տուներու մասին : Այնպէս հասկցայ, որ մեր մեծ տունն ալ այրած էին : Խեղճ ուղեղս կը չարչարէի՝ հասկնալու համար պատահածը : Կ'ուզէի գիտնալ, թէ ի՛նչպէս կ'ըլլայ այրուած տուն մը : Գիտէի հացին այրուածը, խորովածին այրուածը եւ դեռ շատ մը ուրիշ բաներու : Բայց այրուած տո՛ւն մը, հսկայ տուն մը, իր բարաշէն պատերով, ինչպէ՞ս կրնայ այրուիլ : Հարցումներու տրուած պատասխանները զիս չզոռացան : Գին եւ որոշեցի առատ մը, անձամբ երթալ եւ ստուգել եղելութիւնը : Գաղտնագողի, վրիպելով մեծերու ուշադրութենէն, ճամբայ ելայ մեր այրած տունը տեսնելու : Պէտք է անցնէի թրքական թաղերէ :

Երկար ճամբուս ընթացքին, մտովի կը գծէի, ճարտարապետի մը պէս, ինծի ծանօթ տան ամբողջական պատկերը, անոր յատակագիծը, իր բոլոր յարկաքաժիւններով, սենեակները կը շարէի իրարու ճով, իրարու վրայ եւ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ կը տեղադրէի, նայնպէս ինծի ծանօթ, մեծ ու փոքր առարկաները, անկողինները, սեղանները, բազկաթոռները, հայելազարդ դարակները, որոնք միշտ անուշ կը բարեխն ու մեծ, ամբարձակ սնունդները, ուր միշտ ուտելիք բան մը պահուած կ'ըլլար, չամիչ եւ ընկալց, շարճ ու պատեղ, սերկերիլ, խնձոր : Խաղալիքներս մանուանդ, զանազան իմ աղուո՛ր խաղալիքներս :

Վտանգաւոր շրջագայութեանս ընթացքին ամենէն աւելի կը մտածէի սակայն մարդոց եւ կենդանիներուն մասին, զորս ա՛լ չէի տեսներ շուրջս : Կ'ննթադրէի, թէ անոնք հոն մնացած էին : Կը մտածէի հաւերուն եւ միւս կենդանիներուն մասին : Հտե՛րը, ի հարկէ, կրցան փախչիլ, կը խորհրդածէի, քանի որ թեւեր ունին, իսկ շո՛ւնը, հասպա կատա՛նն :

Մեծ դժուարութեամբ գտայ մեր տունը : Ամբողջ թաղը այրած էր որովհետեւ . ո՛չ տուն կար, ոչ ճամբայ : Զայն ճանչցայ բակի դրան ունակէն : Մէկ հատիկ էր այդ ուռնակը, աղուո՛ր, բարեճեւ կնոջ մը ձեռքը : Ձէի կլնար սխալիլ :

Ուրախ, դուռը հրեցի ու ներս մտայ : Խեղճ ժպիտս վայրկեանական ատեցաւ դէմքիս վրայ : Որքա՛ն դժուար է վերլուծել, Աստուած իմ, մանկան մը հոգին այդպիսի պարագաներու : Կը խորհիմ, թէ շատ տխրեցայ, բայց լաւ կը յիշեմ, որ չլացի :

Աչքերուս առջեւ կը տարածուէր խորտուրտ դաշտ մը, մոխրագոյն ու տեղ-տեղ սև : Աժխացած գերաններ կը պատկէին ասդին անդին : Ո՛չ պատ

կար, ո՛չ սենեակ, ո՛չ դուռ եւ ո՛չ ալ պատուհան: Սարափելի՛ք է կործանած տան մը ձգած սպաւորութիւնը: Ընկնող, անէացնող զգացում մը կ'ունենաք: Կարծես ձեր հոգին ալ յանկարծ կը փլի ձեր մարմնին մէջ, դուք ալ կ'իյնաք, աւերակի կը վերածուիք:

Այդ քիչ մը գտայ ինքզինքս, տղոց խումբ մը նշմարեցի, ինձմէ բաւական հեռու: Բարձրացող մոխրագոյն փոշին մէջէն լաւ չէին երեւեր տնոց կերպարանքները: Անհռոտի ձայներ կը լսէի սակայն: Կը պոռային, կը հայեռելէին, իրարու վրայ կը նետուէին, աշխատելով հաւանաբար իրարու ձեռքէ յափշտակել նոր գտնուած առարկաներ: Ծուտով հասկցայ, որ թուրքի լակուտներ էին: Աւելի ճիշդը՝ անոնք ինծի հասկոցողին իրենց ո՛վ ըլլալը: Անոնցմէ մէկը գիտ նշմարած էր ու ոտքի ելած:

Քանի մը քայլ յառաջացաւ ու պոռաց.

— Ի՞նչ գործ ունիս հոս, ծօ՛, անհաւատ, ծօ՛, իշու գաւակ:

— Հո՛ս, իմ տո՛ւնն է, — պոռացի իմ կարգիս, կուրծքս ցցած:

Լման խումբը ոտքի ելած էր արդէն եւ ես հագիւ ժամանակ ունեցայ անդրադառնալու, թէ ինչպէս, անոնցմէ մէկը, մէջքէն ֆակած էր արդէն պարսատիկը եւ ես միայն գիտեմ, թէ շաշին մը լսեցի:

Քարը, ուղիղ գծով մը, վայրկեանական նեղֆեց մեզ բաժնող հեռուորութիւնը եւ եկաւ զարկաւ նակսիս: Զարկաւ եւ վար ինկաւ, ոտքերուս տակ: Ծոռեցայ եւ ասիս մէջ առի գայն: Այրած քար մըն էր, ողորկ ու կըլոր. բոցերէն սեփ սեւ եղած: Ճակատս՝ արեան կաթիլներ սկսան իյնալ տնոր վրայ: Այն ատեն միայն անդրադարձայ, թէ վիրաւորուած էի: Թէ անոնք թուրքի լակուտներ էին, բազմաթիւ ու չար: Իսկ ես միտակ, միս-միտակ՝ աւերակ տանս մէջ, անոնց դիմաց:

Քարը սեղմեցի ասիս մէջ ու փախա՛յ...

Ահա՛ դէպքը, անկարեւոր, անհրա՛ն, բոլոր անոնց քով, գորս մեռն տեսած եմք, որոնց զարհուրանքը դառնուած է մեր աչքերուն մէջ, անջրնջելի՛ք...

Ահա՛ եւ վերքը, նոյնքան անկարեւոր, նոյնքան աննշան, բոլոր անոնց քով, գորս մեռն կը կրեմք մեր մարմիններուն վրայ ու մեր հոգիներուն մէջ:

Զարհուրելին վերքը չէ՞, տղա՛ք. զարհուրելին անոր ձգած սպին է: Վերքը ա՛լ գոցուած է, բուժուած: Սպին կը մնայ:

Ու կու լա՛յ. կը պոռայ ան. կը խօսի միշտ բարկանայք, կը խռովէ՛, կ'ազազակէ՛...:

Ամէն անգամ, որ կը շօշափեմ գայն, կամ կը նայիմ անոր, հայելիին մէջէն, ինծի կը թուի, թէ յա՛նկարծ կ'ողջնայ ան: Հին վերքը կը բացուի նորէն, կը սկսի արիւնիլ: Նայ՛ յամբ, յետոյ աւելի արագօրէն, արեան կաթիլները կը սկսին հոսիլ: Կը ցայտեն ուղիղ, կարմիր կը ներկեն շուրջս, հայելին, պատերը, կ'ողողեն ամբողջ մարմինս: Աչքերս կը գոցեմ՝ չտեսնելու համար այդ արիւնը, ձեռքս կը տանիմ նակսիս՝ կասեցնելու համար անոր հոսումը, ի գո՛ւր: Ան կը ժայթֆէ միշտ, հետզհետէ աւելի ուժեղ, հերոզներէ աւելի առատ:

Ու կը խորհիմ, թէ այդ ամբողջ արիւնը չի կրճար իմ երակներէս ելլել, ամբողջ բանակի մը արիւնն ըլլալու է, ամբողջ ցեղի մը: Բոլոր վիրաւորները կարծէք ինծի կը ճամբեն իրենց արիւնը, սրտիս մէ՛ջ կը պարպեն եւ անկէ է որ կը ժայթֆէ ա՛ն, այդ համայնական արիւնը, բոլոր վերքերուն արիւնը: Անոր կռակները կը սկսին բարձրանալ սրունքներս ի վե՛ր, կը հասնին մինչեւ կուրծքս: Զխեղձուելու նիւթեր կ'ընեն, բայց անգուռ:

կը բարձրանան անոնք միշտ, կը բարձրանան մինչեւ կոկորդս, կը լեցնեն բերանս, կը խուծեն աչքերէս ներս: Կարսնցուցած եմ արդէն ինձզիննիս, ամէն ինչ կարմիր կը տեսնեմ այլեւս: Կատաղութիւն մը կը շրջէ աչքերս եւ առեւելի մոնչիւններով կը մխրենմ ձեռքերս այդ արեան մէջ, հոն բան մը փնտռելով, առարկայ մը, կարծր բան մը, քարի մը կտորը, քարը, այդ քարը...:

Ահա՛ վիճակս: Վիճակը բոլոր տնոնց, որոնք ծնան, տառապեցան ինծի հետ: Անոնցմէ ամէն մէկը ունի իր վերքը, ունի իր վերքին սպին: Իր վերքին եւ սպինն քարը...:

Չարձակուեցան անոնք երբեք: Վաթառն տարի է, տղա՛ք, չարձակուեցա՛ն այդ քարերը: Եւ մենք չե՛նք ուզեր, եւ մենք չե՛նք կրնար մեր հետ տանիլ զանոնք: Պէտք չէ մեզի հետ թաղուին անոնք:

Ուստի, այսօր, կը յանձնենք զանոնք ձեզի:

Վստահ եմք, թէ անոնք վստահելի ձեռքերու մէջ են: Վստահ՝ որ պիտի գիտնաք գործածել հարկ եղած պարագային, պէտք եղած ատենը:

Դուք, որ ունիք ազատութեան եւ արդարութեան սէրը: Եւ զանոնք վերահաստատելու ուժը: Դուք որ ունիք մարդկային արժանապատուութիւն եւ զայն պաշտպանելու կամքը եւ միջոցը: Դուք որ խելացի էք եւ ուժեղ: Տիրացած տիեզերական ուժերու զազումիւմներուն: Դուք որ գիտէք աստղեր արձակել երկինքն ի վեր ու վար ստնել զանոնք: Դուք որ բանտել գիտէք արեւին հառազայթները եւ անջատած հիւլէն: Դուք որ հսկայ ուղեղներով ելեկտրամարդիկ էք, հսկայ ուղեղներով գիտնականներ, բնագէտ, քիմիագէտ, կենսաբան ու մանրէաբան:

Վերահաստատեցէք արդարութիւնը, երկրի վրայ: Արժեւորեցէ՛ք անպատուրած եւ ոտնակոխուած մարդկային արժանապատուութիւնը:

Պայման չէ արիւն թափել:

Դուք ալ գիտէք, թէ մենք չենք ծնած արիւն թափելու համար, այլ մարդկօրէն ապրելու, ստեղծագործելու, երջանկութիւն եւ բարիք սերմանելու: Մենք չենք ծնած արեւելու ու քանդելու համար, այլ կառուցանելու, ո՛չ թէ չորցնելու, այլ արգաստորելու, ո՛չ թէ տիզմի եւ արեան մէջ սողալու, այլ նախրելու:

Բայց եթէ ռուիշ միջոց չկայ, որ մենք այս մեր սիրած կեանքը ապրինք...:

Եթէ չկա՛յ ուրիշ միջոց...:

Կործանեցէ՛ք այն ատեն Ոմիդին բոլոր պալատները: Այրեցէ՛ք, չորացուցէ՛ք Չարեցէ՛ք: Չորացուցէ՛ք անոր մինչեւ ամենախորունկ արմատները:

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Ռ. Ո Ր Բ Ե Ր Ե Ա Ն

Ես ԿԱՐՁՑԱԾ ...

Լոյսերը մարեցան: Պատկերափերի յայտադիրը աւարտեցաւ: Պահ մը կատարեալ լըսութիւն տիրեց: Սարսուռ մը տնցաւ բոլորիս մարմիններէն:

Բան մը պատահեցաւ: Անգիւղացիք բան մը: Տաք Հեղուկ մը ուղեղէս սկսեալ Հոսեցաւ զէպի ստեղծութեան եւ զյիսապտոյտ զգացի:

Լուսութիւնը կրկոր շտեղծեց: Պարզուող զէնքերու ահաւոր աղմուկը եւ ծովուն բացերը գտնուող Հսկայ Նուէրու մարմին փշաւազող սոյլը լեցուցին մթնոլորտը: Բնազգարար Հնոսացայ պատաշարին մասէն, կրք բոլորը կ'ուզէին զուրս գալ, զիտելու Համար կրկնեցը զարդարող լոյսի խաղերը:

Նէս գիւղեր է եւ մենք կ'անցնենք մէկ ատրիէն միւսը: Եւ կաները կ'աղջազուրուին:

Հին օրացոյցը կ'ընէ իր պատուանդանէն: Թուանշան մը միայն փոխուած էր նորին վերայ: Ատոր Համար կ'արժէր այսքան ազմուկ, այսքան յոգնութիւն, այսքան ծախս... Թուանշան մը փոխուած էր միայն եւ մենք պէտք էր որ սուրբանայինք եւ, մա'նաւանդ, փառք տայինք Աստուծոյ, ստիպուելով որդի աւանդական անխուսափելի Տէրունական աղօթքը, ծայրէ ի ծայր: Այդպէս կը փափաքէր տանտէրը: Միտուկ-

ներն ու պատանիները ժամանակակից գտնելով մեծերուն այս կեցուածքը, հեղեական ժպտաներով կը նային բարձրամայն աղօթողներուն...

Կիսամութիւն մէջ, կրկն սեբուղներ կեցած են կողք կողքի: Մեծ-Հայրիկը, մեծ-Մայրիկը, մենք եւ փոքրերը: Դժուար է այլեւս զսպել փոքրերը: Անոնք անհամբեր կը սպասեն վերջին բառին, խոյս տալու Համար սենեակէն:

— Սպասեցէ՛ք, ես ալ աղօթք մը պիտի ընեմ...

Փոքրիկները կը սուսին: Մենք, նոյնպէս, կը պահենք մեր շունչը: Նը զգանք, որ ներքին փոթորիկէ մը արդիւնք է այդ նախազատութիւնը: Մինաս աղաթի զես ալ աղօթք մը պիտի ընեմք: Ես արթնակ կը թուի մեզի: Որովհետեւ գիտենք, կամ կը կարծենք, որ անհաւատ է ան: Ատուծէ բարկացած է կրկոր տարիներէ ի վեր: Ա'աղօթքը, եւ կեղեցի չի յաճախեր, յարգանքի նուազագոյն տուրքը կը զլանայ եկեղեցւոյ ծառաներուն: Եւ յիսկ իր գաւակներուն ամուսնութեան առիթներով եկեղեցի չէ մտած: Գիտէինք նաեւ, որ խստիւ պատիւրած էր զուսկներուն, որ իր մաւուսան օրը զինք եկեղեցի չտանին: Եթէ ոչ՝ իր գերեզմանէն պիտի անիծէր զանոնք:

Այո, Մինաս աղա լըջօրէն կամ բացառիկ առիթներու:

բարկացած էր Աստուծէ: Այն օրէն ի վեր, երբ անպատին մէջ կ'որոնցուց իրեն յանձնուած փոքրիկ եղբայրը: Աստուած չունց իր աղօթքներն ու ազալանքը: Ինք ա'յն ատեն պէտք ունէր Աստուծոյ: Հիմա ի'նչ ընէր: Հիմա, որ ամէն բան կարգին է: Այն ատեն Ան չէր լըսած զինք: Ան չէր լսած ծերազիր բազմութիւններուն բարձրազգակ աղօթքները: Ան չէր արդիւնք երբեմնի զփափկատուն տիկնանց թոռնուհիներուն ինձոյքը ձիւն մը զիտակն շուրջ: Ան Հիացումով վերէն դիտած էր անպատին Հազուադիւս քարերով իրենց ստամոքսներուն տրտունջը լուցնող սովալլուկ էակներու զէպի մահ կըթը:

Այս բոլորէն հոգ անիմաստ էր աղօթել: Մա'նաւանդ Հիմա: Գո'ւթ, ու զորմութի'ւն, առողջութի'ւն, քաջութի'ւն: Այս բոլորը ունէր Հիմա:

— Սպասեցէ՛ք, ես ալ աղօթք մը պիտի ընեմ...

Վաթսուն տարիներէ ի վեր աղօթք չարտասանած բերթանէն բառերը զուրս կու գան Հատիկ-Հատիկ, ինքնապատահ: Զարմանալի էր իրապէս: Ան թրգրէնը կը զործածէր, լարթըան բոլոր օրերուն, Հայերէնը վերապահելով Կիրակիներուն կամ բացառիկ առիթներու:

Ձայեր կուռ է, խորհրդա-
ւոր.

— Որչի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յախճապնի, չօրհ ածարարի անգնիմ ծնունդ, որ սկսեալսն առ ի բն եւ ոչ ինչ որ ի ծագել անստուեր Յշուից ռզորմուպեան քա փառաց՝ հալի ին մեղք, ետլածին դեմք...

Այստեղ կանգ կ'առնէ Մի-
նաս ազա: Եւան կ'ընէ սակայն,
որ պիտի շարունակէ: Յիշողու-
թիւնը կը դուստնէ իրեն, ձիգ
կ'ընէ եւ վարի շրթունքը կը
խածնէ ընդհատ-ընդհատ:

Ամէնքս լուռ ենք: ոչ ոք
կրնայ արնէ իրեն: Առանձինն կը
տեսնուի՝ դանդաղ շարժում
թափ թէլը:

Մտքով արագ հաշիւ մը կ'ը-
նեմ. նուազադաշնը կէս դար ա-
ռաջ սորվուած ազօթք մը ըը-
լալու էր այս մէկը: Պատանու-
թեան զոյրը եղած էր իր ծնըն-
դավայրին մէջ: Անկէ ի վեր չէր
մտածած կրօնի մասին: Իսկ
տաղ-տասերհնգ տարեկերէ ի
վեր տեսողութիւնը կրօնցո-
ցած էր արդէն: Ուրեմն, Հիւնէն,
լառ հրէն կու գային ազօթքին
բառերը: Բայց մեկը մ'ըլ գի-
տէր, թէ ի՞նչ կ'աղօթէր, որո՞ւն
բառերով կ'աղօթէր: Ոճէն կը
հետեւեցնեմ, թէ նարեկացի ըը-
լալու է: Կարեւորը, սակայն,
հեղինակը կուսնելը չէր, այլ՝
ազօթքը ճանչնալը: Եւ ես չեմ
ճանչնար. եւ ես չեմ գիտեր:
Չեմ կրնար օգնել անտպարի մէջ
Քրիստոս այս հայուն: Տասնեակ
մը երիտասարդներ ենք իր
չուրջ. մենք մասամբ թրքախօս
հայերը արհամարհող, բայց
նարեկացիէն նոյնիսկ տղ մը
գոց չգիտցող:

— Հոգ չէ, Մինաս աղա,
այսքանն ալ կը բուէ:

— Ո՛ր, հիմա կը յիշեմ.
վայրկեան մը սպասեցէք:

Կիսամութ է: Սեղանին վը-
րայ մօտի մը լոյսը կը զլուլայ:
Ծերունին մօթի աչքերով կը
փնտռէ, աչքերը սեւեռած մօտե-
րու կրակին:

— Թիթա, աղէիկա, դո՞ւն ալ
չեա գիտեր...

Ապստակի մը ուժգնութիւնը
ուներ իր խոսքը: Գէթ ուրիշ ա-
զօթք մը գիտնայի նարեկա-
ցիէն, վայրկեանը փրկելու հա-
մար: Բարբախտաբար տագնա-
պըս երկար չի տեւեր. առանց
այլեւայլի, առանց նախարանի,
Մինաս աղա կը վերսկսի.

— Քեր ոչ եկիր կարուս-
նիլ գմարդկան ողիս, այլ կե-
ցուցանիլ. քող իմ գանձի չա-
րիսմ իմ քաղաւ ռզորմութեամ-
բըց, զի դու միայն ես յերկմի
անճառ, եւ յերկրի անգնիմ, ի
սարք գոյի, եւ յեզրս ծագաց
աշխարհի, սկիզբն անճառնի եւ
յամենայնի անճառն յոմմար,
օրհնեալ ի բարձունս, եւ քեզ
ընդ ձօր եւ չնգույղ արքայ փառք
յաւիտեանս, ամէնք:

Չեմ կրնար ըսել, թէ անա-
ւարկելի յաղթանակի մը փայլը
կը շողայ աչքերուն մէջ: Անոնք
եանկուսած են սեւ ակնոցներով:
Բայց զէմքին միաններուն պըր-
կուսը ինքնապահութիւն մը կ'ար-
տայայտէ:

— Կեցցէ՛ Մինաս աղան:

Ուրիշ ոչինչ կրնանք ըսել:
Մեծ-հայրիկը չի սիրեր աւելորդ
գնդուսները, կը հանէ սեւ ակ-
նոցները: Թաշկինակով կը մաք-
րէ աչքերը եւ ատեն մը կը մը-
նայ աղպկիս, առանց ակնոցի:
Մանր, տեղայլ աչքերը ինձի կը
վրայ բացուած պատուհաններ:
Կը նայիմ այդ պատուհաններէն
դուրս: Հոն կը տեսնեմ արիւն,
ուսաց, սպիտակներ: Եւ աստ՛գ...
եւ աստ՛գ... Եւ կարուսն մը կի-
նէրու, անգէմ կիներու եւ անոնց

փէշէրէն կախ երեխաներ... Ա-
նա՛ փոքրիկ Մինասը, տղիկէ մը
մեռէն բոնած, կը քաշուի մօ-
րը հասնէն... աստիկան-պահա-
կին անուշադէր մէկ բուսէնն օդ-
տըւելով, կը պահուածի կտոր
մը ժայռի ետեւ... կարուսնը
կը հեռանայ... մայրը քրջանիկ
է: Գիշերը մօտ է. յոգնասպառ
երեխաներուն քունը կը տանի:
Առտու, Մինաս կ'արթնայ ա-
ռանձին: Ո՞ր էր եղբարը...
ոտիկաննե՛րը տարին, թէ վա-
զեց մօրը հասնէն:

Մինաս տարիներ ու տարի-
ներ ծառայեց անապատի արաբ-
ներուն մօտ: Բայց չգրուաւ եղ-
բարը:

Հնամտի՞քը:

Հնամտիք չէր փնտռեր ար-
դէն: Միայն օր մը, մէկ ան-
գամ, գտաւ իր մօր եւ միւս
մայրերուն անգանկ մտգերու
հիւսփերը... բարակ մայաւէնով
կապուած:

*
**

Պատուհանները փակուեցան:
Մինաս աղա գրու ակնոցները եւ
հագաւ իր ամէնօրեայ զէմքը:

— Մինաս աղա, ես կը կար-
ծէի, որ Աստուծոյ լեւ հուսա-
տար:

— Աղէիկա, մարդ կրնա՞յ
վշտանալ գոյութիւն յունեցող
բանէ մը:

Արդարեւ:

Ան գոյութիւն ունէր իրեն
համար: Եւ ինք բարեկացած էր
Անոր դէմ:

Վաթա՞ւն տարիներ...

Այսօր կը բռնար բերանը՝
աղօթելով զի խորոց արտի խօսք
ընդ Աստուծոյն, նարեկացիի
գրէնով, բայց իր պապական ճո-
ղիով...

ՌԻԹԱ ՈՐՔՆԵՐԻՆԷ

Կ Ե Ա Լ Ո Ւ Ե Ր Ի Ն

Ա Ր Տ Ը

Տեսարանը կը հեւար օրավերջի լր-
նութեան մէջ: Կիզիչ սաստիկ տիրուպե-
տութենէն թնթեցած՝ բնութիւնը սկը-
սաւ շնչել, եւ բոյսերու սուսփիւնը, որ
կ'ախիջաւորուէր հորիզոնէ հորիզոն, ան-
ծայրածիր լինէ մը մոյզ ջուրերուն տը-
պաւորութիւնը կը թողուր:

Բարձունքի մը ծայրէն կը սկսէր
զանաճ կաղնիներու անտառը, որ կը տա-
րածուէր մինչեւ լեռնաշղթայ մը՝ ուր
կը հոսէին գոպաթններուն հալած ձիւնէն
գոյացած զուլալ դէտակները: Հոն,
տարուան տաք եղանակին, շրջանի բո-
լոր թիւրքմէն եւ ջիւրա աշխրէքները կը
բարձրանային իրենց հօտերով:

Նստած ծառի մը շուքին՝ Սեյիմ,
այդ բարձր գիրքէն, կը դիտէր դիմացի
գիւղը, որուն տուները հանդարտօրէն
կը մազլէին բլուրին կողմ ի վեր: Վա-
րը, ընդարձակ հովիտին մէջ, կովեր՝
անշարժ արձաններու պէս, կ'որոնային:
Երբեմն մարդ մը կը յայտնուէր կամուր-
ջին կողմէն, ծանրարեոնուած իշու մը
սանձը քաշելով: Գետակը կու գար կա-
նաչ լեռնաշղթային կողմէն, կը սողոս-
կէր հովիտին մէջ եւ, անցնելէ ետք կա-
մուրջին տակէն՝ կ'երթար կը միանար
Եփրատի ճիւղերէն մէկուն:

Սեյիմ ոտքի ելաւ, աչք մը նետեց
շուրջը արածող ուշխարներուն եւ ձայն
ստաւ, որպէսզի հեռացողները զգուշա-
նան: Իրմէ քանի մը քայլ անդին, ժայ-

ռի մը շուքին՝ երկնցած էր Պողոս, իր
հաւատարիմ գաճփուր: Սեյիմ շոյեց ա-
նոր դուխը ու վերադարձաւ իր տեղը:
Նայուածքը անզգալարար կանգ առաւ
բարձունքին այ կողմը, շոր ու ամայի
տարածութեան մը վրայ, որ կը նմանէր
շատոնց սպիացած վերքի մը, ոչյս կա-
նաչազիւլ բնութեան մէջ:

Յետոյ աչքերը կրկին ուղղուեցան
գիւղին կողմը:

Տած ու նախնական խրճիթներու
աճբոյլը կը կազմէր մարի թաղը, ուր
տեղ տաած էին էրզրուսի նահանգէն ե-
կած թուրք գաղթականները: Վերի թա-
ղի տուները աւելի ցանցառ եւ աւելի
կոկիկ էին: Աչքի կը գարնէր խոշորակեղ
չէնք մը, որուն պատերը սեւցած էին
հրդեհէն: Գիւղին հայկական եկեղեցին
էր, որուն մէջ գիւղացիները հիմա կ'աժ-
բարէին իրենց արջաօխն ձմրան ճարակը:
Իսկ քովի փլատակը, որ ժամանակին
դպրոց էր, հիմա կը ծառայէր իբր ա-
խոս:

Իսկ զիչ մը անդին, թաղին ծայրը,
կար երկյարկանի տուն մը, որուն մէջ
կը բնակէր գիւղապետը: Ծրջափակի վե-
րէն կը տեսնուէր առաջին յարկի տախ-
տակէ լաշն պատշգամբ, որուն երկայն-
քին կը տարածուէին արիւշին սարփինա-
ները: Այսօր, սակայն, ան դադրած էր
պտուղ տալէ, եւ ճիւղերը կը կախուէին
հիւանդ մանուկի մը թեւերուն պէս...

Տարիներ առաջ, այդ տունը իրենց տունն էր: Ամէն յետմիջօրէի, երբ կ'արձակուէր դպրոցէն, լռկերներուն հետ վազվզելով կը հասնէր տուն: Հայրը վերջացուցած կ'ըլլար իր գործը եւ, թրթռնիին տակ նստած՝ գիրք կը կարդար: Հայրը ջուլհակ էր: Օրն ի բուն մագոց կը նետէր գոյնզոյն թէյերու ցանցին մէջ եւ շաքաթ կ'էսորները, ջորիին վրայ բնօրնելով իր հիւսած կերպանները, կ'երթար մտակայ ջաղաքը՝ դանձոք զմտածելու համար: Տնեցիները անհամբերութեամբ կը սպասէին անոր վերադարձին, որովհետեւ երբ կանգ կ'առնէր բակին մէջ՝ ջորիին խուրջիները լեցուն կ'ըլլային նուէրներով եւ աղանդերներով:

Մայրը գրագած կ'ըլլար խոհանոցին մէջ: Մեծ ջոյրը՝ Սուսամ, պատշգամին վրայ նստած, կար կը կարէր կամ ձեռագործ կ'ընէր: Իսկ պզտիկ ջոյրը՝ Մարալ, որ գեռ դպրոց չէր երթար, պուպրիկ կը խաղար բակին մէջ անկիւնը, աբրիւրին մօտ: Երբեմն, ընկերներով կ'երթային արտերը ծաղիկ հաւաքելու համար: Արեւը մարը չմտած՝ մշակները կը վերադառնային դաշտէն, իսկ հոգիւնները նախբը կը բաժնէին իրենց տէրերուն:

Կիրակի առաւոտները, ժամկոչը իր փայտէ թակով կը զարնէր կոշնակին վրայ, եւ ամէն մարդ կը պատրաստուէր եկեղեցի երթալու: Սելիմ կը յիշէր խորանին վեր կախուած եւ մոմերու մուխէն սեւցած Աստուածամօր պատկերը, որ Յիսուս Մանուկը գրկած՝ իրեն կը ժպտէր միշտ: Քահանային թաւ ձայնը կը լսուէր շարականներու ելեւէջներուն մէջէն եւ խուկի քույրները տանիքէն թափանցելով կը բարձրանային մինչեւ երկինք...

... Այդ օրերուն անունը Սեբոբ էր: Եւ օր մը պատահած էր ահաւոր բան մը: Պզտիկները բակէն դուրս չէին եկած. մշակները դաշտ չէին գացած. Հայրը քաղաք չէր իջած: Կէսօրին՝ շուրջի գիւղերէն մարդիկ խուժած էին, ոստիկանները մտած էին տունէ տուն եւ մարակի

հարուածներով դուրս քշած էին հայերը: Կարգը եկած էր իրենց: Հայրը ընդդիմացած էր: Ոստիկանները պազանային կատաղութեամբ յարձակած էին վրան: Ինք խոյացած էր ոստիկաններուն վրայ՝ հայրը ազատելու համար: Ոստիկաններէն մէկը կ'իջի հարուածով մը գինք ընկրտած էր պատին վրայ: Գլխուն մէջ զգացած էր սուր ցաւ մը եւ ուշադրոյս ինկած էր գետին:

Երբ աչքերը բացած էր, ոչ ոք տեսած էր շուրջը: Ելած էր դուրս: Փողոցներն ալ ամալի էին: Գիւղին վրայ կը սաւառնէր մեռելային լուծիւն մը: Հոն՝ վարը, կամուրջին կողմը, ահաւած էր գիւղի բնակիչներուն կարաւանը: Մընողքն ալ հոն ըլլալու էին: Գլուխը գետ կը ցաւէր, ոտքերէն մէկը ծանր էր: Կաղալով բռնած էր կամուրջի ճամբան: Կարաւանը հասած էր քաղաք տանող ճամբու դարձուածքին: «Մայրի՛կ, մայրի՛կ» պոռալով վազած էր անոնց ետեւէն: Երբ հասած էր դարձուածքին, որ կը գտնուէր բարձրութեան մը վրայ, տեսած էր կարաւանը հոն, գիւղի սահմաններէն անդին: Կը պատրաստուէր շարունակելու վաղքը, երբ աջ կողմէն լսած էր հառաչներ եւ հոնդիւններ: Ձայնը կու գային իրենց դրացի Ստեփանին արտէն: Անցած էր ցանկապատը եւ քարացած էր զարհուրելի տեսարանի մը առջեւ: Քսանի չափ դիակներ փռուած էին հոս ու հոն, ոմանք դեռ կը թփրտային, ուրիշներուն կտրուած կոկորդէն կ'ելլէր խոկոց մը: Բոլորն ալ կացինահարուած էին: Իաշտին միւս անկիւնը, չորո մարմիններ պատկած էին անշարժ: Առաջինը պզտիկ ջոյրը՝ Մարալին էր: Հայրը պատկած էր քիչ մը ակն, դանկը ճեղքուած մինչեւ ծոծրակը: Իսկ մայրը եւ մեծ ջոյրը՝ Սուսամ, զիրար գրկած, իրենց բաց աչքերը ուղղած էին երկինք: Սուսամ կիսամերկ էր եւ ճեղքուած կոկորդէն արիւն կը հոսէր շարունակ:

Փորձած էր հօրը դիակը տեղափոխել, բայց չէր կրցած: Վերցուցած էր Մարային մարմինը եւ տեղաւորած մօր եւ Սուսամին միջեւ, որպէսզի զայն պաշտպանեն: Ու ինք անոնց մօտ նըս-

տած՝ լացած ու աղաչած էր, որպէսզի արթննան եւ հետը խօսին :

Փանի մը օր ետք, թուրք զիւղացիները եկած հաստատուած էին ամայացած տուներուն մէջ : Ինք ելած էր զիւղի լեռան բարձունքին, եւ օրեր շարունակ ապրած էր կաղին ուտելով : Մետելները սկսած էին հոտել, եւ հազարաւոր ճանձեր խուժած էին անոնց վրայ, վերի թուրք զիւղացիներուն պէս, կրճելու համար անոնց միտերը : Առտու մը, մարդիկ եկած էին բահերով ու բրնձերով եւ փոսեր փորելով մարմինները թողած էին տեղն ու տեղը : Ինք քարեր շարած էր, ճշգրիտ համար իր սիրելիներուն թաղւած տեղը :

Սելիմ երկար մնաց այսպէս անշարժ : Արեւը կ'իջնէր գիւղին կողմը : Փամփուր սկսաւ թեթեւ հաղոցներ արձակել ու վազվզել աջ ու ձախ՝ հաւաքելու համար ցրուած ոչխարները : Սելիմ ցնցուեցաւ մութը պիտի կոխէր եւ ինք դեռ կորսուած կը մնար մտորումներու լարիւրին թոսի մը մէջ : Քաղցր դերբուկ արահետէ մը, որ կը տանէր վար, գէպի հովիտը : Ոչխարները կը հետեւին իրեն՝ զբլուրին կախ, մինչ գամփուր կը հալածէր ուշացողները՝ ընդհատ հաղոցներով : Կամուրջէն բաւական առաջ, կանգ առաւ : Փամփուր պոչը շարժելով մտեցաւ իրեն :

— Պոզո՛, — ըսաւ, — ուշադրութի՛ւն, ես հիմա կու գամ :

Խելացի կենդանին անցաւ հօտին գրլուխը եւ դանդաղեցուց անոր ընթացքը : Սելիմ թեքեցաւ դէպի աջ, քաղաքին կողմը : Արտը կը մնար այնպէս՝ ինչպէս լքուած էր տարիներ առաջ : Իմանալով հոն կատարուած սպանդը՝ ո՛չ մէկ զիւղացի ուզած էր զայն հերկել : Կը զգային, որ ահաւոր անէծք մը կը սաւառնէր Կիւսուրի արտին վրայ :

Սելիմ ծունկի եկաւ հոն, ուր թաղւած էին իր սիրելիները եւ հեծկլտալով հողը կը համբուրէր, եւ շրթունքներուն վրայ կը զգար անտեսանելի կրակի մը

հպումը : Յետոյ՝ բերանը անոնց ականջին մօտեցնելով, ցած ձայնով շշնջաց .

— Հայրի՛կ, մայրի՛կ, Սուսա՛մ, Մարա՛լ, ես եմ՝ Սերոբը : Օր մը ձեր վրէժը պիտի լուծեմ եւ ձեր չիրիմներուն վրայ պիտի թափեմ այդ ճիւղներուն արեւնը :

Յետոյ ոտքի ելաւ ու վազեց կամուրջին կողմը : Պոզոն լաւ կատարած էր պաշտօնը : Երբ հասաւ գիւղ, մութը սկսած էր կոխել : Ոչխարները անդառնեց զոմի վերածուած դպրոցին մէջ ու ինք մտաւ քովի փրտտակ սենեակը, որ իրենց ուսուցիչին՝ պարոն Ռոստոմին բնակարանն էր :

Հաղիւ երկնցած էր փութաթին վրայ, երբ յայտնուեցաւ լաճ մը :

— Սելի՛մ, — ըսաւ, — զիւղացեալը այսօր հիւրեր ունի եղեր, քեզ կ'ուզէ :

Ընդարձակ բակին մէջ, զիւղացիները շուրջանակի նստած՝ բարձրաձայն կը զրուցէին : Պատուհանին մէջ, լամբին բոցը մերթ կը զորանար, մերթ կը սկսուանար եւ երթեւեկողներուն շուքերը այրանդակ շարժուածներով կ'անցնէին դիմացի պատին վրայէն :

Տաք եղանակին, զիւղացիները զրեթէ ամէն գիշեր կը հաւաքուէին երեւելիներէն մէկուն բակին մէջ եւ զրուցելով եւ երգելով ժամանակ կ'անցընէին : Երբեմն ընթրիք ալ կ'ըլլար, երբ դուրսէն կարելոր հիւր մը ժամանէր : Երբ սկսէին ձանձրանալ, կանչել կու տային Սելիմը, որպէսզի դիւրեմք զուարճազնէ : Սելիմ նկատուած էր տեսակ մը միամիտ ծաղրածու, որուն հետ կարելի էր ընել ամէն տեսակ կատակ :

Ո՛չ ոք ճշգրիտ տեղեկութիւններ ունէր անոր ինքնուրեք մասին : Տարիներ առաջ, զիւղացի մը, որ քաղաք կ'երթար հովիւ մը վարձելու, զայն տեսած էր ճամբուն եզերքը եւ բերած էր գիւղ, որպէսզի արածէ իր ոչխարները՝ կտոր մը հացի փոխարէն : Տղուն պատմածները այնքան անորոշ եւ խառնակ բաներ էին, որ ոչ ոք կրցաւ հասկնալ անոր անցեալը : Չայն դանդաղ թուրքը բացատրեց, որ Սելիմ՝ շրջակայ գիւղերէն մէկուն աղքատ ընտանիքի մը զաւակն էր, որուն ծնողքը

սպաննուած էին հայ ֆետայիներու կողմէ :

Սեյիմ նստաւ բակին մէկ անկիւնը : Գիւղպեալը նստած էր արիւնի տակ, աղին ունենալով մոլլան, եւ ձախին՝ հարկահաւաքը, որ օրուան հիւրն էր :

Գիւղպեալներէն մէկը Սեյիմին կողմէ հրեց խորունկ ափսէ մը, որուն մէջ հաւաքուած էին փիլաւի մնացուկներ եւ կրծուած ոսկորներ : Հոգիւր, հակառակ իր զգուանքին, մեծ ախորժակ կեղծելով, լեցուն ափով բերանը կը տանէր փիլաւը եւ կը կրծէր ոսկորները, որոնք արդէն անցած էին բազմաթիւ բերաններէ : Երբ վերջապէս, լսեց դիւղպեալին ձայնը, որ կ'ըսէր .

— Սեյիմ, ելի՛ր, մեզի պարէ արջի պարը :

Սեյիմ ոտքի ելաւ, արձակեց քանի մը ոռնոցներ եւ սկսաւ պարել իր այլանդակ պարը : Գիւղպեալները խնդալէն կը ձաթէին, թէ եւ այս պարը տեսած էին ճարտարուոր անգամներ : Պարի ընթացքին, անոնցմէ մէկը, գաղտագողի կը մօտենար Սեյիմին եւ հարուած մը կու տար կռնակին, կամ ոտքէն քաշելով կը տապալէր գետին : Խնդուքը կը փոթորկէր եւ կը հասնէր մինչեւ վարի թաղին տուններ . . . Սեյիմ զայրոյթի ոռնոցներ կ'արձակէր, կը նայէր շուրջը, իբր թէ յանցաւորը գտնելու համար, յետոյ կը շարունակէր երեքալ՝ անշնորհ կենդանիին պէս . . .

— Սեյիմ, — կ'ընդմիջէր դիւղպեալը, — ինչպէ՞ս կը զուայ ջաղացպան Մեհմետին էջը . . .

Սեյիմ կը դառնար չորքոտանի, աքաղանիներ կու տար օդին մէջ ու կը գտար : Յետոյ, միշտ դիւղպեալին հրամանին վրայ, կը հաջըր Պողոսին պէս :

Գիւղպեալները բաւարարուած ըլլալով՝ Սեյիմ քաշուեցաւ անկիւն մը : Այլիւս ոչ ոք կը զբաղէր իրմով : Նայեցաւ շուրջը : Իր աջ կողմը նկատեց քանի մը անծանօթ դէմքեր, որոնք լուռ ու մունջ նստած՝ օտարականի ապշութեամբ կը հետեւէին անցուղարձերուն :

Գիւղպեալը, որ կը խօսակցէր հարկահաւաքին հետ, դարձաւ Սեյիմին կողմ

մը եւ ցոյց տալով անծանօթները՝ ըսաւ .

— Սեյիմ, այս տարի նախըրբ պիտի յանձնես թիւրքմէներուն, որովհետեւ հոս ընկիւր ունիս : Այս հեմշիրիները գաղթած են Կարսի կողմերէն եւ պիտի հաստատուին մեր գիւղը : Այլին հրահանգած է, որ անոնց յատկացնենք մշակելի հողեր : Մեր տրամադրութեան տակ ունինք Կետիկլիի այգին, որ գիւղէն երկու ժամ հեռու է, եւ Կեաւալիին արտը, ուր ցոր՝ էր մնայ անմշակ : Երկու բնտանիքներու միջեւ վիճակ պիտի նետենք, որպէսզի բաժանման պատասխանատուութիւնը մեր ուսերուն վրայ չիյնայ : Դուն ալ հերթարար պիտի օդնես այս երկու գաւալը գաղթական ընտանիքներուն :

— Ե՛մ տ լաւ, աղա՛, — ըսաւ Սեյիմ, — երբ որ պէտք ըլլայ, ես պատրաստ եմ :

Սեյիմ կծկուեցաւ իր անկիւնը : Գիւղպեալները այլեւս ուշադրութիւն չէին ընենք իրեն : Պատուհանին մէջ զետեղուած լամպին բոցը կը պարէր՝ անհանգստ հողի մը պէս :

Սեյիմ կը դանդաղ իրենց տան բակին մէջ : Պատերուն ծեփի ինկած էր տեղտեղ եւ պտտած լաթի տպաւորութիւն կը թողար : Մէջտեղի թթենին վերձուած էր կմախքի եւ պտուղ չէր տար այլիւս : Աղբիւրին գուռը ճեղքուած էր մէկ կողմի վրայ եւ ջուրը, առուակելով բակին մէկ անկիւնը՝ կը կողմէր դարչահոտ ճահիճ մը :

Ժամանակին այս բակը որքա՞ն մաքուր եւ հաճելի էր : Խոհանոցին կը լրսուէր մօր շարած ամաններուն ձայնը : Վերբ, պատշգամին վրայ նստած՝ Սուսամ ձեռագործ կ'ընէր ու իր աղուոր ձայնով կ'երպէր : Մարալ կը խաղար գուռին ջուրով : Հայրը աշխատանոցին մէջ մազող կը նետէր :

Հիմա անոնք իրենց յաւիտենական քունը կը քնանային Կեաւալիի արտին մէջ, եւ ահա այս անպիտանները կ'ուղէին սրբապղծել անոնց տառապած ոսկորները :

— Ո՛չ, — ըսաւ ինքնիրեն, — ո՛չ, այս բանը պէտք չէ որ պատահի : Ինչո՞ւ .

ողջ մնացի ես, ինչո՞ւ կ'ապրիմ, եթէ չեմ կրնար պաշտպանել նոյնիսկ իմ սիրելիներուս գերեզմանը:

Քանի մը շաբաթ ետք, Սելիմ ոչ-խարհերը յանձնեց թուրքմէն Հովհաննարուն, որոնք պիտի ամառէին դիմացի լեռնաշղթայի արտադրարարուն վրայ: Պոզոն ալ մնաց հօտին հետ:

Առտու մը, Սելիմ եւ երկու դիւզացիները մեկնեցան Կեաւուրի արտը՝ գայն հերկելու համար: Շաբաթը երեք օր պիտի օգնէր մէկուէն, եւ երեք օր՝ միւսին: Գիւղացիներ անոնց փոխ տուած էր պէտք եղած գործիքները, որպէսզի կարենան նախնական աշխատանքները տանել: Աշնանավերջին, երբ սկսէին հերկերը, մոլլան անոնց փոխ պիտի տար իր եղները եւ արօրը, քանի մը օրուան համար, փոխան հատուցումի:

Երկու թուրքերը կը ջայթին առջեւէն: Մուսթաֆա, քառասուննոց հուսիկ լեռնական մըն էր, իսկ տղան՝ Քեմալ, քսան տարեկան թիկնեղ երիտասարդ մը: Սելիմ կը հետեւէր անոնց՝ գործիքները ուսին:

Անցան կամուրջը եւ քաղաք տանող ճամբուն կողմէն մտան արտ: Մուսթաֆա կանգ առաւ դաշտին եզերքը եւ քրննեց գայն:

— Կը գարմանամ, — ըսաւ իր զակին, — այս արտը բերրի է եւ գիւղին այնքան մօտ: Ինչո՞ւ ցարդ անմշակ մընացած է:

— Ես ալ կը գարմանամ, — ըսաւ Քեմալ, — Սելիմին հարցուր:

Մուսթաֆա մօտեցաւ Սելիմին, որ գործիքները ուսին, անշարժ կանգնած էր դաշտին եզերքը եւ կը վախճար կոխելէ իր սիրելիներուն աճիւններուն վըրայ:

— Սելիմ, — ըսաւ Մուսթաֆա, — այս արտը ինչո՞ւ լքուած է:

— Այս արտը կը կոչուի Կեաւուրին քաղան: Հոս թաղուած են գիւղին հայրնակիչներէն ոմանք, որոնք սպաննուեցան մեծ ջարդի ատեն: Անոք վրայ կը

սուսանի ահաւոր անէծք մը: Ո՛վ որ կը փորձէ հերկել այս արտը, երկար չ'ապրիր:

— Կեաւուրներ շատ մեռան սեփէլ-պիլիֆին, հարիւր հազարներով, եւ հոս չէ միայն, որ թաղուած են անոնց դիակները: Դուն անցած ես Քեմալի կիրճէն, ուր միայն գետը միջոց ունի հոսելու: Հոն հազարաւոր կեաւուրներու կմախքները դեռ կը մնան անթաղ: Նեղ անցքին վրայ շեռ կրնար ոտք կոխել՝ առանց փչրելու անոնց շորցած ոսկորները...

— Մուսթաֆա աղա՛, — Հարցուց Սելիմ, — դուն կեաւուր սպաննա՞ծ ես...

— Ո՞ր թուրքը կեաւուր չէ սպաննած: Կեաւուր սպաննել սրբազան պարտականութիւն մըն է: Ո՞րքան շատ կեաւուր սպաննես, ա՛յնքան լաւ ընդունելութիւն կը գտնես մեմլէթին մէջ: Ա՛հ, Սելիմ, եթէ տեսնէի՛ր, ի՛նչ հրճուանք: Դուն այդ օրերուն մահուկ էիր: Եթէ մեծ բլրայիբ, դուն ալ կը մասնակցէիր այդ համայնական խրախճանքին եւ քանի մը կեաւուր ալ դո՛ւն կը խողովողէիր: Գերագոյն որսորդութիւնը՝ մա՛րդ արարած որպէս է, մա՛նաւանդ անպաշտպան մարդ արարած: Ի՛նչ հեշտանք: Ամէն անգամ, որ դաշտնդ կը մտնէ մանուկի մը ճերմակ կուրծքէն ներս, կամ կացինդ կը ճեղքէ երիտասարդի մը զանկը, կը զգաս այնպիսի սարսուռ մը, որուն հետ բաղդատած ամէնէն գեղեցիկ կնոջ տուած հաճոյքը ոչինչ է: Գեղեցիկ կիներ եւ մատղաշ աղջիկներ շատ կային այդ կարաւաններուն մէջ: Շատեր կը կարծեն, որ կին բռնաբարելը այդ մարդուն մեծագոյն հաճոյքն է: Անոնք կը սխալին: Մենք՝ թուրքերս, երբ առիթը գտնենք կը նախընտրենք մորթոտել՝ մեծ պալլաւի ոչխարներուն պէս, այդ տարօրինակ եւ արտասովոր սարսուռը զգալու համար:

Սելիմի բերերուն վրայ իջաւ մութ վարագոյր մը, որուն վրայ կարծիբ արին կը հոսէր, իր բարի Սուսամին եւ աղուոր Մարային երակներուն արիւնը: Գլուխը շարժեց ու, բրբէջ առնելով՝ քանց մինչեւ արտին միւս ծայրը, իր սիրելիներու աճիւններէն հետու: Միւս եր-

կուքը հետեւեցան իրեն, եւ երեքը միասին սկսան արժատախիւլ ընել վայրի տատակները:

Մուսթաֆա բրիչի զօրաւոր հարւածներով կոշկորներ կը հանէր արտէն: Թէնեւ անոր սպասածը ուրիշ բան էր: Իր կատաղի բնազդներէն մղուած՝ կարծէք երկորդ անամ կ'ուզէր սպաննել այդ անիծեալ կեաւորները: Յանկարծ ձեռքը տարաւ ետին եւ բարձրաձայն խնդարով, ցոյց տուաւ քարի նմանոյ կ'ուր բան մը: Մարդկային գանկ մըն էր: Մատները խոթեց անոր ակնակապիճներուն մէջ եւ նետեց դաշտէն դուրս, քարերու կոյտին վրայ:

— Մուսթաֆա էմմի, — ըսաւ Սելիմ, զայրոյթը գոպկումով, — լաւ բան չէ մեռելներուն վրայ խնդալ: Այսպիսի գանկեր շատ կան այս դաշտին մէջ, լաւ չէ անոնց հանգիստը խոռովել: Դուն չե՞ս վախնար մայրերու անէմքներէն:

— Կեաւոր մայրերուն անէմքները չեն կրնար ազդել հաւատարիմ միւսլիմ-մաններուն վրայ: Մենք զանոնք ջարդեցինք, գրաւեցինք անոնց ինչքերը եւ ահա կը վայելինք հանգիստ սրտով: Դուն անհող եղիք եւ շարունակէ աշխատանքը:

Մինչեւ իրիկուն, հազիւ կրցան մաքրել դաշտին մէկ պզտիկ մասը: Մուսթաֆա նոյն կատաղութեամբ կը փորէր հողը, եւ նոյն անտարբերութեամբ քարերու կոյտին վրայ կը նետէր դուրս կլլոյ գանկերը եւ ոսկորները:

Երբ գիւղ կը վերադառնային, Մուսթաֆա ծիծաղելով ըսաւ.

— Այս արտը ո՛չ թէ անիծուած է, այլ օրհնուած է: Գիտես, որ անիկա կարծածէ՞լ շատ աւելի բերրի է: Նախ՝ բիբջ չէ տուած տարիներէ ի վեր, եւ յետոյ՝ հոն թաղուած կեաւորներուն մարմինները դայն պարարտացուցած են կատարելապէս:

Շարթուան միւս երեք օրերը, Սելիմ գնաց աշխատելու Կեաիկլիի այգին, բայց մտքէն չէր հեռանար Կեաւարիմ արտը: Անոր կէսէն աւելին մաքրուած էր արդէն: Շուտով պիտի հասնէին այն անկիւնը, ուր թաղուած էին իր հարազատները: Մուսթաֆա սովորականին պէս

բրեչը պիտի զարնէր հողին, դուրս պիտի հանէր գանկ մը եւ անտարբերութեամբ պիտի նետէր քարերու եւ ոսկորներու կոյտին վրայ: Թերեւս առաջին գանկը հօր գանկը բլլար:

— Ո՛չ, — կ'ըսէր Սելիմ մտայիլ, — ո՛չ, այդ բանը չեմ ձգեր, որ պատահի, չեմ ձգեր, որ այս սրիկաները պզճեն սրբելի ծնողքիս եւ անմեղ քոյրերուս յաւիտենական ջունը: Արդէն շատ համբերեցի, պէտք էր միջամտելի, երբ առաջին գանկը դուրս բերին: Այդ ալ հայու գանկ էր:

Կէսօրուան արեւը կը ճնշէր ընտ-թեան վրայ: Բարձունքներու ծառերը անշարժ վկաներու պէս կը սպասէին, որ պէտքի կատարուի արդարութիւնը: Իսկ արեւախանձ տարածութիւններուն վերայ, ծղրիթները, եղերամայրերու պէս՝ կը սփռէին իրենց յաւիտենական ողբերգը:

Սելիմի մատները պրկուեցան բրիչի կոթին վրայ: Աչքերը մթապնեցան: Տարիքոտ գիւղացին, որ ձախին կը դանդաւէր, շտկուեցաւ, ճակատը սրբեց եւ նայեցաւ արեւին:

— Կարծեմ ճաշի ժամանակն է, — ըսաւ, դառնալով իր 15 տարեկան մանչուն, — Նուրի՛, այսօր գիւղ երթալու կարգդ է: Մօրդ ըսէ, որ քանի մը հաց աւելի դնէ եւ թանը չխնայէ: Մարաւէն պիտի մեռնինք:

Նուրի քակեց էջը, նետուեցաւ քամակին ու բռնեց գիւղին ճամբան: Բուցակայութիւնը կրնար տեսնել մէկէն մէկուկէս ժամ: Գիւղացին դնաք երկնցաւ ծառի մը շուքին:

Սելիմի սիրտը սկսաւ տրոփել: Մունկի ինկաւ հողին վրայ եւ զայն համրուելով ըսաւ.

— Ուրախացէ՛ք, ուրախացէ՛ք, սիրելիներս, այսօր ձեր վրէժը պիտի լուծեմ:

Սելիմ երկննայու պէս ըրաւ գիւղացիին պատկած տեղէն քիչ մը անդին: Երբ նկատեց, որ ան խոր ջունի մէջ էր, առաւ բրիչը ու զրուշուրեամբ հեռացաւ ծառէն: Մէկուկէս ժամ ունէր՝ կատարելու համար իր առաքելութիւնը:

Երբ բաւական հեռացաւ գիւղացիէն, նետուեցաւ առաջ: Կեանարին արտը հասնելու առջին կարճ ճամբան ինք միայն գիտէր: Փոխանակ բռնելու գիւղին ճամբան, որ աւելի հարթ էր, շեղեցաւ գէպի աջ ու մտաւ զաճած կաղնիներու անտառին մէջ: Արահետ գրեթէ զոյւթիւն շունչէր, բայց ինք չէր զգար փուշերուն խայթոցը եւ սուր ժայռերուն խաճուածքը: Մագնիսի մը պէս կ'ընթանար ուղիդ իր նպատակակէտին: Երբ հասաւ բարձունքին ծայրը, ուրկէ ամէն օր կը դիտէր գիւղը, կամուրջին վրայ նշմարեց Քիմալը, որ Նուրիին պէս կ'ընթար կէսօրուան ճաշը բերելու: Մուսթաֆա առանձին էր ուրեմն Կեանարի արտին մէջ:

Սեյիմ ջալեց ծառին կողմը, ուր պառկած էր Մուսթաֆա: Թուրքը, որ կէս քունի մէջ էր, աչքերը բացաւ:

— Հա՛, — ըսաւ, — Սեյիմ, դո՛ւն ես: Լաւ ըրիր, որ եկար: Եթէ այսօր մեզի օգնես, արտին մաքրութիւնը կը վերջացնենք:

— Մուսթաֆա է՞մի, — ըսաւ Սեյիմ հանդարտ ձայնով, — երէկ գիշեր երազ մը տեսայ, որուն մէջ զունն ալ դեր ունէիր: Այս արտին մէջ թաղուած մեռելները գուրս ելած էին հողէն եւ, շրջանակ մը կազմած շուրջը՝ վրէժ, վրէժ կը պոռային... Դուն սկսաւ վախնալ, ոչնչ տեսն անոնք վրազ յարձակեցան եւ սկսան թզկտել հագուստներդ...

— Այդ ի՞նչ ապուշ երազ տեսած ես, Սեյիմ, — խնայաց Մուսթաֆա, — ինչպէ՞ս կ'ուզես, որ տարիներ առաջ մեռած ու ոսկոր դարձած գիտկները կարենան վրէժ լուծել:

— Մեռելները գուցէ չկարենան անձամբ լուծել իրենց վրէժը, բայց անոնք հրահանգ կու տան ողջերուն, որպէսզի իրենց տեղը գործեն...

— Լսեցի, որ դեռ ողջ կեանքներ կան ցրուած աշխարհի զանազան երկրներուն մէջ: Բայց անոնցմէ ո՞ր մէկը կը յանդգնի ոտք կոխել այս կողմերը եւ ձեռք վերցնել թուրքի մը վրայ...

— Ե՛ս, — պոռաց Սեյիմ, — որովհետեւ ես կեանքի զաւակ եմ: Այդ

զաւակն մէկ անկիւնը թաղուած են ծրնոցքս եւ երկու քոյրերս. մէկը 16 տարեկան էր, միւրը՝ երեք: Այս գիշեր անոնք եկան երազիս մէջ եւ ինծի հրահանգեցին, որ պաշտպանեմ իրենց շիրիմը եւ վրէժ լուծմ...

— Բայց ես չէի զանոնք սպաննողը. ես այս կողմերը չէի այդ օրերուն:

— Այդ օրերուն զունն մարդու որսորդութիւն կ'ընէիր Քեմալի կիրճին մէջ, ուր դեռ կը մնան իմ միւս հարազատներու անթաղ ոսկորները: Գիտցիր, որ աշխարհի ամէնէն մեծ արարքը վրէժն է, մանաւանդ՝ երբ զոհերը անմեղ են եւ դահիճները քեզի պէս զազաններ...

— Սեյիմ, Սեյիմ, — պոռաց Մուսթաֆա, երեսը ծածկելով...

Բրիտիս հարուածը վրիպեցաւ: Մուսթաֆա ոտքի ելաւ եւ սկսաւ վազել գիւղին կողմը: Սեյիմ երկու ուսուժով հասաւ ետեւէն եւ բրիչը իջեցուց անոր ծոծրակին: Մուսթաֆա ինկաւ գետին, ճիշդ հո՛ն, ուր թաղուած էին իր սիրելիները: Մուսթաֆա վիրաւոր՝ պառկած էր փոնակին վրայ: Երրորդ հարուածին բրիչին սուր ծայրը մտաւ անոր ճակտին մէջ: Մահը եղաւ վայրկեանական:

Արիւնը կը հոսէր շոր հողին վրայ, որ գայն կ'ըմպէր անյառ բերանի մը պէս...

Սեյիմ գիտեց ձգեց տեղը, բրիչը նկատեց մէկ կողմ ու վազելով վերադարձաւ առիւթ...

Երբ հասաւ, Նուրի դեռ չէր վերադարձած գիւղէն. իսկ հայրը, ծառին տակ նոյն գիրքին վրայ պառկած՝ չէր նկատած Սեյիմի բացակայութիւնը:

Քանի մը օր ետք, դիւղապետին մարմինը գտան քաղաք տանող ճամբուն մօտերը, խորունկ վէրք մը ճակտին: Ուրի՛ւ գիւղացի մը, որ կը յոխորտար տասնևակ մը հայ մանուկներ եւ կիներ ջարդած ըլլալու համար, մեռած դտնուեցաւ իր տան բակին մէջ:

Այդ օրէն գիւղին բնակիչները մտնրեցան ահ ու սարսափի: Մութը կոխածին պէս, դուռներն ու պատուհանները ամուր կը դոցուէին: Փողոցները կ'ամայանային: Ո՛չ ոք կը յանդգնէր ա-

ուանձին էրթայ քաղաք, կամ աշխատիլ գալտերուն մէջ:

Երբեմն, կէս գիշերին, ԿԽԱՒԱՐԻ արտին մէջ կը տեսնուէր խորհրդաւոր լոյս մը: Յաջորդ օրը ոչ ոք զուրս կու գար իր տունէն: Գիտէին, որ ամէն անգամ որ այդ լոյսը կը տեսնուէր, յաջորդ օրը մահը կը խոյանար գիւղացիներէն մէկուն վրայ: Անոնք, որ իրենց ձեռքերուն վրայ հասու արիւն ունէին, կը կրծկուէին իրենց տան անկիւնը, վախնալով, որ ԼԹՔ զուրս դան իրենց սենեակէն, վրիժառու ուրուականը պիտի տայ մահացու հարուածը:

Եթէ այդ ժամերուն մէկը քաջութիւն ունենար մօտենալու ԿԽԱՒԱՐԻ արտին, պիտի տեսնէր մարդկային կերպարանք մը՝ ծնրազրտած հողին վրայ, որ բարձրաձայն կ'աղօթէր ու կը խօսէր գլուխը հողին մօտեցնելով, մինչ խորոյկին բոցերը կը ճարճատէին քիչ մը անդին:

Քանի մը օրէն հօտերը պիտի վերադառնային արօտափայրերէն, եւ Սէլիմ զանոնք կրկին պիտի առնէր իր հսկողութեան տակ: Պողոն ալ պիտի վերադառնար:

Գիշեր մը, Սէլիմ ելաւ իր անկողինէն ու մտաւ ամայի դռնին մէջ: Թեւեւրուն տակ առաւ չոր ճիւղերու խուրձեր ու մօտեցաւ գիւղապետի տան: Յետոյ մէկիկ-մէկիկ կրակ տուաւ խուրձերուն ու զանոնք նետեց իրենց տանիքին ու պատշգամին վրայ: Երբ բոցերը սկսան լիզել շէնքերն պատերը, եւ փայտէ մասերը կրակ առին, Սէլիմ լսեց ներսի վայնասունը ու սիրտը հրճուեցաւ: Ազմուկէն

ամբողջ գիւղը ոտքի վրայ էր:

Սէլիմ չվերադարձաւ իր սենեակը: Հանդարտ քայլերով բռնեց անտառի ճամբան: Երբ հասաւ քարձուղին վրայ, այն ծառին տակ, ուր սովորաբար կը հանգչէր ամբան տաք օրերուն, դարձաւ գիւղին կողմը: Հրդեհը առած էր ամէն կողմ եւ տուները կը բռնկէին իրարու ետեւէ: Գիւղացիներու պողոտայը կը հասնէր մինչեւ իր ականջին:

Ուրախ էր: Ո՛չ միայն լուծած էր իր սիրելիներուն վրէժը, այլև կրակով սրբած էր այդ ճիւղերուն ոճիւրներուն հետքերն իսկ:

Երբ լոյսը բացուեցաւ, գիւղին ամբողջ վերէ թաղը մոխրի վերածուած էր: Սէլիմ վերջին նայուածք մը նետեց ԿԽԱՒԱՐԻ արտին կողմը ու քալեց դէպի լեռները...

ԿԽԱՒԱՐԻ արտը մնաց անմշակ: Անձրեւները եկան, հովը փչեց եւ հարթեց անոր վերաւոր մակերեսը:

Ամէն դարնան, ամբողջ արտը կը ծածկուէր կարմիր կակաչներով: Երբեմն գիւղին մանուկները կու գային խաղալու, հակառակ իրենց ծնողներուն հրահանգներուն:

Երբեմն անոնցմէ մէկը կը փորձուէր կակաչ քաղել: Երբ ծաղիկը կը փրցընէին, անոր ցօղունէն կը կաթէր կարմիր հեղուկ մը: Մանուկները չէին գիտեր, որ այդ կարմիր հեղուկը ԿԽԱՒԱՐԻ արտին մէջ թաղուած հայ նահատակներուն արիւնն էր, միշտ թարմ եւ միշտ մաքուր...

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԻՈՒՏԵԱՆ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ

Հանուն Նահապետիկաց. Հասն Նուարդայ

Վաթսուն տարի է անցել:

Հայոց Մեծ Եղեռնի պատմութիւնը իր բիրաւոր դրուագներով գրուել է մատենաներում, մատուցի պէս պահպանուել մութ ու լուսաւոր արխիւներում եւ բազմիցս ներկայացուել միջազգային ատենաներին: Ու տակաւին կայ չգրուած պատմութիւնը հազարաւոր անանուն էակների, որոնց մարտիրոսացմանը վկայ է եղել միայն Աստուած: Վաթսուն տարիների ընթացքում այնքան արցունք է քափել այս ժողովուրդը, որ այլեւս արցունք չի մնացել: Արցունքը ցամաքել, մնացել է ատելութիւնը, մնացել է դառնութիւնը, որը թոյնի պէս վարակել է համայն ժողովուրդին: Այլեւս վիշտ չէ, ցաւ չէ, տառապանք չէ, այլ մի ինչ-որ ազգային իւրայատուկ հիւանդութիւն, որը շարունակ քերում, քանդում, քայքայում է հայի հոգին, հիմն ի վեր սասանում երէց ու նոր սերունդների կեանքը եւ դեռ իր ցաւման թուրայի մէջ թաթախում չծնուած հայ սերունդների կեանքը:

Ինչո՞ւ:

Ինչո՞ւ այսօր անհուն ու անըմբռնելի է հայութեան ցաւումը:

Տեղասպանութիւնը նորութիւն չէ մարդկութեան պատմութեան մէջ: Դեռ վաղնջական ժամանակաշրջաններից ի վեր մարդը սպանել է մարդուն, հզօրը ոչնչացրել է տկարին, արինոտուտ ցեղերը կատորել են խաղաղաւէրներին: Եւ ի վերջոյ, ի՞նչ է համաշխարհային պատմութիւնը, եթէ ոչ արձանագրութիւնը հզօրների արինալի արշաւանքների, Կարթագէնի անկումից սկսած մինչեւ Տիգրանակերտի գրաւումը, Վանդալների մահասփիւռ համաճարակից սկսած մինչեւ մոնղոլական համատարած ստերը, մինչեւ սելջուկեան խժողութիւններն ու մերօրեայ բռնապետութիւնները: Հայոց եղեռնը ցեղասպանութեան միակ փորձը չի եղել: Պատմութիւնը լի է սպանդներով: Պատմութիւնը կերտուել է արշաւանքներով ու սպանդներով: Մեր ժամանակներում Ստալինը 20 միլիոն մարդ ոչնչացրեց: Հիթլերը մօտ վեց միլիոն հրեաների խեղդամահ արեց: Նիգերիայում երկու միլիոն իբոներ սո-

վամահ եղան: Իսկ մի քանի տարի առաջ Բանգլադեշում ի սպառ ոչնչացման սպառնալիքի տակ էին հիմնումները: Յետ չգնանք, քանզի բոլոր ազգերի, գրեթե բոլոր ազգերի, յատկապես Բանգլադեշի կոչեցեալների, ձեռքերը ներկուած են տկարների արիւնով: Եթէ այս է աշխարհի օրէնքը, եթէ այս է դառն իրականութիւնը, հապա ինչո՞վ բացատրել հայի անյատակ ազդեցիկը, որը գերթ խելագար հռնդիւն գրչեր ու սիր գալարում է հայորդիների շնչում:

Մեզ ասում են բաւական է ողորդ: Մեզ ասում են անցեալը անցեալ է՝ հետեւաբար եւ անյետագար: Մեզ ասում են ներկայ թուրքը պատասխանատու չէ իր հօր արարքի համար: Մեզ յորդորում են մոռանալ չարիքը եւ հաշտուել մեր բաժին ողբերգութեան հետ: Ոմանք նոյնիսկ ձանձրանում են մեր սեր պատմութիւնը լսելով: Ինչ է, մի՞թէ առանձնաշնորհ է սպանողը, որ շարունակ յիշեցնում էք, ասում են նրանք: Նրանք չեն հասկանում: Նրանք չեն ուզում հասկանալ: Աշխարհը ինչպէ՞ս կարող է հասկանալ հային:

Նրանք չգիտեն, որ թուրքը մարմնի հետ խոշտանգել է նաեւ հայի հոգին: Զարհուրելիւն այնքան մարմնական սպանող չէ, որքան հոգեկան սպանողը: Եթէ պիտի լինէր կոխ ու գուպար, ապա թող լինէր թշնամի ֆակտորների միջեւ, թէկուզ եւ որքան անհասար ուժերի: Այդ դէպքում հայը կ'ընկնէր գէնքը ձեռքին՝ կամայ ու իր արժանապատուութեան կատարեալ գիտակցութեամբ, ինչպէս մարտնչեց ու ընկաւ Սասունում, Զէյթունում, Վանում, Ուրֆայում, Մուսա Լեքան բարձունքում եւ բազում այլ ֆակտորներում: Այդ դէպքում եթէ նա պարտուէր նոյնիսկ, գէթ պահպանած կը լինէր իր պատիւն ու մարդկային արժանապատուութիւնը: Ահա այստեղ է թաքնուած մեր հոգու պալարը: Թուրքը տմարդի գտնուեց: Ապա ինչու՞ իր մոնղոլա-սելջուկեան ամենաստորին բնագոյներին, ինչպէս նաեւ Արեւմուտքից որդեգրած ֆարսաբարուեստական միջոցներին թրփական կառավարութիւնը այնպէս նիւթեց ցեղասպանութեան իր ծրագիրը, որ հայ անգէն, ուժասպառ ժողովուրդը անգամ չկոտակեց, թէ ինչ է կատարում իր հետ: Երբ գաւազը իր մօր խոշտանգումը տեսաւ, հայրը չկար, որ կուրծքը դէմ տար թրին: Երբ ժողովը բազմիցս բռնաբարուեց խենչ ամբոխի կողմից, չկար արագ եզրայրը, որ պաշտպանէր իր հարագատի պատիւը: Երբ մամիկը կ'իջնէր ու մարեց արագների վրայ, չկար տան սիրնը, որ գոնէ վերջին անգամ սփոփէր նրան: Եւ երբ վիրաւոր որդին հեռաւոր դաշտում եաթաղանների փայլը տեսաւ, նախքան նահատակուելը մի բան սպանուեց իր մէջ, իր հոգու մէջ, իր առնականութեան մէջ: Ամբողջ ցեղի առնականութիւնը վիրաւորուեց: Բացարձակ անկարողութեան այդ սահունի թոյնը: Ամբողջ մի ժողովուրդի ամօթը: Ապիկարութեան զգացումը: Հաւաքական որբութիւնը, անտէրութիւնը, զանգուածային խաչելութիւնը, ֆաղաֆակիրք դաշնակից պետութիւնների անտարբերութիւնը: Ահաւոր կեղծիքը, կեղծաւորութիւնը: Թէ՛ Ռուսաստանը, թէ՛ Անգլիան, թէ՛ Ֆրանսիան եւ թէ՛ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Եղեռնը մեզ խելագարների ժողովուրդ է դարձրել:

Յետոյ, դառնում, ասում են, ինչո՞ւ չէ՛ք մոռանում անց-
եալը: Եթէ լուկ մեռելները լինէին, ապա տարին տասներկու ամիս խունկ կը վառէինք եւ կը ծնրադրէինք մարտիրոսների յիշատակի առջեւ: Սակայն եղեոնը շարունակում է ամէն օր, ամէն հայի մէջ, մեր արեան հետ, մեր հեւքի հանգոյն, անդադար, այրելով, արիւնելով մեր անհատական ու ազգային արժանապատուութիւնը՝ խաւարելով մեր ցերեկը եւ մղձաւանջի վերածելով մեր գիշերը: Անհայրութեան զգացումը սպանում է մեզ: Հայրենի տան կարօտը այրում է մեր սիրտը: Անտէր մնացած հողը կանչում է մեզ: Մի բուռ ժողովուրդ կանգնած բիրտ, ինքնաւեր աշխարհի առջեւ: Մեզ ասում են, ի՞նչ է որ, եղած-չեղածը մէկ-երկու միլիոնի խնդիր է, այն էլ սրանից վաթսուց տարի առաջ...

Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել, ինչպէ՞ս բացատրել ցեղային այս յարատեւ տագնապը, մեր հաւաքական նկարագրի ճեղքուածութեան բուն դրդասպտոնը: Աֆրիկեան սրուջ մթին, վայրագ ցեղախմբերի մօտ մինչեւ այսօր էլ պահպանում է մի սովորութիւն, որ երբ նորածիլ երիտասարդը ուզում է փաստել իր քաջարիութիւնը պատում է թշնամու սիրտը եւ նրա արիւնով հերկում իր մարմինը: Այդպիսով նա ձերբագատում է վեհերոտութիւնից եւ դառնում արժանաւոր մարտիկ: Վերադառնա՞լ քառնձու, մոռանա՞լ իսաչ ու Մաշտոց, կապե՞լ նետ ու սպարաւորիկ եւ վրէժի ճանապարհին դառնա՞լ այն՝ ինչ էր թշնամին: Ասում են փոխուել են ժամանակները, որ հիմա դիւանագիտութեան դարն է: Անհրաժեշտ են փաստ ու փաստաթուղթ եւ մէկ էլ վստահելի բարեկամներ: Ազգերի Լիգան խեղկատակութիւն էր: Մերօրեայ Միացեալ Ազգերի կազմակերպութիւնը հզօր պետութիւնների պերճաշուք մի ակումբ է, որը, ինչպէս միջազգային քաղաքական սակարամ՝ խաղում է անզօր ժողովուրդների նակատագրի հետ, միշտ ելնելով մեծերի շահերից: Բարեկամ աննճճ: Ո՞վ է մեր բարեկամը: Սովետական Միութիւնը: Միացեալ Նահանգները: Բրիտանիան: Ֆրանսիան: Ճապոնիան թէ Չինաստանը: Բոլորի շահն էլ պահանջում է, որ Թուրքիան մնայ հզօր ու ամբարտաւան: Միծաղում են մեր վրայ, երբ Հայկական Հարցն ենք յարուցանում: Չեն լսել: Մոսկուան նման պահանջ չի ներկայացրել: Ընդհակառակն, Լենինն էր, որ երես տուեց թուրքերին:

Մնացել ենք մենակ: Արդէն միշտ էլ մենակ ենք եղել: Օգնելու փոխարէն, պառակտել են մեզ: Ամբողջացնելու փոխարէն, խլել են մեր հողերը եւ բաժանել այլոց: Մի բուռ խեղճ հայեր են, մի կերպ կ'ապրեն, էլի՛... Բայց այդ խեղճ հայերը մի կերպ չեն ապրում: Տենդը մաշում է բոլորին: Հացը քկից ցած չի գընում: Մի կողմում օտարացել է Լեւոնային Ղարաբաղը, միւս կողմում որբացել Արարատը, իսկ Արարատի փէշերից վար ողբում են Արեւմտեան Հայաստանի երբեմնի շէն, հայաբոյր աւանները: Շատերը համոզուած են, որ եթէ Թուրքիայի կառավարութիւնը ընդունի հայոց նկատմամբ ցեղասպանութիւն գործած լինելու իր յանցանքը, ապա ամէն բան լաւ կը լինի, կը մոռացւի է՛ն ու հաշիւ, եւ Արարատեան դաշտում կ'իջնի խաղաղու-

թեան ու համերաշխութեան ազանին: Այդպիսի բան թուրքը չի անի, որովհետեւ նման խոստովանութիւն համագոր կը լինի Արեւմտեան Հայաստանի հողերի բռնագրաւման խոստովանութեան:

Չարենցը ասել է: Չարենցից առաջ ասել են հայ հայդուկները, կամաւորները, յեղափոխականները: Ասել է Քրիստափոր Միքայէլեանը: Իսկ նրանից առաջ՝ Աբովեանն ու Վարդան Մամիկոնեանը: Ասել են ու նահատակուել յանուն հայ ժողովուրդի միասնութեան ու ազատութեան: Ունեւ գիտէին, որ օտարներից շահ չկայ, որ Բրեստ-Լիտովսկում Լենինը աճուրդի պիտի դնէր Հայաստանը, որ յրիտանական ռազմաւաւերը չպիտի կարողանային բարձրանալ Արարատ, որ Ֆրանսիացիները նարտար նառախօսներ են լուկ, եւ որ Հայաստանում քարիւղի հանքեր չըլինելու պատճառով ամերիկեան Սենատը մէկդի պիտի շարտէր վիլսոնեան ծրագիրը: Ունեւ չգիտէին: Փորձում էին հաւատալ արդարութեան յաղթանակին: Միամիտ օրեր էին, միամիտ մարդիկ: Զէ՞ որ Հայաստանը Արեւմուտքի Փոքր Դաշնակիցն էր: Զէ՞ որ իրենիք բրիտանական քաղաքակրթութեան վերջին պատարն էին Արեւելքում:

Ի՞նչ է մնացել, ո՞վ է մնացել: Ոչ ոք չի մնացել: Մնացել ենք մենք՝ սեղմուած լերկ լեռների մէջ եւ տարածուած Սփիւռքի երկայնքում: Մեզանից իւրաքանչիւրի նակատագիրը ընդհանուրի նակատագիրն է, մեզանից ամէն մէկի տագնապը համայն հայութեան տագնապն է: Եթէ վիրաւորուած է մէկը, ապա ամբողջ ցեղն է արիւնում: Եթէ գերուած է վանը, ապա անագատ է Հայաստանը: Հայութիւնից դուրս այլ ինքնութիւն չունենք: Հայաստանից գատ հայութիւնը այլ հայրենիք չունի: Վաթուռն տարի չէ, վե՛ց հարիւր տարի էլ անցնի՝ նորից այս ժողովուրդը պիտի գալարուի անդոհանքի ամեհի ցաւերում, մինչեւ որ տէր կանգնի իր սեփական հողերին: Այդ դէպքում միայն նրա էութիւնից կը պարպուի թռչնը, այդ ժամանակ միայն նա կը վերագտնի իր արժանապատուութիւնը եւ իր արժանաւոր տեղը ժողովուրդների ընտանիքում: Սակայն նախ գիտակցենք իրականութիւնը: Յոյսերով չօրօրուենք: Յենուենք մեր սեփական ուժերի վրայ եւ, անհրաժեշտ դէպքում՝ դիմենք սրբազան խենթութեան, երբ սպառուած լինեն տրամաբանական բոլոր միջոցները:

Երբեք այլեւս...

Այլեւս երբե՛ք հլու հնազանդութիւն, անասնական համբերութիւն եւ հիւանդագին հանդուրժողութիւն: Եւ ոչ էլ լազ ու կոծ: Արցունքի գետերն անգամ յետ չպիտի բերեն մեր խնկելի նահատակներից եւ ոչ մէկին, սակայն մեր իրաւունքների վերականգնումով մենք կը կարողանաք կերտել յանրաժական այն կոթողը, որը եղաւ նրանց լուսեղէն իղձը, վերջին երազը: Նրանք մեռան, որ մնացորդացր ապրի, ապրի ու յարատեւի եւ իր կեանքով պարտութեան մատնի մահը: Սակայն սուգի մէջ վեհանձնութիւն, հաստատականութիւն: Խորունկ սուգը չշփոթել լացակումաժութեան հետ: Թող այլեւս չասեն, թէ լալկան ժողովուրդ է հայը: Որպէսզի ոչ ոք չկարեկցի մեզ:

Երբե՛ք, երբե՛ք:

Ոչ ոքի պարտական չէ հայր: Թող ոչ ոք իրեն խնամակալ չձեռացնի: Թող ոչ ոք վերից չնայի հային: Նա իր ամեն մի բուռ հողը իր արեամբ է պաշտպանել: Նա հաւասար է հաւասարների մէջ: Ո՛չ օտարամոլ եւ ոչ էլ ազգայնամոլ: Նա առել է իր գաւակներին եւ ուզում է ապրել իր գաւակների հետ: Եթէ վերջին երեսուն տարիների ընթացքում մօտ քառասուն ժողովուրդներ իրենց ազգային նակատագրի տէր են դարձել, հասպ ինչո՞ւ հագարամեակների պատմութիւնը նեղֆած հայութիւնը չպիտի ունենայ իր սեփական տունը:

Մեր հողերը տնօրէն են:

Մեր նահատակները կանչում են: Նրանց անիւնը նոյնացել է Արեւմտեան Հայաստանի հողին եւ աւելի նուիրականացրել մեր դատը: Նրանց մահը դարձել է մշտակէզ պատգամ, որ այլեւս երբեք, երբեք թուրքը կամ ոեւէ այլ ռոտիս ձեռք չբարձրացնի հայի վրայ, որովհետեւ դանակն այլեւս ոսկորին է հասել եւ այս ժողովուրդն այլեւս պատրաստ է սրբագան ամեն խելագարութեան: Ցանցանքը աշխարհինն է: Ինչպէս բանաստեղծն է ասում, մեզ ինչո՞ւ այնքան սեղմեցին, որ ադամանդ դառնանք, ինչո՞ւ մեզ այնքան փնջեցին, որ բողոքի բռունցք դառնանք եւ, վերջապէս, ինչո՞ւ մեզ ցրեցին աշխարհով մի, որ այսօր ամեն մի ոտատնում ընդվզումի մի-մի խարոյկ դառնանք: Վաթսուն տարի չէ, վեց հարիւր վաթսուն տարի էլ անցնի, այս ժողովուրդը չի դադարի պայքարելուց, մինչեւ որ իր սեփական հողերի վրայ իրագործի իր ամբողջական երազը:

Այս թող լինի Մեծ Եղեռնի վաթսունամեակի ուխտը:

Մարտ 7, 1975

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ

Կիցապարտեա Վերայայտ ԱԵՏԻԵ

Ժամանակի ամայֆներուն յարմանուտ՝
Ողբակիզուած խոհեր անքաղ-
կեանքին կառչող բեկուած քուեր,
Հողին փարոզ յանգած հնձերգ
Եւ գոյութեան աւագախորի նանսպարե՝
— Մեր երեկը :

Յիշատակի արահետէն միացող՝
Սպասումի մունջ ռեֆլիեմ-
կարօտահունչ հեւք տարագրի,
Փխրուն ծիծաղ տարարնակ
Եւ որոնում՝
Ի սէր
Յրիւ եին օրհնութեան,
Ու եին փառքի՝
— Մեր երեկը :

Կեանքի համայնսպատկերին հայող՝
Անշրջանակ աշնամամուտ-
երկունքէ երկունք քափառող ստուեր-
Մերք յօյսի ազերս,
Նգովքի զբառ,
Վշտի, բերկրութեան
Այեխառն ապրում՝
— Մեր երեկը :

II

Ո՞ւր հեռացան, ա՞ւր,
Ճիւղները օրհասի,
Որ սարֆնցին գեհեմական պատարագ,
Զոհարեբուած՝
Վեսթալներու շուշանաքայր արիւնով :

Ո՞ւր հեռացան, ո՞ւր,
Վտնմակներն մահասփիւս,
Որ պղծեցին
Ժամանակի խորհուրդն անհառ,
Մտածումի դէմքը անեղ :

Ո՞վ իմացաւ, ա՞վ,
Անագնաստանը կանչը Յեղիւն,
Կանչն այնկէդ :
Բռնաբարուող իր հաւատքին,
Հողին,
Երգին ի խնդիր՝
Ո՞վ իմացաւ
Ազադակն իր ամենի... :

III

Կու գանձ երէկի արեւմտեան մթին,
Մեր հոգւոյն վերեւ՝
Հազար մզմանց
Եւ անգարայն հազար տառապանք,
Կու գանձ երէկի հանդերձն մեռեալ,
Խորշակահար մեր դպրութեան,
Ձգտումներուն
Արմաներէն բարունակուող՝
Իբրեւ ընծիւղ լինելութեան :

IV

Պիտի գա՞ս կրկին
Ոգի՛ Յարուցեալ,
Երկաթագրբես
Յարանուան ուղիներուդ պատմութեան՝
Դիւցակական նոր անցքերուդ
Նախարանն իմանալի :

Հաւատարմութեամբ գտնեղինդ խոստում,
Պիտի գա՞ս կրկին,
Շնորհեղով մեզ՝
Ինչ որ զլացաւ բախտը երէկի... :

Պիտի գա՞ս կրկին
Հողի երագով մշտնջենական,
Կալանաւոր մեր իղձերէն
Ծնունդ սուտող
Իբրեւ անսննձ,
Շղթայագե՛րծ Պրումբէտս... :

ՅԱԿՈՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վ. Զ Օ Ր Ե Ն Ց

ԱՔԱ ՄԵՐ ՅԱՂՊԱՆԱԿԸ ...

Պալոնեան անտառը աշխարհահերո- չակ է ո՛չ թէ իր մեծութեամբ, այլ բազմապիսութեամբը իր ծառերուն:

Կ'անհին այնտեղ երեք հարիւր եւ աւելի տեսակի ծառեր: Եւ անոնց մէջ կայ ծեր կաղնի մը, որուն մասին գիտէ Յը- րանայի ժողովուրդը՝ իր կաթնակեր մանուկէն մինչեւ հաղարայր ծերունին:

Ամրացուած է անոր վրայ համեստ ցուցանակ մը, համեստ արձանագրու- թեամբ: —

«Անցորդ, յարդէ այս կաղնին, ու- թուն վրայ կան հաղարի աշն գնդակ- ներուն, որոնք սպաննեցին մէր նահա- տակները»:

Այս խօսքը մերձեցնելով ՅՕամեակին, — կը կոչեմ սրտովս ամբողջ — հայ ժողովուրդ, ԱՊԲԻԼ 24ր յաւերժացուր: Որովհետեւ սովորակամ թուական մը չէ, պարզ իրողութիւն մը չէ,

Այլ թուական՝ աւերամի, կոտորա- ծի, ջարդի, սպանդի, արիւնի...

Ջարդուեցաւ ժողովուրդ մը, ինչպէս չեն ջարդուիր անտառի ծառերն անգամ այդքան անխղճօրէն:

Մորթուեցաւ ժողովուրդ մը, ինչպէս չեն մորթուիր սպանդանոցին մէջ անգամ անասունները այդքան ան- սիրտօրէն:

Ահա այդ թուականէն ադիւն անցաւ աւելի էան կէս դար:

Անեցանք, մեծցանք իմացական ու- ժականութեամբ, ա՛գնամ թիւով:

Մեր տառագանքը չկիսեցաւ տա- կաւին,

ու կիսուիլ չի կրնար:

Որովհետեւ այդ թուականը չէ դը- րոշմուած մագաղաթի վրայ.

չէ մեհեմագիր արձանագրութիւն մը՝ քանդակուած օպերիսի վրայ —

այլ յուաշգիր-բեւեռագիր մը՝

փորագրուած մեր միսին,

մեր ոսկրին վրայ:

Այրիլ 24... Երկու բառ...

այդ երկու պարզ բառին մէջ, սակայն, հիւլէական շիթի մը

անեղ խտութեամբ սեղմուած է պատմութիւն մը նոյնքան անեղ...:

Պատմութիւնը հայ լիններու, ձո- րերու, դաշտերու, որոնք փոխան էրը- տինքի՝

արախայրձանք արիւնով ռոզուեցան:

Պատմութիւնը հայ լիններու, գե- տերու, առուակներու, որոնց արիւնա- խառն ալիքները քաղաքկեցին համեստու- թիւնը հայ կիներուն:

Պատմութիւնը հայ վանքերու, տա- ճարներու, սրբավայրերու, ոչ թէ Աս- տուծոյ փառքը երգող — այլ հռչակող ստորմութիւնը վայրագ ցեղի մը:

Պատմութիւնը մանուկներու՝ դեռ անանուն:

Կայսերու՝ ապագայի մայրութեամբ յուսթի:

Կորիճներու՝ վաղուան օճախը չկագ- մած տակաւին:

Դողդոջ մամիկ-պայիկներու, որոնք թռռիկներու զլխուն իրենց ձեռքը չը- դրին՝ գարեմ անձրեւի մը օրհնարե- րութեամբ: Մտաւորականներու՝ դեռ չսփռած իրենց հանճարին ամբողջ լոյսը:

Կցերականներու, որոնց շրթներէն՝ շա- տրոտանի մը պէս մարգարտացալտ՝ հանապազ կը շարժէր երգ ու շարական:

Պատմութիւն վերջապէս լոյսին ցան- կացոյ ժողովուրդի մը,

ժողովուրդի մը, ինչպէս բանաստեղծը երգած է —

Եթէ գերեր է՝ գերեր է միայն իր ձիւքե- րով,

իր հանճարով:

Այդ ժողովուրդը անա
 ինքինքն կը գտնէր յանկարծուստ
 նիւաղի մը ճիրաններուն մէջ անապատի :
 Եւ ի՞նչ կ'ուզէր այդ ժողովուրդէն
 մարդակեր գազան մարդը : —

Մահացնել հոգին :

Մահացնել մշակոյթը :

Մահացնել սերունդը այդ ժողովուրդին :

Անա հայաչինջ ծրագրին Ալֆամ եւ Օմեկան :

Այո՛, մարդակեր գազան մարդը դըժոխային հնարքներով ձգտեցաւ հեռացնել հայը իր պապերուն հաւատէն — որ լոյս է ու սէր ,

ազնուութիւն ու մարգասիրութիւն :

Ջնջել հայը, որ դարերով արիւն թափած էր այդ հաւատին համար :

Մարդակեր գազան մարդը չէր ուզեր, որ հայը հա՛յ սպրի :

Ոնիր էր այդ օրերուն հայ լեզուն խօսիլը .

հայ պատմութիւն սորվիլը ,

հայ մշակոյթ սերտիլը :

Մարդակեր գազան մարդը տեսաւ , որ անգոր է այլ կերպ մեռցնել հայաւ հոգին ,

որ օրէ օր աւելի կ'անէր ,

ա՛յլ աւելի կը գարգանար ,

ա՛յլ աւելի կը ծաւալէր ,

ու զինք կը թողլէր խաւարակաւ ըստւերի մէջ :

Ծրագրեց ջարդել ըսնը ,

— Ուզեցին մի հայ թռչնել

Ու էն էլ... թանգարանում :

Պատահեցաւ ըսն մը , որ պէտք չէր պատահէր Գաներոյ դարուն ,

դարուն այս լոյսի :

Լոյսի՞ :

Զայն կոչեցէ՛ք խաւար :

Այս դարը՝ թէեւ դարն է ատումա-

կան ,

դարը ֆիւզէի ,

դարը, ուր երթիւներ սկսուած տղի մը տակաւին վերջակէտը չդրուած՝

տիեզերքի շրջանը արդէն կը կատարեն — ինչպէս երգած է հայ բանաստեղծը ,

Բայց մարդը մարդուն այս դարուն դարձաւ գազան ,

ու յօշոտեց ազգ մը ,

որ սիրեց լոյսը , գիտութիւնը :

Ազգ մը , որ ուզեց մարդավայել կեանք ,

մարդու ազատութիւն ,

ու գրկուեցաւ այդ կեանքէն ու ազատութենէն :

Այս դարուն , ուր դիւանագէտներ , օրէմագէտներ յայտարարեցին արար աշխարհին ,

թէ չկան լոկ օրէնքներ թափածոյ ,

կայ եւ իրաւունք :

Թոյլ տուին սակայն ,

այս դարուն իրաւունքի ժողովուրդ մը ցարեանի դաշտի պէս հնձուի ,

չունենայ իրաւունք ա՛յլ միայն սպրիւլ , — այլեւ մարդավայել կերպով մեռնելու իսկ :

••

Գոցենք այս սեւ էջը

Սահարայի անապատի գիշերուան պէս սհարկու ,

ոռպէսգի չսարսափիք ,

որպէսգի արիւն չհրտնիք :

Հարցում մը սակայն :

Հասա՞ւ իր նպատակին մարդակեր գազան մարդը :

Ձեր ակնարկներուն պատասխանը

իմծի կը թո՛ւի ժխտական... .

— Ահա՛ մեր յարթանայլը... .

Վ. ԶՕՐԵՆՑ

Բ. Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն



Կաթողիկոսական ընդհ. փոխանորդ Պետրոս սրբազան, 1938ի ամբողջ ամառը, շարաթր երկու-երեք օրեր, օղափոխութեան լեռնէն կ'իջնէր Անթիլիաս, անձամբ կը հետեւէր Մայր Տաճարի եւ այլ շէնքերու շինութեանց աշխատանքներուն զարգացման: Մանկական հրճուանքով կը նստէր քարակոփներու մօտ, պարզ քարի մը վրայ, կը դիտէր անոնց տաշէին ու քանդակելը եւ կը լսէր անոնց մուրճի հարուածներուն երաժշտութիւնը:

Այսպէս, Սեպտեմբերի մէկ առաւօտուն, երբ նստած կը դիտէր վարպետ քարակոփին աշխատած այն քանդակը — մէկ մեթր արամաղիծով բոլորածեւ քարի մը վրայ, իր իսկ նկարը՝ շուրջառով, կարկառած ձեռքին՝ Տաճարի ցաքանդակը՝ Աստուծոյ ընծայելու դիրքի վըրայ, հին հայոց Գազիկ թագաւորի օրինակին հետեւողարար, որ մետալիսի մեծով դեղաքանդակ շրջանակով մը պիտի պետեղուէր Տաճարի աւազ դրան վերեւ, պատի ճակատին, եւ ալ քոփը նստած, լուռ իր հիացումը դիտած պա՛ռուս՝ միտքէ յանկարծակի փայտասկումով մը բոփ իրեն:

— Սրբազան, ամէն ինչ կատարեալ է. բայց եթէ յաջողէիք մէկ դործ եւս կատարել...

— Դեռ շատ կատարելիքներ կան, որո՛ւն կ'ակնարկես:

— Այնքան կը խօսինք, կը բանախօսենք, կը դրենք մեր նահատակներու

սուրբ յիշատակի մասին. ի՞նչ լաւ կ'ըլլաւ, որ անոնց ոսկորներուն մատունքներով Յիշատակարան մը կանդնէր այս եկեղեցիին ճիշդ քովիկը...

Սրբազանը պա՛հ մը լուռ կեցաւ, աչքերը անբռնիկ յառած, կարծես Տէր-Ձօրի բիւրաւոր նահատակներուն ցրուած ոսկորներու խլրտիլը կը տեսնէր... Եւ յանկարծ իր ձեռքը ծունկին զարնելով դռնէն.

— Եափտը՛մ («չի՛նչի»), — ենթադիտակեցէն վայրկեանին թուած իր մանկութեան լեզուով:

Նահատակաց Յուշարձանի զարդափարով խանդավառուեցաւ նաեւ ճարտարագետ Մարտիրոս Ալթունեան, որ շարթուան մը աշխատանքով բերաւ յատակադիծը՝ բիւրեղ մէկ յղացումը — խաչածեւ քառակուսի խարխիտով, իրարու վրայ նոյնպէս խաչածեւ բարձրացող զանդուածեղ մասերով, որոնք, հետզհետէ ամփոփուելով՝ կը վերածուին կաթողիկէ զուսպ բազմանկիւնի մը, զարձեւել իրարու վրայ ձուլուած խաչերով՝ բիւրեղանալու համար ծաղկող վերջին խաչին մէջ: Ե.Տ.Յ.Ս.Ս. մեթր տարածութեամբ եւ 9 մեթր բարձրութեամբ միաձույլ շինուածք մը, անկիւններու զարգարանքներէն զատ՝ ուրիշ ամէն պատ երկաթ-պեթոնէ ձուլուած դետնէն ղէպի երկինք կոճղացող խաչ մը՝ իր ամբողջութեամբ, երեք կողմերէն երկաթեայ դուռներով, իսկ արեւելքէն՝ խորան մը, որուն ներքեւ

եւ շուրջը կամարներու ապակեպատ կողերուն պիտի գետեղուէին սուրբ նըշխարները նահատակներուն: Այդ միաձայլ քիւրիզացումը կը խորհրդանշէր նահատակներու ոսկորներուն միահաւաք բլրանալը՝ խաչածեւ աստիճանական բարձրացումով:

Մբազանը Չահլէէն կանչել տուաւ Կիլիկիայէն իրեն ծանօթ Հանքեցի վերապարծ Հերոս Յարութիւն Յովակիմ-եանը ու գայն լիագորեց՝ երթալու Տէր-Չօրի յայտնի ու վիայուած վայրերէն Մեծ Եղեռնի հայ նահատակներուն ոսկորները հաւաքելու եւ Անթրիաս բերելու: Եւ անվախ նախկին զինուորականը զննաց, երեք շարաքներու ընթացքին (1938 Նոյեմբեր 27 — Դեկտ. 12) շրջեցաւ 250 քիլոմէթր տրամագիծով տարածութեան մը վրայ զրուած Հայ նահատակութեան վայրերը, Տէր-Չօր, Բասիւ-Այն, Բազգա, Մէսքէնէ, Էրկէտիէ, Աստուր, Ճպուսի, Շիտտատիէ, Եւայն, եւ ականատեսներու կողմէ վկայուած հայաթաղ փոսերու, քարայրներու, հորերու մէջէն ու դաշտարդուրներէն հաւաքեց 150 դանկեր ու բազիլոսկրի, ագրոսկրի եւ կմախքի այլ մասեր... Ասոնց բոլոր տախտակեան 4 սնտուկներու մէջ գետեղուած՝ փոխադրեց Անթրիաս: Ոսկորներու հաւաքումը, կաթողիկոսարանի կողմէ մատուցուած խնդրանքին ընթացք տալով, արտօնուեցաւ Սուրբոյ Հանրապետութեան ներքին գործոց եւ առողջապահութեան նախարարութեան կողմէ՝ անհրաժեշտ հակաեխումներու եւ զրուչութեանց պայմաններով: Ու գործնապէս ոսկորներու հաւաքման գործին օգնեցին Տէր-Չօրի միթեսարըՖ պէյը եւ շրջանի հայ գաղթականները:

1938 Դեկտեմբեր 17ին, Ս. Յակոբայ տօնին, նահատակաց հողեհանգստեան պաշտօնով Հանդիսաւորապէս իմնարկէր կատարուեցաւ Յուշարձան-Մատուին: Այդ առթիւ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Պետրոս սրբազան քարոզեց.

«Այս մատրան մէջ ամփօփ-ւելիք ոսկորներուն մէջ կան մեզմէ բալորին ալ ծնողաց, կա՛մ եղբոր, կա՛մ քրոջ, կամ ազականներուն ոսկորները:

«Անոնք գոռուեցան մեր ազգին եւ մեր կրօնքին համար: Մենք կանգնելով այս Յուշարձանը անոնց սուրբ յիշատակին՝ կը Յուիրագործենք անոնց հանգիւղ համօրէն մեր տածած ազգային յարգանքը:

«Ով որ դոյզն իսկ չափով կ'օգնէ այս յիշատակարանի կառուցման՝ ափ մը հող մետած կ'ըլլայ իր սիրելիներու գերեզմանին:

Նահատակաց Յուշարձանի կառուցման ծրուգիքը ամբողջ սփիւռքահայութեան կողմէ խոր համակրանքով սղուծուեցաւ: Հեռաւոր երկիրներէն իսկ, շատ հայեր իրենց յուզումը յորդող տողերով եւ սրտաբուխ նուիրատուութիւններով նամակներ զրկեցին կաթողիկոսարան, օրհնելով այս ձեռնարկը, որ բոլոր հայերու սիրտին կապուած պիտի մնայ եւ կաթողիկոսարանին նուիրականութեան վրայ պիտի աւելցնէ խորհուրդ մը եւս: Հանդանակութեանց մէջ մեծագոյն բաժինը (150 անդլիական սակի) բերաւ կիպրահայ տիար Վահրամ Իւթիւճեան: Մասնաւոր «հանդանակութեան ցանկեր» բացին՝ «Հայ-օրաթերթեր, ինչպէ՛ս՝ «Յառաջ», եւ ամէն զապութ իր մասնակցութիւնը բերաւ Մատուին շինութեան ծախսին:

Մատուը շինելէ ետք, ճարտարապետ-արուեստագէտ Մարտիրոս Ալթունեան անոր Ս. Ոորանը օժտեց նաեւ իր կողմէ գծուած սքանչելի իւզաներկ նկարով մը, որ կը խորհրդանշէ նահատակներուն դէպի խաչ բարձրանալու ձգտումը եւ անոնց հասնելու իր սիրագործով շարժումին մէջ՝ խաչեայ Քրիստոս պրկումով մը իր աջ բազուկը խաչի գամէն փրցուցած՝ կ'երկարէ ժողովուրդին, գաննք հողէն փրկելու, իրեն քաշելու շարժումով...»

1939 Մարտ 31ին, Մայր Տաճարի օժուժէն երեք շտաբէ ետք, կատարուեցաւ հասե օժուժը Նահատակաց Յուշարձան-Մատուցին, Որուան պատուապէշն էր Լիբանանէ թեմէն կաթողիկոսական փոխանորդ Գերշ. Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Կարոյեան: Հանդիսապետն էր կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս, ու պատարագէշին կը սպասարկէին Տ. Տ. Խորէն եւ Ղեւոնդ վարդապետները:

Գատարագիշ սրբազանը «Ուրեմացիս աղօթքով օրհնեց եւ օժեց Նահատակաց Մատուժը՝ զայն անուանակոչելով Ա. Ստեփանոս, քրիստոնէութեան առաջին վկային ի յիշատակ:

Օժուժէն ետք թափօրը Մայր Տաճար դնաց, ուր շարունակուեցաւ Ա. Գատարագիշ: Գատարագիշ սրբազանը եզեկիէլ մարգարէին Լէ. Կլոսիէն «Զարցում ուկորնելու տեսիլք» բնարան ընելով, քարոզեց, թէ «Աստուած, որ կարծանած պզգեյը կը վերականգնէ, Հա. ազգին յարուբիւմ շնորհեց. քնամիի: Բիրտ հարուածը շկրցաւ ի սարս ջնջել հայուն ուժն ու հոգեկան հարստութիւնները»:

Գատարագի աւարտին, թափօրն ու ժողովուրդը վերադարձան Յուշարձան, ուր կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօնը բիւրտ ու նահատակներու: Եւ այդ պահուն, վեհարանի պատշտակէն կաթողիկոսական տեղապահ սրբազանը խօսեցաւ.

«Ուխտի եկած ենք այսօր մեր նահատակներու մշխարհներուն:

«Հայուն չարչարանքը երկար տնեց: Բըխտով խաչի ճանադար չիր կէս մղոն էր. մինչ հայ ժողովուրդի խաչի հանապարհը եզաւ անծայրածիյ կիզի անապատներ: Բրիտոս Պիղատոս մը ունեցաւ իբր դատարար՝ անը անպարտութիւնը հռչակող, ու կիրեմացի Սիմօն մը՝ իր խաչին ծանր բեռը վեր-

ցրնող. իսկ հայ ժողովուրդը առանց դատարարի, ոչխարի հօտի մը նման ի սպանդ վարեցաւ, եւ ամբողջ աշխարհ լուռ մնաց այդ անլուր տղերգութեան մէջ...


«Անապատներու աւազներ արիւնով օտոզուեցան, ու կարմիր ծաղիկներ ծլան... մարդկային անարգարութեան վշտ պատու: Ոչ աք լսեց հայուն օգնութեան միջերը եւ աղիողորմ ազգակները...

«Ժողովուրդ Աստուծոյ, մի՛ մոռնար բու նահատակները: Յուշարձանը քաղ ճեղի յուշարար լինի: Անոնք մեռան, որպէսզի մենք ապրինք:

«Ու պիտի չկարծուինք. պիտի ապրինք. պէ՛տք է որ ապրինք. մեր իրաւունքն է այդ: Բայց ապրինք եղբայրական սիրով եւ համերաշխութեամբ. մեր նահատակներուն արիւնը քաղ իբր շաղախ միացնէ գմեղ բուրս իրարու...»:

Ամբողջ Սփիւռքի մասուլը արձագանքեց Ա. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարին հետ Նահատակաց Յուշարձանի լըբումին եւ օժման լուրերուն, շեշտելով, թէ յափշտակուած ու կործանած դարաւոր ուխտագրերու տեղ, ահա ազգը կ'ունենայ իր բոլոր դարերու նահատակաց սուրբ ուխտատեղին:

Յուշարձանի շինութիւնը արթնցուց հասե ժիշագային ուշադրութիւն, թէ եւ բազմաթիւ ազնիւ ու երկիւղած անդրադարձումներու կարգին՝ շտաբարար, հանդիպեցանք հասե զայն խափանելու մտադրութեամբ կատարուած պաշտօնական փորձերու: Եւ իբրեւ Յուշարձանի ատուտի պատմութեան անպիշտի մէկ մասը՝ հարկ է, որ պատմանք, թէ անոր շինութեան օրերուն ինչպէս. արտաքին գիտողութեանն ճի. հետեւանքով՝ Փրանսական Բարձր Ինժեներութիւնը հարցապնդում մը կատարեց, բայց բարեխաւտարար գոհանացիչ լուսարանութիւնը



ԱՆՔԻՒԱՍԻ ՏԱՋԱՐԸ, ՉՅԻՐԻՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՆ ՄԱՏՈՒՈՐԸ

Դուսանկար՝ Վարդան Սեբեանի

ստանալով՝ արտօնեց, որ Գրուսեակուհի շինութիւնը:

1939ի նոյեմբերի օր մըն էր, Յուշարձանի պէթոնէ կմախքը հաղիւ բարձրացած Մայր Տաճարի ձախ կողին, առաւօտ մը, Պէյրութի Մեծ Սերայէն Փրանսացի սպայ մը եկաւ՝ Պետրոս սրբազանին ուղղուած կոշնագիրով մը, թէ հաճեցէք վստահելի անձ մը բարձր Գոմիսիոնի զբառնակը գրկել՝ ձեզի վերաբերեալ կարեւոր հարցի մը առբնչութեամբ:

Կաթողիկոսական տեղապահ սրբազանը մատնողութեան պահ մը անցուց: Պատերազմական օրեր էին. Ի՞նչ յուրջ հարց կար արդեօք. դադիականներու վերաբերեալ դժուարութիւն մը նորէն... Ու հրաման ըրաւ, որ անյապագ ես երթայի, իմանալու համար, թէ ի՞նչ է խնդիրը...

Փութացի Մեծ Սերայ, ձեռքս՝ կոշնագիր թուղթը: Առաջնորդուեցայ քաղաքական բաժնի յարկը, նախ՝ հարցաքննուեցայ քարտուղար սպայի մը կողմէ, որ ապա ներս գնաց, եկաւ եւ գիտատնտեսական մեծ սրահը, ուր զարգարուն սերանի էտին նստած էր խստահայեաց գիւտարական մը, ուսին՝ գնդապետի նշաններով... Ու հաղիւ նստելու հրամանը տուած՝ հարցուց.

— Ի՞նչ է ձեր այդ Տաճարին կողքին կանդնած շինութիւնը...

Ներսէս լայն շունչ մը առի, թէ հարցը ուրեմն տեղական խնդիր մըն էր, ու գուրսէս ցոնացի հանդարտ երեւիլ ու ժպտիլ:

— Տէր իմ, — ըսի, — ամէն ազգունի իր Անժաթթ զինուորին յուշարձանը... Քանի մը ատրիներ առաջ, խոր նրկիւղածութեամբ ես ուլ կանդնած եմ Պարիզի, Շան զ'էլիզէի պողոտային գըլուխը կանդնած Յաղթանակի Կամարին ներքեւ անմար բոցով մշտապա յուշարարին առջեւ, թէ ան կը խորհրդանշէ ազգի մը հոգեկամ անմահութիւնը...

— Կը հասկնամ, — միջամտեց ըս-

պան, — մենք ամէն տեղ կանդնած ենք անժաթթ զինուորի յուշարձան, ինչպէս հոս՝ Պէյրութի մէջ, Թրանսակա Արդուսայիւ...

— Անշուշտ, — վրայ բերի ես, — ամէնքս ալ խոնարհած ենք այդ սուրբ վայրին առջեւ... Եւ ահա, տէր իմ, Անթիլիասի մէջ մեր կանդնած այդ վոթրիկ կաթոն ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ Մեծ Պատերազմի քնթացքին զանդուածով տեղահանուած ու զոհուած մեր բիրուար նահատակներուն յիշատակին զարմը եւ զայն շինողն է նոյն ճարտարապետը, որ Պէյրութի Թրանսակա Պողոտայի Յուշարձանը կանդնած է, ինչպէս եւ Նահր-էլ-Քէլայի Յաղթանակի Յուշարձանը...

Լսեց ու պան: Ու ես ատիկա ատիթը նկատեցի աւելցնելու.

— Մեծ Պատերազմի ատրիներուն զոհ ինկած երկու միլիոն նահատակներուն հանդէպ մեր թողածանական յարգանքի մէկ համեստ սուրբը պիտի բլլայ, որ պէտքի աճող նոր սերունդները ճանչնան իրենց նախորդներուն զոհարեցումները...

Մըկար լուսութիւնէ մը ետք, որուն միջոցին միայն իր ձեռքի մատիտը սեղանին կը թփրտացնէր, սպան եղբակացուց.

— Գացէք շինեցէք... Ժողովուրդ մը, որ չի յարգեր իր մեռելները՝ արժանի չէ յարգանքի...

Ու մենք եկանք շարունակեցինք շինութիւնը: Միջամտող, ակնարկող չեղաւ:

Ետքը պիտի իմանայինք, որ Բարձր Գոմիսիոնի ձեռն մօտ զիտողագիր մը զրկուած էր արտաքին պետական ներկայացուցիչի մը կողմէ, եւ այդ պատճառով Անթիլիաս հարցուփորձ կատարուած էր. բայց նոյն պատասխանատու բարձրատիճան սպան այդ գիտողութիւնը յորուցանողին պատասխանած էր.

— Արտօնեցինք, որ անոնք շինեն իրենց նահատակաց Յուշարձանը, որովհետեւ ազգ մը, որ կը յարգէ իր նահատակները՝ արժանի է յարգանքի:

ԻՒՍՏԱՆԻ ԵՂԻԱՅԵԱՆ

ՆՈՐԵՐԸ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒՆ Եսսէն

Հետագայ բաժնին մէջ ստորագրութիւն ունեցող նորերէն շատերը մեզի հետ էին, «Քազէն»ի խմբագրատունը, երբ նահատակ գրագէտներուն էջ նուիրելու հարցը նիւթ դարձաւ խօսակցութեան: Պարտականութիւններու ըստնձնումը եղաւ անմիջական: Ընտրեցին իրենց նախասիրած գէտները ու մեկնեցան: Վերադարձան ձեռագիրներով ու կազմուեցաւ «Նորերը նահատակներու մասին» այս բաժինը:

Տրամադրուած այս էջերուն վրայ, ի հարկէ, կարելի չէր իրենց աւելի ծաւալիլ ու ամբողջական գնահատանքներու ենթարկել նահատակ գրագէտներուն բոլոր կողմերը, այսուհանդերձ կատարուած են յատկանշական գիծերու սեւեռումներ, երբեմն նոյնիսկ նոր արժեւորումներ, եւ այս անգամ իրենց՝ երիտասարդներուն խառնուածքին, հակումներուն, գրականութիւնը ապրելու եւ ըմբռնելու անհատական եղանակներուն թելադրանքներով:

Չենք ուզեր երկարել մեր խօսքը եւ նախապաշարել ընթերցողը, բայց եւ չենք կրնար մեծ կորուստներուն առիթով չանդրադառնալ այն պզտիկ մխիթարութեան, որ աշխարհի վրայ մէկ հատիկ հայ չձգելու մահավնիւռէն նոզուարած բեկորներուն թռուները իրենց լեզուն կը գրեն, հայ գրականութեան մէջ կ'ապրին, կը զողան նահատակ մեծերուն ժառանգութեան վրայ, երկիւզած յարգանքով մը խոնարհելով հայրենանուէր մարդու անոնց գոհաբերութիւններուն եւ ստեղծագործական տենդերով հայրենիքը հարստացուցած մեծ սխրագործութիւններուն առջեւ:

Շարքը կը սկսիմք նահատակներուն տարիքային կարգով:

Պ. Հ Ե Ր Ե Ա Ն



Մենք Հայ գիրք ունեմք, ապահով ուրեմն՝
որ մենք... միշտ չպիտի մեռնեմք, չպիտի ամեն-
տանումք:

ԹԼԿԱՍԻՆՅԻ

ԹԼԿԱՍԻՆՅԻ (1858-1915)

Նոր Դաճապարձներու
Դարեւնա Ձիրը

Քիչ ուսում առած, օտար մեծ լեզուներուն հազիւ ծանօթ
եւ իր գիւղէն մինչեւ Խարբերդ միայն ճամբորդած այս գրագէտը
ինքնուրոյն աշխարհ մը յայտնաբերեց եւ անով դարձաւ գաւա-
ռի գրականութեան մեծ դէմքերէն մէկը:

Վաթսունըփնգ տարեկանին նահատակուած Թլկատինցիին
իրբեւ ժառանգութիւն ձգեց գրական պատկերներ, պատմուածք-
ներ, բանաստեղծութիւններ, քրոնիկներ, նամակներ եւ քանի մը
Թատերգութիւն, որոնք 1927ին իր աշակերտներուն կողմէ հրա-
տարակուեցան ստուար հատորի մը մէջ՝ «Թլկատինցիւն եւ իր
գործը» անունին տակ:

Աւելի ետք, Արամ Անտոնեանի մօտ գտնուեցան Թլկատին-
ցիի կարգ մը անտիպ գրութիւնները, որ նախ՝ Բ. Նուրիկեանի
խմբագրած «Նոր գիր» ամսագրին մէջ յոյս տեսան եւ ապա,
1966ին, տեղ գտան «Հայաստան» հրատարակչութեան հրատարա-
կած Թլկատինցիի հատորին մէջ:

Նահասակ գրագէտներուն մէջ շատ կարդացուած ու ժո-
ղովրդական դէմքերէն չէ Թլկատինցիին, հակառակ անոր, որ մեր
քննադատներն ու գրագէտները հիացումով ողջունեցին անոր գրա-

կանութիւնը, ուր պատկերացուած էին հայ ժողովուրդին կենցաղէն, բարքերէն ու իմաստութենէն անտիպ գեղեցկութիւններ:

Օչական կր դրէ:

«Արեւմտահայ գրականութիւնը իտր ու իտրոր վկայութեանց հանդիսարան մըն է հայ հոգիէն: Անոր մշակներէն իրաւաւոր իր բան մը առերիւծ է այդ հոգիին շնորհներէն: Բայց աչն գրագէտը, որուն մօտ հայ հոգին ամէնէն յատկանշական իր կողմերով նուաճուած ու արտայայտուած ըլլայ, անկա Յովհաննէս Յարութիւնեանն է նորէն»:

Հայկական բնաշխարհէն հեռու ապրած, մեր բարբառներն ու աւանդական ժառանգութիւնները լրջօրէն չուսումնասիրած ընթերցողին համար՝ ճիշդ է, որ թլկատինցին ընթերցողին անմիջական հաճոյք պատճառող դրագէտներէն չէ: Բայց երբ իրապէս մտնենք իր աշխարհին մէջ, իսկոյն պիտի տեսնենք, որ հոն կը բարախէ խորունկ կեանք մը, այլազան երեսներով:

Թլկատինցիի գրական սկզբունքները ճանչնալու համար, յիշենք իր աշակերտներէն Վահէ Հակիի յուշերէն հետեւեալ մասը. «Նարայրութեան դասի ատեն «գարուն», «մայիս», «վարդ» կամ «սոխակ» եւ ատնց նման գործածուելէն յազնած եւ մաշած նիւթեր հոգեւին կ'ատէր: Թարմ, նոր կամ անկարեւոր նկատուած նիւթերուն վրայ կը քաշէր աշակերտին ուշադրութիւնը եւ կը ջանար ատնց մէջէն դուրս բերել անսովոր, չտեսնուած գեղեցկութիւն մը, առնիւքնող պատկեր մը»:

Իր աշակերտներէն պահանջածը ամէնէն առաջ ինք գործադրեց, միշտ զգուշանալով դատարկ քնքուչութիւններէն, սոխակներէն ու գեփուներէն: Խոր ու լուսաւոր աշխարհի մը հետամուտ՝ «չտեսնուած գեղեցկութիւններ» յայտնարեց:

Գրական խորթ ձեւերուն հետ՝ թլկատինցի ճշմարիտ գրագէտի մը բունկումով հարուածեց նաեւ շրջապատի տաճնելի երեսույթները, օտարամտները, մեր տոճիկ բարքերը այլասերողները, ատանց սակայն բանտարկուելու բարացած բմբունումներու մէջ: Անոր մտածումը եղաւ խորացնել ու ծաղկեցնել լաւը, տոճմայիսը, մարդկայինը:

Կեանքը ծածկող վարագոյրները խելօք ձեռքերով չի բանար թլկատինցի, այլ կր պատուէ զանոնք իրաւ արուեստագէտի մը կրթութիւնը շարժումներով: «Ճննդուկներու դատաստանը», «Մե՛ղէք», «Մե՛ղէք», «Քամբակ բերանը» կտորներուն եւ ուրիշ քանի մը գրութիւններու մէջ ան ընթերցողին առջեւ կը բանայ ամբողջ աշխարհ մը, ուր կը հարուածուին կեղծիքները, շահամտութիւններն ու կեղեքումները այլասերած տիպարներու, քահանաներէն մինչեւ աղաները:

Իրենց նահատակութենէն առաջ՝ մեր դրագէտները քանի մը անգամ նահատակուած էին արդէն եւ, այդ նահատակութիւնը չկարենալ բացատրելու անգօրութեան պատճառով՝ յաճախ դառն խօսքեր բսած էին Աստուծոյ, երբեմն հարցականի տակ դնելով նոյնիսկ Անոր գոյութիւնը: Աստուծոյ գոյութիւնը յաճախ հարցականի տակ դրած է նաեւ այս գիւղացի դրագէտը՝ ցեղին մեծ տառապանքին հակադրարար: Ասոր լաւագոյն ապացոյցներէն մէկը «Յիշատակի հայ գիրին գոյգ մեծ տօներուն» խորագիրով

գրութիւնն է, ուր կին տիպար մը կ'ըսէ.

«Զիս շատ մի խօսեցմեր. դուն միայն ան քսէ, թէ Աստուած կա՞յ վերը, մեզի կը հաւտըցնեն, որ էս գալըմ ամօրէնները վերի Աստուածն ալ գարկեր մեղցուցեր են, շիտա՞կ է էսի, դուն ալ կ'ըսե՞ս էսպէս»:

Թլկատինցի կ'աւելցնէ.

«Այս կինը երկար չի լսելու համար իսկոյն կը գոցեմ ապանքս՝ ու շուտով մը նամբաս ափ կ'առնեմ»:

Մեր ամբողջ տառապանքին պատմութիւնն է ասիկա, զոր Թլկատինցին կը պատկերացնէ այնքան կենդանի տիպարներու հետ:

Թլկատինցիի գրականութեան մէջ խօսուն տիպարներուն քով կան լուռ «տիպարներ», որոնք թէ՛ գիւղացի այս դրագէտին եւ թէ՛ մեր գրականութեան մէջ բացառիկ խորք եւ ուժականութիւն ունին: «Քարէ գիրքեր»ը, «Պտոյտ մը գերեզմանոցին մէջ», «Մագաղաթէն ալ հին, քանկագին»ը այդ կտորներէն են: Յաւիտենական հողին, անոր վրայ ապրող մարդուն ապրումներուն, իմաստութիւններուն պաշտամունքը, խորութիւնը, վեհութիւնը կայ այդ գրութիւններուն մէջ, որոնք գրուած են այնպիսի՝ հարգատու թեամբ, որ հիացում կ'առթեն:

«Մագաղաթէն ալ հին, քանկագին»ի առաջին տողերուն մէջ Թլկատինցի կը հարցնէ.

«Հայ գետինը ո՞վ պեղեց ու գիտցաւ բան մը, հայ սեպա-մեւերը ո՞վ եեզեց ու գիւտը հրոկից նորութեան մը: Դու՞ք ալ չէի՞ք բնդումիր, թէ վիթխարի զանգուածով հատորներ կան հոն, որ չեն կարգացուած տակաւին, չեն լուսաբանուած: Անհուն նոխարեամբ գրատուն մ'է ան»:

Զկարգացուած այդ վիթխարի հատորներուն նուիրեց ինքզինքն Թլկատինցի եւ շնորհիւ իրեն հայ ընթերցողը կարգաց զանոնք, լուսաբանուեցաւ:

Թլկատինցին «արեւահամ», հողաբոյր եւ ժողովրդապաշտ դրագէտն է: Ունի ամուր լեզու եւ ինքնասիրտ ոճ մը: Ըսելու աւուղջ եղանակ մը, երբեմն մեղմ եւ երբեմն ոչնչացնող շաշիւնով: Ո՛չ իր գրականութեան եւ ոչ ալ ընթերցողին վրայ ճնշում կը բանեցնէ ան եւ այս գոյգ եւ զուգահեռ առաւելութիւնը կը հանդիսանայ իր գրականութեան գլխաւոր յատկանիւններէն մէկը:

Թլկատինցի:

Իր ժամանակաշրջանի եւ, մա՛նաւանդ՝ Մոփաց աշխարհի կեանքին պայծառ հայելին:

Բազմաթիւ աշակերտներու եւ մասնաւորաբար Զարդարեանի գրական պարզերուն մէջ մեծ բաժին ունեցած բազմաթիւն ուսուցիչը:

Դաւառի գրականութեան թափը:

Հոգեկան բիւրեղային պարզութիւն մը:

Մարդոց հոգիներուն հետ մեր բնաշխարհի հողն ու քարերը մագաղաթի վերածած իրա՛ւ մատենագիր մը:

Նե՛րս հրամեցէք. «անհուն նոխարեամբ գրատուն մ'է ան»:

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

*

Իր նահատակութենէն առաջ, Քիլատնցի իր զմահոյն չեղ մը ցնցած է մեր ժողովուրդը, մեռած է զպաշտօնապէս ու այնպիսի պարտականութիւն մէջ, որոնք ինքզինք ստիպուած էր կատարել իր պարտաւորութեան յայտարարութեան արդէն հարուստ կենսապայտանքին ամենէն արտասույ մէկ էլը կը կազմեն:


Ահա այդ պատմութեան ամփոփումը.—
«Բիւզանդիանցի 1908 Յունիս 2 թիւին մէջ կը հրատարակուի լուր մը, թէ Քիլատնցի սրտի կաթուածէ մը հետեւանքով յանկարծմամբ եղած է Մայիս ամսոյն 22ին: Յաջորդ օրը, Պոլսոյ բուլուր թերթերը կը հաղորդեն լուրը, որ սուրբ կը մասնէ ամբողջ ողբը:

Տաս օր ետք, սակայն, «Բիւզանդիանցի կը հրատարակէ Քիլատնցի չեռագիրը.
«Ողբ եւ՛. մեր կամակարգիւնն շնորհակալ ենք:

Քիլատնցի ի կենդանութեան մեղքուցած ու թաղած զուրբը, չենք հետեւ արդէ իմացած ենք, տան մը վերադրուցուա Վահան Քոթրովենցին: Իմանալու համար, թէ պոլսական մաստրականութիւնը ի՞նչ կը մասնէ զաւանական գրականութեան զարգացումն եւ գիտնականացումն ուսուցչին մասին, այդ օրերուն Պոլսոյ հասած պատանի զբոսորդը կը գիտէ շարունակ այդ նարքին: Բայց աւելի ուշ, Արամ Անտոնեանի մէկ յօդուածէն պարզուեցաւ, որ Քիլատնցին ստուգած է գաւառին չեղեկները. — Միլթոս Ղևոնդեան, մեզի համար արտաւած անուն մը, որ ըստ զինքի ղեկնա վերադարձած գրագէտին՝ վրէժինդութենէ մը մղուելով սարքած է այդ խաղը:

Եւստիանիդէզա, այս զփորձառութիւնը հարած մը չեղաւ Քիլատնցիին, ու շահ մը ապահովեց մեր գրականութեան: Առաջինը՝ մահէն առաջ ապրեցաւ անմահութեան հանսքը, իսկ երկրորդը հարստացաւ նոր գրութիւններով, որոնք զուրէ կրթիչ պիտի չզրուէին: Այդ գրութիւններէն մէկը ստորագրեց Քիլատնցիին աւագ աշակերտը, Խուրջն Չարդուրեան, որ իր սպարտ սուղին եօթը տարի ետք, Չարդարբերուն կողմէ արձակուած միւլեոյն հրամանագրով՝ ուսուցչին չեռ միամտմանակ պիտի նահատակուէր:

Քովի սիւնակին կու տանք Քիլատնցիի նկարը եւ մեզազիր բացիկը, որոնք զրկուած են Արամ Անտոնեանին, զին ղեկնա վերադարձին ստիճով...



Քովի, Մայիս 22 1908
Դուրս գալու Անտոնեանի կողմէ
«Բիւզանդիանցի» թերթէն
Հարց տուի, ինչպէս եղաւ ու ինչպէս հարստացաւ. Արամ Անտոնեան ըստ իմ հարցումս զրոյց տուաւ, որ զուրէն իմ տարի անկախ ինչպէս տեսնուի:
1908
Իմա թ Ղևոնդեան - Քիլատնցի
Խուրջն Չարդուրեան

Պատիւ, կէտ, զին ղեկնա շատ շատ բարեկեանք կան բարեկամին՝ Անտոնեանի հասցէին: Պէտքէրեան ու Կորեան վարդապետ, վերջինը մանաւանդ թէպէտ շատ ցաւցած գտայ. ներողութիւն ողջ շնորհներ մըն ալ անկէ, չէ՞ք շնորհներ:

1908
յուն. 18
Մարտ.
Անտոնեան-Քիլատնցի

Փ. Ճ Ե Ր Ա Ն Ե Ա Ն



Պանդուխտներն եթէ այսպէս շարունակուի,
մեր դաւաններուն անմարդի կ'ընէ այսօր կամ
վաղը, այս համոզումն ունեցէք, ահաւոր ճշմար-
տութիւն է:

ՀՐԱՆԳ

ՀՐԱՆԳ (1850-1915)

Երաւորութիւններու
սահմանազատ
խնամարար

Արեւմտեան գրականութեան անդատանին կանգնած յազի ու խրոխտ
դէմք մը, որ Գոսթեմունտի աքորափայլէն մինչեւ Վանայի խորերը ու
Պոլսոյ մտաւորական կեդրոններէն մինչեւ Էջմիածնի հոգեբուխ սրբարանները
թափառեցաւ, անձնաւորելով այդ օրերուն տառապող իր ժողովուրդին
դառն ճակատուրդը:

Գրեց ա՛յն՝ ինչ որ խորապէս ապրեցաւ:

Պանդուխտներուն այս երգիչը ի՛նք զրկանքներուն ամէնէն դաժանը
ապրած պանդուխտը եղաւ, որ Պոլսոյ խաներէն, խրճիթներէն ու գերեզ-
մոններէն անցնելով՝ քիչ մը սիրտ ու դուրս հայցեց իր բազմալարչար եղ-
բայրներուն:

«Պանդուխտի կիսմեքէն նամակներ» յօդուածաշարքով Հրանդ պար-
դէց հազարաւոր պանդուխտներուն դառն առօրեան, մասնանշելով դարա-
ւոր այդ հիւժախտին միակ դարձանը:

«Թող ամօրի մեռնիմք, ազատ մեռնիմք, բայց մեր սիրելեաց գրկին
մէջ մեռնիմք»:

Հազիւ տասնմէկ տարեկան՝ Հրանդ 1870ին վերջնականապէս կը հե-
ռանայ ււանդութիւններով ու երազներով հարուստ Բալուխ Հաւան գիւղի

ընտանեկան իր յարկէն ու կ'անցնի Պոլիս: Սկիւտարի ճեմարանը կ'ուսանի մինչեւ 1875, ապա՝ կը յաճարի Ս. Ուաշ Վարժարան: 1878էն ետք կը նետուի Հանրային կենդրին մէջ: Կ'ըլլայ ուսուցիչ, անօրէն: Բուռն թափով մը կը հետեւի գրական ու քաղաքական շարժումներուն եւ կը մխրճուի ողմը-կարար բանավէճերու մէջ: Իբրեւ յեղափոխական կ'ենթարկուի խիստ հալածանքներու, կը ձերբակալուի ու կը բանտարկուի երկար ատեն: Սահմանադրութեան հռչակուած տարին ազատ կ'արձակուի եւ կը վերստանանէ դարձեալ Հանրային իր դերերը: Կ'ուսուցանէ ու կ'աշխատակցի բազմաթիւ թերթերու, ստորագրելով գրական ու հրատարակչական էջեր, որոնք ի յայտ կը բերեն հայ մարդու եւ մտաւորականի իր նախանձախնդրութիւնները ազգային եւ դրական ասպարէզներուն մէջ: 1915ին, պոլսահայ մտաւորականներուն հետ ինքն ալ կը ձերբակալուի ու կը նահատակուի Էնկիւրիի մէջ, 55 տարեկանին:

Հրանդի գրական արժէքը ի յայտ կու գայ դիտաւորաբար «Պանդուխտի կեանքէն նամակներ»ով, լոյս տեսած նախ «Մասիս» շաբաթաթերթին մէջ, 1888էն սկսեալ, եւ հետագային՝ մէկտեղուած «Նահատակ գրագէտներու բարեկամներ» հրատարակչութեան 1931ին լոյս ընծայած հատորին մէջ: Նամակներու այդ շարքին մէջ՝ Հրանդ խոր յուզականութեամբ մը կը պատկերէ Սեբաստիայէն, Մուշէն, Տարօնէն եւ հայկական այլ շրջաններէ Պոլիս թափած հազարաւոր հայ պանդուխտներու կեանքը, շեշտելով յատկապէս անոնց առօրեայ տուայտանքները, սէրը հայրենի դիւղին ու այբրող կարօտը ընտանեկան օճախին, ուր իրենց կը սպասեն այնչէր հայր ու մայր, կ'ին ու զաւակ եւ նաեւ զուգնային զնգոցը հովիտներուն մէջ: Սրտայոյզ են մա'նաւանդ պատմութիւնները գաւառացի սա տղոց, որոնցմէ ու մանք, կեանքի դաժանութեան տակ ցախոխալուած՝ կը մեռնին խաներու մէկ անկիւնը՝ «տամ սէր, կնոջ եւ որդւոց սէրը երոզելին ու կը թաղուին լուռ աւ մուկ»՝ իրենց հետաւոր հարազատներուն խաւով ծխելու եւ ազօթ մը լալու գեղեցիկ մը իսկ չկտակած»:

Հետեւեալ պատկերը աւելի ցայտուն կը դարձնէ մեր ազգային ոգրեր-զութեան այդ երեսը.

«Գիտե՞ս ասոնց թաղումը... Սեւ օրումն շահածը, կէս ժամ քառորդ օրական, կը ծրարեն, կը դնեն մեռելիքն կտրած կարծիքն վրայ եւ այնպէս կ'առնեն կը տանին գերեզման... երկու բան ապացուցանելով, — կեանք մը, որ հինգ-տասը դահեկան արժէք ունի, գրամ մը, որ անիծեալ է յաւիտ»:

Պոլսոյ մէջ ապրած մեր պանդուխտներուն տառապանքին հետ, Հրանդ կը պատկերացնէ նաեւ անոնց խոր հայրենասիրութիւնը, մայր հողին կարօտը: Անոնք այդ կարօտով կը սանջուին, հողին հետ նոյնանալու պայակ մը ունին: Այդ շի՞ վկայեր խանի մը պատին արձանադրուած հետեւեալ խօսքը.

«Անգուժ ճակատագիրս ընկեց զիս յօտարութիւն եւ Պոլիս կ'երթամ. ո՛վ անցորդք, մաղթեցէք յերկնաւոր դարձնել զիս առ ծնողս: Հայ եղբայրք, երբ կը դիմէք յօտարութիւն, մի մտնա՛ք մեր տունը»:

Տունը, որ տեսակ մը հայրենիք է, ամբողջ ապրում ու խանդ, ուր ցեղը յատկանշող դարաւոր ժառանգները աննդծ կը պահուին ու կը փոխանցուին յաջորդական սերունդներու, իբրեւ ազգային ինքնուրոյնութեան շարափ:

«Պանդուխտի նամակներ»ուն հեղինակը խորապէս ծանօթ այդ ժամանակաշրջանին Պոլսոյ որովայնին մէջ խմորուող քաղաքական մթնոլորտին, զանդուածները լուսատրելու համար համազգային տարողութեամբ ընդհան-

բացումներ կ'ընէ, թելադրելով խղճմտօրէն դործածել ազդին նիւթական եւ բարոյական կարողութիւնները, օժանդակել դաւաններուն, որպէսզի երիտասարդները «տունէ, տեղէ չբաժնուին, իրենց հողը մշակեն, իրենց ծառերըն ու ծաղիկները հոգան ու իրենց սրբարաններում մէջ աղօթեն»:

Որքա՞ն խօսուն է Հրանդի պատգամը:

Հայրենիքէն հետեւելով երեսասարգները իրենք չէին փճանար միայն, այլ կ'ամայնար նաեւ հայրենիքը, դուռ բանալով անդարձանելի աղէտներու Հրանդ, որ պաւստէն կու գար ու ժառանգած էր անխառն հայկականութիւն մը, իր խղճին ու ջիղերուն ծանրացող այս տաղնապը չէր կրնար չպոթկալ:

Հրանդի լեզուն թէեւ զբարբախտան է, սակայն հետու է դրքունակ ըլլալէ: Դիւրամտաշելի, պարզ եւ անմիջական է անիկա, ինչպէս իր տողերուն ընգմէջէն պարզուած իրաւ կեանքը, որ կը յափշտակէ ու կը ցնցէ ընթերցողը իր պատկերացուցած իրաւ վիճակներով: Իր լեզուին մասին խօսելով, պանդուխտներու գրագէտը կ'ըսէ.

«Գրչիս ծայրէն մի անգամ դուրս թռածը, գրուածը, ժայռին վրայ նետուած փրփուրին պէս. վերստիմ յարդարելու չպիտի դառնամ»:

Հիմա, որ պանդխտութեան տանող երբեմնի ճանապարհները դադրած են կորստական ճամբաներ ըլլալէ, հիմա, որ իւրաքանչիւրը մեզմէ պանդուխտ ազգ մը կը կրէ իր մէջ, դա՛րձեալ ականջ կու տանք Հրանդի նկարագրած գաւառացի պանդուխտներուն հողինքէն բարձրացող սրտաուռ կրպեքուն, յուզմով կը կարդանք բուռ մը հող եւ կտոր մը տուն աղերսող անոնց նամակները ու կը զգանք, թէ մեր էութեան անյայտ մասին մէջ բան մը կ'ողէղինանայ ու կը յամառի...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Ն. Տ Է Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն



Երբ մարդ իր հայրենակիցներուն համար իր կեանքն ու զիրքը վտանգի կը շնէ, անկա ալ ազգին սուրբն է:

Գ. ԶՕՀՐԱԳ

Գ. ԶՕՀՐԱԳ (1881-1915)

ԻՄԷ ԶԱՎԻՐՈՒ
ԱՐ ԶԱՆՆԱԳԻՐՈՒ

Զօհրապի նորաձեւերը՝ իրենց պատմութեամբ յայն որոշ կառոյցով եւ ուրոյն ոճով՝ դինք կը դարձնեն մէկը իրապաշտ դպրոցի ամէնէն կարկանդակներէն:

Ան կու տայ Պոլիսը՝ իր վաշխառուներով, մեղաւորներով, զժրտխտներով, կիներով, մեղքերով, եստեղ արտօթակներով, հզօր խաթարումներով եւ մղձաւանջային իրականութիւններով լեցուն այդ քաղաքը: Տակաւին կու տայ դաւառը՝ անկէ Պոլիս եկած անմեղ ու միամիտ տիպարներուն ընդմէջէն:

Զօհրապ կը մօտենայ ընկերութեան շատ դպրութեան խաւերուն, այսինքն՝ կեանքէն բան մը կործնուցած, տառապեալ, իրաւազրկուած, դատապարտեալ ու խեղճ բոլոր այն կերպարներուն, որոնք իրենք զիրենք կը գրտնեն մահուան ճիւղներուն մէջ եւ կամ կը դատապարտուին ապրիլ իրենց վիճակուած մահուան շափ դժխեմ ճակատապիտ մը: Կը դպնայ մարդոց գերազօք եւ նրբազգաց յոյզերուն, որոնցմէ ամէնէն զօրաւորներն են կեղծական ներաշխարհին խոսիքները: Կինը կը դարձնէ իր գրտիներուն կեղծոտական դէժքը: Ան մարմին, վայելք, բարք ու կիրք ըլլալու սահմանուած շղթաները անցնելով՝ կը ներկայացնէ շատ յատուկ, սուեղծութեամբային խոնրեւածքի մը անբացատրելի ներաշխարհը:

Մտածող եւ սուր դիտող մըն է Զօհրապ, որ արագ, յստակ, սահուն եւ

ամբողջական ձևով մը կը յարդարէ իր կերպարները: Քանի մը էջի վրայ արդէն կեանք մը կը սարգուի՝ իր անկիւնադարձային բոլոր գէպքերով, նաեւ կենդանի շունչով: Այդ շունչը կը ստեղծուի կերպարներու նկարագրին թաքուն ծալքերուն մէջ պարփակուած զգացական աշխարհին զրոհւորումով:

Ան կը ստեղծէ պատկերը իր դիտողի կեցուածքով միայն, կը փոխանցէ դոյնը եւ բնազդային եւ կեանքի շատ սովորական ապրումները ստեղծելով ու զարգացնելով է, որ իր կերպարները կը քալեն էջերուն մէջ, յանդերձ իրենց բնական վախճանին:

Ստեղծագործ երեւակայութիւնը, որ կեանքի մէջ փոքր պատկերը կը բարձրանայ ընդհանուր զարգացումի մը, Հեռու է Ձօճրապի գրական աշխարհէն: Այդ երեւակայութիւնը տեղի առած է մասնող ու դիտող Ձօճրապին, շատ աւելի սերտ ու նարագատ, դրեթէ ճշգրիտ կապ մը ստեղծելով դրողին ու իրական կեանքին միջեւ: Թերեւս այս իսկ պատճառով ան շատ աւելի կը մօտենայ իրապաշտ դպրոցին:

Ձօճրապի էջերուն մէջ գծուար թէ կարենանք Հանդիպել Հարուստ Ենթախարհի մը, բաւարար Հոգեբանութեան մը, խիտ Հանգոյցներու, բազմակողմանի խորութեան: Պատկերները կը գծազրուին արապօրէն, սկիզբին անմիջապէս կը յաջորդէ վախճանը: Բառերու կախարդանքով ստեղծուած բանաստեղծական աշխարհը դժուար է գտնել իր մօտ: Կերպարներու ներաշխարհը պատկերացնող խոր վերլուծումներ չկան: Ստիպել հակառակ այս իրողութեան անկարելի է անտեսել այն ճշմարտութիւնը, թէ արագօրէն գծագրուած այդ սողերուն մէջ արդէն իսկ ստեղծուած է բաւարար մթնոլորտ ու բանաստեղծականութիւն: Այս իսկ պատճառով, Ձօճրապի ամէնէն խիտ պատմութեանը, դուրս գալով իր նեղ սահմաններէն՝ կը վերածուի ընդարձակ վիպի. ու մենք, թափ տալով մեր երեւակայութեան՝ կը տեսնենք իւրաքանչիւր կերպարի ենթաշխարհը, կը մտնենք անոնց վճռական բոլոր Հանգոյցներէն ներս, զգալով անոնց Հոգեբանական խոր զգայնութիւնները: Կը Հեռանանք գրքէն, Ձօճրապէն նոյնիսկ, ապրելով ընչող ու զգայուն տիպարներով Հարուստ աշխարհ մը:

Դիտողի եւ իմացական դատողութիւններ ընելու Հակումները շատ բան պիտի պահանջեն այդ պատմութեանը քննարկէն, եթէ անոնց վրայ շատ լինար ըզրացական խորքէ մը ծնող ներշնչումները: Եւ ճիշդ Հո՛ս է Ձօճրապի զբոսական արժանիքը:

Նկարիչ մըն է Ձօճրապ, որ դիտէ նկատել քնութեանէն ծնած գեղեցիկ ծառ մը եւ գայն նոյնութեամբ փոխանցել պատաստին: Այսպէս կը պարտադրէ իրեն իր դիտողի կեցուածքը, եւ ահա կը ծնի ծառը պատաստին վրայ, ձգելով իրական ծառի մը տպաւորութիւնը:

Ինչպէս կրնանք մոռնալ ծովուն վրայ ծփացող, օրօբուող, սուտանող, կռնակին վրայ պառկած, զարմացած աչքերով մարգը, որ դէպի երկինք կը նայէր, կաշիէ սեւ պայուսակ մը վզէն կախուած, — Յովսէփը, որ իր ճիտին պարտքը կու տար: Տակաւին Տիգրանուհին՝ գաւառէն եկած միամիտ ու երեսասարգ կնկայ իր պատկերով, որ կը դառնայ զո՛ւր էֆէնտիին աղուն կիրքերուն. որ մարմնին մէջ ծնած «մեղքը» սրկած կը հեռանայ տունէն, յանձնուելով զժրատա ճակատագրին. մինչ մեր սկիանջներուն մէջ կը մնայ տանտիրուհիին կենդանի ձայնը, որ պայթակոչութեան մը առջեւ գտնուելով կը պոռար.

— Փօթա՛լ, Փօթա՛լ, տունս ապականեցիր...

Եւ թարուզան, գիւղին գողը, որ Վասիլիկի խոտվիչ ակնարկը կարսըն-
ցուցած ըլլալով կը վերագաննայ բանտ, հոն միայն գտնելով էր ազատու-
թիւնն ու հանդստութիւնը:

Հոսմէացի Կաման, որ իր տարեց ամուսինը արհամարհելով կը յանձ-
նուի միամիտ երիտասարդին, որ մը դադոնօրէն սուն վերադառնալու ու իր
ամուսնոյն թեւերուն մէջ կորսուելու համար պարզելով կնոջ շատ յատուկ
անբացատրելի ներաշխարհ մը:

Թէ՛Փարսիկը՝ այդ խոտվիչ ազախինր, որ քսանամեայ իր տիրոջ հան-
դէպ ցուցաբերած անմեղ անձնուիրութեամբ, ծանձրոյթ ու զրուանք կը պատ-
ճառէ երիտասարդին, որ զինք խենթացնող խաբեայ զգուանքներն ու կեղծ
հրապոյրները կը փնտռէ:

Ընկերութեան մաս կազմող ու նոյն ընկերութեան ապականած
այս զոհերը, իրենց նկարագրին շուրջ համակրանք ստեղծելով, կը փո-
խանցեն շատ ճշգրիտ պատկերը Պոլսոյ մէջ ապրած իրենց ժամանակաշրջա-
նին: Կր պարզուին բարքերը, կը ծնի բարոյական մը, որ ընթացիկ բարոյա-
խօսութենէ հետո մնալով, պատմուածքին խորէն բխող մթնոլորտ մըն է
միայն:

Քանզելով ժամանակի շլթանները ու վերցնելով նկարագրուած շրջա-
պատը, պիտի տեսնենք, թէ Զօհրապի ստեղծագործութիւնները շատ քիչ բան
պիտի կորսնցնեն իրենց էութենէն: Կրկին պիտի կարդանք «Ճիտին պարտքը»
ու մեր օրերու իրադարձութիւններու բոլոր տուեալները պիտի կարենանք
տեղաւորել այդ խիստ տողերուն մէջ: Կրկին պիտի յսնէք ապականած քաղա-
քակրթութիւն մը քննադատող ձայնը, «Փօսթա՛լ, Փօսթա՛լ» ապագակին մէջ:
Զօհրապի պարզ ու միամիտ սպասուհիները իրենց կանացի յատուկ հմայքով
դարձնալ պիտի տողանցեն մեր տղքին առջեւ ու մեր մէջ, իրենց վրայ կեղ-
բոնացնելով մեղքի, կեղծիքի, եստէք ախորժակներու եւ հօր խաթարում-
ներու ամբողջութիւն մը:

ՆԱԶ ՏԻՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ահա Վաղինակ Բիրատի պատմածը՝ ի մասին Քալաթի և Կալիսի փրկած Ջօզֆի և Կարամանուսի:

ԵՐԱՆԻ ԹԵ...

Մենք Եղևնիի նահատակներին Սըմբատ Բիրատի որդին՝ Վաղինակ Բիրատ, Յիսուսական անգրագրանքի «Սովետական գրականություն» ամսագրին մէջ կենսագրած է իր հայրը՝ տնօր Կարամանուսի մինչև նահատակութենը:

Ըստ այդ գրութեան, սուլթան Լամբատի կողմէ հայտնուած Քալաթի Գահիրէի մէջ կը ներկայացուի Սմբատ Բիրատին, որ իր յարկին տակ երեք օր կը պահուի փախստականը, ապա՝ Եզրպետի անգլիական բարձր կոմիտէի լուրտ Գրանիի կողմէ ուղղաբարուհեամ՝ զոյն կը փոխադրէ Աղէբանդը, ուր շուրջ անցադրէ մը կը ճարեն իրեն եւ որոշ գումար մը յանձնելով կը ճամբեն Արևելք:

Այսին բանին, Սմբատ Բիրատ Քալաթին ուղղուած բացիկ մը կը շրկէ.

«Փաշա, չէի կարծիր, որ կեանքդ փրկողին դէպի մտն կ'ուղարկես: Սու ազնուութիւն չէ»:

Այնուամենայն, եւ թորքի մը վարքին մէջ:

Եզրպետի մէջ Քալաթին ի նըպատ Բիրատի ի գործ գրած ճիշտութեն ուղիղ տար տարի ետք, ուրիշ հայ մը, մեծանուն Ջօզֆի աւելի մեծ փորձանքէ մը կ'ազատէ նոյն արարածը, որ սակայն... որ սակայն՝ ինչ, կ'ս'յ մէկը, որ անձանք ըլլայ Ջօզֆի պին մահովից անձամբ հրամանագրած ըլլալու անոր անսահման թրջութեան...

1909 բուականի Մարտի 31ի պետական յեղաշրջման ճիշտօրջ օրը, հայրը եւ եւ գտնուում էին պատմական օտար թղթակիցները օրհակում: Անրայանի, մերկացած նախաններով եւ երակեանով, ներս խուսնց Համիտի անձնական գունդը: Անիկի էր սպանալը: Յովակիմ տեսնել Ջօզֆիին, որ թալանք պէտք զիսկ փեղ նետով, մտնելու օտար թղթակիցների օրհակին: Այն պահին, երբ բոլորս էլ պատրաստուում էինք դուրս գալ, Ջօզֆի գերմանական «Արքայադէր Յայտուց» յանդի օրաքերքի թղթակից փարենկերի գլխարկը խնց գլխից եւ, թալանքի գլխին ղեկով, առաջացաւ դէպի դուրս: Այնուպէս պետական էր անմիտական մի սպայ: Ջօզֆի պարտաւ նրան.

— Ես իրաւարան Ջօզֆիին եմ, Պարտի նիպատատ, պարտն էլ Հեռ փարենկերի եղբայրն է:

Սպան պատասխանց.

— Անցե՛ք, պարտներ, դուք մեզինց է՛ք: Բոլորս միտանք դուրս եկանք: Ջօզֆիին թալանքին նետերից իր անձնական փակ կտրէր, տարաւ իր բռնակարանը, որտեղ ուր օր պատուից ու պատասխանից, մինչև կտրէր քաղաքից Պարտի հասարակրորդ գործառնակը, որի հրամանատարն էր իր թիւստական միտմտութեան, եւ Ջօզֆի իր թիւստութեան գրաւից իշխանութիւնը:

Ջօզֆի պարտի մէջ էր, հայ էր, չէր կրնար մտանդուած մը փրկելու մասին չմտածել, արիւնք թոյլ չէր տար իրեն, երանի թէ տար, դաւանանք իրեն մէկ անգամ արիւնք, Համիտի անձնական գունդին հախաղանք իջէր իր ոճրամբտութեամբ Համիտը գերագանցող եօթգլխանի ճիւղին գլխուն, երանի՛ք...

Գ. Ա Ր Է Լ Ե Ա Ն

Ամբոյը իմ գմայլման առարկան է միշտ, ան ինձի համար կենդանի, հեւացող գիրք մ'է, որուն էջերը անհատ յայնչապատկանքներ կը կար- յամ...

ԵՐՈՒՆԱՆ



ԵՐՈՒՆԱՆ (1870-1915)

ԲԱՌ ու ԲԱՆԻ ԱՄԻՐԱՆ

1870-1915

Երկու թուականներ՝ քաժնուած գծիկով մը:

Իր կենսիցի երկու այս սահմանաքարերուն միջև տառապալից, իմաստալից, արդի- նաւոր եւ զեռ խոստմալից կենսի մը:

Երուանդ Արմաշէլ: Խանդան (Երուսիմ) իր բոլոր ձախարհութիւնները կը կապէ իր ծննդեան թուականին, որ եղած էր գործախառնութիւններու առջի մը... Բերայի Հրզէհ, Փրան- քո-գերթանական դատերազմ, Էւալի...

Իսկ իր գործախառնութիւնները, ձախարհութիւնները, ազրուտի անձկութիւնը, Հա- միտեան Հալածանք, զաղթականի ցուպ, Էւալի, կ'աւարտին իր հաճատակութեամբ՝ 1915:

Իպրոցական կենսիցի կը սկսի Ծաղիւղի ներսէսեան վարժարանին զոչտարանին զրկից՝ շնայարկիկն մէջ... կը յատկանշուի թուարանութեան եւ անոր դասատուներուն նը- կատմամբ զարգացած ասկութեամբ: Նաեւ նեոազիի ծաւալով շարադրութիւններով: Մ. Չե- րազ, ուսուցիչը՝

— Երուս'Աղ, հեռագիրքի կարդա՛...

Ինքզինք իրելու աշակերտ կը ներկայացնէ սա քառերով- զճալով ինձի, ամենէն տկար- անրէն մէկն էի շարադրութեան մէջ: Բացարձակապէս անկարող էի Յիւք մը ընդլայնել, Թա-

Խաղատւթիւններս խեղանգամ էլին եւ անտրին: Արդէն սէր այ շունէի գրելու:

Տերազ կու տալ վկայականը. «Արդէն շատ փափաք չունիս ուսման...»

Մէկ նիշի համար՝ վարտում հեղրոնականէն:

Ուրե՛մն: Առհասար:

Հոտ ալ, շարթականին հետ նոր վկայական մը.

— Տղա՛ս, զուն աւ գործին մարդը չես, զուն կարծեմ աւելի ազնի կ'ըննս եթէ պարոց երթաւ...

Բայց ո՞ր դպրոցը...

Մէկ դպրոց կը մնար իրեն, ա՛յն՝ որ ո՛չ վկայական կու տար եւ ոչ ալ տնօրէն կը ճանչնար: Ի՛ր գպրոցը: Ինքնազարգացումի դպրոցը...

Տնօրէն շկար, բայց երկուքուկէս տարուան տքնաշն աշխատանքէ մը ետք, կու գոր հասցի խնդրը:

— Ձուակս, եթէ հոց չընրես, քեզի հաց չկայ ուսելու...:

Եթէ հաց չկար, տպտ անպայմանօրէն պէտք էր բերել դասն... Բայց ինչպէ՛տ...

Հետագիւր-շարադրութիւն գրողին կը մնար մէկ ճամբայ... շարադրութեան ճամբան...

Փոխ խմբագիր է քսան տարեկանին, բայց կէս մամ միայն տեսող փառքէ մը ետք, Քէչեան նոր վկայական մը կը սկսի մտապահելու...

— Քամի որ դեռ ուշ չէ, ձգել այս ասպարէզը, փորձառարար կ'ըսեմ քեզի...

Բայց այս անգամ կ'որո՛չէ կանգ առնել: «Հաստատ մնալ, չժքայտա ըլլալ, բայց տուկալ, քիզ վը չընկիւկիլ»:

Մնա՛ց, չընկիւկեցաւ...

Եղաւ խմբագիր սգնական, խմբագիր, ուսուցիչ:

Ոչ մէկ ասպարէզի մէջ գոհացաւ շարքայինի գերով:

Իբրեւ հրապարակագիր քսաւ ա՛յն, ինչ որ պէտք էր ըսել:

Իբրեւ ուսուցիչ եղաւ յեղափոխական... Նախկին կեդրոնականցին, քառօրը դար ետք, իբրեւ հայ լեզուի դասախօս Նոյն Կեդրոնականը կ'ուսաջնորդուէր, բայց երկու ամիս ետք, այս անգամ ի՛նք կը մտարէր ինքզինք, հոն ախրող անկարգապահութեան համար: Այսպէ՛ս տնօրէն Մ. Խաչ մարմարանին: Հոգաբարձու-տնօրէն վէճերը դիմք զկնիկ, չունուխ-չու-լուխովք կը նետէին հարբերդ: Կը ոտանմէն տեղուցն սղզային վարժարանի տնօրէնութիւնը եւ նուազ քան երկու տարին, նախակրթարանը կը վերածէ ճեմարանի եւ ուսուցչանոցի...

Այս խմբագիրը, հրապարակագիրը, ուսուցիչը գրող էր սակայն ամէնէն առաջ, վիճակագիր, պատմութեագիր: Իբրեւ վիպագիր՝ ստորագրած է «Հարազատ որդի» եւ «Ամիրային Ազնիկը» — քսա Օւակահի «Արեւմտահայ վեպի» գերագոյն հիգն ու յաջողութիւնը: Կը գրէր նաեւ աւելի քան 60 հորատկէպ, եւ դեռ պիտի գրէր, եթէ...

Հապա թ'նչ քանի մասին գրել... Ո՞ր սղրիւրին գիմել...

«... Ամբոյր իմ գնայլմանս առաքկան է միշտ, ան ինձի համար կենցանի, հետաքոզ գիրք մ'է, որուն էշերը անճառ յափշտակութեամբ կը կարդամ, ամոր մէջ միայն գտնելով անկեղծ, անզպար առաքիմութիւնը, անպատուակ ամուսնիքութիւնը եւ լյաւնաբարուած՝ իմեմքեր դիւցազնութիւնները...»:

Եւ ինք կարգաց այդ գիրքին» էջերը... Կարգաց եւ պատմեց: Ըմբոստացաւ ու խո- նարհեցաւ: Հացաւ ու յացուց:

Իմաւ մարդկային վարի խաւերուն մէջ, ցոյց տալու համար հոն թաղուած ոսկիները... Երուխան իր ընթերցողները տարաւ սյնուկի մարդոց մօտ, որոնց քովէն անցնելու համար, առնուազն զի՞թ բռնել պէտք է...

Ձուկ, ա՛մանալին ոչի, կեզա ու թշուառութիւն բուրող էջեր, բայց անպայմանօրէն մարդկային:

Կը տանի այդ մարդոց եւ բան մը կը գտնէ, եթէ ոչ սէր, առնուազն տաք կարեկցու- թիւն մը ծնցնելով մեք մէջ՝ այդ տատապող էակներուն հանդէպ:

Իսկ նենգամիտներուն նկատմամբ այնքան զիպուկ ու խիտա է, որ ոչինչի կը վերածէ

այդ մարդակերպ տմարզները... Ձի խնայելը քահանաներու, որոնք աղքատին դազաղին վըրայ աղօթք չեն ազօթեր, այլ միայն կը լիբրանն զայն: Կամ Աղքատին արարողութեան վրայ նուազագոյն 60 առ հարիւր զեղչ վաճառք մը կը կատարեն: Իսկ զօտին աակ ոսկիներ շարող, բայց նպաստի համար ձեռք երկարող զաղթականներ՝ կ'իջեցուին կուպրի կաթսային յատակը...

Հո՛ն, իր նորագէտներուն մէջ կայ, օղիի, ձուկի հոտերով յազեցած էջեր, դեռատի, թշուառ աղիկներու տուտյանքները կան, լուացարարուհի Սրբուկներու վիշաք... Եւ այս բոլորը բերուած են զեղանիմաղ Մարմարայի կամ Ոսկեղջիւրին ափերէն:

Պուլկարիոյ եւ այլ երկիրներու մէջ ապուստան զտած լաւ ու գէշ, աշխատասէր զկէզբէները եւ մակարոյնի ակնցի Գալուստ աղաներ, կամ իր խննթացած սիրահարէն մնացած յիշատակներու տողանցուցք:

Իսկ Խարրերդէն: Ի՛նք, որ գիւղէ գիւղ կը պտըտէր, ախտեղի ճհւապող դիրքը՝ կը թիրթրատէր եւ ՅՈՒՇՍՏՍՏՐ կը լիցնէր... Նորանոր կուսիկներ, Օննիկներ կամ Պապա Յուսէֆներ կը փնտռէր... Երբէն պիտի վերածուէր նոսիկին կեզրոնականցի զանարուեստ եւ անկարողն աշակերտին, այս անգամ իրմէ անկախ պատճառներով:

Իր հաւաքած նիւթերը պիտի շքեղաշնէին... Օննիկները իրենց կմտիւքներուն վրայ քնու միտ պիտի չհազուէին...

Ասպետը իր ձիկն վար անուշիւղ՝ պիտի ճգնուէր...

Խարրերդ ըսեալ դիւրին է թիրեւս, բայց եթէ մտարերնք, որ Հայաստան Ալիարհի ուղի նոյն ծոցէն դուրս են եկած Քլիստինցին ու Թ. Չարդարեանը, Համաստեղն ու Քոթոզնեցը եւ ուրիշներ, ապա միայն կրնաք երեւակայիլ, թէ ինչ առատութեամբ հեռազիր-չարադրութիւններ գրուեցան Որոսթանի յուշատետրին մէջ...

Յուրքը եւ յուշատետր մը...

Բազմաթիւ կորուստներու հետ՝ անդարձանէի է կորուստը այն բոլոր յուշատետրերուն, կամ ճհւազիր-չարադրութեանց, որոնց թէ՛ հեռազրոյնները եւ թէ՛ հեռազրաւորները կորուսուեցան... գարնանային օր մը...

ԳԷՈՐԳ ԱՐԷԼԵԱՆ

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Քաղաքակրթութեանց թռչուններն մէջ ազ-
րիլ ու զարբանալ ձգտող ժողովուրդները կը յա-
շտին ու կը բարդաւանին որքան իրենց բուսցու-
ցած անհատական հանձնարներով, նոյնքան ու
նաեւ՝ այն կազմակերպական ուժերով, որոնք
հոշուած են իրականացնել մեծ մարդոց մեծ ե-
րացները:

ԱՐՏԱՅԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (1873-1915)

*Ինքնագրտաբան
Պաշտպանութիւն*

Գաւտական գրականութեան յառաջապահներէն՝ Արտաշէս Յարու-
թիւնեան, կը պատկանի ընտրեալներու փաղանկին, օժտուած՝ իմացական
բազմակողմանի յատկութիւններով:

Մատղաչ տարիքին մուտք գործեց գրական ասպարէզ՝ բանաստեղծա-
կան գեղումներով, որոնք հետագային լոյս տեսան «Լեռնաձիգներ», «Նը-
կունի», եւ «Նոր Բնար» հատորներով: Յիշեալ երկերով՝ Յարութիւնեան կը
ներկայանայ իրրեւ բնապաշտ բանաստեղծ: Ան իր ապրումները կը քաղէ
բնութեան բազմերանդ երեւոյթներէն, որոնք կը վերածուին սիրոյ հրաշքի,
կարօտի զգայարանքի մը, եւ կամ՝ հողէլիճակի մը բացայայտող ներտնձնա-

յոյզ քնարեկրթեան: Ինչպէս հետեւեալ սողերը կը մատենն ներկայուն յուզականութիւն մը.

«Հնգույս խորը կարօններ կան,
Որ կը քանդեն զիս օրէ օր,
Ինչպէս քոցին կարմիր լեզուն
Մուկն ճերմակ մարմինն աղուոյ»:

Յարութիւնեան շահամասնակեց իր տողանդը լոկ բանաստեղծական կալուածին մէջ: Զարկ տուաւ նաեւ արձակին, դառնալով մաքուր աշխարհաբարոյ օտեղծագործող գրողէտ մը: Իր շօշափած նիւթերը գաւառի կեանքէն վերջուած ապրումներ են՝ խորհրդապաշտութեան երանկով օծուն: Իր նկարագրած դիւղը կը պարզէ ո՛չ Թ՛լկատէնցիի կենդանագրած բարձրուն գեղջկական նկարագիրը, ոչ ալ Զարգարեանի քնարեկական թոխը: Այլ բնութեան ծոցէն քաղուած եւ վերացականութեամբ խորհրդանշուած ապրումներ, որոնք առաւելարար իմաստասիրական խորհրդածութիւն մը կը փոխանցեն ընթերցողին: Զգայութիւններ, որոնք կը համակեն մեզ արձակ բանաստեղծութեան մը կախարհաղօր շունչով: Այս առընչութեամբ ուշադրու են «Հակասութիւններ», «Թափառումներ», «Մոխիր եւ մախր» խորագիրները կրկնը իր արձակ էջերը, ուր ընդհանրապէս կեանքի եւ ճակատագրի, երազի եւ գաղտփարի եւ, վերջապէս, զգալու եւ խորհելու կապակցութեամբ յաւերժօրէն առկայ՝ հարցեր՝ զօրեղ հակադրութիւններու բախումով՝ կը փոթորկին հեղինակի մտքին մէջ, վերածուելով ըմբռնողութեան իւրայատուկ տարալի մը: Այսպէս՝ «Երազը աւելի գեղեցիկ է, քան գործը: Երազը՝ լայն է, գործը՝ տկար ցոլքն անար: Անօգուտ է երազներն ապրիլ քամալ, կը ռամկանան անտիք, հմայաթափ, գեղակորոյս», կը գրէ Յարութիւնեան: «Թարք տեսանելի մարմնաւորումները՝ մկրտումներն են վերամբարձ քոխներուն: Անոր համար՝ երազներս աւելի կը սիրեմ, քան ծնունդներս»: Աննիւթական՝ նիւթականին, տեսլականը՝ շօշափելի իրականութեան, բացարձակը՝ եղծուած յարաբերականութեան հակադրող պղատոնական մտածելակերպ մը, որ հոս պատկերաւոր խորհրդածութեամբ մը կը ընդթաղուի:

Ինքնադարպացման յամառ ճիգով իրագործուած մտաւորական պաշարը միախառնելով նրբագլած դատողութեան մը՝ Յարութիւնեան արուեստի հասկացողութեան նոր եղանակ մը եւ նոր շփանիչ մը բացաւ պոլսահայ գրական անդամատանէն ներս՝ տեսական-քննադատական յօդուածաշարքերու ճամբով:

Արդարեւ, արուեստագէտ-քննադատի հանդամանքին մէջ կը կայանայ իրական արժանիքը Յարութիւնեանի: Գաւառացի տղու անկեղծ, այլ անկաշառ իր խառնուածքը շփարանեցաւ գնահատելու տաղանդաւորը՝ ըստ արժանուշն եւ խոցելու աժան հոնտորականութեամբ փառաբանուած անտաղանդը: «Քննադատի դերն է, — կը գրէ Յարութիւնեան, — ամէնէն առաջ մշակել արուեստագետին անկեղծութեան աստիճանը ու սահմանել անոր տաղանդին անճակակն նկարագիրը, որք անճանմիտելի են եւ անկախ որեւէ վարդապետական հարկադրութիւններէ»: Այս դերն է ահա, որով իրագործուած կը պատկերաւոր, թէ Եղիա Տեմիրճիպաշեանի նման արտակարգ գրադէպի մը «պակասած է անհատական միութեան գեղեցկութիւնը: Երբեք որոշ ինքնութիւն մը չէ կրցած ստորագրել ինք իր մէջ: Մաշուած առնակաւորութեան մը եւ կեղծ ու պիտաւոր իզակաւորութեան մը ճաշակները հրապուրած են զինքը»: Աւելի՛ն. «չեղած է իր համբաւին մարդը»: Արդար դասաս-

տանի մը ենթարկեց Աղեքսանդր Փանոսեանը (Ալփառլան), զայն ներկայացրնելով իբրև անարուեստ տաղաչափ եւ պրական սոցիոլոգ: Այլ անվերապահ դնահատանքով ողջունեց Մեծարենցը՝ քերթողական արուեստի իբրև տաղանդաւոր յայտնութիւն: Այս եւ նման բաղձաթիւ հարցեր արծարծեց, դատեց, դրուատեց Յարութիւնեան մտաորականի պարկէշտութեամբ, որ մրնայ չիմնական առաքինութիւնը իր պրական նկարագրին:

Արտաշէս Յարութիւնեանի մտածումը շէր պարփակուած որոշ ժամանակաշրջանի մը նեղ ծիրին մէջ: Այլ ձգտումը ունէր բացուելու դէպի սպազան եւ ընդգրկելու իմացական նոր հորիզոններ: Յատկանշական այս պարագան էր, ապահովարար, որ կը մղէր զինք մտահոգուելու հայ պրականութեան ապագայ ճակատագրով: Մտահոգութիւն մը, զոր հարցադրեց, բանաձեւեց եւ պրական իր ամբողջ հանդանակը եզրափակեց թվադրուած գրականութիւնը՝ յօդուածով, որ պրական եւ ստեղծագործ ամէն հաւանականութիւն եւ յոյս ընդելուզեց գաւառի իրականութեան:

Իմաստասիրական երակը այն ցայտուն երեւոյթն է, որ լուսեղէն հիւսքի մը զօրութեամբը ներգոյսկ՝ կը ծաւալի Յարութիւնեանի համարեալ բոլոր երկասիրութեանց ընդմէջէն: Գրականութեան, գեղարուեստի եւ ընկերային գիտութեանց հետ աղերսուող հին թէ նոր հարցեր յատուկ մեկնաբանութեամբ մը կը վերահիւնդանանան իր գրչին տակ: Կ'ըլլան տարանջատ այլ մէկզմէկու լրացուցիչ տեսաբանութիւններ, շարահիւստած՝ կեանքն ըմբռնելու ընդհանրական տոնոցքին շուրջ: Իրմով, պղատոնական նախաձեռնութեան անմկութիւնը կ'ապրինք, տեղ մը՝ Շոփէնհաուէրեան յոռետեսութեան ցանցէն կը բռնուինք, կը ներսուզուինք նիրոյնայական երանութեան ներքեւ, այլ տեղ մը՝ Քանթի տեսլապաշտութեամբ կը վերանանք եւ, վերջուպէս, կը դուարթանանք լայնիցեան պարզամիտ լաւատեսութեամբ:

«Մարդու մը մտել տիեզերքի մը փնտրումն է», կը գրէ Յարութիւնեան: Արդարեւ, որքան եղերական կը հնչեն այս բառերը եւ տարապայմանորէն որքան հարազատ, երբ պահ մը մտաբերենք նահատակ դրագէտի իր ճակատագիրը: Իր մահով՝ փլուզուեցաւ իմացական թեւածումներու ամբողջ տիեզերք մը:

Իմացութեան անդրական ուղիներուն թեւաբեկուած ճանապարհորդն է Արտաշէս Յարութիւնեան:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Է. Ս Ա Ր Ա Ճ Ե Ա Ն

Բարձրագույնն ու անբողոքը կանգնած ենք մահուան դէմ՝ մեր անաւոր ցաւին հետ, որ մեր փառքի է միտնդամայն եւ հպարտութիւնն ունինք պատմութեանն աւանդելու զիբցազեութեանց ամէնէն սիրալին, հպարտութիւնն սնինք հետագայ դեռ տառապող մարդկութեան փոխանցելու ազատութեան ամէնէն հզոր սարսուռները:

ԹՈՒԲԷՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ



Թ. ԶԱՐԳԱՐԵԱՆ (1875-1915)



Բանաստեղծ՝ հեփաթներ, պատկերներ, արձակ բանաստեղծութիւններ ստորագրելով ասպարէզ եկած առաջին շրջանէն մինչեւ հրապարակազրակամ էջեր միայն ստորագրած իր կեանքին վերջին հինգ-վեց տարիները:

Իր հեփաթները չեն սկսիր ծանօթ «կար ու չկար»ներով եւ տխարները թագաւորներ չեն, ոչ ալ գեղեցիկ իշխանուհիներ: Առաւելագոյն պարագային ունին հին ժամանակներէն հասած արանդութեան մը մէկ բեկորը, որուն պատումը նկարագրական չոր բնոյթով մը չ'ընթանար, այլ խորհուրդ մը երևան բերելու առիթ կու տայ, բանաստեղծական շունչով յագեցած ժողովրդական փարձառութիւն մը կը թելադրէ:

Արդարեւ, իր հեփաթներուն տխարները ընդհանրապէս չարիքի մը գոհը ըլլալէ աւելի՝ մարդկային զգացումներու եւ ակնկալութիւններու պատասխանելու հանգամանքներ ունին եւ հանդէս կու գան յաճախ շրջաւան դերերով: Անոնք փոխանակ հին հեփաթներու սեռով անէծքի մը ենթական, դաւադրութեան մը գոհը կամ գնդակի մը թիրախը ըլլալու, իրենց անգուպ փափաքին, իրենց սրտի ձայնին, կամ իրենց լերան գաւակը ըլլալու հանգամանքներուն թերումով՝ յուսատու ու մխիթարազ հաւատքով կա'մ ուխտատեղիի մը կը վերածեն իրենց կոխած գետիները, կա'մ անէծքին անէծքով պատասխանելու յանդգնութեամբ կը լեցուին, եւ կամ՝ զիրենք զարնել

փորձող հովիւները, կաթկէսած արեան հետեւերով, մինչեւ լեքան բարձունք-
ները կը ճաշեն, անկէ վար շկարեմալ իջնելու պատիժի մը գաստպարտելով
զիրենք :

Զարդարեանի ստեղծագործութիւններուն առաջին շրջանի միւս երե-
սը կը կազմեն իր պատկերներն ու արձակ էերթուածները :

Զարդարեանի մօտ պատկերը նկարչական համադրումին հասած է
իր «Գամփռ»ով, իսկ արձակ էերթուածը իր ամէնէն հնչուն նրբերանգներով
կը հաղորդուի «Լերան եզնիկը» կտորին ընդմէջէն :

«Գամփռ»ով Զարդարեան անձնաւորումի վարպետ մը կը հանդիսանայ,
իսկ «Լերան եզնիկ»ով խորհրդանիշ ստեղծող գրագէտ մը :

«Գամփռ»ի պատկերին մէջ անձնաւորում եւ ընդվզելու, արհամար-
հել գիտնալու, ինքնաբաւ ըլլալու տրամադրութիւնները, իսկ «Լերան եզ-
նիկը» շէտի բարձունքները պանալու մղումով, անկախ մնալու կարօտնե-
րով ու մարտնչումներով ազատութեան երազի մը խորհրդանիշը կը հաղոր-
դէ :

Այս գրութիւնները եւ շարք մը ուրիշներ Զարդարեանի գրական
կեանքին առաջին հանձնքը կը կազմեն եւ ամփոփուած են «Յայգալոյս» հա-
տորին մէջ, որուն յառաջաբանը կը սկսի սա յատկանշական տողերով .

*«Յայգալոյսը» խորհրդանշանն է պատմական այն շրջանին, ուր
բռնադատիչ խաւարը կը ճնշէր թրքահայ մտքին եւ գրականութեան վրայ :
Բանը ոչնչացած չէր, բայց կենսազուրկ ու կիսակենդան, հսպիւ կը ճառա-
գայթէր միաստուեր ու ծառայ Հորիզոնի մը վրայ, որպէս տրամաթաթաւ,
անդրադարձ ցոյքը ցալկալուսային աշխարհի մը մէջ» :*

«Բռնադատիչ խաւարին» հետեւանքով «կիսակենդան» մնացած Բա-
նին կենսանաւթեան նոր շունչ տուող գրագէտ մը եղաւ Զարդարեան, որուն
գործերը այսօր եւս կը պահեն իրենց կենդանութիւնը շնորհիւ այն հանգա-
մանին, որ անոնք ունին գիծերու, գայներու, ծայներու, պատկերներու
ճշմարիտ քրթոացումներ, խորհուրդ եւ քահանայութեան անուրիշ :

Իր կեանքի վերջին տասնամեակին, Զարդարեան առաւելաբար նուիր-
ւեցաւ խմբագրական եւ հրատարակագրական ասպարէզներուն, բայց աւի-
կա պատճառ մը չէ, որ այդ շրջանին գրած իր էջերը անպայման ծամանակա-
ւոր էջեր նկատուին : Հրատարակագրական իր յօդուածներուն մէջ ան այնպիսի
սի՛ բիրեղացումի մը հասցուցած է իր լեզուն, այնպիսի՛ քափ մը ունին իր
բառերը եւ պատկերները այնպիսի՛ նոխարեանք մը կը ներկայանան, որ
անցած ծամանակը չէ կրցած ծամանակավրէպ դարձնել գանձէ : Հրատար-
ակագրութիւնը, որ Զարդարեանի սերունդին կեանքը ցոլացնող արտայայ-
տութիւններէն մէկն էր, իր առիթով մանաւանդ բարձրացաւ գրականու-
թեան, շնորհիւ անոր մէջ դրուած կիրքին, հաւատքին, լեզուի ու պատկեր-
ներու նոյն տուեալներուն :

Դաշնակցութեան Չժամիակին առիթով գրուած խմբագրական մըն է
«Բագինի փառաբանութիւնը», ուր քէն ամէն բան ըսուած է եւ քելագրա-
կան բաժինը շատ քիչ է եւ կրկնութիւնը շատ, այսուհետեւորձ, գրական վա-
յելք առաջացնող էջ մը ըլլալէ չի դադրիր եւ կը պահէ իր հմայքը մինչեւ
այսօր, որովհետեւ անկախ բարգմանը կը հանդիսանայ վեց դարերու անց-
եալ մը ունեցող այն հագեցանութեան, որ հայ ժողովուրդին ազատութեան
տենչերը կը ցոլացնէ, հեթանոսական շրջանները յիշեցնող ուժի եւ գոհարե-
րութեան մթնոլորտ մը ստեղծելով :

Իր առաջին շրջանի արձակ էջերէն եւ հրատարակագրական յօդուած-
ներէն բոլորովին տարբեր են Զարդարեանի այն գրութիւնները, որոնք կը

կաշուին «Եօթը երգիչները» եւ «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մէջ» : Առաջինը կեանքի եօթը ճշմարտութիւններուն խորհույրը կը փոխանցէ. իսկ երկրորդը կ'առաջադրէ գտնել խորհուրդներուն ճշմարտեղիքները, որ պիտի բանար սրտերը եւ սուլթաններու համար գանձեր յարդարէր հոն, որովհետեւ՝

«Վա՛յ այն հոգիներուն՝ որ իրենց սուլթանները շունին, վա՛յ այն սրտերուն, որոնց մէջ արքայական պալատներ չկան :

«Վա՛յ այն հոգիներուն՝ որ գահակալներ չեն, լի նոխութեամբ եւ սերճանքով, ինքնիշխան ու աշխարհակալ : Վա՛յ այն սրտերուն՝ որոնց մէջ չկայ ո՛չ դահ, ո՛չ մեծութիւն, ո՛չ փառքի պատուանդան» :

Զարդարեան միայն 41 տարի ապրեցաւ : Ան գաւառի գրականութեան ռահվիրաներէն Թվատինցիի առաջին աշակերտներէն էր եւ եղաւ առաջիններէն մէկը. որ լեզուական մարզին մէջ գերազանցեց իր ուսուցիչը եւ բարձր մակարդակի մը բարձրացուց հայերէնը :

Ո՛չ միայն իր գրականութեան մէջ Զարդարեան մեծ հոգածութիւն ցոյց տուաւ Մեծասանչին նկատմամբ. այլեւ անոր գեղեցկութիւնն ու ուժը փոխանցելու համար մատաղ սերունդին՝ պատրաստեց «Մեղսագէտ» անունով դասագիրքերու շարք մը, ուր հայ գրականութենէն տրուած էջերու կողքին տեղաւորեց միջազգային գրականութենէն գեղեցիկ հայացումներ :

Հեփիաթ, պատկեր, արձակ, բանաստեղծութիւն, հովուերգութիւն, պատմուածք, վիպակներ թէ խմբագրականներ ստորագրած այս գրագէտը իրաւ բանաստեղծի մը պէս վարուեցաւ իր գրիչին հետ, եւ կարելի է համարձակութեամբ զինք կոչել հայ գրականութեան արձակագիր բանաստեղծը :

ԷԼՑ ՍԱՐԱՃԵԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն



*Միայն զաղախորն է, որ ո՛չ մահ ունի, ո՛չ
գատաւոր, ո՛չ զիրեղման եւ ո՛չ դազազ:*

ՍԻԱՄԱՆԹՕ

ՍԻԱՄԱՆԹՕ (1878-1915)

ԱՆՐՁԱՆԱԿ ՀՄՆԱՄԱՐՈՒՄՆԵՐ

1902ին, Փարիզի մէջ լոյս տեսած «Ռիցագնորէն» հատորը հայ լեզ-
ւի մթնոլորտային համր ջերմութեան ներքեւ հասունցած ա՛յն լաւան եղաւ, որ
եկաւ խորտակելու հայ բանաստեղծութիւնը միօրինակ բառակոյտերու վերա-
ծած գրիչներուն անշունչ էջերը:

Ընդհանուր այդ միապաղատութեան դէմ՝ դարերու հեռու հեռաւորու-
թիւններէն այցելող դիցազնի մը նման կանգնեցաւ Սիամանթօ, նոր բանաս-
տեղծութեան յարգազողի ճանաչարիին այս մարգարէաշունչ ճարտարապետը,
որ կատուցեց նոր ու եզակի ձայներով, գոյներով, բոյրերով, շարականներով
ու տեսիլներով լի ինքնուրոյն մեհեան մը: Սիամանթոյազրոշմ արքայութիւ-
նը: Հայ ժողովուրդի յեղափոխութեան երուսաղէմը:

Բանաստեղծական պատրաստի կաղապարները քանդելու եւ անոնց
փոխարէն գեղագիտական կաղապարներ, թէկուզ ըմբոստ ու յեղափոխական
նոր վարկածներ եւ օրէնքներ սահմանելու հեռանկարէ մը մղուած՝ ան չղիմեց
արտատոցին, ընդհակառակն, Սիամանթոյի գրականութիւնը նոյնինքն Ատոմ

Եարձանեան տղամարդուն նկարագրային ողջ աշխարհն է, Սիամանթո մարդուն երկրորդ կեանքը, ազգային մտահոգութիւններուն ու գործունէութիւններուն շիրագործուած ժամերուն իսկ բանագործունէութիւնը, որ ծաւալեցաւ անկէպ մորենին ինչպէս, դարձաւ հրեղէն անհուն ու անհանդարտ անջրպետ, որուն մէջ կորսուեցաւ այս բոլորին ծնունդ տուող առաջին կեանքը, ֆիզիքական կեանքին հոլովոյթն ու մանրամասնութիւնները:

Արդարեւ, Սիամանթոն եկաւ լուսահանդերձ մարգարէի մը նման՝ շեփորելու համար դարերուն ետքը, «ընդվզումի ստիկներ»էն սնած Հայաստանեայց Աշխարհի նոր դիւցապներուն սխրագործութիւնները, Արամեանի ու Սերոբի, ժիրայրի ու Անդրանիկի, Թորգոմի ու Քրիստափորի, «մաքառումներէ աստուածացած սրբական ծերունի» Հայրիկին Խրիմեան ու «տաճարներ մաքրագործող ընկերային Նապոլրեցի» Զաւարեանին «փրկարար փոթորիկներ»ը յաւերժօրէն յաւերժացուցած քրմապետը եղաւ:

Այսպէս՝

Համակ ջիղ ու արին՝ ան հատոր առ հատոր, քերթուած առ քերթուած ու բառ առ բառ ընթացաւ՝ հողին պապակը իրենց արեամբ յագեցնելու երդում ըրած պողպատաքայլ հայորդիներուն հետ: Աւելի՛ն. արծուի պողպատեայ թեւահարումներով, երկինքին չափ անհուն կոյս թուղթերուն վրայ ամուր դրոշմեց ողջ ձայներն ու գոյները վաղնջական հողերու սրտին վրայ իրենց ունկերը լարած դիւցապներուն, որոնք իսօ տեսիլներու յաղթահարման համար իրենց «արիւնտուած վերարկուններովը հրավառ», տիւ ու գիշեր, «աղամանդէ ու յակինթէ արգասատր Արշալոյսները կ'արօթեն»:

Ուղիղ քան դար առաջ, մարդացած Աստուծոյ՝ Նապոլրեցիի վարքը վաւերագրած անետարանիչներուն նուիրումով եւ խղճմտութեամբ՝ ինք եւս ապրեցաւ իր դարուն «եղերակիւն մարդ-Յիսուս»ներուն տեսիլները, անոնք եղան իր մէջ, իսկ անոնց մէջ՝ սերմ: Խլրտեցաւ հունտին նման, հայ յեղափոխութեան անդաստանէն եւ ժողովուրդի երազներուն ախշներէն ու տեղատարափ անձրեւներէն ստացաւ կեանք ու իմաստ, յորդեցաւ դուրս իր պատեանէն, հասաւ իր լինելութեան, եղաւ գերագոյն արդարութեան աստուածագոյ «պարտութեան վրիժաձայն»ին անետարանիչը, հայ յեղափոխական պատմութեան քրիստոսներուն վարքագրողը:

Եւ այս վարարուն գետերով լիացած՝ Սիամանթո, ապրելէ ետք հոգեվարբի գիշերները, հասաւ «յոյսի ջահեր»ուն, եւ օր մըն ալ, յոյսի աղբիւրներուն բիւրեղութեան դեռ նոր հասած, Սահմանադրութեան յաջորդող ընդհանուր թմբիրէն դուրս խոյացող առաջին նժոյզը եղաւ, որուն ոունգերէն դուրս պայթեցան արհաւիրքի առաջին լուրերը, մահուան հրդեհներուն ներքեւ տըւայտող բարեկամներուն «կարմիր լուրեր»ը:

Եւ եթէ բանաստեղծը մարգարէ է, եւ եթէ մարգարէն է նաեւ մարդիկը ճշմարիտ ճշմարտութեանց հրաւիրող բարձրախօսը, ուրեմն, Սիամանթոն մարգարէ մըն է բառին ճշմարտագոյն ճշմարտութեամբ, որ իր թոքերուն բարձրախօսները պայթեցնելու ուժականութեամբ ձայնասփոնց «հայ դաշտերուն պաղատանքը» եւ, «հայրենի հրաւէր» նամակաշարքով՝ աշխարհի չորս ծագերուն տարտղնուած պանդուխտներուն սրտին դողացուց անապոհովութեան սարսափները, մերթ մօր մը, մերթ հօր մը, մերթ եղբօր մը եւ կամ առանց յղիանալու բախտին արժանանալու ամուսնէն բաժնուած հարպին բառերով:

Գուժեց, յանդիմանեց, զգաստացուց եւ «ծովուն ջուրերը ծայրէ ի ծայր թո՛ղ ցամքին» գոռաց եւ սպասումէ սպասած հարսին, երապահար կարօտներու սարդոստայն հարսին կեանք-մահը վերածեց լինելութեան տրամի, բացակայ ամուսնոյն գոյութեան մէջ իր լինելութեան միակ լուծումը գտնող այն գոյա-

պաշտ տրամին, որուն հոգեկան սառնամանիքներէն ծեծուած հարսը, մայրա-
նայու հուրերուն մէջ բզիկ-բզիկ բզկտուող ներաշխարհը որոտաց.

Վերադարձիր, ա՛լ կարօտս կատար չունի,
Երբ սեւ գիշերն այսպէս կու գայ իր պատանքները քակել...
Երբ բուերը բակին մէջ իբարու դէմ կը վայեն,
Երբ հեծծանքս կը հատնի եւ արցունքներս կ'արիւնին...
Լքուած հարսի երազներուս մէջ մենաւոր,
Ես իմ ձեռքովս, դեռ մը պէս, ալ կը սկսիմ,
Գլխուս վրան՝ իմ մօտաւոր գերեզմանիս հողը մաղել...:
Հո՛ղը մաղել:

Պարզ, անմիջական, միշտ պայթելու վիճակին մէջ կենդանի մնացող այս մէկ տողին մէջ է Սիամանթոն: Աշխարհ մը ապրում տողի մը, պատկերի մը, նո՛յնիսկ բառի մը մէջ խտացնող կախարհը, որ մեր գերագոյն սուրբին «աղօթքի կապոյտ անձրեւներ»ուն լեզուն հապի պեղած, անոր «կրանիթեայ ուղղափառ սին»ով սինաւորուելէ ետք, երբ ոսկեձուկի մը նման սկսած էր խոյանալ «հոգիի անծայրածիր հորիզոն» Մեծ Սուրբին եւ ոսկեղինիկ հայ լեզ-
ւին «իմաստի աւազաններ»ուն «անբաւ բաւիղ տեսողութեան» ալքերն ի վեր, յանկարծ, Կեդրոնական Ասիոյ գեհեհներէն դեւերը պինք խլցցին կեանքէն, հարստահարեցին կեանքը լոյսի փառատօնէն, փափուկ ու կրանիթեայ բառե-
րու, թափանցիկ ու մութ պատկերներու ներդաշնակ փառատօնէն, ի սկզբանէ գոյութիւն ունեցող Բանին չպարզուած իմաստները վերծանող ձայնէն...

Սիամանթոյի զրական ժառանգութիւնը բաղկացնող վեց հատորները մեզի չեն ներկայանար գեղագիտական նոյն յատկանիշներով: Հպանցիկ ըն-
թերցում մը իսկ պիտի բաւէր հաստատելու, թէ Սիամանթօ բանաստեղծին պղտոր ու տակնուվրայ ապրումները կը սկսին պայծառանալ «Վարմիր լուրեր բարեկամէս» հատորի էջերուն եւ կ'ազդուցին դասականութեան պայծառ թա-
փանցիկութեամբ, ի՛ մասնաւորի «Հայրենի հրաւեր»ին եւ անոր յաջորդած սէրերու, յոյզերու, հիացմունքի ու պաշտամունքի հեթանոսական փառաբա-
նութիւն «Սուրբ Մեսրոպ»ի տողերուն մէջ, ուր պատկերներն ու փոխաբերու-
թիւնները պահելով հանդերձ իր նախորդ երկերուն թատերական դիմագիծը, կ'ընթանան դիպաշարային անհանդարտ երթով մը՝ տարեց նաւավարի մը նման առաջնորդելով քերթուածը հանգրուան առ հանգրուան դէպի անարտ-
սկիւբին նաւահանգիստը:

Մինչեւ «Վարմիր լուրեր բարեկամէս» հատորը, Սիամանթոյի բանաս-
տեղծութիւնը դասական հասկացողութեամբ յստակ նիւթ մը չունի, այլ կայ պղտոր հոգեվիճակ մը, կայ հոգեպրկումի մը հակազդեցութիւնը, կան զիրար հալածող պատկերներու դիպաշար, արտակարգ շարժում, լոյսի եւ ստուերի մարտեր, փառատոքսային ուժականութիւն եւ տեսիլներու սեւ էջեր, մակբայ-
ներու բառաշխարհակալութիւն: Այս բոլորը միացեալ կու գան կազմելու հեղե-
ղընթաց այն բանակը, որ կ'ողողէ բառերը ջրայնութեամբ, փոթորկալի երա-
ժըշտութեամբ, որ պարպելէ ետք բառերուն բառարանային իմաստները, պա-
նոնք կը հարստացնէ ներարկուած ինքնուրոյն պարունակով, նորաշունչ կեն-
սունակութեամբ, առաջին բառին տաք կայտառութեամբ: Այս իսկ պատճառով, Սիամանթոյի բառերը վայրագ են Ազամին նման, ըմբոստ՝ ինչպէս առաջին մարդուն յանդուգն բառերը, ջերմ՝ անոր արեան չափ, որոնք սպառիլ չգիտ-
ցող ծիսականութեամբ մը, ընթերցողին տեսողութեան ու երեւակայութեան դի-
մաց կ'արարեն հեթանոսական թատերգութիւն մը, ուր պատկերները կ'արշա-
ւեն բեմին վրայ, կը խաչաձեւեն զիրար, կը զարգացնեն, կը հակադրուին ի-

րարու, որուն շնորհիւ բանաստեղծութիւնը կը ստանայ պրկուած հոգեվիճակ եւ կը ճախրէ պողպատեայ թեւահարումներով:

Որովհետեւ ճիւղաճիւղի դէպքը չի պատմուիր, այլ՝ ուրուականի մը նըման՝ անիկա կը հալածէ արուեստագէտը, հսկայածաւալ ու խուլ աղմուկներու քառսի մը կը վերածէ, սաստկօրէն կը սպառնայ բանաստեղծին՝ ներաշխարհի գոյութեան, կը ճգնի պարտադրել իր սեւ թաթերը, որուն բռնադատ անգթութիւններուն, երկըաշարժներուն ու որոտման գիշերներուն ճնշումին տակ քայքայուող քայքայնուած ճշմարտագոյն արուեստագէտը՝ կը ստանայ թափ ու թոխք նոյնինքն իր ներքին աւերակներէն, կ'ըլլայ անպարտերի լինելութիւն, կ'եռայ ինքն իր մէջ, կը յորդի ինքն իրմէ դուրս, եւ քանդելէ ետք ճիւղաճիւղի դէպքին կողմէ կառուցուած ներքին պատուարները, իր էութեան խոր խորերէն կը սուրայ դուրս մարգարէաթոյն, անսանձ պատկերներու հրթիռքերուածը:

Եւ ինչպէս ի վերուստ սահմանուած մարգարէները կը խօսին խորհրդաւոր լեզուով մը, որ պարզ մահկանացուներուն յաճախ հռետորութիւն կը թըւն, այնպէս եւ Սիւսի տարօրէն խորախորհուող պատկերներով, որոնք պայթելէ ետք հրեղէն ներաշխարհէն, կտրելէ յետոյ տեսանելի ու շօշափելի դժոխքին սահմանները, այսինքն՝ Հայաստան գեհեհին ընթերցումը աւարտելէ ետք, կը սուրան անջրպետին տարածութիւնները յաղթահարող արծիւին պէս, կառուցելով վերացական փաթոսը, որ զեղազիտական յոացքէն մեկնած ըլլալով հանդերձ, անոր հակադրուող ըմբոստութիւնն է: Եւ ճիշդ այս պատճառով Սիւսի թոյնի պատկերներն ու փոխաբերութիւնները ցնցող որոտումներ են, հարուստ՝ կախարդական ցուպին շանթահարող, յուսադող, ըմբոստացնող եւ արարչագործող յատկութիւններով:

Ու գուցէ Սիւսի թոյնի պարզ արուեստը, «ցամաքահով մը կիսամեռները վայրոյթով կը խեղդէ» անհաստալի պարզութեամբ մը վսպանակուած պատկերը եւ կամ առաւել պարզ այս նմանողութիւնը «ժամանակին խաւարը կը յաջորդէ կոյր խաւարին եւ երկու էակները բարերու պէս լուռ են», ու նման բազմաթիւ պարզ տողերու հոսքը անոր համար պարզապէս, որ Սիւսի թոյնը գիտակցաբար կամ անգիտակցաբար (էական չէ) կը ձգտէր հասնիլ ցեղին երազին պարզութեան (էականը այս է), երազին խորհրդաւոր թափանցիկութեան: Վերջ ի վերջոյ երազը իրականութեան հակադրութիւնը չէ, այլ անկէ բխած մաս մը, անոր շարունակութիւնն ու վայն ամբողջացնող աննուաճ իմաստները պարագրկող բնաշխարհը:

Ու դարձեալ հոս պէտք է փնտռել ինքն իր աշխարհէն չկշտացող Սիւսի թոյնի ճշմարիտ պատճառը: Սիւսի թոյնը չկրկնեց ինքզինք: Երբեք: Ամէն անգամ փորձեց տալ մէկ էջը հայ ժողովուրդի էութեան, որուն մէջ զոհեց իր էութիւնը: Որպէսզի բանաստեղծութիւնը ըլլայ իր ցեղի ովկիանին ամենախոր յատակներն ի վար կատարուած սուգում, որպէսզի հասնի հայ հոգոյն անմերձենալի խորութիւններու խորհուրդին, զօրակոչի ենթարկեց լեզուի ամբողջական մարտնչումները, որոնցմով պինուած խոյացաւ կայծակնաշեշտ եւ սուզման զուգընթաց բացուեցան կուղպ բողբոջները լեզուին, որ եղաւ Հայաստան բնաշխարհի վայրագ կլիմային նկարագիրն ու հայ հոգոյն անպարտելի էութիւնը բնութագրող անձնաթուղթը:

Սիւսի թոյնը անհունօրէն անհունացած անջրպետն է հայ բանաստեղծութեան, հով խմած ու «հովուն նման թեւաւոր» «զեղեցկութեան իջեւանը, «հայ դպրութեան անջրջանակ յուսամուտը...»:

ՍԱՐԳՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ք. Ճ Ի Ն Պ Ա Շ Ե Ա Ն

Որքա՞ն պո՛ն եմ, այս պահու՛ն, ձեր յիշատակն ու անունը կրկրուս համար հողույս մէջ, ո՞վ պաշտելի հերոսներ, որ իմ ցեղին հպարտութիւնը եզոք:

Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ



Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ (1888-1915)

ԱՆՍՊՈՒՆՆԵՐԻՆ ԽՈՒՉԱՐԿԻՉԸ

- Գեղամ Բարսեղեան:
- Այսինքն՝
- 11 պատմուածք, — գրականութեան երկրպագու, քան դրադէտ:
- 27 տպաւորապաշտ կտոր, — աւելի որակ, քան քանակ:
- 10 օրագրութիւն, — վկայութիւնը՝ իր ճաշակին:
- Տակաւին՝
- «Աուրիանդակ», — գրական առաջին փորձեր:
- «Մանգումիէ Էֆֆիար», «Իւզանդիոն», «Ազատամարտ», — ներքին լուրերու խմբագիր:
- «Մաղիկ», — ծաղիկի փերթերու նման ցրուած գրական էջեր:
- Ու «Մեհեան», — մեծադարձներու հետ՝ մեծահոգի խմբագիր:
- Նահատակ՝ 1915ին, հազիւ 32 տարեկան:
- Կան իրմէ աւելի տաղանդաւորները հարկաւ: Իրենց կեանքը իրենց գրականութեան չափ ազմկայառոյց ընծայողները կան: Իրենց նահատակութեան առասպելը յիշատակ ձգած բախտաւորներէն ալ չէ ինք: Բայց է՛ անպայման պարզօրէն վսեմագոյնը:
- Ժամանակակիցներու եւ դորձակիցներու իսկ վկայու-

Թեամբ, Գեղամ Բարսեղեան գրականութեան սէրը հասցուցած էր պաշտամունքի մակարդակին, ու վստահաբար սրբապղծութիւն կը համարէր համեստ իր հոգիէն քակուող բառերը թուղթիւն յանձնելու համարձակութիւնը: Ատկէ անպայման խտուրթիւնը իր վաստակին, որ կ'ամփոփուի 250 էջերու մէջ, լոյս բնծայուած Փարիզի «Նահատակ գրագէտներու բարեկամներ» ընկերակցութեան կողմէ, 1938ին:

Այնպէս կը թուի, որ Բարսեղեան գրականութիւնը կ'ապրէր իր հոգիով, առօրեային մէջ, կենդանի շարժունութեամբ, քան կը յանձնէր զայն թուղթին, անշարժ բառերու շարանով:

Ճշմարիտ բանաստեղծները մեղք կը համարեն արուեստը պերճանքի առարկայ նկատել: Այնպէս էր եւ Բարսեղեան: Այլ բան չէն ըսեր Գ. Զարեանի հետեւյ տողերը.

«Նա սիրում էր արուեստը մեծ երկիրզածութեամբ, մտքի ազնուականութեան յատուկ սրբութեամբ, ինչպէս անկեղծ վանականները սիրում են Մադոննայի յիշատակը եւ քախանձագին պաշտում նրա ներշնչումը: Նա արուեստը համարում էր նախախնամական մի լուծ, մեծ վիշտ եւ գրկանք, անէծք»:

Արուեստին վախր, որ յատկանշական է արուեստը հարգատօրէն ըմբռնողին:

Արուեստին անէծքը, որ յատուկ է արուեստին անչափելի ու տիեզերական կառոյցը անհատի տիեզերքին հետ համեմատել գիտցող հոգիին:

Արուեստին կատարելութիւնը գեղագէտներու չափանիշն է:

Գեղամ Բարսեղեան հոս այ բաժին ունի, համեստօրէն.
«Ու կեցաւ անշարժ: Ազդիկները բոլոր, որ կը խաղային իր շուրջ. թռչուններ եղան ու սկսան մի առ մի թռախարտիկ ու բարձրանալ:

Սիրեմա մնաց միմակ, միս-միմակ:
... եւ թռչուններ սկսան բխիլ իր կուրծքէն ու թւերէն...
Բայց տեսաւ, որ նունուփարներն ալ թռչուններ եղան, ու ծիծեռնակներու մրրիկ մը բարձրացաւ իր շուրջ:

Պատուհանէ մը ներս թռչուններ խուժեցին. կապոյտ, ներմակ, դեղին: Սիրեմա թւերը պարզեց եւ տարածուեցան հերքր ոսկեգեղմ: Պիտի թռչնանար, բայց զգաց, որ թւերը կը բռնէին»:

Իրն էն տողերը, ու կը յայտնակերպեն գեղապաշտ արուեստապէտր, քան խօսքի վարպետ մը:

Աւելին. գրականութիւնը առասպելական հմայքով մը կախարդած է Բարսեղեանը, ու ինք առասպելական բաժին մը վերապահած է իր իւրաքանչիւր գրութեան:

Արդարեւ, երեւակայութիւնը միշտ առկայ է իր պատմրւածքներուն թէ արձակ էջերուն մէջ: Այլարանական պատմումի ձեւը գրականութեան իր նախընտրած սեռն է:

Երեւակայութեան յայնածիր թռիչքներուն մէջ, աւելի քան մարդ է Բարսեղեան, կառչած մարդկային հոգեբանութենէն բխող ա'յն խորհրդին, ուր իրականութեան մէջ անուուանելի բաները հարկ է նուանել երեւակայութեամբ, որպէսզի գոնէ ան-

ընկճելի մնայ հոգին:

Ու կը յայտնուի «Ապառնի քաղաքին խուզարկիչը», նոյնի՛նքն Գեղամ Բարսեղեան, որ ելաւ գտնելու «Ապառնի քաղաքը գերագոյն ձեւերուն եւ գերագոյն ուժին, որպէսզի կարենար զըտնել ներդաշնակութիւնը՝ մեծ ու հզօր՝ իր հոգւոյն հետ համագնաց»:

Այստեղ էս, յաճախանքը պերագոյնին ու փնտռուողը անոր: Ատով տազնապահար Բարսեղեան աւելի երազեց, քան զըրեց, ու գրածները միայն որոնում կը մատնեն արդէն. ինքզինք գտնելու, իր անհանգիստ հոգիին հետ համագնաց ներդաշնակութիւնը գտնելու:

Հաւանարար ա՛յս է պատճառը, որ իր բոլոր սերնդակիցներուն պէս անձանօթ երկինքներու խուզարկութեան ալ ելաւ. ճամբորդեց, բայց յուսախար վերադարձաւ հո՛ն՝ ուր էր ի ծընընդէն, որովհետեւ ընկերութիւններու մարդը չէր ինք, այլ կը շնչէր իր անձին մտերմութեան մէջ միայն:

Այլեւ այնքա՛ն նման է իր գրականութիւնը իրեն: Ճաշակ շլացող փարթամութիւնը չկան իր մօտ, այլ կան ճաշակաւոր պարզութիւններ: Կը կարդացուին շշուճով, ա՛յնպէս՝ ինչպէս հեղինակը կը խօսէր, անկասկած:

Նուազ անազմուկ չէ Բարսեղեան հրապարակագիրը: Պրմբազիր է տաւելարար: Ի՛ր խօսքը կ'ըսէ յանուն բոլորին: Յօդւածներու տակ ստորագրութիւնը հաղուազէպ է, ու իր գործածածը ծածկանուն է շատ յաճախ. Գեղօ, Նետ, Օչին-Չարթօնք:

Այստեղ էս փառատնչութիւնը չէ իր իրթանը: Ներքին արեւոտութիւն մը լրագրութեան յորձանքն ի վեր կը նետէ զինք, եւ զխտակից է իր ասպարէզին դառնութիւններուն եւ անորոշութեան, որոնց կ'անկարկէ ընկերոջ մը ուղղուած մէկ նամակին մէջ. «...Մանուկ հասակէս այս գործին եմ վարժուեմ, այսպէս ալ երթալ կ'ուզեմ, միշտ այսպէս, հաւատալով, թէ ամէն բանի կը տանի լրագրութիւնը, նոյնիսկ... անօրութեան»:

Ու պսակումը իր հրապարակագրական գործունէութեան՝ — «Մեհեանք»: Միւս բնկերներու կողքին՝ լուսօրէն կորովի է Բարսեղեանի մեհեանական պոռթկումը: Հոս է ինք, հայ գրականութեան տաճարը մաքրագործելու ձեռնարկած կտրիճ անձնը՝ իէրներուն հետ, մտրակը ձեռքին:

Այստեղ, արուեստի պաշտամունքին առընթեր՝ Բարսեղեան կը ձեւակերպէ միւս պաշտամունքը. «պաշտամունքը հայ հոգւոյն» ու այս անգամ զայն արուեստով փոխանցելու կիրքը կը հրկիզէ իր ներաշխարհին մեհեանը:

«Հայ հոգին՝ արուեստի նորանոր ու բազմազան ձեւերուն մէջէն, — անա՛ շայաստանեայց գրականութեան իտէալը»:

Դա՛րձեալ իտէալ, վերստին ձգտում դէպի կատարելութիւն: Ու, արդէն, զառիվեր խոյանք մը չէ՞ իրաւ բանաստեղծը: Գեղամ Բարսեղեան շրջահայեաց է, խոհուն, վերապահ: Միշտ ի ձեռին ունի իր ջլային գրութեան հակակշիռը: Այս բոլորը արդէն չեն, սակայն, որ ան ամբողջն պահէ իր գաղափարական հաւատամքի մտապաստառը: Կը հաւատայ ու կը գործէ:

Որպէսզի չսանձուին իր հոգիին ճախրանքները, իրեն հարկ

է նաեւ ֆիզիքական ազատութիւն, ինչպէս ինք կը սիրէ կոչել՝ «վրիժաբիր Ազատութիւնը», որ պիտի գար սուրբ ճօճելէն, հաստատուէր կենդանի մարդոց այս տարօրինակ դամբարանին մէջ, ու անոր լուսեղէն յառաջխաղացութեան առջեւ. «ամէն ինչ կը սասանէր վայրկեան մը, ապա՝ ու դղրդալից յեղաշրջութեան մը փրկարար փոքորիկէն ետքը, կապոյտ պայծառութեան առջեւ տեղի տուաւ ինչ որ ժառը ու բորբոս էր, ինչ որ սպանիչ ու աւերիչ էր»:

Կը հաւատար...

Գործունէութեան բազմաձայ ու ծաւալուն մարդը յատուկ է իւրաքանչիւր մտաւորականի: Բայց հեւ ի հեւ աշխատանքի ետքը յատկանշական է մանաւանդ մեր նահատակ սերունդին: Բան մը աւելի իրադրծելու տենդոտ փափաքը բնագոյլին մը՝ դուժ եղած է անոնց մօտ անկասկած: Այսպէս կ'ըլլայ բոլոր կանչուածներու պարագային: Տարբեր չէ անոնց ամենախոնարհին պարագան:

Խոնարհ՝ որովհետեւ խոր էր Բարսեղեան: Ներհայեաց աւելի, քան ուշագրաւ: Կը հաւատար: Ու մենք դիտենք, որ հաւատքը փաստաթուղթն է խորութեան:

«Մեհեան»ի ծնունդը աւետող իր «Բաժակաճառ»էն առնուած է հետագայ պարբերութիւնը.

«Կը հաւատար՛նք, եւ մեր հաւատքը կը տօնենք այսօր իրարու ձեռք սեղմած: Մեր եղբայրական ժպիտները անո՛նց, որ հաւատացին մենէ առաջ, անո՛նց, որոնց մէջ արձագանգ կրնայ գտնել մեր ձայնը»:

Անպայման նոյն այս բառերը կրկնեց Բարսեղեան ամէն անգամ, որ հաւատաց՝

- Արուեստի ամենակալութեան,
- Խօսքի ուժականութեան,
- Գործի ուժին:

Ու այդ բոլորէն, բոյ՛րը կտակեց անոնց, որոնց մէջ արձագանգ կրնայ գտնել իր ձայնը, իր հաւատամբը:

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Ն. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Հայը պիտի ապրի՝ հակառակ դահլեճներուն...
 Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրապատիւը...
 Քային ժէզ սակի օղակն ըլլալու համար:

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ



Գ. ՎԱՐՈՒԺԱՆ (1884-1915)

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

բանաստեղծ

Կան եգալի բանաստեղծներ, որոնք հանճարեղ կը ծնին եւ նոյնիսկ իրենց անտաշ արուեստով կը նուաճեն անմախրնքաց ու անկրկնելի բարձունքներ: Անոնք օժտուած կ'ըլլան խառնուած-փային այնպիսի՝ ուժականութեամբ եւ ստեղծագործական այն-ժա՛ն խոր զգայնութեամբ, որ իրաւ վկայութեան մը կը վերածեն կեանքի իրենց անձնական փարձառութիւնը եւ կ'արժանանան յաւերժութեան:

Կան նաեւ միւս բանաստեղծները, անոնք, որ տաղանդաւոր կը ծնին եւ արուեստի իրենց պաշտամունքը կը բարձրացնեն ա՛յն հանգրուանին, ուր կը յաջողին ստացականօրէն իրենց մէջ խտացնել մշակութային ամբողջ ժառանգութիւն մը եւ այդ համ-

բով հասնիլ նշմարիտ ու գեղեցիկ ստեղծագործութեան անխառն ակունքներուն, անկորնչելի եւ անփոխարինելի յաւելումի մը ուղին հարթելով:

Եթէ հանճարեղին եւ տաղանդաւորին այս սահմանագծումները որդեգրուին, այդ պարագային կարելի կը դառնայ աւելի հարագատ բնութագրումը կատարել Գանիէլ Վարուժանի բանաստեղծութեան, որ ծնունդն է արուեստագէտի այս գոյգ շնորհներուն ի՛սկապէս արտասովոր մէկ գուգորչումին:

Ամբողջական բանաստեղծի տիպարն է Վարուժան եւ գրբական իւրաքանչիւր սերունդ կրնայ ներշնչման մնայուն աղբիւր դարձնել անոր ստեղծագործական նկարագիրը:

**

Վարուժանի դիմագիծը ուրուագծող իւրաքանչիւր քննադատ կամ հեղինակ անպայմանօրէն կանգ առած է անոր բազմբանց արուեստին առջեւ, որոնելով գաղտնիքը անոր ստեղծագործական առանձնայատկութիւններուն:

«Ցեղին սիրտը» պէտք ու անոր թափուն հարստութիւնները, տառապանքներն ու ծառայումները յայտնակերպող Վարուժանի բազմալար նուագարանը ճանչնալէ ետք, ընթերցողը ո՛չ միայն դէմ յանդիման կու գայ «Հեթանոս երգեր»ուն նման բարդ ու ծաւալուն պաստառով գործի մը (ուր հայկականութիւնը իր հեթանոսական փարթամութեամբ վերականգնելու ճիգին հետ՝ տիրական է նաեւ դարաշրջանի մարդկութեան ընդհանուր հոգեշարժը թարգմանելու Վարուժանի յանձնառութիւնը), այլև կը գտնէ «Հային երգը» հովուերգող եւ հայ ժողովուրդի ամենէն պարզ, հարագատ եւ խորունկ ձայները շնչաւորող դասական վեհտութեամբ եւ մեծութեամբ արուեստագէտ մը, որուն համապարփակ բանաստեղծութիւնը միայն պաշտամունք է հրպարտութիւն կրնայ առթել:

Տակաւին մտածել, որ Վարուժան ապրեցաւ միայն 31 տարի՝ 1884էն 1915, եւ անդրադառնալ, որ 15 տարիներու ակնթարթային շրջանի մը մէջ հայ ժողովուրդը ծնունդ տուաւ եւ սնուցանեց ա՛յսֆան ամբողջական բանաստեղծ մը...

Վարուժանի «Մարտունեք»ը կը մատնէին նախատարբեր անոր հետագայ կազմաւորումին: Ուշագրաւ է հաստատել, որ իր ստեղծագործական նանապարհի սկզբնակէտին կանգնած՝ «Մուսային» էրթուածով, երիտասարդութեան նոր թեւակոխած բանաստեղծը կը բանաձեւէր, աւելի նիշդ՝ կը նախագար իր հասունացման ուղին, թէկուզ անտաշ խոստովանութեամբ: Եզակի է ասիկա, որովհետեւ կեանքի անակնկալները կանխելու եւ ժամանակին միայն հասունացումի դեր մը սահմանելու նախագագումը պարզապէս կ'ենթադրէ գերագոյն ինքնագիտակցութիւն:

Ինքնագիտակցութեան ա՛յս փաստին մէջ պէտք է փնտռել Վարուժանի հանճարը: Եթէ գեղագիտական տեսանկիւնէ ճիշդ է, որ «Մարտունեք»էն ետք Վարուժան ապրեցաւ ստեղծագործական երեք տարբեր հանգրուաններ, գործածելով երեք տարբեր

նուագարաններ՝ նույնը կարելի չէ ըսել անոնց ծնունդ տուող բանաստեղծական ապրումին մասին, որովհետև անոնք բոլորն ալ նիւզարձակումներն էին նույն ինքնագիտակցութեան: Այս իմաստով հետաքրքրական է վերադառնալ երեք հատորներու առաջնորդող ԲՐՔ-ուածներուն՝ «Մուսային» («Մարտուններ»), «Զօն» («Յեզին սիրտը») եւ «Գեղեցկութեան արձանին» («Հեթանոս երգեր») խորագիրները կրող բանաստեղծութիւններուն, որոնք խորքին մէջ հասուն ձեւակերպումներն են «Մարտուններ»ու առաջնորդող Բերքուածին մէջ յայտնակերպուած յուզաշխարհին եւ ինքնագիտակցութեան: Վարուժան հանաքեղ էր, որովհետև յաջողեցաւ իր ժամանակին եւ զինք ծնող ժողովուրդի տրեւալ վայրկեանի կացութեան հետ ամբողջական հաղորդակցութեան մէջ մտնել, բոլոր էատարներով խորագալ իր տեղը եւ, ա՛յդ ինքնագիտակցութեամբ՝ անձնատուր ըլլալ արուեստի պաշտամունքին:

Բառին ամբողջական առումով նոր դարաշրջանի մը կագմաւորումին կը գուգադիպէր Վարուժանի ստեղծագործական զարգացումը: Մեքենականացումի դարը կը նուիրագործէր, մարդկայինը հերոսացնող անկեղծութիւնն ու հարագատութիւնը կը զիջէին ֆադէնի բարձրուն: Ընդհանուր այս անկումին դիմաց՝ հայ ժողովուրդը առաւել բրտութեամբ կ'ենթարկուէր թրքական հալածանքներուն. ջարդին եւ պանդուխտներու հոսանքին դէմ կարելի էր կենալ միայն ամբողջական վերականգնումով: Անհրաժեշտ էր վերականգնիլ թէ՛ իբրեւ մարդ եւ թէ՛ իբրեւ հայ: Վարուժան առաջնորդուեցաւ այս հրամայականով եւ իր բանաստեղծութեամբ բերաւ արուեստի իր նպաստը ամբողջական վերականգնումի դատին: Սոսկ յանձնառութիւն չէր ասիկա, այլ՝ իրաւ գուգորդութիւն: Վարուժանի ուժական խառնուածքն ու զգայնութիւնը անձնատուր եղան իր այս ինքնագիտակցութեան, եւ ամբողջական այդ վերակերտումին մէջ կը խտանայ ամբողջական բանաստեղծին հաննարը:

Նաեւ ու յատկապէս տաղանդաւոր էր Վարուժան: Լեզուական մշակոյթ, ռիտմական արտայայտութեան անսպառ կարելիութիւններ, կառուցողական արհեստի մշտանորոգ գիւտարարութիւն եւ պատկերաւոր ու երաժշտական զգայնութեան եւ մտածումի աննախատեսելի թրթռագումներ... ահա՛ եւ իր տաղանդին բազմակողմանի ստորոգելիները:

Բանաստեղծական նման տաղանդ մը միայն կրնար մարմին ու շունչ տալ հաննաքեղ Վարուժանին: Մէկ կողմէ՛ ա՛յնքան լայն բացած էր իր ստեղծագործական կարկինը եւ, միւս կողմէ՛ ա՛յնքան բազմաշնորհ էր իր եղէգնեայ գրիչը: Մէկ կողմէ՛ նամբայ ելած էր բանաստեղծականագնելու ամբողջ ժամանակաշրջան մը՝ իր ցաւերով եւ երագներով, իր կոտորածով վերներով եւ թռնկող ծառացումներով, իր այլասերման մեղներով եւ հեքանոսական պայծառութեամբ, իր հովուական պարգութեամբ եւ մեքենական ժխորով, իր թափուն խոստովանութիւններով եւ անեղագոռ պոռկումներով, իր բիւրեղեայ սէրերով եւ վայրագ կիրքերով... իսկ միւս կողմէ՛ պարտաւոր էր ունենալ իւրաքանչիւր բարախումի համապատասխան լար, ներդաշնակ ու ամբողջ-

ջական մէկ համանուագի հասնելու տաղանդ:

Հարկ կա՞յ թուելու այդ լարերը. ո՞վ կրնայ հերքել որ Վարուժանի տաղանդը յայտնեցաւ նուիրագործել իր «Զօն»երուն ամբողջական տարածութիւններն ու խորութիւնները:

Դանիէլ Վարուժանով նոր աւանդութիւն մը կը սկսի հայ բանաստեղծութեան մէջ:

Ամբողջական բանաստեղծի տիպարն է ատիկա: Վարուժանի օրինակը կը հաստատէ, որ եթէ քերթողը կարենայ յտացրնել զինք կանխող ժամանակներու փորձառութիւնը եւ ստեղծագործական նոր յայտնութեամբ մը ամբողջական վերականգնումը կատարել մարդուն՝ այդ պարագային հանճարեղ ու տաղանդաւոր բանաստեղծներու բաժանման գիծին վրայ ու անկէ վեր կ'իրականանայ ամբողջական աւանդը:

Վարուժանէն առաջ մեր բանաստեղծութիւնը գուրկ էր այդ տիպարէն: Իսկ իրմէ ետք արձանագրուած Զարեմցի փաստը կ'արձագանգէ Վարուժանով իրագործուած հայ քերթողութեան վերաբարմացման:

Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա. Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն



Օր մը մեր Յնչը հակառի մը նման պիտի վերականգնի անիրաւ աշխարհին առաջ:

Տ. ՉԷՕԿԻՐԵԱՆ

Տ. ՉԷՕԿԻՐԵԱՆ (1884-1915)

ԶՈՒԳԱԲԵՌ
ՍԷՐԵՐՈՒ

Տխուր օրերու եւ նոյն շրջանին ապրած մեր ժողովուրդին զգայութիւններուն հաղորդ գրադէսներէն է Տիգրան Չէօկիւրեան:

Չուզահեռ սէրերը՝ հող եւ կիս, ապրելու տենչը, խռովքները, մարդուն ներքին փոթորիւմներն ու պատերազմի արհնոտ անցուդարձները անկեղծած են զայն ու ջիգերը քամած իր գլուխ-գործոցին՝ «Վանք»ի տարածութիւններուն վրայ:

Որքան անվերջակէտ է մարդկային անհեթեթութիւնը եւ ճակատադրի ի՞նչ հեղինաք, որ զուպահեռ ընթացքով մը կ'ուրուանայ «Վանք»ի տխարանքուն եւ անոր հեղինակին սեւ ճակատագրին միջեւ:

Տրայտիզմն նահանգի կիւմիւլիսանէ քաղաքը ծնած Չէօկիւրեան որք է մանկութենէն: Աշտկերտ՝ վանքերու: Շրջանաւարտ՝ Պոլսոյ Պէրպլէրեան վարժարանէն:

Սորվելու եւ սորվեցնելու տենչն բռնուած ուսուցիչ, թարգմանիչ, «Ոստան» եռամսեայ հանդէսին հիմնադիր անդամ, հեղինակ «Հայրենի ձայն» եւ «Լեւոնտը» վիպակներուն, Տիգրան Չէօկիւրեան 1914ին լոյս ընծայեց իր վերջին գործը, «Վանքը», որ ինչպէս իր ժամանակին, նոյնպէս եւ ներկայիս կը համարուի իր դրական վաստակին ամէնէն տոկուն ժառանգութիւնը:

Ընթերցողը «Վանք»ի դարպասէն իսկ կը զգայ մթնոլորտին անմիջականութիւնը, հակառակ թաւալած վաթսուռն տարիներուն:

Չէօկիւրեան հարազատօրէն տուած է իր ժամանակաշրջանի մութ կեանքին տեսիլները, որոնք շղարչուած են տանթէական տխրութեամբ:

Այդ տանթէական մթնոլորտին մէջ սրբացած շառաւիղը, Չէօկիւրեան

պատկերացուցած է որք խաչեր՝ աշխարհի խղճմտանքին դիմաց իբրև բա-
րախող յուշարձաններ :

Բունագատութիւններու սահմակեցուցիչ աւերները՝ Արտակ վարդապե-
տի ինքնաջորդեալ մտայլ օրագրութիւններուն ընդմէջէն :

Հոգեկան, ցեղային, մարմնական, հրաբուրբ արեան մշակոյթով շարու-
նակ ալեկոծող վարդապետ մը, որուն էութիւնը կը տուայտի սիրոյ եւ հայ-
րենիքի ապրումներով յազեցած զուգուհեւ աշխարհներու մէջ :

Սէրը՝ Շուշանին հանդէպ .

«Ինչպէ՞ս մեղմել կիրքը երիտասարդի մը, ըլլա՞լ կպերական, կարմիր
արիւնին մէջ, ինչպէ՞ս սպաննել մտածումը, որ երակներուն ջերմին սարաու-
ռէն կ'արթննայ եւ կ'ըզայ քաննրում ամէնէն ամօթալինջ այլ ամա՛շը, կիմը» :

Ու հաւատօրը՝ իր ժողովուրդին հանդէպ .

«Օր մը մեր ցեղը հսկայի մը նման պիտի վերականգնի անիրաւ աշ-
խարհին առաջ» :

Յուսալքումներու եւ մահացու յուսախարութիւններու քառսէն՝ Ձէօ-
կիւրեան դուրս բերած է ամուր նկարագիրներ եւ յուսադրող արտայայտու-
թիւններու սպեղանին փոսձ իր էջերուն վրայ, տարեց թէ երիտասարդ հե-
րասներուն առիթով :

Երբ «Մեհեան»ի կատարի քուրմերը կուռքեր կը տապալէին եւ սուտ
համբաներու մոխիրը կը փռէին չորս հովերուն, Ձէօկիւրեանի «Վանք»ին
դիմաց դրօշմանքով կանգ առին եւ ընթերցողին ուշադրութիւնը հրաւիրեցին
անոր գրական արժանիքներուն վրայ : Յակոբ Գիւլէճեան (Օշական) անոր
նուիրած գրահասականի մը մէջ կը գրէ .

«Ենթոյ տղայ մըն է ան, սրուն աչքերը կը պահեն նուրբ գերզգայու-
թիւն մը եւ որ իրերուն վրայ նայած ատեն զիտէ հոն տեսնել պահաւարած
քանկագիծ պատկերները, անոնցմէ, որոնք կը փախչին ոսմիկ նայածքնե-
րու հասարակութենէն :

«Պ. Ձէօկիւրեանի գիրքը արժանի է համակրանքի» :

1890-95ի ջարդերէն ճողոպրած բեկորներուն վէրքերը մեղմելու ելած
«Վանք»ի հերոսը, Արտակ վարդապետ, հազիւ սկսած էր շունչ առնել, վե-
րանորոգել աղէտներուն առիթով կործանած իր հոգին, երբ պատմութիւնը
կրկնուեցաւ աւելի մեծ չափով մը, տեղի ունեցաւ հայկական ցեղասպանու-
թիւնը, որուն առաջին դահերէն եղաւ կոտորածներուն սարսուռներով իր դրա-
կանութեան մթնոլորտը կազմած Տիգրան Ձէօկիւրեան :

Ու կրկնուող պատմութեան հետ՝ կրկնուեցան նաեւ «Վանք»ի մէջ
դրուած հարցումները . «Ո՞ւր է մեր ծնունդը : Աստուածային կամքը այս ո-
նիրներուն ինչպէ՞ս կը հանդուրժէ» :

Ձէօկիւրեանի նահատակութեամբ մեր գրականութիւնը կորսնցուց տա-
ղանդաւոր արձակագիր մը, որ ապահովարար շատ դանձեր պիտի տար մեզի,
եթէ թուրքին արիւնստ թաթը չճմլէր սպիտակ թուղթերու տալէւ եռեւեփող
անոր զգայուն սիրտը : Բայց եւ այնպէս՝ «Վանքը» մեր գրականութեան դո-
հարներէն պէտք է համարել :

ԱՉԵՆԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

Յ. Պ Է Բ Պ Է Բ Ե Ա Ն



Անա կ'իբրամ... Հոյսատանը մա՛յր քեզի՛:

Բ. ՍԵՒԱԿ

Բ. ՍԵՒԱԿ (1885-1915)

ԹԵՒԱԲԵԿ ԲՐՈՒՊԱՏՈՒՐԸ

Արեւմտահայ գրականութեան բախտորոշ մէկ ժամանակաշրջանին ամբողջական պատկերը վերակազմելու համար՝ Ռուբէն Սեւակ քննարկման շահեկան աղբիւր է:

Բանաստեղծական տարբեր յղացքներու ու ոճերու ներկայութիւնը իր վաստակին մէջ՝ քնարերգականէն մինչեւ հռետորականը, պատմողական-նկարագրականէն մինչեւ ընկերային յանձնառու բանաստեղծութիւնը՝ ներկայ են իր վաստակին մէջ՝ ո՛չ թէ իբրեւ ազդեցութիւն, այլ իբրեւ վինք կազմաւորող տարրեր:

Այս երեւոյթը իր ամբողջութեանը մէջ հասկնալու ու վերլուծելու համար՝ պէտք է հետեւիլ Սեւակի բանաստեղծութեան փթթումին ու վարձագման բոլոր հանգրուաններուն:

Ռուբէն Սեւակ կը կազմաւորուի Բ. Պերպլերեանի հսկողութեան տակ, որ մեծ ազդեցութիւն ունեցած է իր վրայ եւ, ապագային, օժանդակած է իրեն՝ ուսումը շարունակելու Զուիցերիոյ մէջ:

Այս մատնանշումը կենսագրական պատահական բաւում մը չէ:

Հոն, Պերպլերեան վարժարանին մէջ, կը տիրէ նախափապապաշտ դպրոցին մթնոլորտը, ուր Սկրտիչ Պէշիկթաշեանէն Դուրեան եւ այսպէս կոչուած կրտսեր ռոմանթիքները իրենց դերը կ'ունենան նոր կազմաւորուող

բանաստեղծին առաջին շրջանի գրություններուն վրայ: Անոնց համոզումներն են, որ կազմած են բանաստեղծութեան միջին ճաշակը: Այսպէս, բնութիւնը, ազգային եւ համամարդկային խնդիրները հիմնականօրէն կը դրուին Սեւակի կողմէ եւ ապագային կը կազմեն իր վաստակին յատկանշական զիծերը:

Զուգահեռական յատկանիշներու ու յարաբերութիւններու ամբողջ ցանց մը կարելի է գծել Սեւակի եւ իրեն սերնդակից բանաստեղծներուն միջեւ:

Այս իմաստով՝ առաջին մատնանշումը, հպանցիկօրէն, կատարուած է Յ. Օշականի կողմէ, որ խորքային մօտեցումի նմանութիւն կը գտնէ Վարուժանի «Պողոթնայի ծաղիկներ»ուն եւ Սեւակի «Արգասաւորում», «Արեւելք», «Պոռնիկը», «Պոլսոյ որովայնին մէջ», «Շան հոգի», «Այս դանակը», «Մարդեղութիւն», «Կարմիր գիրքը» բանաստեղծութիւններուն միջեւ, «բոլորն ալ արդի կարգերուն ընդդէմ լայն ու խիպախ յարձակողակաւնի մը գնացքով, կատաղութեամբ»:

Բոլոր այս գրութիւնները յանձնառու կերպով ընկերային հարցեր կ'արծարծեն եւ հաւանաբար այս զիծն է գլխաւոր պատճառը այն շահագրգռութեան, որ խորհրդահայ բանասիրութիւնը ցոյց տուած է Սեւակի հանդէպ:

Օշական կրնար առանց տատամսելու տարածել շարքը նմանութիւններուն եւ բաղդատել Վարուժանի «Ո՛վ Լալագէ»ն, «Գրգանք»ը եւ ուրիշ բանաստեղծութիւններ Սեւակի «Եհովային արցունքները», «Կէս գիշերէն վերջ մըն էր» եւ նոյն շարքին պատկանող բանաստեղծութիւններուն հետ:

Սակայն, երբ բաղդատութիւնը կը կատարուի երկուքին՝ հարկ կը դառնայ ընդգծել կարեւոր երեւոյթ մը: -- Մինչ Վարուժան կը յաջողի զեղազիտական նուաճումներ արձանագրել իր վերոյիշեալ գործերով, Սեւակի մօտ ընկերային եւ բարոյական մտահոգութիւնները կը միաձուլուին եւ երբեմն կը շփոթուին զեղազիտական մտահոգութիւններուն հետ, անբան՝ որ յաճախ երկրորդը կը կորսուի եւ բանաստեղծութիւնները զուտ յանձնառու հանգամանք կը ստանան, ցոլացնելով ժամանակակից գաղափարախօսութիւնը:

Երեւոյթը կարելի է ընդհանրացնել, տարածելով կայն նաեւ իր արձակ վաստակին վրայ:

Սեւակի զեղազիտական մտահոգութիւնները երբեք չեն բիրեղացած եւ այնքան սուր ձեւով չեն դրուած, որքան իր ազգային, ընկերային ու բարոյախօսական մտահոգութիւնները:

Նմանութիւններու պարագան կարելի է հաստատել նաեւ իր եւ Մեծարենցի քնարական (մասնաւորաբար բնութիւնը ներկայացնող քերթուածներուն) գրականութեան, ինչպէս նաեւ «Կարմիր գիրքը», «Կիլիկեան երգեր», «Վերջին հայեր» բանաստեղծութիւններուն ու Միամանթոյի հռետորական ողբ-երգութիւններուն միջեւ:

Ռուբէն Սեւակի քնարերգական բանաստեղծութիւններուն մէջ պատուրոշիչ երակ մը կարելի է գտնել, որ կը վերաբերի բնութիւնը ներկայացնող իր պատասաններուն («Լեմանի լիճը», «Կարապէները», եւ այլն), որոնք իրենց փլապթիբ զեղեցկութեամբ եւ պերճախօս «մեռեալ բնութիւններով» կը յատկանշուին:

Մասնավոր ուշադրության արժանի են «Ջարդին խենթը» շարքին մէջ գործածուած մենախօսութիւնները, որոնք, փորձառական իմաստով՝ կը վատորոշուին ու կ'առանձնանան մեր գրականութեան մէջ՝ իրենց ուժգնութեամբ ու տարողութեամբ:

Մասնավորաբար 1909էն ետք գրուած իր բանաստեղծութիւններով՝ Սեակ կը փորձէ եասնիլ անանձնականին եւ, այս ձեւով, կը տարածուի ոճային ու խորքային տարբեր փորձերու մէջ՝ ոչ անշուշտ միշտ նոյն խտութեամբ:

**

Ինչ որ շահեկան է իր վերջին շրջանի գրութիւններուն մէջ՝ ա՛յն առանձին երակն է, զոր հաւանաբար քնարական իր ամենահարազատ անհատականութիւնը կը բերէր: Խօսքը կը վերաբերի լայնաշունչ բանաստեղծութիւններու շարքի մը, որոնց ամենայատկանշականը «Թրուպատուրները» խորագրով քերթուածն է.

Տարօրէ՛ն դէմքեր: Ամէ՛նքն, է՛գ, արո՛ւ,

Բախտէ՛ն կատաղի հալածուողներու...

Թրուպատուրը կայք հաստատել չկրցող թափառաշրջիկն է, «մեկնողը», որ իր օտար խառնուածքին պատճառով տարբեր ներաշխարհի մը ունի եւ առանձին աշխարհահայեացք մը կը դրսեւորէ: Այս պարագային հպանցիկօրէն կը բախի իրականութիւններուն եւ կ'անցնի: Այս գիծը շատ հարազատ է նաեւ Ռ. Սեակի խառնուածքին:

Թրուպատուրներուն մէջ պանապան հարցեր կ'ընդելուպուին իրարու: Նախ՝ փորձ մը կը կատարուի ճշդելու համար բանաստեղծին փոխարաբերութիւնները ընկերութեան հետ, սահմանելու անոր դերը: Ապա՝ ընկերային անարդարութեան եւ մարդկային իրականութեան հարցերը ըմբոստացումի առաջնորդող շեշտով մը հո՛ն կը մէկտեղուին:

Այսպէս, արեւմտահայ գրականութեան որոշ մէկ ընդհանուր միջինն է, որ կը պարզուի իր մայր փորձին ընդմէջէն:

Մինչ Սեակի ժամանակակիցները կը յաջողին գրական անմիջական մշակոյթին որոշ մէկ երակը վարձացնել եւ հասցնել իր լրումին, կոթողական իրագործումներ արձանագրելով, իր գործը կը տուժէ տարածման գործողութեան մէջ:

Սակայն, վերոյիշեալ տարրերուն եւ զեղազիտական մէկէ աւելի յղացներու յաջորդականութիւնը յատկանշական ու խիստ էական նկարագիր մը կու տայ իր վաստակին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԷՐԵԱՆ

Ն. Պ Է Շ Ի Կ Թ Ա Շ Լ Ե Ա Ն



ՆՆՈՎՔ ՇԱՀԷՆ (1889-1915)

Նախասակ գրագետներու աւագ զեմբրուն յատկացուած այս բաժնին մէջ քիչ մը խումկ ծխելու համար մտնու «արեւմտահայ թատրոնի միակ մարտիրոս» ենովք Շահէնի յիշատակին, բացինք Նշան Պէշիքաշիեանի «Թատերական գէմքեր»ը ու արտագրեցինք հետագայ էջը:

Իր բոլոր կողմերով սրտագրաւ էջ մը, ուր այնքան քիչ բառերով տրուած է լրիւ կենդանագիրը ինքզինք արուեստին ու իր ծագովուրդին ամբողջովին ընծայարարած այս կենսաթրթիւ, մտեւրամաբ ու մտտագ մտնուակին...

Ենովք Իբրանոսեան, բննական անունով Ենովք Շահէն, արեւմտահայ թատրոնին միակ մարտիրոսը եղաւ, ձերբակալուելով իբրեւ Դաշնակցական, Ապրիլ 11ի (1915) եղբրական զիշերը ու Պոլսոյ Հայ մտաւորականներուն կարաւանին հետ տարուեցաւ... Ականատես վերապրողներ կը վկայեն, թէ բանտարկութեան ու տարագրութեան օրերուն՝ Ենովք ամէնէն աւելի կենսուրախ եղողն էր, ամէնէն կոտակախօսը. զուարթ էր Հարսանիք դաջողի մը պէս: Իր այդ վիճակը կու դար թերեւս իր կենսունակութենէն, իր լաւատեսութենէն եւ կամ զուրջ նախազգացումի պակասէն:

Ենովք ծնած էր Պարտիզակ, 1889ին: Հայրը մեռած էր կանուխէն: Ունէր խաթուն մայրիկ մը, քոյրիկ մը, ու տրժէքաւոր եղբայր մը՝ Գրիգոր Անդութը, որ հանրածանօթ ուսուցիչ մըն էր ուսողութեան, Պոլսոյ վարժարաններուն մէջ: Մերթ հրապարակագիր ու միշտ չազդայինճիւղ: Հին Դաշնակցական: Ինքն այ աքսորուած, քիչ մը տւելի ուշ, եւ վերապրած հըրաշքով: Դարձին գրեց երկու թատերախաղ, տարագիրներուն կեանքէն, որոնք բեմագրուեցան Փելեքեան թատերախումբին կողմէ:

Իբրանոսեան ընտանիքը շատոնց փոխադրուած էր Պարտիզակէն Պոլիս (Դատը դիւղ): Ենովք նախակրթութիւն մը ստանալէ հաջ, միակ բուն փափաքը եղած է բարձրանալ բեմ: Կարդալով կենսագրութիւնները Պետրոս Աղամեանի, լսելով ականատեսներու նկարագրութիւններն ու ներքողները Հայ թատրոնի կայսրին մասին, իր մէջ անզուպելի տենդն ու տենդը ծաղկած է՝ հետեւելու մեծ ողբերգակի ճամբուն: Այդ օրերուն, սակայն, բոլոր միտն կտրելի չէր արտաստենել բեմերէն: Համիտեան բռնակա-

լուծեան շրջանն էր: Ենովք սորված էր Ադամեանի խաղացանկէն, մասնաւորապէս «Օրէլիօ»էն, քանի մը մասեր ու մենախօսութիւնը՝ «Դարբիններու գործազուլը», եւ արտասանած է դանոնք ընկերներու առջեւ, ինչպէս նաեւ ընտանեկան հասարակութներու մէջ: Զուր տեղը զինք կը դեմեղեն զանազան ասպարէզներու մէջ: Ենովք մէկ մտասեւեռում ունէր, — դերասանութիւնը:

**

Ենովք Շահէն ունէր շէնչոզ, քաղցր, ընկերական, շափազանց մաքուր բնաւորութիւն եւ նկարագիր: Այդ ազնիւ ու անուշ երիտասարդը, սակայն, թատրոնի թէ կեանքի մէջ, կ'ընդգոյշէր, կը դառնար ցասկոս՝ երբ տեսնէր անիրաւութիւն եւ դուրսէ մտածական կեանքի մէջ պատահած է, որ սա ու ան սաստէ, նոյնիսկ ապտակէ, իսկ կեանքի մէջ ալ պատահած է, որ զաւազանակիր դերասանը տփէ աս ու ան տղան, ստանալով «սոփածի» մակդիրը: Իր յախուռն ու անձնական նախաձեռնութեամբ կատարած դաւազանաշարժութիւնները պատճառ եղած էին, որ Հեռացուի կուսակցական շարքերէն, իրեն անկորդուած ու անզուսպ: Ենովք, հակառակ այդ իրողութեան, իր պաշտամունքէն մասնիկ մը պակեցուցած չէր հանդէպ Հ. Յ. Դաշնակցութեան եւ իր բարեկամութիւններէն կորեկի հատիկի մը չափ նըւաղեցուցած չէր հանդէպ զաշնակցականներուն: Ընդհակառակն, իր սիրած կուսակցութիւնը աւելի մեծցած էր իր աչքին: Իրապէս օրինակելի էր Ենովք Շահէն: Զէր կրնար շնչել առանց Դաշնակցութեան: Այսքանը կը բաւէ ցոյց տայու համար սրբութիւնը իր նկարագրին:

Ենովք Շահէն գրեթէ բարձրահասակ էր: Ունէր նկարչի նկարչական գլուխ մը, առատ, անկանոն մազերով, կանաչօրակ աչերով եւ ընդհանրապէս կը հագուէր թաւիչէ զգեստ մը, սրունքներուն անցուցած կիսամոյկեր:

**

Առաջին Աշխարհամարտէն ետք, զինագազարին, լոյս տեսնող Թէոգրիկի 1916-20ի «Ամէնուն տարեցոյց»ին մէջ՝ կը կարդանք Ենովք Շահէնի մասին հետեւեալ տողերը.

«Հարիւրաւոր մեր նահատակ մտաւորականներուն եւ ազգային գործիչներուն շարքին՝ բրձահայ քատրսնի աշխարհը կորուստ մը ունեցաւ անզոք, յանձին Ենովք Շահէնի, բնիկ պարտիզակցի, 26 տարու դերասան, որ իբր Դաշնակցական՝ Այաշ ախարուեցաւ անվերադարձ: Իր գլխաւոր դերերն էին «Դարբիններու գործազուլը», «Թրիպուլէ», «Եսակօ» եւ «Շալլուկ»:

**

Ենովք Շահէն հայ բեմին համար պիտանի ուժ մըն էր, մանաւանդ թատերական գործիչ մը, կեանքոտ, կենսուրախ, ինչպէս նաեւ անշահախնդիր, որ քաղց մահուան ճանապարհէն՝ մպիտըր դէմքին...

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՔԱՇԷԱՆ

Գրիգոր Անգուք

Ենովք Շահինը կենսագրած իր էջին մէջ, Նշան Պէշիկթաշիեան կը յիշէ, որ ան ունէր

«Արժէքաւոր եղբայր մը՝ Գրիգոր Անգուքը, որ հանրածանօք ուսուցիչ մըն էր ռուսոյ թեան. Պոլսոյ վարժարաններուն մէջ: Մերք հրապարակագիր ու միշտ շագագայիճնի»: Հին Դաշնակցական: Ինքն ալ տխուրած, քիչ մը անլի ուշ, եւ վերապրած հրաշքով: Դարձին գրեց երկու քատերախաղ, տարագիրներուն կեանքէն, որոնք բեմագրուեցան Ֆելիքեան քատերախաղներին կողմէ»:

Գրիգոր Անգուք, երբորք՝ Շահինին պէս ուշիմ, անհանգարտ, հանրային շահագրգռութիւններով լի անձ, տարագրութեան ճամբորդներուն կէս նահատակ, Պոլիս զանաչէ առաջ եղած է Ատանա, ու Ատանայէն առաջ՝ Հայկչ, ուր իր կենսագրութեան մէջ աւելցուցած է Ձօհրայի եւ Վարդգէսի նահատակութեան պարագաները երեսն հանող էջ մը, որ թէեւ ծանօթ է մեծ նահատակներուն կեանքին ժօռէն հետեւած մարդոց, բայց կ'արժէ կրկնել պատմութիւնը, կրկնելու համար նաեւ մեր երախտագիտութիւնը Գրիգոր Անգուքի փրկարար անգթութեան:

Խնդրոյ առարկայ զէպքին մանրամասնութիւնը մենք կարդացած ենք «Ազդակ»ի 21 Մարտ 1967 թիւին մէջ Գ. Ս. սկզբնաատուերով ստորագրուած դրութեան մը մէջ, ուր կ'ըսուի.

«Գրիգոր Անգուք, իր Հալէպ գրաւորած միջոցին 1919ին, երկար պրպրտումներէ ետք, կը յաջողի Ձօհրայը դէպի սպանդանոց փոխադրող կառապանը գտնել եւ, սպառնալիքի տակ՝ մանրա-

մասն տեղեկութիւններ ւտնել անկէ: Սոյն տեղեկութիւնները, հետագային, Արամ Անտոնեանի խմբագրութեամբ հրատարակուեցան «Ձօհրայի եւ Վարդգէսի սպանութեան պարագաները» խորագրիմ տակ:

Գ. Ս. քանի մը հատուածներու մէջ վերապատմելէ ետք Ձօհրայն ու Վարդգէսը նահատակած Ձերքէզ Ա՛մէաի եւ Ձերքէզ Խալիլի եղեռնագործութիւնը, կ'աւելցնէ.

«Ձօհրայի Ատառակութեան այս մանրամասն պատմութիւնը, որ մերկայացուցիմք, կը կարծենք, որ ամէմն միշտն է եւ բացառապէս կը պարտիմք յամբողջ հայուն, Պոլսոյ կեդրոնական վարժարանի մաթեմաթիքի ուսուցիչներէն Գրիգոր Անգուքի: Այս իրգախ հայր իր անհատական ձեռներէցութեամբ կարողացած է ուրժացի թուրք կառապանին վկայութեամբ գրի առնել եւ ամբողջ հայութեան սեփականութիւնը դարձնել Ձօհրայի կեանքին վերջիմ ժամերը, ողբերգութիւնը»:

Արամ Անտոնեանի խմբագրութեամբ լոյս տեսած Գրիգոր Անգուքի ձեռք ձղած այս տեղեկութիւնները, էթէ չենք սխալիք, նոյնութեամբ երեւցան 1919ին Պոլսոյ մէջ լոյս ընծայած Արշակ Այսոյանեանի «Անհետացող դէմքեր.— Գրիգոր Ձօհրայ» անուն աշխատութեան էջերուն:

Այս է Ձօհրայի եւ Վարդգէսի նահատակութեան պատմութիւնը եւ ստիկա, չժողանք, կը պարտինք տառապած ու արիասիրտ Գրիգոր Անգուքի հետադատութեան...

ՃԵՄԱՐԻՏՆԵՐԸ

ԵՒ ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՎԱՍՏԱՏՈՂ ՆՈՐ ԶԱՅՆԵՐ

Կուսակցական գործիչ, պետական երեսփոխան, իրաւաբան, ուսուցիչ, տնօրէն, Հրապարակագիր, յեղափոխական, ու ժողովուրդի մը առօրեային ու հոգեւոր կեանքին մէջ որոշիչ այլ դերեր կատարող ունէինք մեծանուն մտաւորականներ ներկայ դարու տառջին տասնամեակին, եկեղեցական թէ աշխարհիկ աստղակիներուն մէջ գործող հարիւրաւոր ղէմքեր, որոնք արեւստագէտներուն հետ ձեռքազուտեցան սեւ Ապրիլին առաջին գիշերը ու նահատակուեցան անպատաներու զօտիքին մէջ կամ զկախողաններու կատարին:

Տարբեր էին արզարեւ Ապրիլեան սերունդի մարդերը, նոյն անձին մէջ քանի մը կարողութիւններ կարկառած կարկառուն անձեր բոյո՛րն ալ. պետական ղէմքը կրնար բանաստեղծութիւն մը ըստ արժանւոյն վերլուծել, յեղափոխականը՝ հեռանկարներ ստեղծող ուսուցիչ ըլլալ, խմբագիրը՝ յեղափոխական բլիթի մը ղեկավար ղէմքը, փաստաբանը՝ ջաղաքական հարցերու անխալ տեսարան, տեսարանը՝ Փետայի, բայց ամէնքն ալ ղէջ աստղի տակ ծնած էին, — մեր սեւ աստղին պայծառութեան համար իրենց բովանդակ ժամանակը տրամադրած եւ ապա իրենց կեանքը զոհարեցած Ապրիլեան տառջին այդ մարտիրոսները:

Իր կանխամտածուած ոճիւրը արդարացնելու համար՝ մեր դարաւոր դուխը Մեծ Եղեռնի ողջ պատասխանատուութիւնը փորձեց բարդել մեր ուսերուն, ժողովուրդի դատին նուիրուած կուսակցութիւններուն, այդ ղեկավար ղէմքերուն ու անհատ մտաւորականներու ուսերուն: Նոյնը բրին թրջա-



Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ (1860-1915)

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ.— Դաժողակցական: Հրապարակագիր, բեմբասաց, հանրային գործիչ եւ փաստաբան: Ծնած է Շապին Գարահիսար ու իբրեւ փաստաբան վկայուած Սէն Փիլիբոսի Նաթալիսարանին: Գուլիս կը հաստատուի 1906էն հաջ, ուր լայն պայքար մը կը ծաւալէ պահպանողական արքին ղէմ: Աշխատակցած է «Ազատամարտին»: Իր հրատարակած գլխաւոր գործերն են՝ «Պետական Երթուղիներն ու Ինքնիշխանութիւնը», «Մեր հաւատամքը», «Բարեմարդումներու կարգը» եւ «Օսմանեան կայսրութեան անկման պատճառները»: Նահատակուեցաւ 55 տարեկանին:



Տ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ (1862-1915)

սէր պետութիւններէն ոմանք: Աստե մը, դժբախտարար, նոյնը կրկնեցին նա-
և մեր հայրենիքին մէջ, պատմարաններէն սկսեալ մինչև վիպատանները, ու
մինչև գերասանները, ճիշդ ոտտիին պէս նահատակ մտաւորականները նկա-
տելով՝

— «Մի ամբողջ սերունդ արեան այլիքների մէջ խեղդելու պատճառ ու
պատասխանատու»:

Համընդհանուր յարգանքի այս մթնոլորտին մէջ մենք չենք ուզեր
ծանրանալ այս կէտին վրայ ու վերջիչէլ հոս մարտիրոս մեծերուն յիշատա-
կը արքայզոծող անուր մեղադրանքները, յերիւրանքներն ու վարկարկկման
միակ նպատակով սեւագրուած անհեթեթութիւնները, բայց ի մխթարու-
թիւն բոլոր հայերուն՝ կ'արժէ անդրադառնալ այն ընդհանուր վերադիտու-
մին, բոս որում՝ վերջին տասնամեակին, ծայրագոյն պահպանողականնե-
րէն մինչև ծայրայեղ յեղափոխականները վերատեսութեան ենթարկեցին ի-
րենց իրանամեայ և հապէս հաշուենկատ տեսակէտները և թուրքին ստեղծած
մեր սեւ իրականութեան նայիլ առնուազն մաքուր ակնոցներով:

Տ. ՔԻԼԻՔԵԱՆ.— Անգամ Սահմանադիր-Ռամ-
կավար հռոտեցութեան: Խճողիք և հրատապա-
րակազիր: Մեծ է կեարիւ: Նախակրթութիւնը
Պոլոյ վարժարաններուն մէջ ստանալէ ետք, յա-
նախած է Մարտլլի առևարական զգրոցը և
Փարիզի գիտութեանց կանառը: Մանուշիտա-
ցած՝ անվերջն, Քրանսերէն և Քուրքերէն լեզու-
ներուն մէջ: Կրթարած է Քուրքերէն և հայա-
տառ Քուրքերէն թերթիք Պոլոյ մէջ: Երկար
տարիներ պարած է Երոպա և Եգիպտոս և աշ-
խատակցած Փրանսերէն և անվերջն թերթերու:
Սահմանադրութեան՝ Պոլո կը վերադառնայ ու
կը դառնայ «Սապան» օրաթերթին խմբագրապե-
տը: Նահատակուեցաւ 53 տարեկանին:



Տ. ՔԻԼԻՔԵԱՆ (1862-1915)



Է. ԽՈՎՀԱՆՆԻԱՆ (1865-1915)

Է. ԽՈՎՀԱՆՆԻԱՆ. — Դաշնակցական: Մէկը փրկարուած զինավար զէմքերէն: Գործակից՝ Քրիստափորի, Զուարեանի եւ Ռոստոմի: Հրատարակողքը, բեմքսաց եւ հանրային գործիչ: Բուն անունով Յաշատուր Մալումեան, հնած՝ Մեղրի: Բեղուն գործունէութիւն ունեցած է Քիֆլիսի, Սէն Փեթերպուրկի, ժընեւի, Պոլսոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ: Իր հայրենասիրական եւ յեղափոխական շունչով գրուած յատորոյն գրութիւնները ամփոփուած են Վրովկանեան վերքեր, Վիւպի երկիրք եւ ՎՄԵԾ իտալիստք անուն գրքերովներուն մէջ: Նահատակուեցաւ 50 տարեկանին:

Արդարեւ, ստալինեան երկարատեւ գիշերներէն ետք, որոնք գիշերային բաւական թանձր բաներ կուտակեցին մեր հայեացքերուն մէջ, հայրենի մտաւորականութեան ջախջախիչ տոկոսը սկսաւ թաւալած իրականութեանց նայիլ բաց աչքերով եւ զէպքերը գծահատել անխորդախ նժարներու մէջ:

Նահատակ մտաւորականներու գծապատկերներուն ու կենսագրական գիծերուն տարիներ, տարբեր զէմքերէ առնուած անաւասիկ շարք մը փաստեր՝ ի մասին վերսյիշեալ պարկէշտութեան:

«Այդ տեսակետը, — կ'ըսէ անոնցմէ մէկը, — որ այսօր անգամ պատմագրութեան մէջ պահպանում է իր ուժը, պնդում էր, որ հայ ժողովրդի պատմական ողբերգութիւնը արդիւմէ էր ազգային-նացիոնալիստական քաղաքականութեան, անտես էր առնում կամ գրեթէ երկրորդ պլան մղում արտաքին գործօնների նշանակութիւնը փոքր ժողովրդների ճակատագրի մէջ: Այսպէս պատկերացնել բանը, ամէն ինչ կապել բուն ժողովրդի ներքին մի շարք ուժերի, մինչեւ անգամ նացիոնալիստական պարտիաների գործունէութեան հետ, նշանակում է քննչօրէն շոյել եւ կամ օրժեկախօրէն արդարացեցնել թուրք բռնակալութեանը, որիմ գոհ էին գնում հայերը. յոյները, բուլղարները, նշանակում է պնդել, թէ հայերն իրենք են իրենց ծեծել կամ ձրան ֆիզիքապէս բնագիցել են ներքին թշնամական ուժերը: Հարց է ծագում, իսկ եթէ մեր իրականութեան մէջ չլինէին ազգային շարժումները, չգործէին նացիոնալիստական պարտիաները, կը փրկուէ՞ր արդեօք ժողովուրդը: Մի՞թէ նմանօրինակ մտածողութիւնը պարզապէս չի ենթադրում սարկական եպատակութիւն, ապաւինութիւն թուրքական բռնակալութեան «մեծահոգութեանը» եւ առասկան ցարիզմի «սնտահման հումանիզմին»: Այստեղից էլ բխում է մի շատ պարզ ու յստակ հարց, որի շուրջը չգիտես ինչու մոլոր կամ աւելի միշո մոլորեցնող պտոյտներ են անում նշանաւոր մարդիկ: Արդեօ՞ք ազգային շարժումները, մինչեւ անգամ նացիոնալիստական պարտիաների գործունէութիւնը հետեւանք Պիմ ժողովրդի պատմական-քաղաքական թշուառութեան, թէ՞ նրանք էին պատճառը այդ թշուառութեան: Արդեօ՞ք այդ պարտիաները երկնից իջան հայ իրականութիւն՝ բուն ժողովրդին թշուառութիւն բերելու, թէ նրանց ծնունդն էլ պայմանաւորուած էր մեր կեանքի պատմական պայմաններով:»

ՀԱՐՄԱՐՁՈՒՄ ՊՅԱՆՏԵԱՆ (ՄՈՒՐԱՏ).—
 Հնչակեան: Գործիչ: Մեծ է Հաճըն, 1867ին: Սուլթան Համիտ բռնակալութեան դէմ կազմակերպած է շարք մը ցոյցեր: Սասնոյ մէջ գործող նշանաւոր ղեկավարն էր: Օսմանեան սահմանադրութեան շրջանին կ'ընտրուի թուրք խորհրդարանին անդամ: Կախազան հանուեցաւ Կեսարոյ մէջ, 48 տարեկանին:



Մուրատ

Հ. ՊՅԱՆՏԵԱՆ (1867-1915)

Քննադատ մըն է վերի պարբերութեան հեղինակը: Պատմաբան մըն է վարի տողերը ստորագրողը:

«Ոչ քէ հայկական ազատագրական շարժումները կամ ազգային կուսակցութիւնները գործունէութիւնն առաջ քերեց քուրճական բռնութիւնները եւ հայաջինջ ծրագիրը, այլ ընդհակառակն, աւելի վաղ ժամանակ սուլթանական իշխանութեան մշակած հայաջինջ ծրագրերը եւ հայերի բնացնջման փառաբանութիւնն առաջ քերեցին իրաւագուրկ հայ ժողովրդի պաշարի նոր բռնկումներ եւ ազատագրական ճիգեր, ձեւաւորեցին հայկական ազգային կուսակցութիւններ»:

Աղբյւրին կուսակցութիւնները մեղադրողներուն դէմ ծառայող երրորդ մասնորական մը ճաշակեցելով առաջիններուն՝ պիտի գրէր:

«Իմ եւ Բաղդեանի տեսակետների տարբերութիւնը այդ հարցում այն է, որ քուրճի այդ նպատակը մա վերագրում է ման հայ ազգային»



Գ. ԽԱՄԱՏՅԱՆ (1867-1915)

Գ. ԽԱՄԱՏՅԱՆ.— Գանակցական: Ուսուցիչ, խմբագիր եւ հանրային գործիչ: Մեծ է Ալեքանանդրապոլ: Նրեք տարի յաճախած է Էջմիածնի Գեորգեան ճեմարանը եւ աւարտած է ժընեւի համալսարանի ընկերային պիտութեանց ճիւղը, 1893ին, Ասն մը իրրեւ խմբագիր պաշտօնավարած է Թիֆլիսի «Մշակ» թերթին մէջ: 1912ին, Պոլսոյ մէջ ստանձնած է Սամաթիոյ ազգային վարժարանին տնօրէնութիւնը: Աշխատակցած է կովկասեան թերթերուն եւ Պոլսոյ «Ազատամարտ»ին: Աւանձին հատրնեբով հրատարակած ուսումնասիրութիւններն են՝ «Հարկերը Տանկաստանում», «Հայրենիք եւ ազգային շարժումներ», «Հայկական շարժման պատճառները», «ԲՊՅ է դասակարգը», «Հին Արեւիքը», եւայլն: Նահատակուեցաւ 48 տարեկանին:

ՎԱՐՊԳԻՍ ՍԵՐԵՆԿԻՆԻԱՆ.— Գաղանկացական: Ուսուցիչ, յեղափոխական, գործիչ և պետական երեսփոխան: Բուն անունով Յովհաննէս Սէրենկիւնեան, ծնած է Կարին, 1871ին: 20 տարեկանին կ'անցնի Պոլիս և կը վարէ ուսուցիչի և տնօրէնի պաշտօններ: 1892ին կը մտնէ Գաղանկացութեան շարքերը: Պանք Օթոմանի գրաւումէն ետք, կ'անցնի Պուլհարիս, ահկէ ժրնեա և ապա Կովկաս: 1899ին գաղտնօրէն կ'անցնի Վան և 1908ին կը ձերբակալուի ու կը դատապարտուի մահուան: Ճորտնացիներուն մէջամտութեամբ մահովէնը կը փոխուի ցմահ բանտարկութեան: Սահմանադրութեան՝ ազատ կ'արձակուի և իր ծննդավայրէն երեսփոխան ընտրուելով՝ կը հաստատուի Պոլիս: 1915ին Զօհրապէ հետ կը ձերբակալուի և կը նահատակուի 44 տարեկանին:



Վ. ՍԵՐԵՆԿԻՆԻԱՆ (1871-1915)

ներին, որ ես ծխտում եմ, որովհետև եք է հայութիւնը բնաջնջելը լինէր հայ ազգայինների «նպատակը», ապա նրանք ազգայնական չէին կոչուի, այլ՝ քուրճական:

«Միւս կողմից՝ բնութեան մէջ չկայ եւ չի կարող լինել մի ազգայնական կուսակցութիւն, որ իր առաջ դնի սեփական ժողովրդին բնաջնջելու անհեթեթ նպատակը: Սա պատուրտ է. բայց, չգիտես ինչո՞ւ, դուք հուսատում էք այդ հնարքին»:

Քննադատին, պատմաբանին ու մտաւորականին ձայնակցող ահաւատիկ և դրացիտի մը խօսքը.

«... Հայ ազգային տգրտագրական շարժումները ոչ քէ ինչ-որ կուսակցութիւնների հրահրածն են, այլ՝ ժողովրդի ազատաստինչ ոգու արտայայտութիւնը: Արեան մէջ խեղդուած ոչ մի ազատագրական շարժում գեո իրաւունք չի տալիս խօսելու ժողովրդի ազատաստինչ ոգու դէմ, առանկ եւս՝ այդ ոգին ինչ-որ կուսակցութիւնների վերագրելու եւ ապա վարկաբնկելու այն, ինչ եղել է հերոսական, լուսաւոր, ինչ յարգանքի գգացում է ծնել ժողովրդի մէջ իր իսկ նկատմամբ ու ասիպել է ուրիշներին նայնպէս յարգալից խօսել հայ ժողովրդի մասին»:

Ստորեւ արտադրուած հինգերորդ հաստատումը կը պատկանի, տա՛նք այս անգամ անունը, «Հայաստանի գիտութեան ակադեմիայի արեւելագիտութեան բաժնի Թուրքիայի պատմութեան և էգոնոմիայի բաժանմունքի վարիչ պրոֆեսոր» Երուսնդ Սարգսեանին.

«Մենք հետագոտել ենք օսմանեան կտավարութեան վարած քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում 19րդ դարի երկրորդ կէտին և 20րդ դարի առաջին տասնամեակում և յանգել այն եզրակացութեան, որ օսմանեան կտավարութեան ազրարային քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում, ինչպէս նաեւ քաղաքական ու տնտեսական ճնշման բոլոր ճեւերի կիրառումը հայերի վերաբերեալ, ունեցել են մի հիմնական նպատակ՝ Հայաստանը մաքրել հայերից: Յատկապէս նշում ենք, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19րդ դարի երկրորդ կէտին և 20րդ դարի առաջին տասնամեակում ոչ քէ հայերի ազգային կուսակցութիւնների և



Ա. ԱՅՄԵԱՆ (1871-1915)

Ա. ԱՅՄԵԱՆ.— Գաղարկական: Հրատարակողը, բնագրային և հանրային գործիչ, Մնած է Պոլիս: Էջմիածնի Գլխավոր ճեմարանի վկայական է ստացել, կրկին Պոլիս կը վերադառնայ եւ Պանդ Օթոմանի դրամումէն յետոյ կ'անցնի Տիֆլիսէ: անկէ՝ ժընեւ, ուր աստեւ մը կը վարէ Վերջնական խմբագրութիւնը: Ապա կ'անցնի Ամերիկա, իրեն ղեկավարութիւնը: 1907ին կոմիտէ կը վերադառնայ, յետոյ՝ Վան, գործիչի հանգամանքով: Սահմանադրութենէն տարի մը անց կը հաստատուի Պոլիս: Պետական երեսփոխան կ'ընտրուի Վանէն: Սահմանադրութեան շրջանին կը դառնայ Պոլսոյ Վարչապետը: ամէնէն անկէ՛ք վերնադասը անհատական կ'ընդունէ: Նահատակուեցաւ 44 տարեկանին:

մեծ տէրութիւններէ գործունէութեան հետեւանք էր. այլ կերպ ասած՝ ոչ — սից հրահրուող պայքար, այլ օսմանեան բռնապետական քաղաքականութեան այրագին էր: Արեւմտահայերի սուլթանական փետրայական բռնապետական կարգերի դէմ մղած ազգային-ազատագրական պայքարը պէտք է դիտել որպէս արդարացի եւ առաջդիմական պայքար եւ պէտք է հակադրուել այն տեսակէտին, ըստ որի այդ շարժումը արկածային դրամական, շրջան բերուած արհեստական շարժում էր, որն իբր Արեւմտեան Հայաստանում նպաստուար հող չունենալով, պատհաս դարձաւ հայերի գամբուսային ջարդերի: Այդ տեսակէտի կողմնակիցները, կամայ թէ ակամայ, արդարացում են թուրք ջարդարներին եւ ժխտում արեւմտահայերի ազգային ազատագրական պայքարի կապը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան զարգացման հետ:

«Վանի ինքնապաշտպանութիւնը» անուն ծաւալուն աշխատութեան հեղինակը, Օննիկ Մխիթարեան, օրը օրին զրի անուած նոթերու հիմամբ՝ մանրամասնօրէն նկարագրած է նաեւ ինքնապաշտպանութեան նախնական իրադարձութիւնները, արիւնոտ դէպքերէ հետեւ մնալու մեր դեկալարութեան յամար ջանքերը, թուրքերուն հետեւողական թրջութիւնը եւ այդ երկու կեցուածքներուն միջեւ վասպուրական աշխարհի երիտասարդութեան պարզած հոգեմիտակը:

Անգէն գինուորացութեան կառավարական կոչիւրէն վերադառնալու ու դժգոհ՝ Վրաստանի եւ Արամի «պահպանողական» քաղաքականութենէն, երիտասարդութիւնը կը մերժէ իրեն նկատման առաջարկները եւ կ'առաջարկէ վերահաս մահը գիմարուել տղամարդկային արժանապատուութեամբ, զին ի ձեռին:

Ըստ պատմադրին, զեկալարութենէն բացատրութիւններ ուղղու մը ասք՝ նոյն այդ երիտասարդութեան պահանջով կը դուրսբերուի սեղմ ժողով մը, Այգեւստանի «Աշխատանք» թերթի խմբագրատան մէջ: Արամ լուռ կը մնայ ամբողջ ժողովին ընթացքին: Իշխան զգուշաւորութեամբ քանի մը թե-

լազրանքներ միայն կ'ընէ, իսկ Վռամեան կը յայտնէ թիչ անդին սրտաղբըւած քաղաքական իր հաւատամքը:

Վռամեանի հաւատամքը, ուր արեւու լոյսին պէս պարզ կ'երեւի հայ ժողովուրդի ալիքուսի նաւը վարող մարդոց խոհականութիւնը, լրջութիւնը, դէպքերը նախատեսելու եւ վերահաս ազէտէն նուազագոյն կորուստով դուրս դալու առաքելական կորովը: Վռամեանի այս ճա՛ռը...

ՎՌԱՄԵԱՆԻ ՃԱՌԸ

Դուք կը խօսիք կառավարութեան դաւադրութեան մասին: Այո՛, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ Այգեաստանէն քաղաք տանող ճամբուն վրայ:

Գիտեմ, որ օր մըն ալ չի պիտի վերադառնամ ես ձեր քով:

Գիտեմ, որ քաղաքը պաշարուած է արդէն եւ օր մը թընդանօթներով հիմնայատակ պիտի քանդեն այս գեղեցիկ շէնքը, ուր հաւաքուած էք դուք ժողովի եւ պիտի կոտորեն ձեզ:

Գիտեմ, որ այն 500 ամալիաները, զորս մենք խոստացեր ենք տալ առաջին առթիւ՝ դէպի անստոյգ ապագայ մը, թերեւս դէպի մահը կ'առաջնորդենք, բայց... Մենք չի պիտի սկսինք, մենք չի պիտի տանք ազդանշանը, որովհետեւ մենք ապստամբներ չենք եւ ապստամբութիւն մը ինքնին բաւական է՝ ամբողջ հայկական բարձրաւանդակը հսկայական գերեզմանոցի մը վերածելու:

Եւ վերջապէս, մենք համոզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր վիշումներուն եւ խաղաղասիրական ձրգտումներուն, օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն:

Այդ օրերը մօտեցած են... Բայց մեր ամբողջ նպատակն է թիչ զոհերով ապստիլ այս վիթխարի հարուածէն:

Թո՛ղ Վռամեան մը չըլլայ, թո՛ղ Իշխան մը սպաննուի, թո՛ղ 500 ամալիաներ անստոյգ կամ անխուսափելի մահուան ենթարկուին, թո՛ղ ամբողջ գաւառ մը նոյնիսկ հուրի եւ սուրի տակ ոչնչանայ... Բայց թո՛ղ փրկուի մածամասնութիւնը, թող կարենայ ճողոպրիլ հայրութիւնը իբրեւ ազգային հաւաքակալութիւն...

Միայն վերջին րոպէին, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ եւ թշնամիին սուրը կ'երկարի ամբողջ հայ ազգի պարանոցին առհասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք եւս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան պէնքին եւ պաշպանէք ինքզինքնիդ եւ ձեր ազգութիւնը:

1915 Ապրիլ 2

ՎՌԱՄԵԱՆ

ՀՐԱՋ ԹԻՐԵԱՔԵԱՆ



Մեր յեղափոխութեան ստեղծած սըխ-րալի տիպարներէն մէկը, որմէ գրաւոր ժառանգութիւն մը չենք յիշեր, ճակատամարտ մը շահած խումբի մը զլուխը գլուխը մեծապայծառ դէմքի մը ցոլքը չտարածեց պատմութեան էջերուն, բայց եղաւ մէկը անոնցմէ, որոնց իւրաքանչիւրին անձէն ճառագայթեց բացառիկ սերունդի մը աստուածաբեալ ստորոգելիները:

1871ին Տրապիզոնի մէջ ծնած եւ ինիսունական թուականներու կիսուն Ֆըրանսայի Նանսիի համալսարանին մէջ գիւղատնտեսութիւն կ'ուսանէր Թիրեաքեան, երբ մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը եւ, կուսակցական կեանքի իր առաջին տարին հապիւ բոլորած՝ մաս կազմեց Պանք Օթոմանը գրաւող բաջերու սխրագործութեան: Միջազգային դիւանագիտութեան ծանօթ մեքենայութիւններով երբ Մեծ Մարդասպանը վերստացաւ զըրաւեալ գրամատունը, յեղափոխական իր ընկերներուն հետ Թիրեաքեան ինք եւս կը տարուի Մարսէյլ, ուրկէ զաղտնօրէն կ'անցնի Իզմիր եւ, ատեն մը ետք, իբրեւ յեղափոխական կը ձերբակալուի ու կը դատապարտուի ցմահ բանտարկելութեան: Սահմանադրութեան՝ ազատ կ'արձակուի ու աշխատանքի կը մտնէ Պոլսոյ «Ազատամարտ» թերթի վարչութեան մէջ՝ մինչեւ հայ մտաւորականներուն ու գործի-

ներուն ձերբակալութիւնը, 1915 Ապրիլին:

Հրաջ Թիրեաքեան ինք եւս ձերբակալուեցաւ, տարագրուեցաւ դէպի անյայտ հեռուները ու նահատակուեցաւ անյայտ Գողգոթայի մը վրայ:

Բայց Թիրեաքեան մէկն էր, որ կըրնար ճողգոթիլ ոստիկանութեան հետապնդումներէն ու փրկել ինքզինք, բայց չդիմեց այդ միջոցին, ըրաւ ճիշդ հակառակը, ընտրեց այն՝ որ իմացեալ մահ կը կոչուի:

Իր կենսագրութիւնը ամփոփած մըտաւորականներէն մէկը կը գրէ.

«Թաքստոցի մէջ էր, երբ իմացաւ, որ անուն-մականունի եւ բնակած թաղի նըմանութեամբ, իր տեղը ձերբակալուած էր բերացի նպարավաճառ մը: Ամենայն վեհանձնութեամբ ներկայացաւ ոստիկանութեան եւ պարզեց սխալմունքը, յայտնեյով, որ ինքն է փնտռուողը եւ ոչ թէ հայ նպարավաճառը: Ու այսպէս, ճամբայ հանուեցաւ սպաննուելու համար»:

Մարդը իր կեանքէն վեր, ինքն իրմէ վեր, վերնայիններուն հաւասարեցնող մթնոլորտ մը ստեղծուած էր այն օրերուն, այլոց համար փոխաբերուելու շռայլ կամեցողութիւն մը, որուն վկաններէն մէկը եղաւ գաղափարական այս մարտիրոսը, Հրաջ Թիրեաքեան:

ԽՈՂՔԱՐԱՅԻՆՆԵՐԻ Լայնույթ

Մեծ Եղեռնի գոհերուն յիշատակին նուիրած այս թիւին իրենց մասնակցութիւնը բերելու համար՝ խմբագրութիւնս դիմեց նաեւ արար գրողներուն, մտաւորականներուն ու արուեստագէտներուն, որոնք յանձնեցին մեզի «Բազին»-ի համար պատրաստուած հետագայ էջերը, ուր կայ ձայնը մարդկային խղմտանքին, ու վկայութիւնը՝ արուեստագէտ հոգիներու արգարայնչիւր կորովին:

Մենք կը նախգգայինք անոնց մասնակցութեան այս բուխ վերաբերումը, ու ատիկա՝ ո՛չ միայն օսմանեան բունակալ լուծին տակ դարերով ննչուած մեզի բախտակից ժողովուրդի մը գաւակները եղած ըլլալու անոնց հանգամանքներուն պատճառով, այլեւ վստահած գեղային խառնուածքի իրենց մարդկայնական բնոյթին, ու ապա ինձ՝ մարդ էակին իրաւունքներուն ու լիիրաւ ազատութեան ի խնդիր մտքի ու հոգիի ոլորտներուն մէջ անոնց կատարած բեւարարումներուն:

Հոս ստորագրութիւն ունեցող գրողները ազգութեամբ արար են, - լիբանանցի, սուրիացի, պաղեստինցի, կրօնքով՝ քրիստոնեայ ու մահմետական, գաղափարական աշխարհահայեացքով՝ տարբեր նակատներու վրայ, այսուհանդերձ, անհատական փորձառութեամբ թէ պատմական ծանօթութիւններու կուտակած ոգեկանութեամբ՝ բունագրաւումներու, բոնութիւններու եւ արիւնահեղութիւններու դիմաց նո՛յն կշռոյթով կարկաչող արիւն մը կը կրեն իոնեց երակներուն, եւ իրենց խօսքերուն մէջ անհաշուենկատ են ու արի:

Այս էջերուն մէկտեղուած արար մեր հիւրերը հաւասար չափով մը չեն նանչնար մեր պատմութիւնը, բայց ամէնքն ալ ծանօթ են թուրք պետութեան կողմէ գործադրուած հայասպանութեան փաստին, որուն պատճառներուն ու հետեւանքներուն ամբողջութիւնը կշռող իրենց արտայայտութիւնները էա՛պէս կը կրեն ապրումին դրոշմը եւ համոզումին խոհական լրջութիւնը:

٢٤ نيسان
يعوض عنه او لا يبقى شرف !

24 ԱՊՐԻԼ

ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԲԱՏՈՒԹՅՈՒՄԸ
ԿԱՄ՝ ՊԱՏԻԻԸ ԿԸ ԶՔԱՆԱՅ

Այդ օր կատարուած բռնութիւններն ու անոց պատճառած տառապանքները գրեթէ կը ջնջեն մարդկութեան իրագործած բոլոր փառքերը:

Ոչ թէ հրոսախումբեր կամ առանձին անհատներ, այլ պետութիւն մը կ'որոշէ բնաջնջել ժողովուրդ մը: Ու կը սկսի գործադրել այնպիսի ծրագիր մը, որուն համար միայն կարծես ըստեղծուած ըլլար «պժոխային» անականը: Կ'որոշեն կատարել բացումը ցեղապանութեան՝ մէկ անգամէն բնաջնջելով հայ մըտաւորական խաւը, – բանաստեղծներ, գիտնականներ, լրագրողներ, արձանագործներ, պատմաբաններ, կղերականներ: Ըստ այդ յանցագործ պետութեան հայեցողութեան, դիւրին գործ մը կը թուէր բնաջնջել հայ ազգի բոլոր գաւակները, առանց որ բարձրանայ ռեւոլյուցիոնար ծրագրի մը ձայնը, որովհետեւ ստեղծագործողներուն ձայնն է միայն, որ կը լսուի բարձրաձայն եւ որ սարսափազդու է:

Եւ կրկնուեցան ջարդերը, մինչեւ որ սպանուածներուն թիւը բարձրացաւ մէկուկէս միլիոնի: Թիւ մը, որուն նմանը չէ արձանագրուած ջարդերու պատմութեան մէջ, որ բարբարոսութեան ալ պատկանի անիկա:

Երեւակայել, որ այդ մէկուկէս միլիոն նահատակներուն մէջ կը գտնուէին 300 հազար զինուորներ, զինուորագրուած թըրքական բանակին մէջ: Ի՞նչ... երեւակայել, որ պետութեան մը բանակին մէջ գոյութիւն ունենայ 300 հազար զինուոր իրրեւ քանակ եւ յիշեալ պետութեան մտքին մէջ յաճախէ դաւաճանել այն ազգին, որուն գաւակներն են այդ զինուորները:

Յիրաւի խիղճը չորցաւ Թուրքիոյ մէջ այն օրը, երբ իթթիհատական Թուրքիան որոշեց բնաջնջել հայերը: Եւ քիչ կը մընայ, որ յայտարարեմ, թէ այսօր եւս գրեթէ չորցած է մարդկութեան խիղճը, որովհետեւ մարդկութիւնը, այսինքն՝ միջազգային հանրային կարծիքը ցարդ չդատապարտեց ջարդարարը, եւ ջարդարարներու պետութեան ժառանգորդներուն չպարտադրեց:

ՍԱՆՑ ԱՔԼ.— Բանաստեղծ, սրձակագիր, խմբագիր, մտաւորական և հրատարակագիր: Ծընած է 1912ին, Ջուզէ, ռուսեր ստացած է ծննդավայրին մէջ: Աշխատակցած է լիտուանեան մամուլին, և Վերջին շրջանին՝ «Այ-Սայխառ» շաբաթաթերթին և «Լիսան Էլ-Հալ» օրաթերթին, ուր ունի իր ամէնօրեայ սիւնակը: Ներկայիս կը գրագիր բանաստեղծութեամբ և միամտանակ կը գտտիօտէ վրոնսնեան պետական Համալսարանին գրականութեան բաժանմունքին մէջ: Գրականորէն է նաեւ վրոնսնեան պետական Համալսարանի գեղարուեստից բաժանմունքին և էջու աը Լէթրի մէջ:

Սախ Ազլ հրատարակած է բանաստեղծական բազմաթիւ հատորներ, որոնց կարեւորագոյնները կը հիտուուն «Ջանուուայ», «Մագքաղենացին», «Գառմաւ», «Վարդամատեան», «Լիբանանը եթէ իստի», «Բաժակ գինին համար», «Քեզմէ աւելի գեղեցիկ՝ ո՛չ», «Եարա», «Յասմիկին զանգակները», «Քեքթուածներ իր տնորակեան», և այլն:

Քարգծածուած է բազմաթիւ լեզուներու, ինչպէս՝ ֆրանսերէնի, սպաներէնի, անգլերէնի, իտալերէնի, հայերէնի, և այլն:



րեց հատուցում կատարել, ըսել կ'ուզեմ՝ բարոյական հատուցում:

Եւ Ապրիլ 24ի ջարդէն ետք, հայ մտաւորականներու հաւաքական սպանդէն յետոյ, որուն յաջորդեցին զանգուածային միւս ջարդերը, տրամաբանական պիտի բլլար սպասել, որ անդամալուծութեան դատապարտուէին հայ ժողովուրդի գոյատեւման բոլոր կարողութիւնները:

Այո՛, ասիկա պատահեցաւ բոլոր ջարդուածներուն՝ բացի հայերէն:

Մեռան, կրնանք ըսել՝ մեռան բոլորը: Եւ ահաասիկ, անոնք մեռած չեն:

Լիբանանէն, անմահ ժողովուրդի այս հայրենիքէն թող փառաբանուի բարձրաձայն փառքը Հայաստանին, փառքը այն ժողովուրդի հայրենիքին, որ մեռնիլ չի գիտեր...:

58) 2011 թ. 11



ԵՐԿԵՂ



ՄԻԿՈՅԻ

ԱՐԴՆԻՔԻՆԸ



Մենք, իբրևանահայերուն հետ կը միանանք հայրենիքի ճակատագրին շուրջ, այս տառապալի Վաթուկամեակի յիշատակին գծով կը գտնենք մենք մեզ մէկ սիրտ իրենց հետ: Անոնց վրայ գործադրուած պուլտմները եղաւ վերջինը Համաշխարհային Առաջին պատերազմի ընթացքին: Զոպումներ, որոնց հազուադէպ է, որ ժողովուրդ մը ենթարկուած ըլլայ պատմութեան մէջ, ու ատիկա պարզապէս անոր համար, որ ինք կտրիճ ըստեղծագործող մըն է, սահմանուած ժարձակելու երկրամասի մը վրայ, որուն նուաճման համար կը պայքարին իր դրացիներուն ազատութիւնները եւ կրօնական ու աշխարհիկ քմահաճոյքները:

Եւ ի՞նչ ըսել այս ժողովուրդին, որուն պատկերներուն մէկ հատուածը սիրայօժար ու բաց սրտով ընդունուեցաւ մեր մէջ, եւ մենք փոխադարձաբար լայնորէն օգտուեցանք իրենցմէ: Տարբեր մարզերու մէջ կատարած գործունէութեամբ անոնք որքա՞ն հարստացուցին մեր կեանքը, կերտեցին, կառուցեցին, ստեղծագործեցին եւ մեր Լիբանանը որդեգրեցին իբրեւ երկրորդ հայրենիք եւ Լիբանանի պատկերով երազեցին իրենց մայր հայրենիքը. որուն վերադառնալու համար նը պայքարին:

Վերադա՛րձ:
 Այո՛:

Չկայ աղէտ մը անկի սաստիկ, քան արմատախլութեան, օտարութեան եւ կարօտախտի դժբախտութիւնը: Մենք Լիբանանի մէջ ականատես ենք հայերու ապրած այս աղէտին սաստկութեան նմանող այլ աղէտի մը, որուն ենթակայ է պաղեստինցի ժողովուրդը՝ մեր մէջ եւ մեր շուրջը: Եւ ինչպէս Պողեստինը կը պահանջենք պաղեստինցիներուն համար, այնպէս ալ Հայաստանը կը պահանջենք հայերուն համար:

Եւ ասոր մէջ է երկրի եւ երկրների արդարութիւնը:

Եւ երկրի եւ երկրների արդարութենէն հնարատր չէ խոյս տալ, եթէ նոյնիսկ ուշանայ այդ արդարութիւնը:

Եւ եթէ այս խօսքը ծանօթ է ի յառաջագունէ, այսուհանդերձ, անհրաժեշտ է կրկնումը, որպէսզի մեր մէջ վերածնի յոյսը, հաստքը եւ զոհաբերութիւնը:

Եւ առանց յոյսին, հաւատքին ու զոհաբերութեան, արդարութիւնը, նոյնիսկ երկրների արդարութիւնը, կը մնայ չմարմնատրուող բառ մը:




ԵՈՒՍԷՅ ԷԼ-ԱՅԼ

Բանաստեղծ, իմբրպիւր, հրատարակչի եւ թուղթատիր: Ծնած է 1917ին, Քրիփտի: Նախնական կրթութիւնը ստացած է Ծննդավայր քաղաքին մէջ, ապա՝ սուրբտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի դրականութեան եւ փիլիսոփայութեան ճիւղը:

1952ին կը փոխադրուի Նիւ Եորք, ուր մինչև 1955 կը ստանձնէ «Ալ-Նուսր» օրաթերթի խմբագրատնօթիւնը, ժամանակակից պուշտոնավարելով ՄԱԿէն ներս, իբրեւ մշակութային լեզուագրող:

1957ին, Եւսէֆ էլ-Յալ կը հրատարակէ արարական աշխարհին մէջ զուտ բանաստեղծական առաջին հանգէտը՝ «Շը'ըթ», որուն շուրջ կը հաստատին լիբանանցի եւ արաբ յառաջագուն երկատարողները: Հանգէտին կողքին, էլ-Յալ կը ստեղծէ նոյնանուն մասննաշար մը, որ կը հրատարակէ բանաստեղծական հատորներ:

Եւսէֆ էլ-Յալ հրատարակած է բանաստեղծական շորս հատորներ՝ «Ազատութիւնք», «Թափօր հորիք», «Էնթովիա», «Բերբաւածնը Լառասուն տարեկանին»:

Թարգմանուած է անգլերէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի, հայերէնի եւ այլ լեզուներու:



Մեզի ծանօթ ու բարեկամ արար ժառուցող-հանձնարող մէջ Մուսա Բրենս այն քիչերէն մէկն է, թերեւս միակը, որ Հայկական ցեղասպանութիւնը, իր բառով՝ «հայասպանութիւնը» կը նահանայ իր բոլոր կողմերով ու մարմանանութեան մէջ: Կը նահանայ Հայաստանն ու Հայասպանութեան ենթակայ ժողովուրդը, Քուրքն ու Հայը, իրենց պատմութեամբ, կազմութեամբ, հոգեբանութեամբ ու աշխարհայեացքներով, և ժառուցողական լայն պաշարով մը քննութեան կ'ենթարկէ անոնց փոխյարտերութիւնները, 15րդ դարէն մինչև 1915 թուականը, մինչև 15 թուականի ոգին շարունակող զեմալական խճաղթութիւնները:

«Ես ոչ հայ եմ եւ ոչ այլ հայերուն փաստաբանը, կ'ըսէ տեղ մը Մուսա Բրենս եւ որիչ տեղ մը կը բացատրէ իր նպատակը»:

«Տեղապաշտութիւնը իր բոլոր տարրերակներով, մանաւորաբար հայասպանութիւնը ուսումնասիրելով, մեր նպատակն է կատարել պարտականութիւն մը եւ մեր ուժերուն ու միջոցներուն ներս յափով ստտարել ճշմարտութեան վերահաստատումին, քրտան այլ անհուճայ թախտակաբազմազգեցումներուն»:

Այս յայտարարութիւնը անուան է Հայասպանութեան նախնայ իր ընդարձակ ուսումնասիրութեան յառաջադրանքն, որ 1980ին լոյս տեսաւ ասանմէն Հատորով մը՝ «Անպատիժ ցեղասպանութիւն մը՝ հայասպանութիւնը» խորագրին տակ: Տեղբան Ռուկունի արին Հայերէնի վերածննդ Փրանսերէնով գրուած այս գործը, որ նախ երեւցաւ «Ազգակից» նոյն ասորուան յաջորդական թիւերուն մէջ և այսպէս լոյս տեսաւ Հատորով, որ երկուսից ընդգրկելու իր լայնքով, խորքին էութեամբ եւ տրամաբանութեամբ հիշատակուած էր կիսմիջից եւ գիտութեամբ: Թուրքիան մարմանուցաւ խաւարին մէջ, որ նոյնքան մութ էր, որքան մալը, զոր ի՞նչ բերած էր:

ՄՈՒՍԱ ԲՐԵՆՍ

Մանուկ եւ տգիտութեամբ հիշատակուած էր կիսմիջից եւ գիտութեամբ: Թուրքիան մարմանուցաւ խաւարին մէջ, որ նոյնքան մութ էր, որքան մալը, զոր ի՞նչ բերած էր:

Քիչը պաշտարանի նահանգներու մթերքով, իր կիրարկած արտաբանութեան ուսուցանութեան մը եւ յանուն արդարութեան վերահաստատման բարձրացուցած ազգակցներով՝ հիտորիստով ու երախտագիտութեամբ լեցուց Հայ մարդուն սիրտը:

Եզնունի Հաթունամեակին առիթով, շնորհից իմրաչորութիւնը ժամագրութիւն մը ինչորեք Մուսա Բրենսին, նոյն Հարցին մասին իրեն Հետ ունենալու համար նոր գրոյց մը, որ տեղի ունեցաւ իր գրասենեակին մէջ, Տ. Ռուկունիի հարցազրուումով:

Այդ գրոյցին Հեա՝ ընթերցողին կը ներկայացրենք նաեւ կորովի այս ժառուցողութիւնն աշխատութիւններուն շարքը պատկերացնող տախտակին լուսանկարչական պատճէկը, որ ասանմէն տեղ մը կը գրուէ Հայասպանութեան նախնայ լուսանկարչական պատճէկը:

Un génocide impuni



L'Arménocide

INTRODUCTION

NOUVELLE FRANCE

Donz le cadre des éditions contre l'Arménocide



տեսակցութիւնը **ՄՈՒՍԱ ԲՐԵՆՍԻ ՀԵՏ**

Մարդը, որ նստած է դիմացս, իր նախասիրած նիւթը ինքնայատուկ պերճախօսութեամբ մը զարգացնելու համար, պէտք չունի նախապատրաստութեան:

Հայկու ռեզուորուած, «Հին ծանօթութեան» մը նպաստով, արտակարգ արագութեամբ մը, իր նիւթին մէջն է արդէն: Ու ան, իր նիւթը, որուն համար գիշերներ լուսցուցած է, հասցանութիւնն է, անպատիժ մնացած ցեղասպանութիւնը ժողովուրդի մը, որուն հանդէպ զործուած ահաւոր ոճիրը չէր կրնար անտարբեր թողուլ մարդկայինը ազնւատեմ այս լիբանանցիին՝ Մուսա Բրենսի մէջ:

Սկսելու համար.
— Մեքր, չէ՞ք կարծեր, որ հալանակ բազմապիսի դժուարութիւններու, հայութեան հանդէպ ձեր վառ հետաքրքրութիւնը կրնայ զարմանք պատճառել շատերու:

— Կը նախազգայի, անսխալ գիտէի, թէ այդ պիտի ըլլար առաջին հարցումը: Անմիջապէս ըսեմ, որ հակառակ կարգ մը արարածանութիւններու, հայկական ծաղում չունիմ: Գոնէ այդպէս կը կարծեմ յետ պրպտումներու, զորս կատարած եմ՝ կազմելու համար մեր ընտանեկան ծառը: Որպէսզի յստակ ըլլայ, ըսեմ, թէ ծնած եմ 1925ին, Համա: Կը պատկանիմ թուրքի կոմս, Փրոֆանսի մարքիզ եւ Թրիփոլի իշխան Րէմոն տը Սէն-ժիլի սերունդին: Հայկական արիւն կա՞յ երակներու մէջ. կրնայ ըլլալ: Բայց պատճառը այդ չէ ու ս'չ ոք իրաւունք ունի վարժանալու, եթէ ըսեմ, թէ ցեղասպանութեան, առաւել եւս հայաս-

պանութեան դէմ պայքարը մէջս կերբ դարձած է իրբեւ. մարդկային էակի, որ այդ ոճիրին մէջ կը տեսնէ ճակատագրական հարուած մը տրուած համայն մարդկութեան, մարդկային տեսակին:

— Հայաստանութիւնը (Armenocide) — ու եթէ չեմ սխալիր՝ արտայայտութիւնը ձերն է — ինչպէ՞ս յայտնուցաւ ձեզի, ինչպէ՞ս սկսաւ:

— Անշուշտ հայ ժողովուրդը անծանօթ չէր ինձի: Ապարէզիս ու մ'անուանող հետաքրքրութիւններու բերումով, բազմաթիւ հայ բարեկամներ ունէի: Որոշ չափով ծանօթ էի պատահածներուն: Հստակ էի, երբեմն կարգացած: Բայց այդ բոլորը մտքիս մէջ կերպարանաւորուեցան, ծրարի դարձան, երբ 1967ին, Մեծ Եղեռնի յիշատեակէն երկու տարի ետք, հրաւիրուեցայ մասնակցելու Ռճրային Կանխարգելումի Միջազգային Երկրորդ Համապումարին, որ կայացաւ Փարիզի մէջ: Համազումարին թեման ցեղասպանութիւնն էր: Հրեաները, որոնք, Վեցօրեայ Պատերազմէն անմիջապէս ետք, ծրարութեամբ աշխատանքի լծուած էին՝ առաւելագոյն չափով օգտագործելու համար ամէնուրեք ծառայող իւրաքանչիւր պատը շարժումը, այդ հաւաքոյթը եւս ատիթ կը նկատէին քարոզութեան: Հոն էին ոճրային հարցերու մեծագոյն մտահոգէտները, մեծամասնութեամբ հրեայ: Ես, իբրեւ լիբանանցի, պիտի մասնակցէի այս համազումարին, որ բեմ պիտի ծառայէր քաղաքական նպատակներու: Այն ատեն էր, որ յղացայ միտք մը. փոխանակ քաշուելու եւ ստով իսկ հանոյք պատճառելու հրեաներուն, որո-

չեցի մնալ ու խօսիլ քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան մասին, ան՛ր, որ կը ներկայացնէ բոլոր յատկանիշները իսկական ցեղասպանութեան: Այսինքն խօսեցայ Հայկական ցեղասպանութեան մասին:

Ելոյթս զգայացունց տալաւ որութիւն գործեց եւ դիմաւորուեցաւ խառն զգացումներով:

— Ըսել կ'ուզեմ որոշ դժգոհութիւններ պատճառեցիք:

— Անշուշտ: Գաղմակերպիչները զո՛ւ չէին: Մանաւանդ Հրեայ ոճրաբանները: Ձէ՞ որ Համալուծմարը սարքուած էր միայն Հրեական ցեղասպանութեան մասին խօսելու Համար: Ինչպէ՞ս լիբանանացի մը, մանաւանդ այդ օրերուն, կը Համարձակէր քսաներորդ դարու առաջին եւ միակ ցեղասպանութեան Հանդամանքը խլել Հրեայ ժողովուրդին դէմ նացի Գերմանիոյ կազմակերպած Հաւաքական սպանդէն:

— Ի հարկէ ունեցաք Եսեւ շնորհաւորողներ:

— Ունեցայ: Ոմանք Հրապարակային կերպով շնորհաւորեցին, ուրիշներ, Հըրեաները շղթղեցին: Համար, ծածուկ: Բայց զո՛ւ էի ու խանդավառ:

Պատճառաբանութիւններու մէջ կ'ըսէի. «Հայասպանութեան ուսումնասիրութիւնը միզի պիտի տայ փորձարկութեան դաշտ մը, որպէսզի կարենանք երեւան Հանել ցեղասպանութեան քաղաքականութիւնը իր բոլոր առանձնայատկութիւններուն մէջ, քանի որ, վերջին Հաշուով, ան ցոյց կու տայ այլասերած, քաղցիկեղաւոր, առանցքազուրկ մարդկութեան սկզբունքներով իսկ անիծուած մարդկութեան մը դիտակցութիւնը կամ անդիտակցութիւնը»:

Հայասպանութիւնը կը թուի բլլալ առաջին կանոնաւոր նոթը ցեղասպանութիւններու շարքի մը եւ կը Հանդիսանայ ուսումնասիրութեան ախտանիշ մը, առաջին կարգի Հիւանդագին պարպայ մը: Հայասպանութիւնը կը Հետապնդէ ցեղասպանութեան ոճիւրիս ամէնէն իւրայատուկ յատկանիշները:

— Այնուհետեւ ի՞նչ եղաւ ձեր խօսակցութիւնը ընթացքը:

— Երբ Պէյրութ վերադարձայ, տեսայ, թէ Հարցը կարծածէս աւելի լայն է ու բարդ: Պէտք է պատրաստէի Հայասպանութեան ամբողջ թղթածրարը: Բայց այդ եւս բաւական չէր: Անհրաժեշտ էր Հայասպանութիւնը դնել մարդկութեան դէմ գործուած սերիւններու ծիրին մէջ:

Այդ է, որ աշխատեցայ կատարել Հինգ Հատորներէ բաղկացած հրկատիրութեան մէջ, որուն ներածականը դուք թարգմանեցիք, 1960ին:

— Կարծեմ երկրորդ հատորը յատկացուած պիտի ըլլայ հայասպանութեան:

— Ճիշդ է: Եւ որովհետեւ այդպէս է, երկրորդ Հատորը, որ կը բաղկանայ 800 էջերէ, առաջին լոյս տեսողը պիտի ըլլայ, Ապրիլ 24ին, որպէսզի զուգահեռ վաթսուներեակի ողբերգութեան:

— Ի՞նչ եղաւ ձեր մտնեցման եղանակը:

— Բացարձակապէս առարկայական: Գիտեմ, թէ թուրքերը դէմ են ինծի ու առիթ չեն փոխցնել իրենց թշնամանքը արտայայտելու Համար: Բայց իրաւունք չունին, որովհետեւ այս գործին լծուեցայ ամբողջ մարդկութեան օգտին: Թուրքերը պէտք է դիտան, թէ այն ժողովուրդը, որ կը քանդէ, քիչ մը ինքզինք ջանդած կ'ըլլայ, երբ կը ջանայ քանդել մարդկութեան արմատները: Ամբողջ գործիս մէջ կ'աշխատեմ ստեղծել միջազգային զարթօնք մը ի սպաս մարդկութեան:

Ուզեցի կատարել ցեղասպանութեան փոխտփայտութիւնը, որպէսզի կարելի ըլլայ աւելի լաւ պայքարել ցեղասպանութեան, անոր բոլոր երեսներուն դէմ, եւ աշխարհի բոլոր դետիսներուն դրայ:

— Կազմակերպական ի՞նչ բնոյթ ունի ձեր պայքարը:

— Մնունդ առած է արդէն ցեղասպանութեան դէմ պայքարի «Մուսա Բըրենս Հիմնարկութիւնը», որուն կեդրոնը կը գտնուի Փարիզ: Լիբանանեան պետութիւնը ճանչցած է այս Հիմնարկութիւնը, որ մրցանակներ պիտի տայ ցեղաս-

IIème TOME

UN GENOCIDE IMPUNI : L'ARMENOCIDE

NOUVELLE INTRODUCTION

PREFACE DE M^e EDOUARD JAKHIAN
AVOCAT AU BARREAU DE BRUXELLES

*

CHAPITRE I – LE CLIMAT

AVANT-PROPOS

SECT. I – BOURREAUX ET VICTIMES

PARAG. (1) – LE « CARACTÈRE » ARMENIEN

PARAG. (2) – LE REVEIL DE LA CONSCIENCE ARMENIENNE AU XIX^{ème} SIECLE

A) – L'APPORT DE L'EGLISE ARMENIENNE

B) – APPOINT DES LETTRES ET DES ARTS

C) – INFLUENCE DES ARMENIENS EN ORIENT

PARAG. (3) – LES TURCS, DE L'APOGEE A LA DECADENCE

SECT. II – LES RELATIONS DU PEUPLE ARMENIEN AVEC SES BOURREAUX

PARAG. (1) – RELATIONS ARMENO-TURQUES

PARAG. (2) – RELATIONS ARMENO-KURDES

SECT. III – QUESTION ARMENIENNE ET QUESTION D'ORIENT

PARAG. (1) – LE JEU DE LA POLITIQUE EXTERIEURE

PARAG. (2) – POLITIQUE TURQUE ET QUESTION ARMENIENNE

*

CHAPITRE II – L'ARMENOCIDE SOUS LE REGIME HAMIDIEN

SECTION I – LES CIRCONSTANCES

PARAG. (1) – LES CAUSES POLITIQUES

PARAG. (2) – LA SITUATION ARMENIENNE A LA VEILLE DU GENOCIDE

SECTION II – L'EXECUTION DU GENOCIDE HAMIDIEN

PARAG. (1) – LES MASSACRES DE 1894-1896

PARAG. (2) – DU FAUX ESPOIR DE 1908 AUX MASSACRES D'ADANA

*

CHAPITRE III – LES JEUNES TURCS ET L'ARMENOCIDE

AVANT-PROPOS : JEUNES-TURCS ET DASCHNAKZAGANS

SECT. I – LA MISE EN PLACE DU GENOCIDE

PARAG. (1) – LES HOMMES AU POUVOIR ET LEUR PROGRAMME

PARAG. (2) – LA TOILE DE FOND POLITIQUE ET IDEOLOGIQUE

A) – FANTURQUISME ET FANTOURANISME – LA POLITIQUE DE TURQUIFICATION

B) – DE LA CUPIDITE A LA VENGEANCE

SECT. II – L'EXECUTION DU GENOCIDE

PARAG. (1) – LES PRELUDES

PARAG. (2) – LES DIFFERENTES SOURCES DE DOCUMENTATION

A) – SOURCES AMERICAINES ET BRITANNIQUES

B) – SOURCES ALLEMANDES

C) – SOURCES OTTOMANES

D) – SOURCES SUISSES ET NEUTRES

E) – SOURCES RUSSES ET FRANÇAISES

PARAG. (3) – LES TEMOIGNAGES

A) – LES MASSACRES SUR PLACE

B) – L'EXPEDITION DES DEPORTES

C) – LE TRAITEMENT DES DEPORTES EN ROUTE

D) – LE TRAITEMENT DES DEPORTES DANS LES CAMPS

TEMPORAIRES ET LES LIEUX DE DESTINATION.

CONCLUSION

CHAPITRE IV – LES RESPONSABILITES

AVANT-PROPOS
 SECT. I – L'ACCUSATION TURQUE
 SECT. II – PLAIDOYERS FRANCO-ALLEMANDS EN FAVEUR DU JEUNE TURQUISME
 A) – PLAIDOYER DU JEUNE TURC ALLEMAND : BRATTER
 B) – PLAIDOYER DU JEUNE-TURC FRANÇAIS : ANONYME
 SECT. III – LES DIFFERENTES RESPONSABILITES
 PRELIMINAIRE : LES ENFANTS ARMÉNIENS ACCUSENT...
 PARAG. (1) – LA RESPONSABILITE TURQUE
 PARAG. (2) – LA RESPONSABILITE AUSTRO-ALLEMANDE
 A) – LA RESPONSABILITE AUSTRO-HONGROISE
 B) – LA RESPONSABILITE ALLEMANDE
 PARAG. (3) – LA RESPONSABILITE DES PAYS DE L'ENTENTE
 PARAG. (4) – LA RESPONSABILITE DES PAYS NEUTRES

*

CHAPITRE V – MUSTAPHA KEMAL, LE DERNIER DES BOURREAUX ?

SECT. I – VIE ET MORT DE LA REPUBLIQUE INDEPENDANTE D'ARMENIE
 PARAG. (1) – LA DEFENSE DE LA TRANSCAUCASIE
 PARAG. (2) – LES VICISSITUDES DE LA NOUVELLE ARMENIE
 SECT. II – LE TROISIEME ACTE DU GENOCIDE
 PARAG. (1) – LES DERNIERS SURSAUTS ARMÉNIENS EN CILICIE
 PARAG. (2) – LES MASSACRES SOUS LA TURQUIE NATIONALISTE
 PARAG. (3) – LA HONTE DE LAUSANNE

*

CHAPITRE VI – LES CONSEQUENCES DE L'ARMENOCIDE

SECT. I – LE BILAN
 SECT. II – L'ARMENOCIDE ET LE DROIT INTERNATIONAL
 CONCLUSION

*

BIBLIOGRAPHIE EN LANGUES

FRANÇAISE – ANGLAISE – ALLEMANDE – ARMÉNIENNE – ESPAGNOLE –
 ITALIENNE – ARABE – NORVÉGIENNE – RUSSE – LITHUANIENNE – DANOISE –
 TURQUE – FINNOISE – HONGROISE.

*

ANNEXES

- EXTRAIT DE RECIT DE L'AMBASSADEUR DES ETATS-UNIS A CONSTANTINOPE
- M. MORGENTHAU DURANT LA GUERRE 14/18.
- LES « MINUTES » DES MEETINGS SECRETS CONCERNANT LE GENOCIDE (EN ANGLAIS) – HAIGAZ K. KAZARIAN
- « NOTE » DU 13/11/1915 REMISE PAR M.O. DERTZAGHIAN-VRAMIAN' DEPUTE ARMENIEN DE VAN AU MINISTERE DE L'INTERIEUR A CONSTANTINOPE.
- UN « DOCUMENT TRAGIQUE » (EXTRAIT DE L'OEUVRE DE HENRI BARBY AU PAYS DE L'EPOUVANTE – L'ARMENIE MARTYRE)
- CARTE DES MASSACRES ET DES DEPORTATIONS D'ARMÉNIENS
- LA SENTENCE ARBITRALE DU PRESIDENT WOODROW WILSON
- PROCLAMATION ET INSTRUCTIONS SECRETES D'ALI SAIB AUX TRIBUS KURDES.
- « MEMORANDUM » – LE PROBLEME ARMENIEN DEVANT LA S.D.N.
- DU « TRAITE DE LAUSANNE » (EN ANGLAIS)
- LE « MEMOIRE » DES PERSONNALITES AMERICAINES CONTRE LE « TRAITE DE LAUSANNE » (EN ANGLAIS).
- LETTRES DU COMITE CENTRAL DES REFUGIES ARMÉNIENS AU S.G. DE LA S.D.N. & OBSERVATIONS DU GOUVT. TURC (1925-28).
- LETTRE DU COMITE CENTRAL DES REFUGIES ARMÉNIENS A GIDEL, LAPRADELLE, MANDELSTAM ET CONSULTATION (1925-1928).
- PLAIDOYER DU DR. SALAHI SONYEL POUR LA DEFENSE DES TURCS (EN ANGLAIS)
- RESOLUTION DE L'ONU SUR L'IMPRESCRIPTIBILITE DES CRIMES DE GUERRE ET DES CRIMES CONTRE L'HUMANITE DU 25/XI/1968.
- RAPPORT ANNUEL (1973) DU PATRIARCHE ARMENIEN DE TURQUIE.

պանութեան դէմ մղուող պայքարի գծով հրատարակուելիք գործերու :

— Ի՞նչ կը մտածէ՛ք Հայկական Դատին մասին :

— Անշուշտ հոն պիտի զայինք : Ըսեմ . Հայկական Հարցը սրտիս կը խօսի, որովհետեւ նոր հորիզոններ կը բանայ ցեղասպանութեան դէմ մղուող Համաշխարհային պայքարին մէջ :

Այս առիթով, բոլոր Հայերէն թախանադին կը խնդրեմ կենդանի պահել այն ուժ-զաղափարը, որ Հայկականութիւնն է, որ վեր կը մնայ հողի, Հայրենիքի եւ ազգութեան բոլոր ըմբռումներէն, իբրեւ յաղթանակ մը արձանագրուած ցեղասպանութեան ոճիրին դէմ :

Պէտք է վառ պահել Հայկականութեան բոցը բոլոր Հայերու մօտ, բոլոր քաղաքացիներու հոգիին մէջ, Հայաստանի սահմաններէն անդին, Սփիւռքի բոլոր անկիւններուն մէջ :

Հայասպանութեան յատկացուած հատորիս մէջ, կը փորձեմ Հայերուն ցոյց տալ, թէ իրաւունք չունինք միայն լալու եւ ողբալու, այլ պէտք է պայքարինք՝ շորցնելու Համար շարիքին արմատները :

Ու եթէ կ'ուզէք, ահաւասիկ Հաւատամքս .

Կը Հաւատամ Հայկական Դատին, որովհետեւ արդար է, եւ որ անտեսուած, լքուած է անարդարօրէն, աշխարհի բոլոր երկիրներուն մէջ ու զուցէ նաեւ շատ մը Հայերու կողմէ :

Կը խոստովանիմ, թէ դրեւ Հայասպանութեան մասին ո՛չ միայն գիտական դործ մը կատարել է, այլեւ մարդկային պարտականութիւն մը՝ հանդէպ ժողովուրդի մը, զոր քիչեր ճանչցած են :

Յեղասպանութեան դէմ պայքարելու համար, ամէնէն աւելի կ'ապաւինիմ հայերու, որովհետեւ ոճիրը, որուն ենթարկուեցան եւ որ մարդ ըլլալու վախը կուտայ մեզի, անպատիժ կը մնայ ցարդ :

Կ'ապաւինիմ Հայերու, որովհետեւ հակառակ այդ բոլորին, կրցան պահել Հայկականութիւնը, որ իրենց կու գայ երկու Արարածներու յարիւսեանական հայրենիքէն :

Իմ մեծ մտղթանքս է ո՛չ անպայման ամբողջ Հայութիւնը տեսնել Հաւաքուած Հայաստանի մէջ, այլ տեսնել բոլոր Հայերու ապրիլը հայկականութեան մէջ, որ ազնուացնող է, վեհացնող, մարդկայնացնող :



Մուսա Բրենս կանգ կ'առնէ, ինչպէս սկսած էր : Առանց փոխանցումի, իր ըսելիքը, էական ըսելիքը աւարտած մարդու գոհունակութեամբ :

Դէմքին վրայ ժպիտ կայ : Պայքարողի ժպիտը :

Արդարութեան ախոյեանի :

Հարցադառնող վարեց

S. ՈՍԿՈՒՆԻ

Մ ՈՒՆ ԳԸՄԻՍ.— Բանաստեղծ, Բասերագիր, արձակագիր, մտաւորական: Մեծ է Պաղատանի Կազա քաղաքը, 1925ին: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է ծննդավայրին թէ՛, իսկ Համալսարանական ուսումը՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանը:

Հրատարակած է բանաստեղծական 10 հատորներ, 5 փարսիազ եւ արձակ է երկեր:

Բանաստեղծական կարեւորագոյն գործերն են՝ «Հասկերէն եկող ըմբոստը», «Յարգամանը իային վրայ», «Պաղատանը սրտին մէջ», «Մահը կանգնած կը մեռնին», «Քերթումներ պատուհաններու ապակիներուն վրայ», «Եկայ անունովդ աղօթելու համար», «Բասերագիրէն՝ Վերադարձներուն յեղափոխութիւնը», «Սատան եւ Տպիտա», «Արտայանքը բոյներն իրենց մտանքուն միջու կը եխեն», իսկ արձակ գործերէն՝ «Մեռաւ երօսը, կեցցէ՛ լեռք»:

Քարգմանած է տեղերէնէր, Փրանսերէնէր, ռուսերէնէր, սպաներէնէր, հայերէնէր, եւ այլն:



ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՒՆԻԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՒՆԻԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

أغنية الى طيف أرميني

Քնացիր որդեակ իմ քնացիր
 խեղճուեցաւ թուրք փաշան
 հապաղի՛ի՛ն մէջ արեան
 քնացիր... որդեակ իմ քնացիր...

Բաղանի՛ին մէջ արեան
 խեղճուեցաւ թուրք փաշան
 եւ սակէ ետք այսօրուքն սկսեալ
 վերարկուին վրայ անոր աչքոյ գուլալ
 պիտի չըլլայ կոճակ երբեք
 քնացիր... որդեակ իմ քնացիր...

Եւ բիրբուդ կեդրոնին լեռն Արարատ
 որ նման է զոյգ պարանով կապանքում արծիւի
 հեռունեքու մշուշներէն արդ կ'արձակուի
 ու կը թռչի սաւառնաքեւ եւ կ'օրօրէ մահինը քու
 արդ կը ճախրէ կը մտնեայ... կը մտնեայ
 կը հսկէ քու մահնին վրայ
 եւ դուն որդեակ իմ քնացիր
 խաղաղօրէն արդ քուն եղիր...

Քնացիր... որդեակ իմ քնացիր
 խեղճուեցաւ թուրք փաշան բաղանի՛ն մէջ իր արեան...



ԻՔԻ ԱՏՆԱՆ.— Բանաստեղծ, փնտաղաւ, նը-
կարիչ: Մեծ է Պէյրուսի: Ամերիկայի մէջ հա-
մաշտարանական փայտուն ուսումէ մը հաջ, կըր-
կին կը հաստատուի Պէյրուսի, ուր անդրերէն եւ
Ֆրանսերէն լեզուով կը հրատարակէ չարք մը
բանաստեղծութիւններ (որոնցմէ մաս մը արա-
բերէնի կը թարգմանուին բանաստեղծ Եուսէֆ
էլ-Սալի կողմէ):

ԻՔԻ Ասեան գրքոն մասնակցութիւն մը կը
բերէ Ֆրանսերէն լեզուով Լիբանանի մէջ հրա-
տարակուած զանազան թերթերու: Աւելի բուն
մէկ աւարի ան խորագրից զԱլ-Սաֆաթ թեր-
թին գրական բաժինը, իսկ Վ'Օրիան-Լը ժա-
նոն մէջ կը ստորագրէ նկարչական եւ մշակու-
թային հարցերու անդրադարձող փնտաղապական
բազումներ:

օճախ մը այս համայնֆեներէն իւրաքան-
չիւրիկն համար՝ — Յունաստանը, Աւս-
րիան եւ Խորհրդային Հայաստանը:
Բայց անդամահատուած ազգային օճախ
մը:

Բուն չարիքը քունդ ազգայնամուրու-
քիւնն է ո՛ւր որ ալ գլուխ ցցէ անիկա: Օ-
րինակ, Կրեմլերը, որոնք գոն դարձան
ցեղասպանութեան մը, իրենց կարգին,
մոլեռանդ ազգայնականութեան մը հե-
տեւանքով՝ նոյն ողբերգութիւնը գոր-
ծադրեցին՝ պաղեստինցիներուն նկատ-
մամբ:

Երբ ինձի առաջարկուեցաւ մասնակ-
ցիլ Մանուկեան Կեդրոնին մէջ տեղի ու-
նենալիք լիբանանցի նկարիչներու եւ
ֆունդակագործներու ցուցահանդէսին,
գրեցի առ յայտարարութիւնը:

— Երբ պաղեստինցիք պայքարին
հաշիւու համար, եւ հայերը՝ պաղես-
տինցիներուն համար, այլիւս ցեղասպա-
նութիւն տեղի չ'ունենար: Իմ այդ
արտայայտութեամբ ըսել կ'ուզէի,
թէ աշխարհի մէջ ցեղազաշտութեան
ողբերգութիւնները նուազեցնելու միակ
ձեւը ցեղային բնագործն զուրս գալով
անարդարութեան դէմ պայքարիլն է,
ո՛ւր որ ալ գործուած ըլլայ այդ անար-
դարութիւնը:

Բարեբախտաբար կայ Խորհրդային
Հայաստան մը, ուր ստեղծագն գոյու-
թիւն ունին հայ լեզուն եւ հայ մշակոյ-
թը, եւ կրնան ծաղկիլ ու լաւ է քաջա-
լիքով առիկա: Միւս կողմէ՝ հայ մը,
ինչպէս տեւէ ուրիշ էակ կ'ապրի իր դա-
րուն մէջ եւ պէտք է բոլորին հետ միա-
նարար կերտէ վաղուան մարդուն ապա-
գան: Մամուլի, գիտութիւններու ու
արուեստի միջոցներով կերտուած ապա-
գայ այս մարդը կը պատկանի տիեզեր-
քին:

ԲՈՒՆ *Քեդրոն*

Հայերու վրայ կատարուած ցեղաս-
պանութիւնը խորքին մէջ յայներու եւ
ուրիացիներու դէմ միաժամանակ գոր-
ծուած ցեղասպանութիւնն էր, բայց հա-
կանակ ստոր մնաց կորիզ մը, ազգային

Etel Adnan

سيرة الامام والرب
 في نفي نضال مشرك
 Բայերու և Արաբներու միջեւ
 Կապուսարի
 Արաբեաց Կապուսարի միջ կապ

Միացեալ պատմութիւնը, որ կը մէկտեղէ հայերն ու արաբները, պէտք է ըլլայ ուժեղ եւ առաջնորդէ պիտե՞ք դէպի իրենց միջեւ գոյութիւն ունեցող միացեալ պայքարի արմատացման: Ի մասնաւորի ցեղամոլութեան դէմ, որով օսմանցիք հայերու դէմ կոուեցան, ինչպէս այս օրերուն սիոնականութիւնը արաբներու դէմ կը կռուի այդ նոյն պէնջով:

Եւ այս պատմութեան դիմագիծերուն խիստ նմանողութեանց պատճառով, եղելութեան ծանօթ անձին, ուղղակիօրէն իրապենի կը թուի, թէ ինք կը կարծէ, որ այս երկու ժողովուրդներուն մտահոգութիւնները մէկ են: Երկուքն ալ գաղթեցին իրենց հայրենի հողէն, խոյս տալով բարբարոսութենէն եւ անմարդկայնութենէն, որով իրենց թշնամիները կը դիմակալէին պիտե՞ք:

Թերեւս հայ ժողովուրդին վրայ կատարուած շարժը խորքին մէջ եղաւ վտանգի ահապանգին վանգահարումը, որ ըսկըսաւ ուժգին կերպով ինչեւ արաբներուն

մտաշխարհին մէջ: Ու ճիշդ այդ ժամանակներուն, հիմնուեցան գաղտնի միութիւնները եւ արաբները սկսան անկախութիւն պահանջել օսմանեան պետութենէն, որ կեղծ խալիֆայութեան վարագոյրով քողարկուած կը կառավարէր պիտե՞ք, իսկ ժողովրդականացման անունին տակ կը պահուըտէր թուրքին նենգութիւնը, նախանձն ու ատելութիւնը:

Այն օրերուն, երբ դահիճներուն հըրացանները կ'ուղղուէին անպաշտպան հայ մանուկներու, կիներու եւ ծերերու կտրծքերուն՝ արաբները կ'արթննային ի տես այս սպանդին: Եւ տառապանքը կը քամէր իրենց սրտերը, իսկ ցեղին մունետիկները կը հաղորդէին, թէ անկարելի է որ հայոց այժմու ճակատագիրը չվիճակի նաեւ մեզի:

Եւ այն օրերուն, երբ տասնեակ հազարաւոր հայեր կորաքամակ դուրս եկան այս ջարդ-դաւաղութեան օղակէն, չուլումէն ու բռնակալութենէն խոյս տուած գաղթականներուն առջեւ արաբները լայն

բացին իրենց սրտերն ու տուները: Պաշտպանեցին Կանոնը իրենց հասարակաց թշնամիին մահաբեր ցանկությունէն: Յետոյ, արաբները ունեցան իրենց ոստումը եւ յեղափոխութիւնը, որ պսակուեցաւ բռնակալութենէն անշատուելով ու անկախութեամբ, եւ բռնակալութեան դրօշակները մէկ առ մէկ սկսան վար իյնալ այս օրհնաբեր հողին վրայ:

Եթէ հայերը միջազգային պայմաններու հետեանքով կորսնցուցին այդ բախտը եւ չկրցան առնել իրենց վրէժը, այսուհանդերձ, վրէժի ամենակարճ ճամբան Պաղեստինի հողին վրայ արաբներու հետ միացեալ պայքարն է ընդդէմ արաբներու թշնամիին, այսինքն՝ սիոնականութեան, եւ չկայ աւելի հոյակապ վերադարձ մը դէպի Հայաստան աշխարհ, քան Պաղեստինի սուրբ հողին միջոցով վատարուած անցքէն:

Այս դառնալից յիշատակը, որուն ոգեկոյտումը կը կրկնուի ամէն տարի, պարպապէս յիշեցնելու համար է, որ բռնակալութեան դէմ ծառայող ատելութիւնը չի մեննիր, եւ որքան ալ երկարի ժամանակը, ապատութեան դրօշը անպայման որ բարձրօրէն պիտի ծածանի, որովհետեւ անոր բարձրացման գինը սուղ վճարած են հազարաւոր նահատակները, որոնք ինկած են ազատութեան ի խնդիր ու կը շարունակեն իյնալ այս ընդարձակ աշխարհի բոլոր մասերուն վրայ:

Մեծարանքով ու փառաբանութեամբ կը խոնարհիմ հայկական եղեռնի նահատակներուն յիշատակին առջեւ, նահատակներ, որոնք մեր հոգւոյն մէջ կեանք տուին յեղափոխութեան՝ ընդդէմ բռնակալութեանց ու զուլումներուն եւ սորվեցուցին մեզի, թէ բռնակալութեան դէմ ըմբոստանալը անհրաժեշտ է, եւ որպէսզի յաղթանակենք, պէտք է այդ ըմբոստութիւնը մկրտենք արեամբ ու մարտիրոսութեամբ:



ԵԱՍԻՆ ԲԱՏԱՆԷ

Պատուածագիր, բանաստեղծ, իմբազիր, չինագառ եւ լրագրող: Ծնած է 1934ին, Դամասկոս: Նախնական ուսումը ստացած է իր ծննդավայրին մէջ, իսկ երկրորդականը աւարտել առաջ Նեաուած է կեանքի ասպարէզ: Ենթոյն ինքնաշարժութեան հասած է մասուրական պատասխանատու պաշտօններու: Վարած է սուրիական «Ալ-Մաքիֆը» եւ «Ալ-Մաճաֆէ» գրական ու մշակութային ամսագիրներուն խմբագրութեան պաշտօնը: Մաս կազմած է նաեւ սուրիական «Ալ-Սաուրա» օրաթերթի իմպուլս: Թեան: Ներկայիս գրական-մշակութային գրատախանտու իմբազիրն է «Ալ-Ըսպուս» ուլտրապի» յերանանեան շարքաթերթին: Հրատարակած է «Տխրութիւն ամենտեղ», «Վերջնաբեր», «Մշակարի», որ ծովաճոյն կ'ըլլայ» եւ «Արտոյտները անուն Հատորները»: Թարգմանուած է Փրանսերէնի, սպաներէնի եւ հայերէնի:

عبد الرحمن بستان



ՈՒՆՍԻ ԷԼ-ՀԱՃ

Բահաստեղծ, Քարզմանիչ, մտաւորական, Հրապարակագիր եւ խմբագիր: Ծնած է 1897ին, Պէշոօթ: 1935ին կ'ուսարէ Գոչէժ առ լա Սաժէճը եւ կը ճետտի լրագրական ասպարէզ: Ատեն մը կը պաշտօնավարէ «Այ-Հայաք» օրաթերթին մէջ, ապա մաս կը կազմէ «Այ-Նանար» օրաթերթի խմբագրական անձնակազմին: Ծանօնեակ մը շարունակ կը վարէ «Այ-Նանար» օրաթերթի մը-շակութային - գեղարուեստական յանելուածին խմբագրական օրատուը, իսկ Հեղամեակէ մը ի վեր պատասխանատու խմբագիրներէն է վերոյիշեալ օրաթերթին: Նաեւ մաս կազմած է «ՆՐԸ» Հանգէտի խմբագրութեան:

Ունի իր-ձան Հրատարակած է բանաստեղծական հինգ հատորներ՝ «Պիտի չը...», «Երկուստուս զլուխը», «Ե՛տալի՛ք օրերուն անցեալը», «Էմիջ արտիքիք օսկիտվ, ինչ քրիք վարդոյն եւ ըլին-չու իր աղբիւրները երկարող մագերով առաքելուին»:

Քարգմանուած է Փրանսերէնի, անգլերէնի եւ Հայերէնի:

من الامس
liber

ՄԵՆՔ
ԲԱՅԵՐԷՆ ՍՈՐՎԵՑԱՆՔ ...

Կենդանի ժողովուրդը նման է ցօրեմի հատիկին, որուն մասիմ խօսեցաւ Յիսուս: Որքան ալ աշխարհը դառածանէ կենդանի ժողովուրդին, ան չի դառաններ կեանքին: Եւ կեանքն ալ, իր կարգին՝ իրեն: Հայերը կենդանի ժողովուրդ են: Անոնք իրենց համար ամենուրեք հայրենիք մը գտան, որովհետեւ ամեն տեղ գրքենք հիւրընկալուցներ կրցան հզրայրներու վերածել: Եւ մենք՝ իրանահայերս, արվեցանք իրենցմէ, քէ գալուսմն ու հայածանքը ի վիճակի չեն սպաննելու հայածեալին մէջ գոյութիւն ունեցող սէրը, եւ կը մնան անգործ՝ խելու նրբանկութիւնը անօր հազդէն: Հայերը մեզի սորվեցուցին ետ յազբանարելու, վերածնելու եւ հզրայրամայու դասը: Եւ սորվեցուցին մեզի, քէ ինչպէս վեհանմութիւնն ու համեստութիւնը կը մթաճուլին եւ այդ երկու առաջինութիւններան ամուսնութեանէն կը ծնի բարիքը: Եւ մեզի սորվեցուցին նաեւ, որ աշխարհը հսկայ ձմիր մըն է, ասկայն ինչիւր-թեան կամքը, այդ աարօրհնակ ծաղիկը, արուն գոյութիւնը կ'երաշխտարէ մտտուած, աւելի՛՜ գորաւոր է նայինքն աշխարհին:

انسي الحاج

Քանապոսի, Քանապոսի, Քանապոսի,
 Քանապոսի, Քանապոսի և Քանապոսի: Մեծ է
 1939ին, Հարաւային Լիբանանի Ճրտեյաթ-Մար-
 ճայուն դիւաբազարը, երկրորդական ուսումը ա-
 ւարտել ետք, կը նետուի լրագրական սուպարիզ:
 Մաս կազմած է «Եր»-ը՝ Հանգէսի խմբագրու-
 թեան: Երկայիս կը պաշտօնավարէ «Ալ-Նահար»
 օրաթերթին մէջ, իրրեւ արուեստի եւ գրականու-
 թեան քննադատ: Հրատարակած է բանաստեղծա-
 կան շար «Հատորներ»՝ «Մեծածախ»-ը, «Ամբողջ
 խոսքեր», «Մուրը եւ Հարստի» կոյս ատարը
 եւ «Առաջին մանչ», իսկ Քանապոսի Հինգ Հա-
 տորներ»՝ «Ջանգալայտը», «Սպանութիւնը», «Տի-
 բաբարը», «Բարբ արտի» եւ «Մարիամ Սարիան
 ինչ»՝ Մերձեց...: Իր կարգ մը ուսումնասի-
 րութիւնները եւս անփոփոսած են Հատորներու
 մէջ:

Քարգմանուած է անգլերէնի, Փրանսերէնի,
 գերմաներէնի եւ այլ լեզուներու:



ԻՍԱԾ ՄԱՀՏՈՒՅ

أحمد الوائلي

Քանապոսի
 ԱՐԿԻՒՐԸ

Այն շարքը, որուն ենթարկուեցու հայ ժո-
 ղովուրդը իր հայրենիքի մէջ մասին՝ Քրեանա-
 յատանի մէջ եւ որուն նահատակներուն յիշա-
 տակի ողերյայման Վաթուճաճեանը կը զուգարի-
 պի այս օրերուն, այն հոկայ մղի ուժն է, որ
 այսօր կը մղէ մեզ բարձրագոյն շարք տալու
 20րդ դարու միջազգային հանրային կարծիքի
 հանդիսատեսի դիրքորոշման մասին՝ ի սեռ այս
 վայրագութեան ու բարբարոսութեան, որ պար-
 ջապէս մթին դարերու պատմութեան մէջ մասն
 է:

Այս այն դիրքորոշումն է, որ ամենուրեք քա-
 շախիքն ու կը շարունակէ զաշխարհի անհաս-
 անելու իրաւունքներուն ոտնակոխումը, ո՛ր մնաց
 ժողովուրդներու իրաւունքները:

Եղբայրացու՛մը հայ ժողովուրդին եւ անոր
 տառապանքներուն հետ, Լիբանանի մէջ եւ Լի-
 բանանէն դուրս, ընկերակցելու սովորական զգա-
 ցականութեան մը արդիւնք չէ միայն, այլ իրա-
 շարկուած մարզկութեան իրաւունքին վերա-
 դարձան ի ինզիբ կատարուած դիրքորոշում մըն
 է, իրաւունք մը, որուն ներկայացուցիչներն են
 այս ժողովուրդի նահատակներուն թոռները,

ա՛յն ժողովուրդին, որուն մեծամասնութիւնը
 20րդ դարու սկիզբներուն բնօրէն տարագրուե-
 ցաւ իր Լիբանանի պատմական յետադիմանու-
 թիւնն ու համայնքային տակութիւնը ներկայա-
 ցընող օսմանեան կառավարութեան կողմէ, որուն
 շարունակութիւնը այսօր կը գտնենք զեղամու
 ու կրօնամուլ ներկայ թաղամթիւ վարչակարգերու
 մէջ:

Կրկայ ըլլալ, որ մահաբանութիւն չեմ ճանչ-
 նար պատմութիւնը հայկական շարժերուն, որոնք
 գործադրուեցան օսմանեան պետութեան կողմէ,
 սակայն յոտակօրէն դիմեմ ա՛յն, որ այս բար-
 բարոսական շարժերուն դիմաց միջազգային հան-
 րային կարծիքին ցուցաբերած լուծութիւնը աւելի՛
 անուսր է, քան նոյնիքն իրարը:

Ես մասնատրարս իրրեւ բանաստեղծ երբ
 կը պատկերացնեմ հայ նահատակ բանաստեղծնե-
 րուն արեւը, կը յիշեմ Փրանսացի բանաստեղծ
 Լոթրիանոնի հետեւեալ խօսքը:

«Մոզիբուս բոյն ցարիքը չեն բանը՝ լուս-
 լու համար նախատակ մտաւորականի մը արեան
 մէկ կաթիլը»:

كفو | ١٤٠١



Բանաստեղծ, արձակագիր, իմբրպիր և ճշարակագիր: Ծնած է 1941ին, Պաղեստինի Պէրուս գիւղը: Նախնական կրթութիւնը ստացած է Պաղեստին, իսկ համալսարանական ուսումը՝ Մոսկուս:

Իր հրատարակած բանաստեղծական զլխաւոր գործերն են.— «Պաղեստինեան սիրահարը», «Փիշերուան վայնանը», «Կարքանայ իմ սիրելիս», «Կը սիրե՞մ էեզ քէ ոչ», «Փորձ քիւ 7» և «Այս է իմ սիրուիս եւ այդ է սիրահարին անձնատանութիւնը»:

Մաս կը կազմէ «Մատաէֆ» հանդէսի խմբագրութեան:

Քարգմանուած է Փրանսերէնի, անգլերէնի, սպաներէնի, ռուսերէնի, գերմաներէնի, հայերէնի եւ այլ լեզուներու:

ՄԱՀՄՈՒՏ ՏԷՐՎԻՇ

Աս բաժնին մէջ իր խօսքը պիտի քեր անպայման նաեւ պաղեստինցի բանաստեղծ Մահմուտ Տերվիշ, բայց ճամբորդած ըլլալուն պատճառով հնարաւոր չեղաւ իրմէ ունենալ էջ մը:

Պաղեստինի եւ անոր ժողովուրդին երգիչն է Մահմուտ Տերվիշ, ձիթնիներու, մրգատաններու բոյր ու բարիքին մարդոց տառապանքն ու պայքարը խառնելով գրական տարերը կազմած բանաստեղծ մը, որուն բոլոր գործերը արժանացան լուրջ ուշադրութեան:

Վերջերս լուս տեսած Մահմուտ Տերվիշի հատորներէն մէկը կը կոչուի «Մոլորակէն տխրութեան օրագրութիւնները», որ կը բաղկանայ երկու մասէ, — «Ամէնօրեայ տխրութիւն» եւ «Լուսինը ինկած է ջրհորներուն մէջ»:

Ըստ ֆրանսերէն լեզուով գրուած գրախօսականի մը, այս երկրորդ բաժնին մէջ բանաստեղծը կ'երեւակայէ երկախօսութիւն մը՝ ընդմէջ իր եւ հայրենակարօտ այն մանուկին, որ ինքը եղած է եւ որ կ'երազէ իր հայրենիքը իբրեւ «գրաւեալ դրախտ» մը: «Այդ մանուկը ստրվեցաւ ապրիլ արմատախիլի մը ամէնօրեայ տխրութիւնը, բայց ամէն օր առաւել խոր սէր մը ըզգաց սրտին, աւելի սերտ կապ մը՝ իր հայրենիքին հանդէպ եւ, հասունութեան հասնելով՝ հասկցաւ ա՛յն հրամայականը, որ իւրաքանչիւր ոք կը պատկանի «իր մայրենի հողին»:

Մահմուտ Տերվիշ նոյն հատորին մէջ կ'ընդգծէ սա փորձառութիւնը.

«Ինքայելացիք կարմացան պաղեստինցիները իրենց հողին յիշատակին այսբան ամբօրէն կապուած տեսնելով, բայց անոնք առաւել եւս կարմացան ի տես ա՛յն մանուկներուն, որոնք տարագրութեան մէջ ծնած ըլլալով հանդերձ, Պաղեստինի սերը կը կրէին իրենց սրտին խորագոյն ալեկրուն»:

Տարագրութեան մէջ ծնած պաղեստինցի մանուկներուն աչքին ճառագայթող այդ հայրենասիրութիւնը որքա՛ն իրական է եւ՝ որքա՛ն հարապատ տարափիւռ մե՛ր մանուկներուն, որոնց աչքերուն առաւելագոյն պայծառութեամբ շողաց ու կը շողայ հայրենասիրութիւնը՝ ի կարմանս «մարդակեր գպան»ին եւ վայն հովանաւորած ու հովանաւորող բաղաբակի՛րթ մեղսակիցներուն...



Մ Ե Ռ Ի Ն Գ Ը

Կարծի՝ ՄՈՒՆԱ ՍԵՌԵՏԻ

Նկատի առնելով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՄՅԵՐ ԿԱԲԻՆԵՏԻ
ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Ստանդարտ աւարտն էր գիշերուան
առաւօտն եղաւ սկիզբը տիւիմ
եւ ծագեցաւ արեւը այս ժողովուրդին
եւ իր հոգին արթնցաւ
քայլերգ:

Գաղթեցին Հայաստանէն
գրոհին տակ նեղութեան
Պաղեստինէն գաղթեցին
քանի՞նը
եւ հոս էր
եւ հան:

Ընկերուհին իմ Սեղան
ամէն անգամ սր կ'ողջունէ զիս
Հայաստանը կը յիշեմ
որովհետեւ ես երեսազէմէն եմ:

Հայաստանի գաշտն է հարուստ մժոյզներով ոսկեգոյն
որուն մէն մի ծառին եւ ծառերու
իւրաքանչիւր արմատին տակ արին կայ
կամ մարմինը անընչացած մանուկի մը
գաշունահարուած մօր կտրծէին վրայ:

Բանաստեղծ, բնագրատ, խմբագիր և լրագրող: Մեծած է 1944ին, Գառնակոտ: Սուրբական պետական պոեզիայի ստանալէ ետք, կը նետուի լրագրական ապարիչ: 1987ին, Վեցորեայ Պատերազմին առիթով գրած էր ընդլղումի երգերով զարմալ փետուած առուհ մը:

Հրատարակած է «Դամակասցի կնոջ մը նամակները պաղեստինցի ֆետայիի մը»:

Առեն մը մաս կազմած է լեբանանեան «Ալ-Հաննաթ» լաբաթաթերթի խմբագրութեան:



ԱՄԱԼ ՃԱՐՐԱԿ

Ով մարդիկ լաւ յիշեցէ՛ք
 ձեր պապերը հօրը
 որոնք ինկան հողին վրայ այն պահուն
 երբ Հայաստանին կեանք կը բաշխէին
 զուր չգնաց արիւնն իրենց
 եւ դանիմներուն ետեւէն հասաւ
 անէծքը անմահ յաւիտեանական
 զի անէծքները ժողովուրդներուն
 ընդդէմ գալումին ու հալածանքին
 չեն մեռնիր երբեք:

Կը թուի ինծի
 թէ հողին վրայ ինկած
 հայ արեան մէն մի կաթիլէն
 ծաղիկ մը ծնաւ:

Իւրաքանչիւր հայու սրտէն
 որ կանգ առաւ տրտիկէ
 բարձրացաւ վեր դրօշակը ազատութեան:

Վայել է ճահատակներու որդիներուն
 ըլլալ
 մահատակներու որդիներ:

—
 Զ' Ե' Ե'

سید ایوب

ՀԱՅՔԵՆԵՆԵՐՈՒՄ ՔՐԵՍՏՈՍԸ

Փօյ Կիրակոսեանի պատառները, երկար ժամանակի մը համար, հակառակ այն մտերիմ երկախօսութեան եւ սիրոյն, որ կը գգայի, թէ գոյ է մեր միջեւ՝ մնացին պզտոր եւ գոց պատառներ ինծի համար:

Եւ, յանկարծ, այն օրերուն, երբ Յունիսի պատերազմէն ետք կ'այցելէի Յորդանանի պաղեստինեան գաղթականները, իմ առջեւ բացուեցան այդ պզտոր պատառներուն գաղտնիքները եւ ես լսեցի ու յանկարծօրէն հասկցայ այն բոլորը, զորս կը թելադրեն Կիրակոսեանի ստեղծած էակները, որոնք կը նմանին կիներու կամ մայրերու, եւ որոնք կու գան հեռաւոր հե՛հաթներէ՝ պատմելու համար տառապանքներուն մասին այն մարդուն, որ յանկարծ կը գտնէ ինքզինք մերկ տափաստանի մը վրայ, առանց հայրենիքի:

Պաղեստինի վերջը նանապարհն էր:

Վերէն դէպի արուեստ, եւ արուեստէն՝ դէպի վերջ:

Նման վերացումով մը սկսայ ընկալել հայ ժողովուրդի տառապանքները, որովհետեւ տառապանքը տառապանքի կ'առաջնորդէ:

Այսուհանդերձ կայ հեռաւորութիւն մը: Եւ եթէ հիմա պաղեստինցի ժողովուրդին տառապանքը կը գգանք մեր մարմնին վրայ, պէտք է ըսել, թէ հայ ժողովուրդին տառապանքը, որուն պայթումի յիշատակին շուրջ կը խմբուինք այժմ, տառապանք մըն է, զոր կը գգանք բա-

Բանաստեղծ, քննադատ, մտաւորական եւ խմբագիր: Մեծ է 1945ին, Պէքաս: Երկրորդական ուսումը աւարտելէ հոգ, նետուած է յրազրական տպարէզ: Ներկայիս պատասխանատու խմբագիրն է «Այ-Անուար» օրաթերթի գրական-մշակութային էջին: Մաս կը կազմէ «Մաուսէէֆ» գրական հանդէսի խմբագրութեան:



ՍԱՄԻՐ ԷԼ-ՍԱՅԵՂ

նականութեան մանապարիով, եւ հեռաւորագոյն սահմանումով մը կը թուի ինձի, թէ անիկա բացարձակ տառապանք մըն է:

Տառապանք մը, որ կու գայ պատմութենէն, կու գայ յիշատակէն եւ մտատանջ կը դառնայ ինքն իր շուրջը՝ շարունակելով որոնել ապագան: Կարծես թէ տառապանքն է, որ ծնաւ, որպէսզի ըլլայ յաւիտենականը, խորհրդանշանը, ազդիւրը այն բոլոր տառապանքներուն, որոնք բաժինը պիտի ըլլան այն մարդուն, որ կ'որոնէ իր կորուսեալ հայրենիքը:

Եւ եթէ Պաղեստինը խորհրդանշանն է հայրենիքի պատկերին, որ պիտի գայ, Հայաստանը խորհրդանշանն է հայրենիքի պատկերին, որ անհետացաւ: Առաջին պատկերին մէջ մենք կը ձգտինք գծել դիմագիծը հայրենիքին, գոր կը սիրենք, եւ երկրորդ պատկերին մէջ մենք կը ձգտինք գծել դիմագիծը մարդուն, գոր կը սիրենք:

Եւ Հայաստանը նման է Քրիստոսին, որ եկաւ, տառապեցաւ առանձինն համայն մարդկութեան փոխարէն, ընդհանուր մարդկութեան փրկութեան համար, որպէսզի ինք արժանանայ երկնքին: Եւ անոր, այսինքն՝ Հայաստանի ժողովուրդը եկաւ, տառապեցաւ բոլորին կողմէ, բոլորին փրկութեան համար, որպէսզի միւս բոլոր ժողովուրդները արժանանան իրենց հայրենիքներուն:

Հայաստանը հայրենիքներուն Քրիստոսն է:

سيرة ذاتية المستعير

ՊԻՏԻ ԲԱՌՉՄԱՑՆԵՆ ԴՐՕՏԱԿՆԵՐ ԸՆՊԱՆՎՈՒՅԻՆ

Ուղիղ վաթսուց տարիներ առաջ, բարձր բարբառոսներու ձեռամբ նահատակուած հայ մեծ ժողովուրդի մէկուկէս միլիոն նահատակներուն կարմիր յիշատակը. յիշատակն է ա՛յն բոլոր գերուած ժողովուրդներուն, որոնք մերժեցին զիրենք գերող բռնաւորները, յիշատակն է այն բոլո՛ր ազատասեւշ ժողովուրդներուն, որոնք մերժեցին կապաններն ու գաղութաբարութիւնը եւ իբրեւ զին իրենց արիւնը վնարեցին:

Եթէ հայ ժողովուրդը այս դարու առաջին տասնամակներուն դիմակալեց ցեղամուրթեմէ ծնունդ առած ցեղատարա-նութեան ամէնէն փտմանի արարները եւ ենթարկուեցաւ գալուստի ու բռնութեան ծայրագոյն գործողութիւններուն, բռնի արմատախլման եւ տեղահանման, որոնց հետեւանքով տիրուեցաւ աշխարհի չորս ծագերուն՝ հեռու իր հողէն եւ հայրենիքէն,

Այսուհանդերձ, այս ժողովուրդին հարցը չի կրնար անջատուիլ մեր հարցերէն... այո՛, անիկա մէկ է...

Հայ ժողովուրդը ցեղատարաբան ամէնէն փտմանի միջոցներով բնաջնջել փորձող նո՛յն այդ բարձրերը, ճի՛շդ նոյն ձեւով, օսմանեան սարսափազդու գաղութարարութեան երկար ժամանակաշրջանին գործադրուած գալուստներով, բռնութիւններով, սպանդներով եւ ջարդերով, փորձեցին այլանդակել լիբանանցի ժողովուրդն ու լիբանանեան հողը:

Եւ միշտ այսպէս. Իսրայէլ, բռնաբարելէ ետք Պաղեստինը եւ բռնագաղթի ճամբով տեղահանելէ եւ գանազան երկիրներու մէջ տարտղանել յետոյ պաղեստինցի ժողովուրդը, փորձեց եւ երեսուն տարիներէ ի վեր կը փորձէ բռնաբարել արարական հողերն ու Լիբանանը:

Պատմութիւնը որքա՞ն յար եւ նման է ինքզինքին:

Այսօր, երբ ցեղամու այս նոր պետութեան միջոցով կը կրկնէ ինքզինք,

կը ձեռնարկուի այն դիմագիծը, որ յար եւ նման է թուրքերու կողմէ հայ ժողովուրդին վրայ ի գործ դրուած ցեղամուլութեան՝ պատերազմի պարագային:

Սակայն ազատներուն արեւը աւելի զօրւար է,

Սակայն մեծ ժողովուրդներուն կամքը աւելի ամրակուտ է,

Սակայն այն կաթիլ մը արիւնը, որ ծորեցաւ հայ նահատակներէն՝ պիտի ծագի ազատներու երկինքին մէջ,

Սակայն բառը. որ լոնցուեցաւ թուրք ցեղամուլութեան կողմէ, պիտի բարձրանայ իւրաքանչիւր հայրենիքի մէջ, որ կը հաւատայ ազատութեան եւ ազատութեան ապետներուն:

Սակայն սլացիկ հասակները, որոնք փշուռեցան ննզուքեան սուրբուն կողմէ, իրենց մորասլաց բարձրացումով՝ պիտի լեցնեն աշխարհի բոլոր անտանները,

Եւ այժերը, որոնք մարեցան, պիտի բողբոջին աշխարհի անգաստաններուն մէջ:

Իր նահատակներուն համար իրանց հայուն արցունքը նաեւ արաբին արցունքն է,

Անիկա վիեթնամցիին արցունքն է,

Անիկա արցունքն է այն բոլոր անձերուն, որոնք կախազան հանուեցան ի խնդիր հայրենիքին եւ ազատութեան:

Անիկա արցունքն է պայքարի եւ պազային հաւատացող իւրաքանչիւր հաւատացեալի:

Արցունքներն են, որոնք պիտի վերածուին հուրերու եւ կապարի,

Արցունքներն են, որոնք պիտի կերտեն հայրենիքն ու հողը,

Արցունքներն են, որոնք պիտի բարձրացնեն դրօշակները ապագային:



ՓՈՒ ԵԱՌՈՒ.— Բանաստեղծ, Թատերագիր, Թարգմանիչ, ժառանգական լրագրող եւ ուսուցիչ: Ծնած է Պէյրուսի, 1945ին: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է ըննդամայր թաղաքին մէջ, եւ ուսարած՝ Լիբանանեան Համալսարանի արարական դրահանութեան ճիւղը ու վերջուած ուսուցչանոցի բաժանմունքէն: Հրատարակած է «Ով դուն» խորացած մահուան մէջ, մահուան մէջ թանաստեղծական հատորը:

Փոյ Եսաւլ լիբանանեան պատկերասփիւռին Համար պատրաստած է Փրանսական դրահանութեան թաղան երկու փիլեսեր՝ շինձորքը եւ «Խաւամանութիւնը»:

Այս տարի, բեմադրել Զուլաւ Նախի ներկայացուց Սոֆոկլեսի «Անթիլոնը» Թատերգութեան ներշնչուած անոր «Ըմբոստուսիկն» անուան գործը:

«Ալ-Կահար» եւ «Ալ-Խարթա» թերթերուն մէջ, Փոյ Եսաւլ Թարգմանարար ներկայացուցած է Փրանսացի ժամանակակից 40 բանաստեղծներ:

Փոյ Եսաւլ

أنتفضا العيب والهم ذرا خدينا .

ԵՃԶՔ ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՑԻՆՔ
ՎԵՂԸ, ԵՐԱՋԸ,
ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐԸ...

1967:

Չաղեստինի զէպքը ար- նաթաթախ է, եւ մարմնին վրայ կը ծնի վէրքը: Մա- նուկներ կը մեկնին զէպի Յորդանան, կ'ապրին ծնրն- դոցին մկրտութիւնը, յե- տոյ իրենց բազուկներուն վրայ կը գծեն մահուան զէմքը:

Մանուկներ էինք, կը գրօնէինք համայարանին մէջ ու կ'երազէինք: Եւ ար- նաչաղախ Յունիսի այդ շարթուան մէջ կանգ առաւ երազը: Մեկնեցաւ երազ մը եւ եկաւ կնոջ կերպարանքով այլ երազ մը, գոր կարելի չէ սիրել առանց մեռնելու: Եւ մենք ճանչցանք սէրը, մա- հը եւ երազը:

1967:

Տղամարդոց փոքր խումբ մըն էին, որոնք կը կրէին փառքը աւարտ-սկիզ- բին: Կը նայէինք իրենց զէմքերուն եւ չէինք դտներ գիմագիծը, կը յատնագոր- ծէինք սկզբնաւորութիւնը իրենց հետքերէն, որոնք կը դրոշմուէին հողին վրայ եւ չէին քննուեր: Յայտնա- գործեցինք մահը, եւ բմ- բրոնեցինք իմաստը բռնա- բարութեան, ա'յն բռնաբա- րութեան, որ սիրաղեղ ա- տելութեամբ մը կը պայթի:

Այսպէս, սկզբնաւորու- թիւնները զիրար հակասե- ցին: Ատելութիւն մը, ո- րուն արզանգին մէջ կը ծը- նի զեղեցկազոյն սէրը: Եւ սորվեցանք, թէ երազը փո- քր բաներու զումարն է, որ եռացող արեան բլուր- ներուն վրայ եւ ապառաջի հայրենիքին համար կը գծէ նոր քարտէս մը:

1967:

Մեր ձեռքերը երկարե- ցինք վէրքերուն: Եւ մեր մահուան մէջ յատնագործե- ցինք ուրիշներ'ւն այ մա- հերը: Թաւալչլոր ինկաւ ե- սը եւ մեր հայեացքները ուղղեցինք զէպի Ասիա, որ կը ծնէր դառնութեանց ար- գանդէն: Վիեթնամ: Խա- րոյկ մը, գոր տառապանքին մէջ գտանք: Եւ հեռու հե- ոաւորութեան վրայ, Լա- տին Ամերիկայի հողե- րուն կ'իյնար մարմինը Ձէ Կէվարայի, որուն շուրջ աղքատներու ձեռքերը հաց կը կրէին եւ չէին ձգեր, որ հացը իյնար դետին, բացի այն պարագայէն, երբ անի- կա երկրաշարժի վերած- ւէր:

1967:

Քայքայուեցաւ հին ե- րազը: Եւ մենք յայտնա-

զործեցինք մարդկային տառապանքին մանրամասնութիւնները: Եւ դարձանք մեր տուներուն շուրջ՝ դտնելու համար այն տառապանքը, որ տղամարդը կը կերտէ: Այդ օր մենք սորվեցանք ջարդերուն իմաստը:

Քաճար Քասէմ: Տէր Եասին: Եւ այլն...

Այդ ախուր ամսուան ընթացքին մենք յայտնագործեցինք եւ ըմբռնեցինք մեր մարդ եղբայրներուն տառապանքները:

Եւ ես ըմբռնեցի կոշիկներ շինող արհեստագործ իմ հայ դրացիս, որ կ'երգէ այն միշտերուն համար, որոնց կրակները կրնան մարիւ մի'միայն արդարութեան յոյսին վրայ:

1967:

Յայտնագործեցինք մենք զմեզ: Վէրջը կը յայտնագործէ վէրջը: Եւ ատիկա դէպի յոյս ընթացող երթին սկիզբն էր: Բազմացան տըղամարդիկը: Բազմացան վէրջերը, սակայն մենք յայտնագործեցինք սէրը, երազը եւ ուրիշները:



ԻԼԻԱՍ ԵՈՒՐԻ.— Վեպոլիբ, զննադատ, խմբագիր եւ հրատարակիչ: Ծնած է 1948ին, Պէրուի: Աւարտած է Լիբանանեան համալսարանի պատմագիտական երկր: Այս տարի Փարիզի համալսարանին մէջ պիտի պաշտպանէ ընկերային դիտութեանց տեթորայի էր թեզը: Լեռկայեա մաս կը հաղթէ «Մասուա՛նի» հանդէսի խմբագրութեան, միաժամանակ խմբագրելով «Պաղեստինեան հարցեր» ամսագրին գրական բաժինը:

Հրատարակած է «Փորձ» հարկաններու որոնման, «Պաղեստինեան մարդտնտարի եւ կորուստներու տախտակը», «Բուրբակից յարաբերութիւններուն շարք», Իսկ Տաթթ. Ահաան Ապպասի եւ Ֆարուք Էլ-Նազիդի հետ խմբագրած է «Գրագրութեան, մարդ եւ յիշատակի» վաստան Բանափոփո անուն հատորը:

— 51 —

ՃԵՍԱՐՏՈՒԹՅԱՆ *Փորձառութիւնք*


Հայկական ցեղասպանութիւնը, թէ՛ իր մարդկային յատկանիշներով եւ թէ՛ իր ֆազաֆական տարածքով՝ տիեզերական նշանակութիւն ունի: Վայրենացած աշխարհի մը մէջ, ուր վայրագութիւնը եւ սատիզմը մարդուն միակ յարակցութիւնները կը կազմեն, ուր անմահուր ձեռքեր չեն կըրնար ժայթֆեցնել յոյսի աղբիւրներ, ուր մարդիկ յանդըգնութիւնը ունին ճշմարտութիւնը պահանջելու առանց իրենք զիրենք ճշմարտացնելու, լաւ պիտի ըլլար — իբրեւ պաշտպանութեան գերագոյն միջոց — դիմել բարոյական դիմադրութեանը յատուկ ձեռք մը, որ վատերակամութիւնը կրեց մինչեւ ինքն իր ծայրը:

Բաւարար չեն ո՛չ մարդու իրաւանց յայտարարութիւնը եւ ոչ ալ անոր իրաւունքներուն պաշտպանութիւնը: Հայկական ցեղասպանութեան վաթսուներակը մեզ կը տանի մարդկային նոր կարգի մը հարցը յարուցանելու, — ճշմարտութեան փորձառութիւնը: Հակառակ եղեռնագործութիւններու եւ ազգամուլութեան, անիկա մեզի կը սորվեցնէ շյուսահատիլ մարդէն ա՛յնքան ատեն, որ կայ էակ մը, մէ՛կ էակ, որ սիրելի գիտէ:

ՆՈՒՀԱՏ ՍԱԼԱՄԷ՝— Բանաստեղծ եւ վիպագիր: Ծնած է Սալաս: Լեզուի՝ ֆրանսերէն: Սկսած է պատրաստել Լիսսնի իս Լէքր մը, բայց յետոյ հրաժարած է այդ աշխատանքէն, գրելու արարքը աւելի ժամ զգալով իրեն: Իր հրատարակած բանաստեղծական գործերն են՝ «Շուններու արձագանգը» եւ «Նամակներ՝ մուսայիտ»: Հրատարակած է նաեւ վէպ մը՝ «Ջրկիտալը», ծրարած է ինք:

No had Salameh

کامیابی کا عام الہامی اصول



ԿԱՅՈՒՅԵԱՆ ԵՆՆՁՆԻ ԳՆԱՆ

Իրաքանչիւր շարժում, որ կը ձգտի ցնցել աւել անկախ ժողովուրդի մը գոյակիմահը, ըստ այդ ժողովուրդին գաղափարաբանական ներքին անհրաժեշտութիւններում՝ օրինաւոր շարժում մըն է:

Եւ իրաքանչիւր շարժում, որ կը ձգտի ժողովուրդ մը ձուլել այլ ժողովուրդի մը մէջ, ըստ միակողմանի եւ յանպատրաստից գաղափարաբանութեան մը՝ անհիշող եւ գուր շարժում մըն է:

Մարդկային այս վարկածները քաղաքական քարգմանութեանց չեն կարօտիր, որովհետեւ մարդկայինին կօրիզը ըստ ինքեան գոյութիւն ունեցող անկախ էութիւն մըն է, համաձայն գոյութեան

պայմաններուն եւ գոյութեան շարունակականութիւնը որեւէ տրամաբանութեան հաշտոյն չի ժխտեր վերը ընդգծուած կօրիզը: Եւ, այս իսկ պատճառով, կ'ընդունին մարդկային գոյութեան շարունակականութիւնն ու կատարելագործման հղիւթը, եւ ասիկա ո'չ թէ իր ներառման ու ձուլման մէջ, որովհետեւ նման դիրքորոշումով մը մենք կը ժխտենք մե'ր իսկ գոյութեան իմաստն ու պայմանը:

Օսմանեան կայսրութեան վարքագիծը նման է ծաւալողապաշտ որեւէ կայսրութեան վարքագծին: Համաձայն ուսումնասիրուած քաղաքականութեան մը՝ անիկա առաջին հերթին մուսոլ գործեց

արաբական աշխարհէն ներս, ուր սկսաւ ծաւալողապաշտական քեֆնիք նախապատրաստութիւններու եւ, քիչ անց, ի յայտ եկաւ հայրենիքները քրեականացընելու ճգտող ներխուժման յտակ գործունէութեամբ, որ իր կարգին ժընաւնդ տուաւ սեւաւոր հետեւաններու, քաղաքականութեան թէ մարդկային մարգերէ ներս:

Արաբական աշխարհի հարցերէն ներս օսմանցիներուն միջամուխ ըլլալու պարագան, առաջին հերթին, կրօնի պահպանման անուին տակ տեղի ունեցաւ, երբ անոնք իրենք զիրենք հաշակեցին իսլամ կրօնի պաշտպանը: Ներխուժման առաջին շրջաններուն, կարգ մը արաբներու կողմէ որոշ գոտեւանութեամբ մը ընդունուեցան անոնք եւ Մարաքի իշխաններէն ոմանք իրենց ծովեզերքներուն պաշտպանութեան համար փոխ առին քրեական նաւատորմը: Այսպէսով, տակաւ առ տակաւ, օսմանեան կայսրութիւնը քափանցեց արաբական երկիրներու ներքին քաղաքականութեանէն ներս, մինչեւ որ օր մըն ալ ինքզինք հրաշակեց քաղաքական նակատագրին օրինաւոր ժառանգորդը եւ իր երկաթեայ լուծը պարտադրեց ուղիղ չար հարիւր տարի:

Այլ հորիզոններու վրայ, ինքզինք պարտադրուած գտաւ պաշտպանելու սահմանային ճեղքեր, Արեւելէն՝ Ռուսիոյ, իսկ Արեւմուտէն՝ Եւրոպայի դէմ: Եւ ասկէ առաջնորդուած գրաւեց ընդարձակ հողամասեր, որոնց կարգին՝ Յսանաստանն ու Հայաստանը: Գրաւման առաջին շրջանին, գրաւեալ այս երկիրնե-

րու ժողովուրդները օսմանեան կայսրութեան մէջ շէին սպասեր մեծ չարիք մը, այլ երբեմն կը փորձէին անոր մէջ տեսնել դաշնակից գորաւոր պաշտպան մը, պայմանաւ, որ ան չտարտղներ իրենց քաղաքական անկախութիւնը եւ առանձնայատուկ գոյութիւնն ու ազգային ազին:

Սակայն, կայսրութեան յենարաններուն ամրացումը եւ կոստանդնուպոլսոյ սուլթաններուն երազը կը գլէր-կ'անցնէր իրեն հետ պաշտպանութեան դաշինքներ կնքած դաշնակից տէրութիւններուն շահերը, իբր հետեւանք սուլթանութեան վայրագ ուժին, որուն յաջորդեց ձուլման ու քրեացման քաղաքականութիւնը, ինչպէս, օրինակի համար, Փրանսական գաղթատիրութիւնը, որ իր լշխանութեան տակ գտնուող ժողովուրդներու ազգային դրոշմը թնջելու համար գործադրեց փրանսականացման քաղաքականութիւնը:

Պիտի չչարունակենք պատմութեան ժապաւէնին ցուցադրութիւնը կատարել եւ ոչ ալ պատմականացնել գաղթատիրութեան հանրածանօթ քաղաքականութիւնը, այլ պիտի բարարուինք մատնանշելով քրեականացման ողորդական կողմը, որ նախ՝ Սասնոյ մէջ առաջնորդեց 300 հազար հայերու հաւաքական սպանդին, որուն յաջորդեց միլիոնէ աւելի հայերու բնաջնջումը՝ Համաշխարհային Առաջին պատերազմի օրերուն:

Ծաւալապաշտ պետութիւններու խեղկատակութիւնը՝ անկախ գործունէութեամբ իր եւր կերտող մարդը մեկուսացնելու խեղկատակութիւնն է, մարդուն

ներքին հարստահարումն ու մեկնայացումը, համաձայն ծառայապաշտական իր պայմաններում եւ ոչ թէ մարդուն պայմաններում ու շահերում: Միակողմանի բոլոր հարստահարութեանց շարունակութիւնը կ'առաջնորդէ ծառայապաշտ հաստատութեան դերին շարունակականութեան եւ սարկացնող իր գազափարարանութեան ուժեղացում:

Եւ հայ ժողովուրդի գոյութեան ու անոր ազատութեան պաշտպանման ի խնդիր ծնունդ առած հայ կուսակցութիւններու հրաւերներուն մէջ կար «Նորին վեմութիւն» ստանձան կայսրութեան ուղղուած յեղափոխական սպառնալիքը, որուն իբր արդիւնք, մարդուն ի խնդիր բափ ստացող բոլոր շարժումներուն նման՝ հայ կուսակցութիւններու շարժումն ու անոնց արդար ու օրինաւոր հրաւերը դիմաւորուեցաւ հայաժամանով ու ջարդով:

Ջարդերը, գորս կաստանդնուայիւսը կազմակերպեց հարեմներու բազմիւններուն մէջ սուլթաններու կողմէ գրուած յիմար ֆերմաններով. կը պարունակեին կայսրութեան սարսափը ազատութենէն, այսինքն՝ վախը մարդէն:

Կար երազ մը, որ կը շարունակէր գայթակղեցնել կայսրութիւնը...

Եւ կար վիհ մը, որ կը շարունակէր բացուիլ ի՛ր իսկ երազին մէջ:



ՍԱԼԻՄ ՊԱՐԱԳԱՅ

Բանաստեղծ, Հրապարակողիչ եւ զննադատ: Ծնած է 1951ին, Մուրիոյ Գամբիլի բազաքը: Պատանի տարիքին վարած է սուրբիական ձևի Սաութայն օրաթերթին շաբաթական գրական-գեղարվեստական էջին սղնական խմբագրի պատմող: Երկու տարիներ է Վեր, լիբանանեան ՁԱ-Հատուտ շաբաթաթերթի գրական բաժնի սղնական խմբագիրն է: Աշխատակցած է սուրբական եւ լիբանանեան մամուլին:

Սալիմ Պարագայի Հրատարակած է բանաստեղծական երկու հատորներ՝ «Դուրմանիւր ներս մտնող բացագոնութիւններով պիտի սղնակ գիւ...», ձևապէս կը տարտղմնի Մովսիսաւանք:

Պարագայի կը նկատուի արարական արդի բանաստեղծութեան ամէնէն ինքնուրոյն եւ խոստովանալից ուժեղներէ մէկը:

Թարգմանուած է Փրանսերէնի եւ հայերէնի:



**ՍՄԱՐՏԱՆ ԷԼ ՄՏԱՈՒԱՐԻ
ՎԵՏ**

Շարժանկարի բեմագրիչ Հերրի Սարգիսեանի հետ, Ռ.բրաթ 11 Ապրիլին, «Բագին» խմբագրատունն ներկայացաւ նիհարակազմ եւ բարձրահասակ երիտասարդ մը: Սարգիսեան ներկայացնելով անձանօթը՝ րսաւ.

— Մանօթացէք, զամասկոտարնակ հայասէր բարեկամներէս մեթր Մարտն էլ Մտաուար, որ հեղինակն է արարերէն լեզուով գրուած «Մուտք հայ ազգի պատմութեան» Արտս անտիպ գործին:

Մանօթացանք:

Իր տուած տեղեկութիւնները.

— Մնած եմ Դամասկոս, 1936ին, մտաւորական ընտանիքի մը յարկին տակ: Հայրս արտօնատէրն ու խմբագրակետն էր «Ալ Րայ էլ Ալ» («Հանրային կարծիքը») օրաթերթին, որ 1913էն մինչեւ 1938, պարբերաբար լոյս տեսած է Պէյրութի, Դամասկոսի եւ Հալէպի մէջ: Աւարտած եմ Դամասկոսի իրաւաբանական համալսարանը, արժանանալով իւրաւարանութեան լիւսնսին եւ միջազգային օրէնսդիտութեան վկայականին: Պաշտօնավարած եմ սուրիական դատարանէն ներս, իբրեւ Սուէյտայի շրջանի ընդհանուր դատարանի օգնական, այսօրինքն՝ հարցաքննիչ դատարար: Յետոյ՝ անցած եմ Դամասկոս, ուր այժմ կը պաշտօնավարեմ պարենաւորման եւ ներքին վաճառականութեան նախարարութեանէն ներս, իբրեւ գործարդիւնաւորման ուսումնասիրութեանց կեդրոնի արեւօրէն:

Մեթր Մարտն էլ Մտաուար մինչ այդ պայուսակէն հանեց մեքենայի 365 մեծադիր էջերէ բաղկացած իր աշխատու-

թիւնը, ու սկսաւ բացատրութիւններ տալ անոր մասին:

— Մեզի համար հետաքրքրական պիտի ըլլար իմանալ ձեր այս գիրքին կենսագրութիւնը: Ի՞նչ շարժառիթներէ մղուած եւ ե՞րբ սկսաք գրել այս գործը:

— Ինչպէս գիտէք, իւրաքանչիւր անձ, որ բնթերցող է, տարբեր հարցեր շօշափող յօդուածներ կարդալով հանդերձ, իր ուշադրութիւնը ի վերջոյ կը կեդրոնացնէ զինք առաւելագոյն չափով հետաքրքրող նիւթի մը վրայ: Իմ հետաքրքրութիւններս առաւելաբար պատմական նիւթերու կը վերաբերին: Մասնաւորաբար հին ժողովուրդներու քաղաքակրթութեանց:

Հայերու մասին լայն ծանօթութիւն չունէի, հակառակ անոր, որ մանկութեան շրջանիս ունեցած եմ հայ բարեկամներ: Ընդհ երեք տարի առաջ, այցելութեան մը ընթացքին, երբ նորութեան մը հանդիպելու հետաքրքրութեամբ աչքէ կ'անցրէի բարեկամիս գրադարանը, ուշադրութիւնս գրաւեց հատոր մը, որ կը կրէր «Եջեր հայ ազգի պատմութեան» խորագիրը: Սկսայ թղթատել զայն եւ աւելի մեծ եղաւ զարմանքս, երբ կարդացի այդ հատորին գլուխներէն մէկուն խորագիրը՝ «Մարդկային պատմութեան ընթացքին գործուած մեծագոյն ցեղասպանութիւնը»:

— Այսօր, երբ աւարտած էք այս գործը, ի՞նչ կը մտածէք գործուած այդ ցեղասպանութեան մասին: Ձեր կարծիքով իրապէ՞ս մարդկային պատմութեան մեծագոյն ցեղասպանութիւնն է անիկա:

— Վստնդուող հարցում մը, բայց եւ այնպէս՝ պատասխանեմ: Հայկական

ցեղասպանութիւնը 20րդ դարու առաջին տասնամեակներուն գործադրուած մեծադոյն ցեղասպանութիւնն է, որուն յաջորդեցին նոյն տարողութեամբ եւ աւելի մեծ շափով ուրիշ ցեղասպանութիւններ: Հակառակ անոր, որ կ'ատեմ արարներու թշնամին՝ սիոնականութիւնը, այսուհանդերձ, յանուն ճշմարտութեան ըսեմ, որ մարդկային մեծադոյն ցեղասպանութիւնը գործադրուեցաւ Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին, երբ նացի Գերմանիան յղացաւ ջարդել միլիոնաւոր հրեաներ: Պէտք է աւելցնեմ սակայն, որ ցեղասպանութեան մէջ Հիթլերի ռասիցիները եղան թուրք ցեղասպանները: Կը յիշէք հարկաւ այն խոսքը, զոր Հիթլը արտասանեց, հրեաները ջարդելու նախօրեակին, 22 Օգոստոս 1939ին:—

«Իմ ՄԱՀՈՒՄՆ ՄԻԱՒՈՐՆԵՐՈՒՄ Երասանգ տուած եմ անխնայ եւ ամառադոյր ԲՆԱԶՆՁԵՆ Երեւանի ցեղին եւ լեզվին պատկանող այրերը, կիները եւ երեխաները: Միայն այսպիսով կրնանք տիրանալ այն կենսական տարածութեան, որուն պէտք ունինք: ՎԵՐՋԻՆ ՀԱՇՒՈՒՄ, ԱՅՍՕՐ Ո՛Վ ԿԸ ՅԻՇԵ ՀԱՅԵՐՈՒ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ»:

— Լաւ: Ըսիք, որ դիպուածով ձեր աշխարհայեցողութիւնը գրաւեց հայութեան մասին գրուած հատոր մը եւ դուք մտադրեցիք խմբագրել այս հատորը: Միայն ա՛յդ եղաւ ձեր աշխատանքին զլիստոր դրդապատճառը:

— Այ: Յիշեալ Հատորը փոխ առի բարեկամէս եւ սկսայ կարդալ: Դարձող էջերուն հետ զարմանքս սկսաւ հետզհետէ ծաւալիլ, երբ աչքիս առջև սկսաւ պարզուիլ այն իրողութիւնը, թէ հնագուրեան շրջաններուն իսկ Հայաստանի հողին վրայ ապրած են նախամարդու առաջին սերունդները: Ելջեր հայ ազգի պատմութեան Հատորին ընթերցումէն ետք, հայ ժողովուրդի պատմութեան ու քաղաքակրթութեան հանդէպ մէջս արթնցած Հետաքրքրութիւնն ու սերը սկսան տակնուվրայ ընել զիս: Որոշեցի ժամանակս նուիրել Հայկական քաղաքակրթու-

թիւնն ու մշակութիւնը պեղելու աշխատանքին: Սկսայ կարգել մատենագիտութիւնը արագերէն ու անպերէն լեզուով լոյս տեսած օղորներուն:

Հայոց պատմութեան եւ Հայկական Հարցին մէջ ծանօթութիւններս ընդարձակել եւ անոնց մէջ խորանայէ ետք, ինձի այնպէս թուեցաւ, որ Տոքթ. Աստարճեանի, Օսման էլ թիւրքի եւ Հոփու էլ Սայէտի հայոց պատմութեան նուիրած գործերը ամբողջական չեն: Այս տեսակէտս աւելի հիմնաւորուեցաւ մտաքիտ, երբ սկսայ կարդալ կարգ մը անգլերէն Հատորներ, ինչպէս Սիրարքի Տէր Ներսէսեանի «Հայերը», Տոքթ. Շաւարշ Թորիկեանի «Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը» եւ ուրիշ կարգ մը գործեր: Արագերէն լեզուով լոյս տեսած վերոյիշեալ երեք գործերուն մէջ կային ժամանակադրական թերիներ, ուսումներ, եւ մասնաւորաբար զիշ տեղ արուած էր հայկական ցեղասպանութեան ու Հայկական Հարցին: Որոշեցի խմբագրել Հատոր մը, որ ընթանայ առանց ուսումների եւ զոյգ նախընթաց գործերուն բացերը:

Ի վերջոյ ժողովուրդ մը, որ ունեցած է Մատոյց ու Եղնիկ, Դաւիթ Անյաղթ եւ Նարեկայի, տասը դար ետք Եւրոպայի մէջ երեցող զիտնականները կանխող Շիրակայի, ու Տրգաս ճարտարակետ, արժանի է ամէն յարգանքի եւ ուսումնասիրական աշխատանքներու: Արդէն Հատորիս նախաբանին մէջ ըսած եմ, որ գործս հայ ժողովուրդի պատմութեան նուիրուած չորրորդ Հատորն է, որուն պէտք է յաջորդեն տասնեակ մը ուրիշ երկեր, որոնք ուսումնասիրեն հայկական քաղաքակրթութեան եւ մշակութիւնի իւրաքանչիւր բնագաւառը, — ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը, փիլիսոփայութիւնը, գրականութիւնը, քաղաքական պատմութիւնը, եւ այլն, ինչպէս է պարագան արեւմտեան լեզուներով լոյս տեսած նման Հատորներուն:

— Պիտի ուզեիմ իմանալ, թէ ձեր հատորին խմբագրութեան համար Քանի՞ ազգիւր օգտագործած էք եւ ո՞ր լեզուներով:

— Եւրջ 45 ազգիւրներ: Երեսունը արարերէն լեզուով եւ տասնը՛հինգը՛ անգլերէն:

— Հայկական Հարցին յատկացուած բաժինը մարդկայի՞՞մ թէ՛ քաղաքական ակնոցով դիտած է՞ք:

— Առանց մէկուն՝ միւսը թերի է: Մեկնելով իմ դատախազի դաստիարակութենէս, փորձած եմ հարցին մօտենալ առարկայական անկիւնէն, առանց անտեսելու մարդկայինը: Ինչպէս դատարաններուն մէջ կ'որդեգրուի առարկայական ո՞՞ր, ես եւս քաղաքական ու պատմական ճշգրիտ փաստերու լոյսին տակ փորձած եմ հասնիլ մարդկայինին, որ քաղաքական եզրակացութիւն մըն է նաեւ, թէ՛ միջազգային օրէնքներու համաձայն, պէտք է թուրքերու կողմէ հատուցում ըլլայ Հայերուն եւ յարգուին մարդկային եւ հողային անոց իրաւունքները:

— Ձեր այս աշխատանքին ատեն, պետական արխիւները դիւրաբեփափ դրուեցա՞նք ձեր արամադրութեամ տակ:

— Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ իբր պետական ազգիւր կրցած եմ օգ-

տադործել անգլիական մամուլի այն ժողովածուները միայն, որոնք կ'ընդգրկեն 1875-1915 ժամանակաշրջանը:

— Ըստ ձեզի, հաւանական ի՞՞նչ ընդունելութիւն կրնայ գտնել ձեր հատորը արար ժողովուրդի խաւերէն ներս:

— Անկասկած որ այս անձանք աշխարհին ի տես արար ընթերցողը մեծ հետաքրքրութեամբ պիտի մխրճուի հայ ժողովուրդի եւ անոր քաղաքակրթութեան պատմութենէն ներս, ինչպէս եղաւ իմ պարագայիս: Այդ հետաքրքրութեան տուն տուող գլխաւոր շարժառիթներէն մէկն ալ կրնայ դարերու ընթացքին մշակուած հայեւարաբ յարաբերութիւնը ըլլալ: Եւ յետոյ՝ ոեւէ արար մարդու համար հետաքրքրական պիտի ըլլայ ծանօթանալ կէս դարէ ի վեր տրարական աշխարհին մէջ ապրող հայ ժողովուրդի պատմութեան: Եւ դեռ դարեր շարունակ օսմանեան նոյն բռնակալութեան տակ ապրած հայ եւ արաբ ժողովուրդին հառարակաց ճակատագիրը ինքնին նման գործեր ճանչնալու մղիչ ազդակներ չե՞ն արդեօք:

Ես լաւատես եմ:

Հարցադրայցը վարեց Մ. Կ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ ՎՐԱՅ

Ընթերցողը պիտի նկատէ հարկաւ, որ կանխող էջերուն մեր վէրքին ու գատին առնչութեամբ յօշուած ստորագրած արար մտաւորականներէն գրեթէ ամէնքն ալ կ'անդրադասան արար եւ հայ ժողովուրդին միջեւ զոյաութիւն ունեցող միացեալ այն պայքարին, որ մղուեցաւ միեւնոյն թշնամիին դէմ:

Թուրք բռնակալութեան տակ արիւնաքամ եղած մեր երկու ժողովուրդներէն իրենք, արարները, բարեբախտաբար զերծ մնացին հայութեան արուած վերջին հարուածէն, ու զերծ մնացին միայն ա'յն պատճառով, որ թուրքը ջանջախուած դուրս եկաւ Մեծ Պատերազմէն, այլապէս ցեղամուլ, սպգմամուլ, արնամուլ բնազդները անձնաւորող թրքութեան վերջին վոհմակը ցեղասպանութեան իր ծովածաւալ ծրագիրը պիտի գործադրէր նաեւ արարներուն վրայ, ու ասիկա ենթադրութիւնն է, պատմական փաստ է:

Իթիֆատի կեդրոնական կոմիտէի ազգացիկ անդամներէն Միլիան Զատէ Ռիֆաթ, իր «Օսմանեան յեղափոխութեան ծալքերը» անուն գիրքին մէջ, 1915ի ամառը տեղի ունեցած իթիֆատականներու մէկ ժողովին նը՝ շրջած էջերուն վրայ ամբողջութեամբ փոստ է նաեւ Տուրք Նազըմին խօսքը, ուր բարձրագոյն կրթութեան անցած այս բորենին ի միջի այլոց կը յայտնէ նաեւ թուրք ոգին ըստ էութեան բնորոշող հետեւեալ մտքերը.

«Եթէ 1909ին Ատանայի եւ այլ վայրերու մէջ մեր կատարել տաւածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կը կանխենք մեր մահաբազրոյն առաջադրած միւս ազգերը, արարները եւ քիւրտերը կ'արթնցնէ եւ վտանգը մէկի տեղ երեք կ'ըլլայ, կը մեծնայ եւ գործողութիւնը կը դժուարանայ»:

Ու քիչ մը անդին.

«Ինչ-քուրթ ազգերը պէտք է ջնջուին ո՛ր ազգութեան եւ կրօնին ալ պատկանած ոլլան ամուսն: Այս երկիրը պէտք է մտքով աշ-քուրթ սարքերէն կրօնէր իմ եով ոչ մէկ արժէք ունի. իմ կրօնէր թուրանն է»:

Տուրք Նազըմին մտազրութիւնը չափով մը իրագործեցին ձեւմալ փաշան եւ երկրորդական արիւնարբուններ: Յատկանշական է հետեւեալ երկախօսութիւնը, երկու թուրքերու միջեւ, գաղթականաց ընդհանուր տեսուչի փոխանորդ Ապտիւլահատ Նուրի պէլի եւ անոր իրեւ գլխաւոր քարտուղար պաշտօնի կոչուած Նաիմ պէլի միջեւ, Հալէպէ շուրջ կատարուած զանգուածային սնիքներուն մասին: Պօսողը Նաիմ պէլին է.

«Գայմագամը, գաղթականներու առաքման պաշտօնեաները, ամէն օր մահուան տեղեկագիրներ կը դրկէին: Մահը միայն հայերը չէր գարներ, բնիկ ժողովուրդն ալ կը կոտորուէր:

«Օր մը ըսի Ապտիւլահատ Նուրի պէլին.

«Պէշ էֆէնտի, գաղթականներու առաքումը քիչ մը մեղմացնենք, օրովիետու մահը բովանդակ Միջագետքին կը սպառնայ. այս ընթացքով՝ այդ ընդարձակ հողամասին վրայ դեւերէն գատ աչ ոք պիտի մնայ. Ռաս-իւլ Ալնի գայմագամը արագին հարցումներ կ'ընէ այս մասին:

«Նուրի պէլ խնդաց:

«Տգաս, — ըսաւ, — այս կերպով երկու վնասակար տարրեր միա՝ ժամանակ կը փնացնենք. հայերուն հետ սասկազները արարները չե՞ն. գե՞շ

բան մըն է եղածը: Այդպիսով քրքուրեան ապագայի նամբան կը հարթուի: «Լեռնի: Այս տհաւոր պատասխանը դողացուց զիս»:

Քնաջնջումի իրենց նպատակներուն համար՝ թուրքերը նաեւ խլամական պատերազմ յայտարարեցին, ըսյց յանուն խլամութեան չէր, որ զըրբուքին իրենց հորդաններուն ու խուժանին մոլեռանդութիւնը:

Թրքութիւնը, ցեղամոլութիւնը, Թուրանը:

Այդ էր իրենց դաւանանքին էութիւնը: «Իմ կրօնքս Թուրանն է»: Պատճառը այդ էր, որ «թրքութեան ապագայի ճամբուն» մէջ վտանգաւոր տարր կը համարէին նաեւ խլամ արարները:

Իսլամ կրօնի սպին եւ թուրք ուզին իրապէս իրարմէ տարբեր ուժեր են եւ յաճախ նիւթ դարձած են թուրքին եւ տարբեր ազգութիւններու պատկանող խլամներուն հետ մօտէն շփում ունեցած վերլուծող մտքերու:

Ահաւասիկ քանի մը հաստատումներ:

Յ. Օչական «Մնացորդացի» մէջ կ'ըսէ.

«Պէտք է անհրաժեշտ զանազանութիւնը շեշտել ընդմէջ իսլամին եւ թուրքին, որոնք երբեք նոյն բաները չեն»:

Գրեթէ նոյն ճշմարտութիւնը բնորոշ է «Թանձի խմբագրներէն սուրիացի քրիստոնեայ մտաւորական մը, ինչորայլա՛հ, դեռ 1918ին, յայտարարելով»:

«Հայերը պէտք չէ, որ թուրքերը շփոթեն իսլամներուն հետ եւ իսլամական կրօնէին վերագրեն թուրքիոյ բարբարոսութիւնները: Սուրիոյ մէջ իսլամ եւ քրիստոնեայ միատեղ կայստան ելան եւ Հինգրի թագաւոր շերիֆ Հիւսէյն իր յայտարարութիւններուն մէջ քանիցս դատաւարտած է հայկական կոտորածները»:

Այդ զանազանութիւնը ընող երբորդ վկայութիւն մը: 1915ին Անգլիոյ դահլիճին մէջ զինամթերքի նախարար, 1916ին՝ պատերազմական նախարար, նոյն տարին՝ վարչապետ Լոյս Չորճ կ'ըսէ.

«Մեմք մահմետականութեան դէմ չենք պայքարիր, այլ կը կռուինք թուրքին դէմ»:

Թուրքի՛ն դէժ, որ մահմետականը չէ, այլ թուրքն է, թուրանական ցեղամոլը»:

Թէ՛ մեր եւ թէ արար ժողովուրդները ծանօթ էին այս խոր ճշմարտութեան եւ ճի՛շդ այդ պատճառով միացուցին իրենց ուժերը միեւնոյն թշնամիին դէժ ու միշտ բարեկամ եղան ու մնացին իրարու:

Այս պատիկ նշմարը վերջացնենք 1965ին Եգիպտոսի բնակարանային նախարար Մուհամէտ Ապու Նուէի արտասանած մէկ խօսքով, որ գեղեցիկ է՝ բոլոր ճշմարտութիւններուն պէս, ու հրապուրիչ՝ արդար դատի մը համար հնչող կոչի մը չափ.—

«Թրքական բռնապետութիւնը արիւնը հոսեցուց ազատանմէ հայերուն, որոնք կը պայքարէին իրենց հայրենիքին ազատութեան համար, ինչպէս նաեւ արիւնը ազատանմէ արաբներուն: Ուրեմն, ազատութեան ճանապարհին վրայ հայերու եւ արաբներու արիւնը միասնաբար հոսեցաւ: Մեմք ձեռք բերինք մեր անկախութիւնը, ինչպէս դուք, այդ արիւնի նամբան հետեւելով, պիտի շարունակէ՛ք ձեր պայքարը լաւագոյն ապագայի մը ի խնդիր: Այդ նամապարհին հայ եւ արաբ ժողովուրդներու գործակցութիւնը միշտ կանգուն պիտի մնայ»:

ՈՐԱԿԱԿԱՆ ԲՈՒՄՆԵՐ

Մեծ եղեռնի Ցխանամեակը ո՛չ միայն վերափոխեց ռզեկոչական հանդիսութիւններուն ոգին ու առողջարար աւիւնով մը ողողեց արիւնփառաբանութիւնը, այլեւ մեր «մեծ ցաւին» կապակցութեամբ առիթ հանդիսացաւ հայրենի ժողովուրդին հարազատ ապրումներուն դրսեւորման:

Ծիծեռնակաբերդի յուշարձանը, նահատակներուն յիշատակը պետականօրէն նշելու պարագան, հարիւր հազարներու հասնող բազմութիւններուն լուռ տողանցքը, ինչպէս նաեւ «մեր հողեր»ուն ի նպաստ երիտասարդութեան բարձրադասակ պահանջները անկիւնադարձային եղելու փիւններ եղան հոն, ու պոտիկ անդրադարձ մը չունեցան հո՛ւ, ցեղասպանութեան դէմ մղուած պայքարն ու հատուցման պահանջները համագոյշին չափով մը ուժեղացրնելու մեր կարողին մէջ:

Երեսնական թուականներուն տարերային պոռթկումով մը թուղթին անցած Զարեհի «Մահուան տեսիլք»ներէն, «մեր քարերէն, մեր ձորերէն, մեր Մարութայ բարձր սարէն» վառ կարօտներ սփռող Բակուցի «Ծիրանի փող»էն եւ յուշագրական կարգ մը այլ մորմոհներէ ետք, ամբողջ երեսնամեակ մը մեր հայրենիքին մէջ մարդիկ կուգայ պահեցին վերապարծ վիրաւորներուն բերանը, մատախապատ՝ պատմաբաններուն աչքերը, շղթայակապ՝ գրողներուն ձեռքերը, եւ գոց՝ նոր ծնածներուն ուղեղները:

Այդպէս էր առաջ, քիչ անդին պատկերացուցած Սիլվա Կապուտիկեանի մտայնութիւնն էր տակաւին քիչ մը առաջ, այդպէս չէ հիմա, ու լա՛ւ է հիմա, աստիկն «յաղթանակը» լռելեայն ընդունող պարտադիր լուսիւնը համարեա՛ չֆացած է, մարդիկ հիմա կը յիշեն կոտորուած սիրելիները, հայրենիքին կորուսեալ եզերքները, վերափոխումը մեծ է, ու նըշաններէն մէկ ֆանին՝ յաջորդ էջերուն վերայ...

Ս. Կ Ա Պ Ո Ւ Տ Ի Կ Ե Ա Ն

ՃԱՌ՝ ԻԴ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՈՐԷԻՆ

Այս էտաքը, որ խօսուած է Հայաստանի Համայնագրը կուսակցութեան ԻԴ. համագումարի նախօրէին, Հայաստանի Քերթնուն կամ խորհրդային այլ երկիրներու ժամուրի մէջ երեւցած չէ: Ըստ խմբագրական նոթերու, Հայաստան այցելած հայ մը հետք չենք տեսնել անոր պատճենը, որ լոյս տեսաւ արտասահմանի Քերթնուն մէջ, 1906ի Յունիսին:

Այն արեւուն մեր ժողովուրդին կատարած յարգալիք ցոյցին եւ ըմբ հոգիքը, մեր հոգիքը ազադակող երեսասարգութեան ծանօթ պատմութեան պատկերացումն է տարողութիւնը, ու նաեւ ներկայացումը ոչ նուազ ծանօթ այն մտքաց, որոնց ճիւղնակաւ գրագումն է սեղադարձէն գրպարտագրեր հասցնել Մոսկուա եւ որքան կարելի է ծուռ հայելու մէջ ներկայացնել իրողութիւնը:

Մերելի է յուսու մեղի, որ զրպարտիներուն թիւը նուազագոյնի իջած է հիմա եւ ՎՄՍԿ-ուան եւ երբայրական ժողովուրդները այդպիսի մի պահս կը սկսին կիսել հայ ժողովուրդին զիշար եւ հանգամանորէն կը զբաղին նաեւ ըմբ ժողովուրդի ճակատագրի ծամար այնքան կարեւորութիւն անցնող այս հարցերով:

Հոս արուածը հաստատենք են, ու խորազերը՝ պարագայակուն:

Ինչպէս գիտէք, այս տարի համայն հայ ժողովուրդը նշեց Մեծ Եղեռնի՝ սուլթանական Թուրքիայի կողմից հայ ժողովուրդի վերաբերեալ գործադրած ժողովուրդասպանութեան Յիսնամեակը: Այս տարիլիցի արձագանգը լայնօրէն տարածուեց աշխարհում, շատ օտարերկրեայ պետութիւններ մամուլում եւ այլ հաւաքայիններում նշեցին այդ տարեթիւր, եղան պետութիւններ, որոնք Ապրիլի 24ին ազգային սուգի օր յայտարարեցին: Էլ չեմ խօսում սփիւտահայութեան սուգի եւ բողոքի բռնած ու բազմազան արտայայտութիւնների մասին:

Այս փոքի վրայ միանգամայն միշտ էր, բազմաթիւ տեսակետից հեռատես, որ Սովետական Միութեան Կոմպարտիզի նախագահութիւնը հատուցութիւն տրուեց Հայաստանի Կոմկուսի Կենտրոնի որոշմանը՝ պետականօրէն նշելու այդ Տիսնամեակը:

Սակայն, ցաւօք սրտի, այդ նշումը չընդունեց անհրաժեշտ խորութիւն ու լայնութիւն, որը եւ սեղիք տուեց 1965

թուի Ապրիլ 24ի յայտնի դէպքերին:

Մեզմեզում տիրապետող կարծիքից բացի, որի վրայ եւ յետոյ կանց կ'անունեմ, գոյութիւն ունեն այդ դէպքերը բալթովին տարրեր ժայրերից գնահատող երկու տարրեր կարծիքներ: Գնահատողների մի մասը աշխատում է փոքրացնել դրա նշանակութիւնը, համարել սոսկ մի բանի ջանքի-ջիւղների խաղ, երիտասարդութեան օյնեքազութիւն: Միւս մասն էլ աշխատում է այդ դէպքերին տալ ամենամեծ զուգահեռում, համարել հակապետական ցայց, մացիոնալիստական, հակառուսական տրամադրութիւնների արտայայտութիւն, Սովետական Միութիւնից անջատուելու կոչ, եւայլն:

Վերջին կարծիքի կողմնակիցները, թուով շատ քիչ, բայց ակտիւ տարրեր են, որոնց հիմնական գրադուռնքն է անգադարձէն գրպարտագրեր հասցնել Մոսկուա եւ որքան կարելի է ծուռ հայելու մէջ ներկայացնել իրողութիւնը: Գրծբախտաբար, պատահում են պատասխանատու անձինք, որոնք ոչ միայն ընթացք

են տալիս այդ գրադարձագրերին, այլև ելնելով դրանցից, ինչպէս եւ այս կամ այն ինքնուրուշտարի (տեղեկատու) սխալ տեղեկութիւններից, ճիշդ պատկերացում չեն կազմում Հայաստանի եւ նրա ժողովրդի մասին:

Այսպիսի սխալ պատկերացման արդիւնք է այս Դեկտեմբեր 9-11ը, Մասկո-ւայում կայացած ստեղծագործական երիտասարդութեան հետ տարուող աշխատանքներին նուիրուած խորհրդակցութեան ժամանակ ՀԼԿԵՄ՝ (Համայնական Երիտասարդաց) Կենտրոնի բարտուղար ընկ. Կամշալովի յատարարութիւնը, թէ իբր Ապրիլիան դէպքերը Հայաստանում գոյութիւն ունեցող նացիոնալիստական տրամադրութիւնների դրսեւորում են, որի ընթացքում եղել են Ռուսաստանից անջատուելու կոչեր, հակառակտեսական ելույթներ, եւայլն, եւայլն, եւայլն:

Ինչ խօսք, որ ընկ. Կամշալովը, որպէս Մովետական Միութեան երիտասարդութեան ղեկավարներից մէկը, պէտք է անդրադառնար Հայաստանում տեղի ունեցած դէպքերին: Ես այն կարծիքի եմ, որ տեղի ունեցածը ակնի՛ աչազրութեան է արժանի, քան կարծում են որոշ ընկերներ: Սակայն այդ աչազրութիւնը պէտք է ընթանայ ոչ թէ ամէն ֆայափոխին նացիոնալիստ ձեւակերպելու, դէպքերի ակտիւ (գործօն) մասնակիցներին կամ մանիստական Երիտասարդութեան Միութիւնից (Կոմերիս) հեռացնելու եւ այս կամ այն ասպարէզում հսկողութիւնն աւելի ուժեղացնելու ուղղութեամբ, այլ դէպքերի պատճառների մէջ խորանալու, այդ պատճառները բնուելու եւ ճշմարիտ եզրայնագումներին հասնելու ուղղութեամբ:

Միամտութիւն կը լինի մտածել, որ Ապրիլ 24ի ցերեկը Երեւանի փողոցները ողողող մօտ հարիւր հազարի հասնող բազմութեան հայրենասիրական բուռն զգացմունքները եւ այդ օրուան նախորդող եւ յաջորդող (օրերին) մեր ժողովրդի բոլոր հոգեվիճակը արդիւնք է մշտաւարականների՝ գրողների, հրագրաբանների, դասախօսների «չափից դուրս բուռն, կրքեր բորբոքող» աշխատանքի, արդիւնք են այս կամ այն գեղարուեստական ուսեղծագործութեան, բատերակամ ներկայացման եւ կամ սուամնասիրութեան հրապարակ գալուստ:

Մենք մարտիրոսներ ենք եւ գիտենք, որ կացութիւնն է որոշում գիտակցութիւնը. ոչ մի իտէալ, գաղափար գումարածների սրտում արմատ չի գցի, եթէ դրա համար չկայ համապատասխան հող, այդ իտէալները ծնող ու սնող իրավիճակ:

Սոցիալիզմի պայմաններում համարեա՛ր բոլոր ազգերն էլ, ե՛ւ նա, որ հարիւր միլիոնից ակնի է, ե՛ւ նա, որի թիւը 100 հազարի էլ չի հասնում, միեւնո՛յն ներշնչու՛մով. լցուած են իրենց ազգային գոյութիւնը, լեզուն եւ մշակոյթը պահելու եւ զարգացնելու վճռականութեամբ, որ հազիւ 200 հազարի հասնող աւար ժողովրդի տաղանդաւոր բանաստեղծ, լեհիկեան մրցանակի լաուրեատ (պսակաւոր) Ռասուլ Գոմգարով հաւատաւ վստահութիւն է ստանում գրելու հետեւեալ տողերը.

*Եթէ ես իմանամ, որ վագր իմ լեզուն չի շինելու,
Կը դերաստեմ այսօր կենք մենեւելու:*

Եթէ այդպիսի զարթօնք են ապրում մեր բոլոր ազգերը, եթէ վերոյիշեալ ձեւով է գրուած եւ մտածուած միայն Հակոբեանների յեղափոխութիւնից յետոյ այբուքեն ստացած ժողովրդի բանաստեղծը, ապա ի՛նչպէս կարող է, որ այդ զարթօնքն ազին չհամակի մօտ երեք հազար տարւայ նանապարհ անցած, 1600 տարուայ իր այբուքենը ունեցող մի ժողովրդի, ինչպիսին է հայ ժողովուրդը, որը սոցիալիստական կարգերի շնորհիւ ապրելով իր վերածնունդը՝ դեռ շատ անլիքներ ունի աշխարհում:

Այնպէս որ, իմ կարծիքով, ազգային ինքնագիտակցութեան վերածնունդը հայ իրականութեան մէջ ո՛չ թէ մտաւարականութեան կողմից հրահրուած մի տրամադրութիւն է, այլ, ունենալով հանդերձ իր՝ միայն ի՛ր ժողովրդի նախադրով պայմանաւորուած քառանկայատուկ դրդապատճառները, ընդհանուր մի երեւոյթ է, բնորոշող՝ սոցիա-

լիստական ազգերի զարգացման ներկայ աստիճանի համար :

Սակայն մեր երկրում ազգերի այս ծաղկումը չի հասնում մի ազգի տիրապետութիւնը միւսի վրայ հաստատելու ճգնտան, այլ, ընդհակառակը, գնում է տարբեր ժողովուրդների տնտեսական եւ մշակութային մերձեցման ուղղութեամբ, սեփական գոյնով՝ ազգերի համերաշխ ծրարմանի մէջ ներդաշնակութեամբ հիւսւելու նշանաբանով :

Կարելի է ժամերով պատմել մերձեցման այն եզանակներն ու փաստերի մասին, որ գոյութիւն ունի սոցիալիստական ազգերի միջեւ. բայց եւ կ'ազդէի աւելցնել, որ մերձեցում ասելով՝ չպէտք է հասկանալ միայն իրարու հագուստը հագնել, իրարու մօտ հիւր գնալ ու խմել մէկը միւսի պերցովիան ու կոնեակը, փոխադարձ սիրալիրութեամբ մրցել ռուսական «Լաստուշկան» կամ հայկական «Միծեռնակ»ը, թէեւ սրանք էլ նոր եւ գեղեցիկ տրադիցիաներ (աւանդութիւն) են :

Մերձեցում, դա նշանակում է բարձր փոփոխումներ ունենալ տարբեր սոցիալիստական ազգերի միջեւ, փոխներքափանցում՝ իրար վշտերի եւ ուրախութիւնների մէջ, փոխադարձ յարգանք՝ մէկը միւսի պատմական նախնիների նկատմամբ, ինչպէս եւ պատրաստակամութիւն՝ օգնելու իրար, որպէսզի յաճախ այդ նախնիների համար նշանակութիւն ունեցող կրօնաւորութիւնները :

Սրանք նոր փոխարարութիւններ են ազգերի պատմութեան մէջ, որոնք կարող էին կեանքի կոչուել միայն սովետական կարգերի օրօք, երբ պոլիտարական ինտերնացիոնալիզմի (միջազգայնականութիւն) գաղափարները պայմաններ են ստեղծում բարեկամօրէն հարթելու ազգերի մէջ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները :

Հենց այս թկտակ ունէր նշանաւոր յեղափոխական, մեծ ինտերնացիոնալիստ Օրբանիկիճէն, երբ 1920 թուի Նոյ. 30ին, Բագուի Սովետի նիստում, պատանեկան իւնիցիւններով յարգանքով հարգալից փոխական Կոմիտէի (Յեղկոմ) նախագահ

Նարինան Նարինանովի հրատարակած Ատրեջանի Յեղկոմի ղեկավարացիան (յայտարարութիւն)՝ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջեւանը նորատեղծ Սովետական Հայաստանին միացրուելու մասին, ասում է .

«Մասնավորապէս եւ հայերը այլեւս դառնում են հարազատ եղբայրներ՝ սովետական իշխանութեան կարմիր դրոշմերի ներքոյ : Այստեղ կարգադրւած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է, որը մարդկութեան պատմութեան մէջ իր օրինակը չունի» :

Ան ազգերի փոփոխումներն այսպիսի բարձր իտելիցիոնով է սկսել իր գործողութիւնը սովետական իշխանութիւնը, այդ իտելիցիոնի իրականացումն են հետապնդել յեղափոխութեան նուիրեալ գործիչներ, իտելիցիոն, որոնք շատ բանով իրականութիւն են դարձել մեր կեանքում. բայց որոշ տեսակետից, չըզիտեմ ո՛ւմ եւ ի՛նչ պատճառներով, մընացել են թղթի վրայ... Այնպէս ինչպէ՞ս թագաւորի այն անարժանագ Վերաբերմունքը, որ ունեցան մեր կեանքում կան իշխանութիւնները հայ ժողովրդի մեծ վշտի՝ Յեղկոմի ճիւղաճիւղի նկատմամբ :

Հայ ժողովուրդը իրաւացիօրէն ըստ պատմութեան էր, որ սոցիալիզմի երկիրը իր ազգու ճայնը կը բարձրացնէր դատապարտելու թուրքական գաղութարարների կազմակերպած, պատմութեան մէջ մինչ այդ ամենամաշտաբային (ամենածաւուն), ամենապայանաւորուած, մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը հետապնդող գեներալը (ցեղասպանութիւնը), մի՛շտ այնպէս, ինչպէս նա այդ արեց Համաշխարհային Բ. պատերազմի 20ամեայ տարելիցին, երբ խօսքը վերաբերում էր գերմանական ֆաշիզմին եւ նրա ցեղասպան ռեյնլանդին :

Սակայն մեր սպասելիքները չիրականացան, բացի Հայաստանում կազմակերպուած կիսա-պաշտ միջոցառումներից եւ «Պրակտիկայում» տպագրուած 3-4 տողից, միութեանական ո՛չ մի թերթ, ոչ մի կազմակերպութիւն չարժանանցեց 50-ամեայ տարելիցին, չբաժանեց հայ ժողո-

վլրդի վիշտն ու վրդովմունքը :

Ընդհակառակը, հենց այդ ամիսներին սկսուեցին բարեկամութեան եռանդուն բանակցութիւններ Թուրքիայի հետ՝ անտեսելով ո՛չ միայն կենտրոնական օրգանները եւ «Պրուգա»յի խմբագրութեանը ռազդուած ի՛նչպէս անհատների, այնպէս էլ ներկայացուցիչների կողմից (հաւաքական) նամակները, այլեւ Թուրքիայից այնքան տառապանք կրած մի քոչ ժողովրդի հոգեվիճակը :

Մենք հասկանում ենք, որ, բացի առանձին ազգերի առանձին շահերից, կայ սովետական ընդհանուր շահ, մեծ քաղաքականութիւնը : Բայց գենցիդի դատաւարտութիւնը, փոքրաքիւ ազգի արժանապատուութիւնը յարգելը նո՛յնպէս մտնում է մեծ քաղաքականութեան մէջ :

Ընկ. կամշալովը, ինչպէս եւ Քրաման մտածողները, քչ բէ պէտք է անմիշդ, մակերեսային յայտարարութիւններ անէին Աքրիլեան դէպքերի առթիւ, այլ փորձէին խորանալ դրանց մէջ, քափանցել կեղեից ներս ու նոր միայն եզրակացութիւններ անել :

Իսկ խորանալու դէպքում կը հասկանային, որ այդ օրը փողոց եղած բազմութեան հոգիներում փոքորկում էին հազար ու մի զգացումներ եւ վիշտ՝ միլիոն ու կէս նահատակների համար, եւ գայրոյթ՝ թուրքական ցեղասպանների հանդէպ, եւ բողոք՝ հայկական հողերը բռնագրաւողների եւ նրանց միջազգային հովանաւորողների հանդէպ, եւ վիրաւորանք, որ Մոսկուան եւ Եդրալրական ժո-

ղովուրդները այդպիսի մի պահ չեն կիսում հայ ժողովրդի վիշտն ու խռովքը, եւ ցաւ, որ հայրենի ժողովրդի կէտը բընաւեր թափառում է աշխարհի չորս ծայրերում, եւ տարակուսանք, որ Սովետական Միութիւնում գտնուող հայերի 44 առ հարիւրը բնակւում է Սովետական Հայաստանի սահմաններից դուրս, մեծ մասամբ՝ այդ սահմաններին կայած հողերում, եւ մոսկուաութիւն, որ Հայաստանի ներկայ նեղուածք տարածութեան վրայ անհնար է տեղաւորել հայրենաբաղձ հայերի մի փոքրիկ մասն անգամ :

Ու նաեւ, ու նամանաւանդ այդ հոգիներում կար յայդ ու ակնկալութիւն, որ սովետական իշխանութիւնը, որ հայրենիք եւ վերածննդի հնարաւորութիւն բերեց հայ ժողովրդին, աւելի սրացաւ ու հանգամանօրէն կը գրագուր նաեւ մեր ժողովրդի նակատագրի համար այնքան կարեւորութիւն ունեցող այս հարցերով :

Ելնելով այս ամէնից մեր կուսակցութեան կենտրոնական օրգանները պէտք է աւելի հանգամանօրէն գրագուսն ազգային հարցերով եւ լուծում սպասող հարցերին տան արդարացի ընթացք եւ լուծում՝ լինինեան ազգային քաղաքականութեանը, սովետական օրէնքներին եւ սահմանադրութեան համապատասխան :

Դա մեծապէս կ'օգնի ազգերի հետագայ ծագկմանն ու մերձեցմանը, ժողովուրդների բարեկամութեան առաւել ամրապնդմանը :

Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Պ. Ս Ե Ի Ա Կ

ԵՌԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ

... Աշխարհում ամբողջ
մարդն զբազուած էր մարդասպանութեամբ,
իսկ որանք՝ նաեւ... ազգասպանութեամբ՝
աչքերի առջեւ բոլոր ազգերի,
եւ մե՞ծ ազգերի, յաղթող ազգերի,
այս լեռնակզու ազգովին խաչուող
քնակիչներէից բարեկամ կոչուող
ազգերի ստուած աչքերի առաջ:

Ա՛խ այս գերագին-գերբազափակիրք բարեկամները,
որոնց սուտ ու փուտ բարեխօսութիւն-բարեբանումը
դարձաւ այն պագը,

որ անմահացրեց յայտնի Յուդային,
իսկ հանրայայտնի մի ազգ... մահացրեց՝
հագեցվարքի մէջ նա՛ր հասկացնելով,
թէ ով աշխարհիս այս ջոջերին է հաւատ ընծայում
միամտաբար եւ ասպետօրէն՝ Դոն-Կիխոտի պէս,
նա վերջ ի վերջոյ մեծախօսում է... Համլետի նման՝
չկարենալով խլացնել մէկ այլ մեծախօսութիւն.
«Հայոց հարց չկայ, քանզի... հայ չկայ»...

Սակայն հայ դեռ կա՛ր
եւ հայեր կային:

Կար ախարեալի մի քայլ էրերուն,
կար սովագարի աչք անմարդկային,
եւ անապատ կար՝
տա՛ջ

իբրեւ ապտակ:

Կար սող էւ քօհիչի համաճարակի,
բայց եւ կար կամփի մի կենտ արագիլ,
որ փլատակուող երկինքներէ տակ
ու մշտաբոբբոք անշէչ կրակի
շէկ շեղջի վրայ կանգնած էր արդէն
ո՛չ թէ մէկ ռսփով,
այլ երկու ռսփով...

Կար եռամտանեայ մի խաչակնէում
եւ եռամտանեայ մի մեծ նպատակ,
որ պիտի սրամբ դեռ կատարէին:

Նախ՝

կատարեցին միակ կա՛րէկն.
թրի-սրի դէմ,
երի դէմ, ջրի,

Իրանօթի դէմ ու զնդացըրի,
 Երէկուայ նման ու վաղուայ նման
 մարտնչում էին ակառ-ատամով,
 կուռւմ կրունկով,
 քաթով ու ծունկով՝
 վանում, Ռերփայում, Մուսայի վրայ,
 Գարահիսարի կիսաներ քերդում...
 ... անխուսափ մահուան կարմիր սգերթում, —
 անյայտ-անուանի սրբագա՛ն խենքեր,
 որ մահուան շնչից չտատանուցին
 եւ... դրօշակով չպատանուցին,
 այլ լոկ հեռուահաս ու բազմադարեան
 իրենց ծփացող ծիրանի արեամբ...

Եւ կատարեցին *կիսակարեւն*.
 անի՛-մահի դէմ,
 հովի-սովի դէմ,
 արնահասի դէմ
 ու բարբարոսի՝
 ջուրն էին նետում իրենք քէ՛ իրենց,
 քէ՛ իրենց որդոց,
 քոյն տալիս իրենց սիրասուն կանանց
 եւ աղջիկներին,
 սպանում մօրը,
 սպանում հօրը
 եւ... խելագարում,
 եւ խելագարում, —
 արդէն կրկնակի՛ սրբագան խենքեր,
 որ զօրեղ էին, ո՛չ. ամենագօ՛ր՝
 այլեւքս անյաղթ ու անպարտելի,
 այլեւքս յաղթած ռախիմ, Աստծուն...
 Կատարում էին եւ... *անկարեւն*:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ



Փ. ԱՆՔԵԱՆ.— Մնած է 1926ին, Երևան: 1951ին աւարտած է Երևանի գեղարուեստ-ժամանակակից քանդակարար:

1955ին սկսեալ, Հասարական ու անհատական ցուցանիշներով Հրապարակ եկած է արտասահմանեան գտնազան երկրներու մէջ, ինչպէս՝ Թրանսա, Միացեալ Նահանգներ, Չինաստան, Հիւսիսային Աֆրիկէ, Մեքսիքա, Օստրալիա, Քիւբա, Պուերտո Րիքո, Լենինկրատ, Մոսկուա, Վարշաւա, Եւրոպա:

Ստեղծագործական կեանքին զուգընթաց՝ Խանջեան կատարած է շարք մը գիրքերու ձեւաւորման ու նկարազարդման աշխատանքներ:



ՊՐԻՊՈՐ ԱՆՔԵԱՆ

Հայաստանի երիտասարդ նկարիչներու տաղանդաւոր հոյ- լին մէջ Պրիպոր Անքեան Հասանաբար այն քիչերէն է, որ առաւելագոյն չափով մը ճանաչում գտաւ նաեւ արտասահմանի բազմաթիւներուն մօտ: Այդ ճանաչումը ընդարձակուեցաւ ու արժատացաւ մասնաւոր ողբացեալ Պարոյր Սեւակի «Անլոնլի գանգա- կատուն» պսեմին երկրորդ տպագրութիւնը նկարազարդած օրե- րուն (1964) եւ անկէ ետք:

Արուեստի գործեր կան, որոնց լեզուն, նրբերանգային, հըն- չերանգային յատկանիշները կամ առանձնի մասերուն ետին թաք- նուած խորհորհորհուրդ իմաստները կը խուսափին պարզ ընթեր- ցողին, ունկնդիրին, դիտողին հասկացողութենէն, այսուհան- դերձ, չես գիտեր ներքին ի՞նչ զօրութեամբ անոնք կ'առնեն դի- մացիներ իրենց մթնոլորտին մէջ եւ կը վարակեն հոգին ապրումի սեփական որակով մը:

Պրիպոր Անքեանի կտաւները, մասնաւոր մեր ժողովուր- դին մէկ պահը բռնող ու պատմող կտորները այդ ձգողութեամբ յազդեցած գործեր են, օժտուած նկարչական արուեստէն ոչինչ հասկցո՛ւղն անգամ վարակելու ուժականութեամբ:

Անցեալ տարի, Հայաստանի մէջ, մեր նկարիչներուն հա- լաքական ցուցահանդէսին Խանջեան ներկայացուց «Եւ այս բո- յոյրը մեր ժամանակներում» անունին տակ շարք մը նոր նկարներ, որոնք, ինչպէս կ'ըսէ «Սովետական Հայաստան»ի խմբագրական նոթը՝ «Քսաներորդ դարի այն մարդկանց խոսերն ու ընդվզում- ներն են արտայայտում, որոնք պայտարում են իրենց ազգային անկախութեան, ազատութեան ու արժանապատուութեան հա- մար»:

Ի այց ասիկէ առաջ՝ իր կոմիտա՛սը: Կա՞յ արդեօք այսքան փոքր տարածութեան մը վրայ մեր ողբերգութիւնն ու ողբերգութեան ենթարկուած ամէնէն խորհրդ- վանչական անհատականութիւններէն մէկը, Կոմիտասը, նման ամբողջականութեամբ մը շնչաւորած ուրիշ գործ մը, ինչպէս է Պարոյր Սեւակի «Անլոնլի գանգակատուն»ին մէջ լեզու ելած Խան- ջեանի այս անլոնլի կտաւը, համագումար ու համագրաւ այս գե- ղեցկութիւնը: Խանջեանի «Կոմիտաս»ը, այս հրաշակե՛րտը...

ԱՊՐՈՒՄ, ԾԱՂԿՈՒՄ Է
ՈՒ ԿԱՅ

Եղել է ե՛լ գոհ, ե՛լ վկայ
Ամէնից ահաւո՛ր ջարդին,
Բայց ապրո՛ւմ, ծաղկո՛ւմ է ու կա՛յ
Մեր հայոց հինաւուրց բարդին:

Հոգմեր են բախուել ու անցել,
Շանթեր են բախուել իր բախտին,
Ու դարձեալ բա՛րձր է մնացել
Մեր հայոց հինաւուրց բարդին:

Արեւը դարձրել է նա զարդ,
Վահան է դարձրել իր փառքին
Սէզ հասակն աշխարհին պարգաժ,
Մեր հայոց հինաւուրց բարդին:

Դարձել է արթուն ժամապահ՝
Նա ինքն իր վայելուչ բարքին,
Իր նորոգ ցիւղերով հպարտ,
Մեր հայոց հինաւուրց բարդին:

Զմրուխտեայ վարսե՛րն է փռել
Երկնքի ծաղկաւոր բարձին,
Ոտքերը հողի մէջ խրե՛լ
Մեր հայոց հինաւուրց բարդին:

Եղել է ե՛լ գոհ, ե՛լ վկայ
Ամէնից ահաւո՛ր ջարդին,
Բայց ապրո՛ւմ, ծաղկո՛ւմ է ու կա՛յ
Մեր հայոց հինաւուրց բարդին:

ՀԱՄՕ ՄԱՀԵԱՆ

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

«Բագին»ի ներկայ թիւի այս բաժնին մէջ անկարելի է էջի մը վրայ չլիջել հայրենիքի ու համայն հայութեան պարծանքներէն աստղագէտ Վիքթոր Համբարձումեանը: Եւ այս անգամ, ի հարկէ, հա՛յ մարդու իր արժանիքներուն, շահագրգռութիւններուն ու ապրումներուն համար եւ ոչ թէ գիտնականի իր մեծագործութիւններէն ու մեծատարած փառքէն շլացած: Սոսկական գիտնականը գիտնական մըն է ու յարգելի անշուշտ, բայց ոչ անպայման ոգեկան ժառանգութիւններու խորհրդանշան անձ մը, ինչ որ պարագան է իր ցեղային շաղխին հաւատարիմ ու հարապատ ժողովուրդին բախտով հըպարտ կամ տագնապահար այս գերընտիր հայուն, որ աստղերու գաղտնիքները պեղելու համար հպա՛րտ համարձակութեամբ մը վեր բարձրացուց գուլթը ու խոնարհաբար խոնարհեց գլուխը մետրոպատառ բաց գիրքի մը վրայ, բաց վերջի մը առջեւ, բացուող տաղանդի մը դիմաց:

Հայրենի մտաւորականութիւնը, մեկնելով անշուշտ այդ արժանիքներէն, Ծիծեռնակաբերդի վրայ բարձրացած յուշարձանի բացման հանդիսութեան, իր մտածումներուն ու ապրումներուն համար՝ վի՛նջը պիտի նշանակէր թարգման, եւ ինք, մեր վիշտն ու հպարտութիւնը միաձուլած՝ պիտի ըսէր.

«Այսօր բացուող կոթողը միեւնոյն ժամանակ խորհրդանշում է հայ ժողովըրդի վերածնունդը եւ նրա բազմաթիւ յաղթանակները: Ազատուելով պատմական մեծ արհաւիրքների վտանգից, Հայաստանի ժողովուրդը այսօր ապացուցում է իր գոյութեան խոր իմաստը»:

«Հայրենիքի ձայն»ի 1988ի թիւերէն մէկուն մէջ լոյս ընծայած Սիլվա Կապուտիկեանի մէկ յօդուածէն՝ փոխ առնելով՝ անգամ մը պատմած ենք Համբարձումեանի անձին այդ գիծը ցայտեցնող քնորոշ դրուագ մը, զոր չենք կրնար չվերանայտմել հոս, ի միջիթարութիւն բիւր ապրողներուն ու նախատակ բիրտց:

Համբարձումեանի աստղագէտներու



միջազգային միութեան նախագահ ընտրուած ատեն, Սթամպուլի աստղագիտարանի գերմանացի գիտնականը ծերութեան հետեւանցով կը ձգէ իր պաշտօնը ու կը վերադառնայ Գերմանիա: Թուրքերը, սնճրկած, կը դիմեն Համբարձումեանը նախագահ ընտրած այդ ժողովին եւ կը խնդրեն, որ աստղագէտ մը տրամագրուի իրենց, գերմանացիին ձգած թափուր աթոռին համար:

«Համբարձումեանը, — կը շարունակէ Կապուտիկեան, — իրեն յատուկ հանդարտ, համեստ թոնով պատասխանում է՝ թէ ինքը սկզբունքով դէմ չէ. թող Սթամպուլի այդ խնդրարկուները գրաւոր դիմեն Հայաստանի գիտութիւնների ակադեմիային եւ վերջինս իր գիտնականներից մէկին կ'ուղարկի Սթամպուլի աստղագիտարանին օգնելու համար»:

Ա՛յս է: Ու քի՛չ է ասիկա:

Ջարդարար ցեղին, երեսուն միլիոնէ աւելի համրանքին մէջ՝ գիտնականներու կով, ու շարդերէն վերապրող երեք միլիոնին մէջ՝ գիտնականներու առատութիւն:

Ու աշխարհի երեսին մէկ հատիկ հայ չձգելու մոլորցրով Մեծ Եղեռնը գործադրող ճիւղային խուժանին դէմ ի՛նքը՝ Համբարձումեանը, խորհրդանշական յաղթանակներէն մէկը մեր ժողովուրդին, աստղեր վերծանողներու տիեզերական համաստեղութեան «ամենավառ» աստղը:

ՀԱՆԳՍՏԻ ՎԱՂՈՐԴԱՅՆ

Ու ալ չեմ գիտեր՝ ո՞ւր տարին
Արի՞նք մարմինս, անիրաւօրէն չթուած...

ՍԻԱՄԱՆԹՕ

Եւ երբ գնացին, հայ հաննարի հունձնով լեցուն,
Յորենաբարձ սայլի նման
Խարտեաշ հասկեր թողնելով փուշ ու մոշենուն,
Շարունակեց նամբան դէպի Չանկըրը, մահ՝
Լսուեց իսկոյն
Թուրք սպայի թուրք չքմեղանքը հերթական.
— Ձեր հանգստի համար, տիա՛րք
Մեզ տրուած է խիստ հրաման՝
Իրաքանչիւր երկու հոգու բաշխել մի կառք...

Տասը հոգի էին նրանք:
Հինգ երկանիւ կառքեր լծուած, հինգ կառուպան,
Որոնք, պատրաստ՝
Իրենց ձեռքում սանձ ու մտրակ,
Գուցէ օրեր պահել էին նրանց ճամբան:
Տասը հոգի էին նրանք, տասը պատրանք,
Որ գնացից այդ պարզուկայ այգաբացին
Վար դրուեցին:

Շրջակայքում ո՛չ կայարան, ո՛չ ծառ, ո՛չ ծեղ:
Միայն ռելսերն էին հեռու կենդանութեան
Յոյս ու աղերս,
Միայն մրստ ռելսերը նեղ,
Որ ամայքում գնդակահար,
Երեսն ի վար ընկած մարդու թեւերի պէս
Ձգում էին դէպի առաջ, դէպի ոչի՛նչ:

Տասը հոգի էին նրանք:
Շուրջը՝ որպէս ուրազ խփուող պայտ ու խրիւիճը,
Շուրջը՝ զինուոր, սպայ, սաստեր,
Շուրջն՝ արտորանք
Եւ յօրանջի պէս դանդաղկոտ մի լուսադէմ:

Քամիների դէմ վաղորդեան
Կանգնել էին տերեւների չոր կծկումով:

Իւրաքանչիւրն սպասում էր ամէն վայրկեան,
 Որ մէկն ասի մի բառ, մեծ տան պէս ապահով:
 Բայց մի անուր ճերշնչանքից յետոյ կարծես
 Տոգնել, թմրել էին բոլորը արտակարգ,
 Ահա ինչու անկարելի թուաց այնպէս
 Թուրք սպայի ձայնը անգող,
 — Խնդրե՛մ, տիա՛րք...

— Սկի՛զը երկանց, — ասաց մէկէն Սիամանթոն,
 Երբ առաջին անիւն արեց ծիրն առաջին:
 Սակայն նրա մօտ կծկրտող
 Հին մտերիւմ Միմասեանը՝ իրաւաբան,
 Ձլտեց իսկ կարծես նրան,
 Թէեւ ինքն էլ շշնջում էր այդ նոյն պահին
 Նոյնանշան բառեր՝
 — Մանէ, թեկեղ, փաբես...(*):

Տասը հոգի էին միայն:
 Եւ հինգ կառքեր՝ միահաղոյն
 Տեղափոխուող գորասիւնի ահագնութեամբ
 Դղըրդացին այդ վայրերի ֆնկտա հողում:

Ճոհնչ, ճայթիւն ճիպտների,
 Անիւների պաղ յեցերից կայծեր խոնսու,
 Հայտուչ, անէծփ: Կառապանի աչքեր վայրի:
 Սաստեր՝ ֆշի՛ր:
 Յունց, լուսփիւն: Սաստ՝ ֆառարշա՛ւ...
 Եւ աշխարհին անյայտ մի դաւ
 Մի անծանօթ, դերբուկ գաշտում
 Անսաստ, ազատ արշաւում է դէպի ահեղ
 Մի յայտնութիւն:

Մերթ համրնթաց ձիեր ու կառք:
 Կա՛ռք՝ Չարդարեան: Յետոյ իսկոյն կա՛ռք՝ Բարսեղեան:
 Հագիւ ուղղուած մի կարն նայուածք,
 Եւ հեռու են արգէն: Փռչի, ցուրտ ու ելեամ:

(Հատուած)

ԱՐՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ

(*) Հալուեց, կռնց, բաժանեց.— Աստի, որ զործածուած է իբրեւ դու-
 շակութիւն վերահաս անխուսափելի արգէն:

Վ. Մ Ն Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ա Ն

Ա Պ Ի Լ Ե Ա Ն Մ Տ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Մեզ, ինչպէս ամէն մի շինարար ժողովրդի, վայել է միայն ատելութիւնը ոճրապորժների նկատմամբ, եւ խոր ըզզացումն այն ճշմարտութեան, որ ոճիրը, ե՛րբ էլ այն կատարուած լինի ժողովրդի նկատմամբ, 1871 թուին, 1915-ին թէ 1943ին, Փարիզում, Տէր-Չօրում թէ Կիւտում, չի կարող հանուել արդար... թեան յիշողութիւնից:

Ձիշել Մեծ Եղեռնը, նշանակում է նախ, ինչ-որ շափով մեղմել հայ ժողովրդին երբեմնի սպառնացող Ֆիդէլիտեան ոչնչացման վտանգը: Հետեւապէս մեզ տրուած փրկութեան նշանակութիւնն աւելի խոր զգալու համար, անհրաժեշտ է պիտակցել նաեւ, թէ ինչից ենք փրկուել: Նրանք, ովքեր փորձում են 1915 թուականի Եղեռնը ներկայացնել որպէս սոսկ թուրքի եւ հայի խնդիր, նեղացնում են մեր ազգային վշտի հունը, այն տանելով դէպի զգացմունքների ծանծաղուտները: Այդ նեղացումը ձեռնառու է միայն մեր հակառակորդներին:

.....

Սուլթանական թուրքիան հին դաւթի է եւ նոյնքան հին բարբարոս: Բնաւ պատահական չէ, որ կայսերական Գերմանիան առաջինը օգնութեան ձեռք մեկնեց սուլթանիցին, քուէարկելով յօգուտ հայերի բնաջնջման: Դեռեւս 1913 թ. դերմանական պետական գործիչ Արթուր Յիմերմանը յայտարարել էր. «Ըստ էութեան հայերը պէտք չեն Գերմանիային: Հայաստանը՝ բնակեցւած հայերով միասակար է նրա շահե-

(Հատուած)

րին», իսկ Եղեռնի տարիներին Հոմանը (Վիլհելմ Բ. կայսրի ներկայացուցիչ թուրքիայում) պատճառաբանում էր, որ թուրքերն ու հայերը չեն կարող ապրել միասին: Հետեւապէս «Այդ ժողովրդները սեւե մէկը պէտք է ոչնչացնուի: Բայց քանի որ քաղաքները հանդիսանում են գերմանացիների քարեկամները, ապա պէտք է ոչնչանան հայերը»:

Ահա թէ ինչպիսի դասեր էր տալիս երբեմնի լուսաւոր Եւրոպան թուրք մարդասպաններին.

Հիմա լուսաւոր այդ նոյն Եւրոպան Առանց շիկեմեքի այնտեղ էր հասել, Որ ժառանգներին արնոտ սուլթանի, Դասեր էր տալիս՝

Եղեռնի դասեր,
Դասեր նախնիքի, բարբարոսութեան,
Իրեն պահելով... դերը լրբութեան:
(Պ. Սեւակ)

Չէ, անհնար է մոռանալ Հոմաններին, համիտներին եւ դոլիցիիններին, որոնք շատ էին ուղում, որ աշխարհում միայն մէկ հայ մնայ, այն էլ թանգարանային նմոյշի իրաւունքով: Չմոռանալով դրանց, նաեւ Հպարտանալ է պէտք, որ հայ ժողովուրդը ո՛չ միայն թանգարանային նմոյշ չզարձաւ, այլեւ այնպէս ապրեց ու հղօրացաւ, որ այսօր ունի յեղափոխութեան իր թանգարանը, որտեղ կարելի է տեսնել Վիլհելմ կայսրի, սուլթան Համիտի, Քայսարի եւ նրանց անփառունակ նախորդների ու յաջորդների բարոյական թշուառութեան ու ազգական պարտութեան նմոյշները: Այսպիսին է թուով քիչ, բայց ստեղծածով հայ մեծ ժողովրդի հատուցման ուղին:

Վ. Մ.

«Առկետական գրականութիւն» ամսագրի 1965 Ապրիլի համարէն արտադրուած դիմացի գրութիւնը մանրատառ 7 էջերէ բաղկացող յօդուածէ մը առնուած հատուած մըն է, որ ամբողջին ամէնէն անխառն մասը կը հանդիսանայ եւ ուշագրաւ է թէ՛ իր փոխանցած վիշտով եւ թէ՛ առթած զայրոյթով: Անոր խոցելի կողմը, ինչպէս արդէն նկատած պէտք է ըլլայ ընթերցողը՝ նոյնանման փաստերու անտեսումն է, հայաստանութիւնը քաջալերող ու արդարացնող մեղսակիցներուն ցանկին թերութիւնը:

Ճիշդ է, որ «Նայերի բնաֆիման» ծրագիրը իրագործեցին թուրքերը եւ ընդարարները քաջալերուեցան եւ ապա արդարացուեցան կայսերական Գերմանիան ներկայացնող պատասխանատու անձերու կողմէ, բայց ըստ վաւերացրեալ, հայաստանութեան գաղափարը միայն թուրքերու քաղաքական վարքագծին մաս չէր կաղմեր, անիկա փայփայտուած էր նաեւ ցարական Ռուսաստանի գաղափարախօսներուն կողմէ, ու գործադրութիւնը՝ արդարացուած համայնավար դէմքերու յայտարարութիւններով:

Վաղդէն Մնացականեանի դրութեան մէջ արդարորէն դատապարտուած գերմանացի պետական գործիչ Յիմերմանի, Վիլհելմ Բ. կայսեր, անոր ներկայացուցիչ Հուժանին, Գոլիցինին, Համիտին ու Թալաթին կողքին անպայման պէտք է յիշել Լիպանովը եւ թուրքովին մոտացութեան շտապատուութիւնը վերլուծող մտերուն առաջ քշած այն վարկածը, որ «Թուրքերու հայկական Բաղաճականութիւնը կը խոստանար Լիպանովի կորովի եւ անուստանայի սա ազազային մէջ — «ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ՝ ԱՌԱՆՅ ՀԱՅՈՒՆ»:

Նման առիթներու պէտք չէ վարդազուրիչ նաեւ այն ճշմարտութիւնը, որ՝
 Սուլթանն ու արքան
 Ձեռք ձեռքի տուին
 Միմուսյն թուին:

Վ. Մնացականեան չի յիշեր ցարական Ռուսաստանի հայկական քաղաքականութիւնը խոսացնող Լիպանովի երազը, պնդելով հանդերձ, որ «անհնար է մտնայ հուժաններին, համիտներին ու գոլիցիններին, որոնք շատ էին ուզում, որ աշխարհում միայն մէկ հայ մեայ, այն էլ քանգարաւնային իրաւունքով»:

Հուժանի ճանչցանք՝ վերը յիշուած իր շնական յայտարարութիւններուն լոյսին տակ, Համիտը արդէն յաւ կը ճանչնանք, իսկ թիչ մը տնորոշ ձգուած երրորդ շնականը Վիլհելմ Բ. կայսեր ներկայացուցիչ Հուժանի պէս բան մըն է, ցար Նիկոլայի ներկայացուցիչը, «ուխտեալ հայաստաց» Գոլիցինը՝

Համայն Կովկասի պատիժ փոխարքան՝
 Այդ մոլի ցինը:

Գոլիցինը նմանցուցինք թուրքերու հայաստանութիւնը արդարացնող կայսերական Գերմանիոյ ներկայացուցիչ Հուժանին, բայց Գոլիցինէն աւելի՛ Հուժանին կը նմանի համայնավար Ռուսաստանի ներկայացուցիչներէն մէկը, Թալիզը, Թիֆլիսի այն օրերու «Նոր աշխարհ» թերթի 8 Հոկտեմբեր 1922 թուակիր համարին մէջ լոյս տեսած իր հետեւեալ յատարարութեամբ.

«Իթքիհատը իր երկրին անկախութիւնը պահելու նպատակով արեց ինչ որ կարող էր անել: Նա վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը: Եւ կասկածից դուրս է, որ Պայտայ մէջ ստատած իթքիհատական ղեկավարները այս հարցի մէջ շարժուեցին տետական անհրաժեշտութեան գաղափարով: Թուրքիոյ համար հարցը շատ սուր էր դրուած — ապրել կամ մեռնել: Նրանք նախընտրեցին ապրել»:

Կրկենք: Թալիզն է այս յատարարութեան հեղինակը, եւ Թալիզը Լենինի առաքելներէն մէկն էր, եւ այս յատարարութիւնը կատարուած է 1922ին, Լենինի ողջուցը, այն Լենինի, որ (նրբամի մարդիկ ի՞նչ դիւրին կը գործածեն բառերը) «Ապրիլին պէտք է ծնուէր, որպէսզի թուր ժողովուրդներին փրկէր ապրիլեան եղեռներից»:

Հոս կանգ առնենք, որովհետեւ պատմութիւնը առ այդ վերստին ջրննելու պատեն հալիք մը չէ այս առիթը, ոչ ալ մեռելներուն ի յուշ կատարուած այս ծիսակատարութեան խորթութիւններ խառնելու ժամ:

ՎԼԱՏԻՄԻՐ ԵՆԳԻՊԱՐԵԱՆ

ԹՈՂԵՐԱԸ

Գնաց յարակից

Հիմա որչորս ու շրջանակ կազմած էինք սրբազանին և Ենգիպարեանին շուրջ, Ենգիպարեանի և Ենգիպարեանի շուրջ, որոնք մեծ բան մը չէին հասկերար անշուշտ խոսուածներէն, բայց հիացումով կը զիտէին իրենց վարպետը: Ենգիպարեան կը շարունակէր:

— Մասնակցել եմ 35 մրցումներ, բայց դժբանք անմտանային Պերլինի հանդիպումն էր: Մինչև մահ, չեմ մտածայ այդ օրը: Իմ մրցարարը Քուրթայի արտիստն էր լինելու: Նորից փակեցի աչքերս մի պահ, և ասում էի մտովի. «Աստուած, դու ի՞նչ ամօքով չնգես ես անգամին: Թարգմանը կինք կարիւր տարի իրենց ասէի: Ինչ ի՞նչ շնորհք և ուժ տար, որ սրան տապալէի: Միջինաւոր կայ ժողովուրդ է պատմելի արտանք ձեռքից: Ես մէկ կտորի քիւրք ինչ չեմ ազուր սպանի, բայց կ'ազնայի սրան ցոյց տալ, թէ ինչ է կայի շատերը, եւ թէ ուզեմք մեմէ լի կարող եմ լինել... Ես անգամի՞ն յաղթեմ, և ոչ չէ վազն ինչ պարիս արտիստ լինելուս... Միայն թէ արան...»:

Կարծես դարձեալ Պերլինի խաղարկի վրայ էր: Դեռ ինչ մէկը բռնեց ինձ՝ կը հարուանէր միւս ակը, կրկնելով:

— Կիտում էի և ասում. «Այս աստիճանը Հայկ անապիտի եզուն. առ Արամի, Մեծ Տիգրանի, Արաշտի, Տրգասի, Վարդանի, Ռաքէմի և Լևոնի հայտնիք: Նրանք մարտակից էին ինձ, հաւատացէ՛ք: Կազմ մի զիջ երկար տեսից, բայց իմ զեռանակ հարուանք պահել էի ետքի, և երբանով թիւրքը զնայ յասակին:

— Այդ մէ՞կը որուն անունով էր, — հարցուց սրբազանը ծպտելով:

Ենգիպարեան զարժայած նայեցաւ անոր, և ինք ու սկսաւ ինչպէ՞ ըսելով:

— Բայ սրբազան, նման հարուան ո՞վ կարող է տալ... Ի հարկէ՛ և չէի: Դա... Մասունցի Դաւիթն էր, որ ինչից իմ հաշուին:

ԳՊԻՐ



ժողովուրդներու առօրեային մէջ ակունք տակի տեղ գտնուելը, գիտեմք, վերջին տարիներուն ակտի շատ գիտեմք, ձեռքի և ուժի արժանիներ շատեցող աստիճան են, մարգարայտներու և իրենցիկ վրայ արշաւող ու խոյանները, որոնք, սակայն, նոյն բազմաթիւներուն յիշողութեան մէջ աստիճան փայլեք ձգելու փոխարէն՝ աստիճան արագութեամբ մը կը խամրին ու կը վերանան:

Արագ փայլումներէ կտր յանկարծօրէն շիջելու այս եակատարէն էիջեր միայն կրցած են ազատուիլ և այդ էիջերուն մէջ կը գտնուի անպայման վարսուսական բուսականներու կախմարտի կայրենի արտիստ ինգիպարեանը, որ միայն ֆիզիական իր ուժին վստահելով թեմ չէր բարձրանար, այլ շահուելիք յաղթանակներուն համար կը հաւատար մտն ոգիկան ուժերու մասնակցութեամբ, կը գիտէր իր երակներուն մէջ վազող արիւնին պատմութեան կուտակած ուժերուն և ապա կու տար վճարակամ հարուանները:

«Իմի սիւնակին վրայ Ենգիպարեան իմ գաւաճած է իր ներշնչումներէն մէկուն գաւաճութեանը, զոր ասած ենք «Նայիրի» շարաքարտիքին (1960) մէջ Դաւիթ առողջարտութեամբ երեցած գրութեան:

Այդ աստիճան ծանօթանալէ կտր ընթերցողը Ենգիպարեանի տարած յաղթանակներուն քիւի՞ն կես ու քիւի՞ն ակտի պիտի յիշէ անոր քիւտար շարքէն, որուն ներշնչած գորութեամբ «Թուրքը զնայ յասակին»...

ՈՏԻՑ ԳԼՈՒԽ

Ձեռքերս հանդարտ սահում եմ առաջ
 Հսկումի կանգնած իմ աչքերի հետ .—
 Ի՞նչ հայեացք է սա .
 Մի որջակի անորոշութիւն
 Իմ բախտի, կեանքի, գոյութեան մասին :
 Մատներս դողով շօշափում եմ դեռ
 Թուրփիայում հանգչող գերեզմանները՝
 Ամբողջ մի երկիր, մի գերեզմանոց :
 Եւ ուր կայում եմ իմ ցարս ու գունատ մատները դողով,
 Ծո ցաւ եմ զգում
 Եւ ինձ քում է շօշափում եմ իմ մարմինը հիւանդ :
 Եւ ամէն ինչում եւ ամէնուրեք
 Դեռ կանչում եմ ինձ,
 Եւ ամէն ինչում եւ ամէնուրեք
 Ճանաչում եմ ինձ :
 Ճանաչում եմ ինձ աշխարհի ինչ-որ հեռու անկիւնում
 Յանկարծ գտնուած մի «Նարեկ»ի մէջ,
 Եւ գրքի գունատ քերթից ու կազմից եւ շնչում եմ դեռ
 Հայունհու իրծքի բուրմունքը տաքուկ .—
 Հայաստանից դուրս հայ կնոջ տարած
 Մի հին հայկական մի քայտփի մէջ,
 Չարեցի երգում,
 Որ մի հայ մանուկ նորոգել է իր
 Աշակերտական ձեռատետրի մէջ՝
 Հայոց գրքերի ծոմնուած տեսքով,
 Ջուարթնոցի մի խոյակում կայոյտ,
 Որ կնէնուած է իմ պատկերով քարէ,
 Եւ հայ հանճարի եօթնհազարամեայ իմաստուն խօսքով,
 Ճանաչում եմ ինձ
 Բոլոր եւ ցրի սրբութիւններում՝
 Նոր ու հնաւանդ,
 Ամէն տեղ եւ կամ :

(Հատուած)

ՌԱԶՄԻԿ ԳԱՒՈՅԵԱՆ

ԾԱՌԱՅԻՆ ԲԵՐԿՐԱՆՔ...

Հևազայ առգերը էական մասերն են եղևոնի Յիսնամեակին անդրադարձող «Սովետական գրականություն» ամսաթերթին մէջ երեւցած այն բաց նամակին, զոր Հայաստանի գրողներու միութեան վարչութիւնը ուղղած էր «Հայաստանի աշխատունորմներին, երիտասարդութեանը, շարժականներին»:

Ամէն մարդ գիտէ, որ սրտատուշ առիթով մը զրուած պայծառ հետանկարներով լի այդ նամակը խոր արձայանով դուրս ամէնուս սրտին, ու բռնորը, դըպրոցականէն մինչև աշակերտը, պարզ բանուորէն մինչև մեծանուն դիտանկանները վարակիչ յովտակութեամբ մը մանակցեցան ծառ տնկելու այդ անհաբընթաց ու վսեմ ծիսակատարութեան:

Ի՞նչ եղան արդեօք այդ ծառերը, ինչամուկեցա՞ն պէտք եղանքն պէս, մեծ-ցա՞ն, զգով ու բարբէջ սկոս՞ն դառնալ, այդ մէկուկէս միլիոն ծառե՞րը...

Ձեռք դիտեր, բայց վերաբին կ'ուզենք ուշադրութեան յանձնել ծառ տնկելու այդ կոչը, որ ամայնները շնչեցող Հայկական ոգիին յատարար նշաններէն մէկն է, որարշազարն բնազդին ցոլեցրին մէկը:



Հայ ժողովուրդը իր բազմադարեան պատմութեան ընթացքում իրեն վիճակուած բոլոր ողբերգութիւններին, բոլոր դժբախտութիւններին միշտ էլ պատասխանել է աշխարհաշէն գործերով:

Սիրելի բարեկամներ, եկէք այս եղբրական տարեկիցը եւս նշանաւորենք մի աշխարհաշէն գործով: Զոհուել են մօտ մէկուկէս միլիոն հայեր... Եկէք կանաչ պահենք այդ մէկուկէս միլիոնի յիշատակը եւ նրանցից իւրաքանչիւրի համար մէկական ծառ տնկենք մեր հայրենի հողի վրայ:

Մէկուկէս միլիոն ծառ...

Ի՞նչը կարող է աւելի թարմ ու դալար պահել նրանց յիշատակը, քան հայրենի հողի ու քարի մէջ իր արմատներով մխրճուած սաղարթախիտ, պովառուն ծառը, կեանքի, կանաչի, պտղաւորութեան այդ յանրաժական խորհրդրդանիշը:

Երբ բացուի գարունը, լինի Ապրիլ, այն ամիսը, որ 50 տարի առաջ Մեծ Եղեռն դարձաւ հայ ժողովրդի համար, եկէք ամէնուրեք, ուր հող կայ ու շուր դալար շիւեր տնկենք մեր պոհուած հայրերի ու մայրերի, քոյրերի ու եղբայրների յիշատակին: Եկէք Մեծ Եղեռնի պոհերի յիշատակին կանաչ պուրակներ, սաղարթախիտ անտառներ ստեղծենք ամէնուրեք՝ Սեւանի ափին, Շիրակի դաշտում, Զանգեզուրի բարձունքներում, Արագածի լանջերին, հայկական ողջ հողի վրայ... Եկէք խնամենք այդ ծառերը, որ աճեն, դալարեն, պով ու բարբէջ տան մեզ ու գալիք սերունդներին:

Մենք, Հայաստանի գրողներս, պարտաւորում ենք ձեզ հետ միասին ծառեր տնկել Մեծ Եղեռնի առաջին պոհերի՝ Վարուժանի ու Սիամանթոյի, Զօհրապի ու Սեւակի, հանճարեղ Կոմիտասի յիշատակին, դաժան կոտորածի պոհ դարձած բոլոր գրողների ու մտաւորականների յիշատակին:

Մէկական ծառ պոհուածների յիշատակին...

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԵՆԳԱՓՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Եթէ մէկուկէս միլիոն գոնորոն յիշատակին տնկուած մէկուկէս միլիոն ժառանգութեան ստանձնող անհիմ ստաց իրաւունքները չենք գիտեր, ստուգապէս գիտնմք սակայն, որ վերջին տասնամեակին հայրենի մտաւարակներէն արտին տասնապատիկ անգամ աւելի անցաւ ցեղասպանին մօտ շարունակուող պատմական ու մշակութային ցեղասպանութիւնները մերկացնելու նախաձեռնութիւնը:

Շատ են փաստերը, որոնց մէկ պերճախօս նմոյշը Ե. Ամիրեանի ստորագրած հետեւեալ գրութիւնն է:

Ներկայումս Թուրք քաղաքական գործիչները, պատմաբանները եւ բանասէրները ամէն ջանք գործադրում են՝ խօսքի եւ գրչի միջոցով ժխտելու եւ ուրանալու հայ ժողովրդի պատմական գոյութիւնը եւ նրա մշակոյթը: Նրանք ճշմունք են ապացուցել, որ ամենեւին էլ գոյութիւն չի ունեցել հայ ժողովուրդը, հայերը երբեւեցէ չեն ունեցել անկախ պետականութիւն, եղել են միայն հայ իշխանական տոհմեր, որոնք միշտ էլ վասալներ եւ հարկատուներ են եղել ուժեղ հարեւան կայսրութիւններին: Աղաւաղելով պատմական անշեքքերի փաստերը, նրանք յայտարարում են, որ Հայաստանը եղել է սոսկ աւխարհագրական մի անուն:

Պատմական իրականութեան եւ ճշմարտութեան դէմ մեղանշող գիտնականներին եւ նրանց համախոհներին հիմնական նպատակն է ցոյց տալ, որ աստանդական հայերը տեղաբնիկ չեն շատասան յորջորջուած» այդ երկրամասում, որ այնտեղ աւելի չին են իրենք՝ Թուրքերը:

Սակայն Թուրք պատմաբանները չեն սահմանափակուում միայն խեղաթիւրելով պատմական իրողութիւնները, նրանք ջանում են ժխտելու նաեւ հայ ժողովրդի դարաւոր մշակոյթը:

1967 թուականին լոյս տեսած «Թուրքիայի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր ժամանակները» 12 հատորանոց գրքի հեղինակ Թ. Ելըմազ Օզթունան, որը Թուրքերին վերագրում է 6000 տարւուայ գո-

յութիւն, առանց այլեւայլի յայտարարում է, թէ «Հայերը եղել են ամբողջապէս վայրենի ցեղեր, որոնք ամենեւին գօրկ են եղել բարձր մշակոյթից եւ բազմակրթութիւնից, եւ ինչպէս խոսանացային (խօսքը կերակրատեսակներէ մասին է. Խ. Ա.), նայնպէս եւ երաժշտութեան ու բանաստեղծութեան նըման իրենց ամենատարրական պահանջները լիովին փոխ են արել եւ իւրացրել քուրդական մշակոյթից» (Հատ. 12, էջ 193):

Հայոց պատմութեան եւ մշակոյթի նկատմամբ ցուցարկում այս եւ նման խաչկրութիւններն ու նենգափոխումները, որոնք, հասկանալի է, հիմնականում կատարում են քաղաքական նկատումներով, եթէ միայն սահմանափակուէին մի քանի մարդկանց երեւակայութեան մէջ, դուցէ մենք քմծիծաղով չըջնացէինք դրանք: Սակայն հարցն այն է, որ իրատ պատասխանատու այդ յայտարարութիւնները, վերջին տասնամեակների ընթացքում, Թուրքական գրականութեան եւ մամուլի մէջ յարածուն ծաւալ են դառնել եւ վատ են անդրադարձնում Թուրք Հասարակութեան պատմական պիտելիքների վրայ եւ այդպէս էլ փոխանցուում են յաջորդական սերունդներին:

«Թուրքական հանրագիտարանում, որը հրատարակուում է Թուրքիայի պատմական իրաւորութեան մինխարութեան կողմից, հանդիպում ենք ակնառու ա-

զաւարումների, որոնցից մի հատուած տալիս ենք ստորև .

«Հնարաւոր է ենթադրել, որ հին հայ եկեղեցական երաժշտութիւնը գարգացել է իրանեան (ասսանեան) ազդեցութեան տակ : Իսկ այսօրուայ հայկական երաժշտութիւնը ամբողջապէս որդեգրել է թուրքական երաժշտութեան տեխնիկան : Ինչպէս որ հայկական խառնոցին փոխարինել է թուրքական խառնոցը, նայնը եղել է նաև երաժշտութեան բնագաւառում . ինչպէս Մեքսայիւնեան որոշ գեղեր, ինչպէս էլ իւրացրել եւ կիրարկել են թուրքական երաժշտութեան ոճն ու սխառնը : Նրանց հիւնդեցական երաժշտութիւնը, դասական թուրք երաժշտութեան հետ զուգահեռաբար, փոփոխութիւններ է ենթարկրել, եւ նրանք օգտագործել են թուրքական ինտոնացիան, եղանակներն ու ունը : Հայերը, երաժշտութեան արուեստում, լիովին բաւարարուել են ունկրողութեամբ եւ ունկրողի տարվ միմիայն թուրք երաժշտութեան արուեստը : Որպէս իրենց ազգային երաժշտութիւնը երգել եւ նուագել են թուրքական ստեղծագործութիւններ : Դասական թուրք երաժշտութեան ասպարէզում, յատկապէս վերջին դարում, եղել են հայ ծագումով լաւ երգահաններ (Համբարձում, Քաղէտս . Բիւլեն Շէն, Աստիկ եւ որդիներ Պօղոս, Լեւոն Խանգեան) : Իսկ հայ ժողովրդական երաժշտութիւնը տուել է այնպիսի գործեր, որոնք կարծես թուրք երաժշտութեան մի նիւթի արգասիքը լինեն : Այս բնագաւառում ասելի խոյրն է եղել ադրբէջանական երաժշտութեան ազդեցութիւնը : Արդէն բոլորին ծանօթ է թուրք ժողովրդական գրականութեան ազդեցութիւնը հայ ժողովրդական գրականութեան վրայ : Ռուսաստանում ապրող հաշատրեանի նման հայ ծագումով ժամանակակից կոմպոզիտորներ բազմիցս օգտագործել են թուրքական ինտոնացիան, եղանակային ոճերը եւ բազմաձայն ու օրկեստրային ստեղծագործութիւններում մեծապէս օգտուել են թուրքական երաժշտութիւնից եւ ժողովրդական արուեստից» (1970 թ . հատ . 15, էջ 327-328) :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԻՄԱՐՈՒԹԻՒՆ

Հայ մարդուն ուղարութեան պէտք չէ վրայում ըլլայ այն հանգամանքը, որ իրենց գործագրած ազանդը արդարացնելու համար ու ապանդի օրերուն շարք մը ալպոմային տխմարութիւններ ու զէպերը գլխիվայր չըլլող գրաւոր նենգութիւններ հրատարակելէ ետք, թուրքերը հազուադէպօրէն բերան բացին կամ գրեցին մեր եւ իրենց փոխարարութիւններուն մասին :

Այդ ուղարութեամբ արտայայտուելու թրքական հոանդը թափ առաւ միայն Եղեռնի Յիւնաստեղծակէն հաք, ո՛րն չըլլանին, երբ մինք զուրու եկանք սգահանդէսներու եւ հողեհանգիստներու միջնորոտէն ու սկսանք առարկայական փաստերով, յուշարձաններով, բազմալիզու զիրքերով ու ցոյցերով հանուր աշխարհին ներկայացնել ցեղասպանը, յիշեցնելով նոյն ստան իրեն ցնդապահութեան զէմ միջազգային աստաններու մէջ ստեղծած պատժական օրէնքներուն յետագարծ ուժը :

Մակայն, մեր որդեգրած այս նոր ոճէն ահարկ՝ թուրքերը պէտք զգացին վերստին թըրքանալու, այս անգամ աարբեր մարդերու մէջ, կեղբորոտնալով պատմական ու մշակութային մարդերու վրայ, ու հետևողական նենգափոխութեամբ մը փորձ ըրին, կ'ընեն, ուրանալ իրենց բոնագրաւած սահմաններէն ներս թէ դուրս հայ հանճարին հրաշկերտները եւ գանդի վերադրել զբառքիթաւոր թըրուտներուն, իրենց :

Պերեմիտս է ժժրեական հանրագիտարանէն եւ Ամիրեանի մէջըրեան զօլի գրասանցանքը : Այստարճը իրենց խուճանին պէս տխմար կարծելու տխմարութեան նման մակարդակի մը կրնայ բարձրանալ միմիայն թրքական տխմարութիւնը :

Առաջ բոլորովին այսպէս չէին թուրքերը, ինչպէս ցոյց կու տայ զիմացի էջին վրայ հակադարար արտագրուած Համտուլաւ Մուպնի սէյն յօդուածը : Այսպէս եղան թուրք ոգիին վերջին ու ամբողջական դրսեւորումէն յետոյ, այսօրն՝ Մեծ Եղեռնէն ետք :

Մշակութային մարդերու մէջ այսպէս չէին նոյնիսկ Յիւնաստեղծակէն առաջ, ինչպէս ցոյց կու տայ այս անգամ թրքական զվարթանք թերթի 17 Փետրուար 1955ի համարին մէջ կատարած թուրք փրոֆեսէօր Ազտէս Նիմէթ Քուրթիի հետուեալ յայտարարութիւնը .

«Թուրք երաժշտութիւն անուով բան գոյութիւն չունի . ինչ որ սենիսէ հայկական երաժշտութիւն է :

Կարգացէ՛ք զիմացի գրութիւնը, եւ ապա՝ Ամիրեանի յօդուածէն յարող էջին վրայ արտագրուած երկրորդ հատուածին մէջ հետեւեցէ՛ք թուրքերուն շարունակական թրքութեան . . .

ԱՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ



Այս հայ հոգեւորականը տարիներու տննազան աշխատութեան իր պրպտող մտքին շնորհիւ հայ երգին եւ հայ երաժշտութեան նոր քնիչ տուած է: Անատոլոսի գաւակ Կոմիտաս Վարդապետ, հակառակ իր աստուածաբանական եւ համալսարանական կրթութեան, արեամարտիկով պերճանք, հոյսու թիւն եւ պաշտօն, նետուեցաւ դէպի հայ գիւղերը եւ հայ գեղջուկին հոգեկան մերշնչումներուն իրական արտայայտութիւնն եղող հայ երգը մէկիկ-մէկիկ դասաւորեց եւ տնոնց այնպիսի՝ կեցդանի շունչ եւ մերդաշնակութիւն տուաւ, որ այսօր հայ երգը հայ մշակոյթի ներկայացաւի գանձերէն մին կը հանդիտանայ:

Հայրենակիցներ՝, մենք՝ թուրքերս ալ անհիմք բարձրաստիճան իւլամներ, որոնցմէ շատերը մետրէ-սէներու մեղկ եւ ծոյլ կեանքին վարժուած ըլլալով՝ չեն ուզեր իրենց սահմանափակ կեանքէն դուրս նետուիլ: Այս վարդապետին պէս անոնք ալ կրնան իրենց ազգին օգտակար ըլլալ: Պրպտող միտք մը եթէ թուրք գիւղերը շրջագայի, ով գիտէ ժողովրդական երգերու ինչպիսի՝ թանկագին գանձերու պիտի հանդիպի, որոնք թուրք ցեղին գգայուն եւ խօթող մտքին արժէքը աւելի պիտի բարձրացնեն:

Ճշմարտութիւն է եւ մենք պարտաւոր ենք խոստովանիլ, որ հայ ազգը դարերէ ի վեր մեր մշակութային կեանքին մէջ իր յառաջապահի մասնաւոր տեղը ունեցած է: Թուրքիոյ ա՛ր կողմն ալ երթանք, Անատոլոսի ա՛ր անկիւնն ալ ըլլանք, հայ միտքը, հայ բուսեղծագործ ձեռքը «եռո՛ս եմ» կ'ըսէ:

ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊԷՆ ԳԵՅ

Պատմութիւնը նեղագիտող թուրքերուն հետեւողական թրջութեան զէմ ընդվզող եւ ճշմարտութիւնը գիտական տուեալներով վերահաստատելու նախանձանդորութեան մէջ, ի՞նչ բախտ, որ հ. Ամիրեան առանձին չէ, Հայաստանի Գրատութեան Ակադեմիային մէջ այսօր տեղիք թուրքագիտութեան ճիշդ մը, ուր հայրենի մեր պատմարաններէն բացձեռանդ խումբ մը հրաշալի գործ կը կատարէ՝ չիմուելով՝ շինյալստ հայկական, այնպէս էլ քուրճական սկզբնաղբիւրներէն մտայ:

Այդ բաժանմունքին վարէլ փրոֆեսոր Ծրանդ Սարգսեան, որուն առողջ արամբանութեան հետեւ մը հաղորդեցիք մեր ներկայ թիւին կանխող էջերուն (187), Երեւանի Վերականգնման ԲՈՒՄ 17 Յունուար 1989 թիւին մէջ լոյս ընծայած իր մէկ յօդուածով տուած է այնպիսի տեղեկութիւններ, որոնք՝ սուրի տեղ զրէլ չարժեքով կողպուածք ելած արարածներուն զէմ պահանջութեամբ կը լծցնեն ընթերցողին սիրտը:

Թուրքերուն հերթական նեղագիտութեան շատ յատկանշական մէկ երեւոյց պատկերացնող հ. Ամիրեանի յօդուածին շարունակութեան առընթեր՝ Փրոֆ. Երուանդ Սարգսեանէն ոտքին կ'արտադրեց հաստատած մը ըստ, որ նշույլս կը մերկայանէ թուրքերուն խեղաթիւրումներն ու խեղաթիւրումներուն տուն տուող թուրք մտայնութիւնը...

«Համակրելի արտաքինով ու մեղմաբարոյ այս բանաստեղծին» մէջ թաքնուած հաւանական գազանին մոնչիւններէն հեռու մնալու մտքով էր անպայման, որ Թորգոմ սրբազան եւ Հաւարջ վարդապետ նախամեծար համարած են Գայլ Վահաններու եւ Դաւիթ Պէկերու մոնչիւններով լի Վարուժանի քերթուածին վերջին մասը յապաւելով ներկայացնել բանաստեղծ կուսակալին:

Այդ յապաւումին առիթով վարուժանի խօսքը պարզ սրամտութիւն մը չէ, այլ ճշմարիտ բնորոշում մը: Արդարեւ, Սահմանադրութեան առիթով գրուած «Աւերակներու տիկիւնը» քերթուածին խընդրոյ առարկայ հատուածը ա՛յն հատուածն է, որ ոչ-ներքինի իր որակով, տղամարդկային զօրեղ «նշաններով» կը յատկանշուի եւ կրնայ, կրնա՛ր թուրք բանաստեղծին հոգեկան ամբողջ հարեմը տակնուվրայ ընել:

«Աւերակներու տիկիւնը» երեցած է «Յեզին սիրտը» հատորին մէջ ու «Յեզին սիրտը» հատորին ո՛չ առաջին (Պոլիվ)

եւ ոչ ալ երկրորդ (երուսաղէմ) տպագրութիւնը կարելի է այսօր գտնել հրապարակի վրայ: Իսկ Հայաստանի հրատարակութիւններով վարուժանին ծանօթ ընթերցողները գուր պիտի փնտռեն «Աւերակներու տիկինը» բանաստեղծին Հայաստանեան հրատարակութիւններուն մէջ . . .

Իրարու միացնելով բոլոր այս պատճառները՝ ստորեւ կ'արտագրենք Մեծմետ

Էմինին ներկայացուած քերթուածին յապատուած բաժինը, անգամ մը. եւս խոնարհելով վարուժանի յիշատակին առջեւ, որ մեծ բանաստեղծներուն յատուկ նախազգացումներու թելադրութեամբ կը ձեւակերպէր իր կամկածները, սաստկօրէն գատնապարտելով դարտուր փորձութիւնները մոռցած ու Սահմանադրութեան խոստումներէն արբշի՛ն Տիկինը, — Ուրաքա՛, Սալումէ՛:



— «Կեցցէ՛.— Ըսին այն ժամանակ հոն բազմած
Մարդերն ամէն ցեղերու,
Կեցցէ՛ Այրին գեղազանգուր՝
Որ ահա
Մէկ օրուան մէջ կը ձգէ բողբ սուգի
Եւ լաչակն իր մոխրահոտ,
Թող վառփորն իր վիհերէն
Անուանական բերէ մատնի մ'ադամանդ
Այս իրիկուան մէջ գուգելու համար գայն
Մեծ ազգին հետ օսմանեան.
Կեցցէ՛ մայրն այն սեւազգեստ,
Որ գիշերուան մէջ հերասներ կը քաղէ,
Առատուն կ'ըլլայ հարս,
Հարս կ'ըլլայ, հարս բոլորիս, հարս արբշիւ,
Որ ծովուն ինչ եւ խրախճանքի սեղանին
Վարդ կը նետէ ամէնուն,
Եւ առասիկ կ'համբուրէ
Իր գինիու բերանով
Մարդերն ամէն ցեղերու,
Կեցցէ՛.— Ըսին այն ժամանակ, բայց հեռուն,
Այս խրախճանքի ժխորումէն արթնցած
Գայլ վահաններն, Դաւիթ Պէկերն ընձառիւծ,
Հերոսներն հին՝ գաղափարին հիւօրեայ,
Գինովութիւնը տեսան
Օտարներու առջեւ պարոզ իրենց մօր.
Եւ սարսափած, մոլեգնադող, պատռեցին
Իրենց վրէժի պատանֆներն
Ու շարժելով շիրմախարերն իրենց յաղթ,
Սրտմտանքէ առջի անգամն ըլլալով
Արտասուեցին ու մութին մէջ կանչեցին
Գէպ՝ իրենց մօր.— «Ուրաքա՛, Սալումէ՛...»:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

«ՊՈՒՐՄԱ ՍԱՐԳԿԸ, ՇԱԼՎԱՐԸ, ԵԱԹԱՂԱՆԸ»

Սթոքհոլմի մէջ շատերը մեզ կը կարծեն պտրմա սարգը, շալվարը, եաթաղանը:

Բարեկամներս չեն քաշուիր ինձ յայտնելու, թէ զիս տարրեր կերպարանքով մը կ'երեւակային: Մա'նուանդ քնու շէն ուզեր հաստալ, թէ միայն մէկ կին ունիմ: Դժբախտաբար այս մասին ո'չ միայն Շուէտի, այլև ամբողջ Եւրոպայի կարծիքները սխալ են: Երբ դքսուհի Ստաֆիլդէի կրտսերովը տեղեկութիւններ կու տայի իրեն մեր մասնուոր սովորութիւններուն մասին, պահ մը տանտիրուհին սկանչիս մտնեալով, բուս:

—Ձեզմէ անկեղծօրէն կը խնդրեմ, որ աղ-լիկներուս ներկայութեան զհարմար րատը չիմէք, այդ րատը մեր մօտ անվարի իմաստ մը ունի:

...Օր մըն ալ, Սթոքհոլմի մէջ, այցելութեան զացեր էի նախակրթարանի մը: անօրէնուհին թուրք ըլլալու հասկնալով՝ արտակարգ և նուազբարութիւն մը ցոյց տուաւ, միտսին մտանք զասարան մը: աշակերտներուն դառնալով՝ քրն-նութիւն մը բնելու ձեռով, հարցուց:

— Ըսէք տեսնեմ, ի՞նչ ազգէ կը պատկանի այս անձը:

Տղաքը պատասխանեցին:

— Թուս:

— Ռ'չ:

— Յրանացի:

— Ռ'չ:

— Իտալացի:

— Ռ'չ:

Այս այս ձեռով մի առ մի հարցեցին այն բո-լոր անունները, զորս սորված էին աշխարհագրու-թեան մէջ:

Երբ անօրէնուհին յայտնեց, թէ թուրք էմ, սօջեւի կարգը նստող աղջնակը, խելացնոր շար-ժուսով մը, խոռվեցաւ:

— Ի՞նչ եղար, աղջիկ, — հարցուց անօրէ-նուհին:

Աղջնակը կէս լալազին երեւոյթ մը առնելով՝ ըսաւ:

— Մայրս ինծի ըսաւ, թէ թուրքերը մարդ կ'ուսեն:

Պոփկնակի մէջ, տանիմարացի ծեր հիւպա-տոս մը, որ մը, յարմար առիթի մը բերելով՝ հարցուց:

— ձի'դ է, որ թուրքերը հանոյք կը դպան մարդ մարթեկէ:

Քովի սիւնակին հիմարը, որ Պոլսոյ շարիգ-լալէն արտագրուելով երեցաւ նաեւ Գահիրէի «Յուսարիքի» 16 Հոկտեմբեր 1919ի թիւին մէջ, ստորագրութիւն մը չէ կրեր: Կն նկարագրուած յարաբերութիւններէն կը հասկցուի սակայն, որ պաշտօնական մարդ մըն է զայն դրողը, հաս-նարար դեպքան մը, Հիւպատոս մը, կամ և՛ մաս-րան մը:

Ինչպէս կ'երեւի, անձնօթ թուրքը սկեհ-բեւ հիզ մը կ'ընէ թուրքերու մասին Եւրոպայի մէջ տարածուած իբր թէ՛՝ անկաստ կարծիքները չերգելու, ասանց անդրադառնալու, որ ճիշդ հա-կառակ արդիւնքի մը առիտ կը դնէ ընթերցողը, մասնաւորաբար, երբ կը հրահրուի խօսել իրենց զմանաւոր սովորութիւններուն մասին, ի շարս որոնց, զորութեամբ կը հասկցուի, կատարած է նաեւ հարեմական զեզուն և յոյզումներ:

Ռ. շաքարաւ այդ չէ սակայն, մի'ան է, ի յուր թուրքին ցեղային պատկանելութեան աշակերտ աղջնակին հակադրեցութիւնը եւ մօրը Հաստա-տուժը, թէ՛՝ Երուսեմը մարդ կ'ուսենք:

Ո՛նչ է: Ըսուածը սո՛ւտ է, թուրքերը մարդ չե՛ն ուսեր, չկերան, որ Եւրոպայի մէջ տա-րածուած այդ կարծիքը չերգելու կը նկրտի այս խեղճուկրակ սուգերը խմբադրոյ ինդուսիական:

Պատկերին մէջ յոյժ հետաքրքրական են տա-նիմարացի ծերուկ Հիւպատոսին հարցումը եւ անանական իրենց և՛ մարտութիւնը ուրանալու թուրքին պարմանայի պարմանքն ու բոլոր լուս-թիւնը:

Տանիմարացի այդ ծերուկ Հիւպատոսը, որ աշքերը բացած էր պուլկարայիններուն դէմ թուր-քերուն սարքած սպանդին օրերուն, յիսուհին շուրջ կը դեզերէր 1895-96ի Սասնոյ շարժերուն ատեն, վաթսուներէն անց էր Աստանայի կոտորած-ներուն օրօք, եւ ծերութեան հասած էր քանկերոյդ զարու առաջին ցեղասպանութեան տարիներուն, պէտք է և՛ թաղուի, որ իր պիտանքը կ'ուզէր Եւր-պակի աղբիւրէն հաստատել եւ ոչ թէ վարկածա-յին հարցի մը մասին հարցում կ'ուզէր դեմա-ցելին:

Թուրքերու մեղքնելու հանոյքին մտսին վե-րոյշեալ ժամանակաշրջանին որոյ գրադանու-թիւն մը մշակուած էր արդէն, Երուսեմ ըլլամ, Ե-թէ առտ կը յօսուիք (Շէյքսպիր) եւ տանի-մարացի, ինչպէս եւ այլ հիւպատոսներուն ան-հանօթ չէր այդ հանդամարը: Ահաւասիկ երկու հմուշներ, որոնցմէ առաջինը. Տոմթոյնակի կազմած պատկերը ուղղակի'օրէն կը բացայայտէ մարդասպանութենէ հրճուող թուրք հողիին լո-վանդակ թրջութիւնը...

* *

— Ի միջի այլոց, մերջերս, Մոսկուայի մէջ, հանդիպեցայ պուլիտ-
բացիի մը, — շարունակեց Իվան, ըստ երևույթին շլտելով եղբորը խօսքերը,
որ պատմեց թուրքերուն եւ շերքէզներուն գործած ոճերները ամբողջ Պուլ-
կարիոյ մէջ, մահնալով սլուններու ընդհանուր ապստամբութենէն:

Անոնք կ'այրեն դիւղեր, կը սպաննեն, կը բռնաբարեն կիներ եւ մա-
նուկներ, ականջներէն կը դամեն բանասարկեալներ, այդ միհնակին մէջ ձգե-
լով դիւրենք մինչեւ առաւօտ, եւ առաւօտուն կը կտինեն:

«Մարդիկ երբեմն կը խօսին անասնական անգթութեան մասին. բայց
ատիկա մեծ անարդարութիւն եւ անարդանք է անասուններուն: Անասուն մը
երբեք չի կրնար այնքան անզուժ ըլլալ, որքան մարդը, որ արուեստադէտ
է անգթութեան մէջ: Վազը միայն կը բղկտէ ու կը կրծէ-միտկ բաները, որ
կրնայ ընել: Անիկա երբեք պիտի չմտածէ մարդերը իրենց ականջներէն դո-
մել, եթէ նոյնիսկ ի միհնակի ըլլայ այդ արարքը գործելու:

«Այս թուրքերը հաճոյք կ'առնէին ժանուկներն ալ շարժարեւոյն, անջա-
տելով մօրը արգանդէն դեռ շնած երեխան, զոր օդին մէջ նետելով՝ կը բու-
նէին իրենց սուրբներով, մօր ներկայութեան:

«Սոյն արարքը մօր աչքին առջեւ կատարելն էր, որ թուրքին կու տար
անասնական հաճոյք:

«Երեւակայեցէք դողդոջուն ժայր մը՝ երեխան գրկին, շքապատուած
թշնամի թուրքերով: Թուրքերը ծրագրած էին ժամանց մը: Կը շոյեն երե-
խան, կը խնդան՝ զայն խնդացնելու համար եւ կը յաջողին. երեխան կը խըն-
դայ: Այդ մարդկեանին, թուրք մը կ'ուղղէ իր հրացանը երեխայի դէմքին՝
չորս մտանշափ հեռաւորութեամբ: Երեխան անմեղ խնդումով վտիտ մեռ-
քերը կ'երկարէ հրացանին եւ, այդ պահուն, թուրքը կը քաշէ փլթակը եւ կը
պայթեցնէ մահուկին ուղեղը: Ատիկա արուեստի դուրս-գործոց մը չէ՞»:

ՖԵՈՏՈՐ ՏՈՍԹՅԵՒՍԿԻ

(«Քարամազով եղբայրներ») .

Թուրքերն անցան այստեղից... Ամէնուր մահ ու սեր...
Քիտը, շէն այդ կղզին, որ ազգ գինի էր ու սէր.
Քիտը, որ շնչում էր կանաչութեամբ ու ծաղկով,
Քիտը, որ կանչում էր պալատներով ակնաքով,
Աղջիկներով վէտովտուն ու ջրերով կապուտակ,
Արդ դարձել է մոխրակայտ, դարձել այրուած փլատակ:

Թուրքերն անցան այստեղից... ամէնուր սեր է ու սուգ...
Ու սեւակնած սպտի մօտ մի պատանի տրամաշուք,
Կապոյտ, կապոյտ աչքերով մի յայն տղայ մոլորում,
Գլխահակ թիկն է տուել ներմակաթերք մաքրեմուն,
Սուկ երկուսն են փրկուել անբումից ահարկու,
Սուկ երկու շուռչ կենդանի՝ ապաւինած մէկ-մէկու:

ՎԻՔՅՈՐ ՀԻԿՊ

Թարգմ. Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Տոթոյեակի, Հիւկոյի, ջարդերուն ակահատես օտար գրապէտներէն ու պետական անձնաւորութիւններէն Արմին Թ. Վեկնէրի, Լեփսիւսի, Մորկրնթաուի, Պրայսի եւ այլոց կարգին, հերոպացի եւ ամերիկացի բազմաթիւ քղթակիցներ որը օրին հազարակէցին իրենց թերթերուն անասնոց իսկ անասնութիւնը վերաւորող (Տոթոյեակի) թուրքին գերանասնական վայրագութիւնը եւ, մանաւանդ, ժարդ մորթելու հաճոյքին պատկերաւոր գրուածները :

Բայց նախ՝ թուրքի մը վկայութիւնը, վկայութիւնը ասկէ առաջ անգամ մը յիշուած նախմ պէյի, որ անխառն թուրք մը չի թուիր ըլլալ, գտարի՛ն թուրքի մը, Ապսիլլահատ Նուրի պէյի մասին, որ ըստ առաջինին, էր՝ «Նրբահմար անգթութեան մարմնացում մը : Հայոց աղետն ու թշուառութիւնը, իրարու յագորդող մահուան տեղեկագիրները այն աստիճան կը կրճուեցնէին զինք, որ պարելու աստիճան կը զգլխէր» :

Աղէտներէն հաճոյանալու թուրք զգայութեան մասին վկայութիւն մը որձանագրուած է նաեւ «Նիւ Եորք Թայմզ»ի 29 Անպտեմբեր 1919ի թիւին մէջ. «Թալաաթն ու Պետրին պարզապէս կ'ընդունին, որ իրենց հաճոյք կը պատճառէ հայերը հալածելը» :

Թալաաթը եւ Պետրին, այսինքն՝ պետութիւնը եւ պետական օրգանները այն օրերուն անձնաւորած հրէշները, որոնց հետեւող ամբխը տարբեր նկարագիր մը պիտի չպարզէր հարկաւ ու չպարզեց :

Առաւստիկ նոյն «Նիւ Եորք Թայմզ»ի մէջ, նոյն թուականին ու ամսոյն (25) արձանագրուած իրողութիւնը .

«Այս զարդելուն ետին կայ կտաւվալութիւնը, եւ ժողովուրդը կը գործէ տրուած հրահանգին համեմատ : Երբ առաւօտուն փոքր ենչէ, թուրքերը կատաղութեամբ կը խուժեն սպաննելու եւ կողակտելու իրենց գործին» :

Մենք, ի հարկէ, պէտք չունինք այս փաստերուն : Մենք «Սեւ հողեր»ուն սեւաջման օրերէն ի վեր կը ճանչնանք արարչութեան այս վրիպակը, ու չենք կրցած իրարմէ անջատել վերնախաւն ու խուժանքը, սուլթանական դաշերու վրայ յազմած ու ամբխը բաղկացնող նախապատմական կենդանին :

Այսուհանդերձ, մէկ-երկու նոր նմոյշներ հաղորդենք նաեւ մեզմէ, առաջինը Մեծ Եղեռնի առաջին գոհերէն Սիամանթոյի փորձառութեամբ կազմուած, երկրորդը՝ մեր աղէտին դիմաց ի խորոց սրտի վերաւոր ու նոյն վերջով հազարներ ալեկոծած Պարոյր Սեւակի պատկերացումով .

Եւ ամէն անգամ, որ արեւակերպ հերոսի մը հաճելիւնը հովերուն մէջ մեռաւ, Հեթանոս խուժանքը կատաղօրէն վարն էր, երապարակին վրայ, ցեխին մէջ եւ ցեխն ապականելով...
Եւ ցնծութեան կ'ոռնար, Ալլաիին հրաւերէն եւ ատելութեամ ծափերէն

մոլեգին :

Իսկ Սեւակ «Եռանձայն պատարագ»ին մէջ կը նկարագրէ ջարդերու տեսարանները՝

Եւ այս ամէնը
 ո՛չ միայն հանգի՛ստ-անվրդո՛վ-անդո՛ղ,
 Եւ ո՛չ էլ միայն մոլի եռանդով,
 այլեւ մի տեսակ արքշա ցնծութեամբ...

Թուրքերը միշտ ալապէս վարուեցան, գործեցին, մորթեցին՝ ճարճիւն ցնծութեամբ» :

Ինչպէս յայտնի է գիտամտքեան մէջ եզակի, աշխարհաստան ոմիր մըս գործած ճիւղաները է բացակայութեան մահուան գառապարտուցան երկու ատեններու կողմէ, Քուրքիոյ Պատերազմական Ռարձարչոյն Ատենին եւ Երեւանի մէջ կայացած Հ. Յ. Գաշնակցութեան Ընդհանուր Ժողովին կենտրոնով:

Ի բաց առնայ մէկէն, Պոլսոյ Ատենին արգարութենէն խոյս տուին բարբէ, բայց չկրցան խուսափել մեր գառապարտէն եւ յարողաբար շան սատակ եղան Պերլինի, Հոտի եւ Վոլսոյ սրովային մէջ:

Մեր քաջերուն մաքրագործած գլխաւոր եօթգլխակներուն ցանկին գանուող միւսներուն, Քիւմայի բնորոշումով՝ Վահրուքներուն կարգ չեկաւ, անոնք կարգի բերուեցան երրորդ գառաբանով մը, նոյն Քիւմային կողմէ, անչորս բաւական ուշ, եօթը տարի ետք, իր անձին ու զան լինին անգամներուն զէմ անոնց մէջեկայած դուր մեղացուցած ատեն: Աթաթիւրք կախազան Ռարձարչոյց Վերտասարգ Քուրքերու այդ անկայութեանը, Տօքթ. Նազըմը, ելեւտական նախարար շեխա պէյը եւ քանի մը սարկիներ եւ, այն ատեն միայն, յիշեց, որ անոնք՝

«Շաշի պետէ էր տայիկ մեր միլիոնաւոր Բրիտանիայ կապտակներում զանգաւածային եւ անոնք տարագրութեանց եւ բարդերուն համար»:

Բայց այն ի՞նչ յետադարձ կեկէն էր, բնիք միլիոնաւոր Բրիտանիայ կապտակներուն զանգաւածային զարդին՝ Համար՝ արգարութեան ի՞նչ ճիշտ Քիւմայի սրտին, այն Քիւմային, որ Հարիւր-Հարարաւոր զբխտուններու ջարդին ուղղակի ի՞նչ պատասխանատու է:

Հայրենի մեր պատմարաններէն մէկը, ակնարկելով Քիւմայի զգործունէութեան, պիտի պնդէր, որ զմեզ այդ քաղաքականութիւնը դիտում ենք որպէս «Երիտ-Պարսկիոյն» մասնաբաժնի արշաւանմանի շարունակութիւնը, քանի որ Բրիտանիան մերի պարսկական սյնով չէր տարբերում յՅԼՏ քուակամին ձեռնարկուած «Երիտ-Պարսկական» արդիստիցս:

Իսկ Մուսա Բրիկնս պիտի բացառուէր. «Գուցէ միջ մը յիստ պիտի ըլլանք մեր գառապարտներուն մէջ: Եւ սակայն, կը խորհիմք, քի մեր պարտակամութիւնն է ձեռնարկութիւնը ըսել: Քիւմայականութիւնը հնդկական է կիլիկիոյ ցեղապատմութեան: Ուղղակի՝ պատասխանատու»:

Հարիւր Հարարաւոր յոյներու եւ Քիլիկիոյ ու Պարսի Հայերուն ջարդը Հրահանգած ու զործարարէն առանց այս Աթաթիւրքն է, որ ձեռքերը Հնչտարէն լուացած՝ զինքը անմիջապէս նախորդած ջարդարար, ակնայութեան մասին կը բարբառէ...

Աթաթիւրքը՝ կը բարբառէ՝...



Այս դուադիներուն ցոյց տալու վրայ եմ, թէ Քուրք Հանրապետութիւնը կարելի չէ կործանել մարդասպաններով կամ անոնց ոմբային ծրարներով: Նախկին Երիտասարդ Քուրքերու այս ակնայութեանը, որոնք հաշի պէտք էր տային մեր միլիոնաւոր զբխտունայ Հպատակներու զանգաւածային եւ անոնց տարագրութեանց ու ջարդերուն Համար, ըմբոստացան Հանրապետութեան ակրապետութեան ներքեւ: Մինչեւ այսօր անոնք ապրիզան կողոպուտի, զողութեան, կաշառակրութեան միջոցով եւ սնըղունակ զարման ու շնայուեցան իրենց հակառի զրտիքով պարկիտորէն ապրելու գաղափարին հետ: Ընդգիծագիր կուսակցութեան զիմակին տակ այս տարբը, որ մեր երկիրը մեծ պատերազմին մղեց Հակառակ ժողովուրդին եւ պատճառ դարձաւ Քուրք երիտասարդութեան թափած արեան հեղեղին, ենկէր փաշայի ոմբապարտ փոտաօրութիւնը զուսպնելու Համար, վատորէն եւ ստորին միջոցներով գառապարտ է իմ կեանքիս, Ինչպէս նաեւ իմ դահլիճի անգամներուն զէմ:

ՄԱՌՍՐԱՆԱ ԳԵՄԱ

Միջավայրի ու զստիարակութեան դերերուն ի՞նչ արժէք ալ ուզենք տալ մարդոց կազմաւորման հոյսովոյսին մէջ. գերակշիռը, փաստ է, առհասարակ մասնագութեան ուժեղագոր մը դուրսն է:

Այս ճշմարտութեան ամենէն կենդանի սպացոյցը ի՞նչ քուրճիկ գոյութիւնն է, որ Ահուրնայի անյայտ մէկ անկիւնը վիժած հայտնաբերման կենդանի մերկայացնէ, թէ քաղաքակրթութեան ռատոնիկում մէջ ժամանակակից մարդու մը պայմաններում մէջ ապրի՛ կը մնայ քաղաքակրթութեան, աւերելու, փոշիացնելու իւր շարժը հազար շարժարձուրտիւններ կատարելու մոլորցի մը ենթակայ անբուժելի նիւսերը:

Վերջին նմոյշը բովի սիւնակին վրայ է՝ կիպրացի բուրբը:

Ուղիղ մէկ դարձ ի վեր երեսպահներու հըպատակ կամ յեակակից տարր է կիպրացի բուրբը, եւյն զպրոցներէն անցած, եւյն միջավայրին մէջ հասակ մտած սարգ, քայց հագիւ առիթը ներկայացած՝ անասնիկ յատկորէմ տեսնելի կը դարձնէ կամուսն ու զեղեցիկ բան տեսնելու անընտանայ իր հոգիին բովանդակ պատրուքիւնը:

Ներխուժող բուրբին այդ խոտտովանութիւնը՝ տեղացի բուրբերուն մտօնն:

Ձիճուարակամ բուրբը այդպէս կը ներկայացնէ՝ քաղաքակրթութեան, քաղաքակրթութեան ինչպէ՞ս պիտի ներկայացնէր արդեօք համազգեստաւոր բուրբը, որ անկախաբար երանանց մը զործարկելու զինուորական իր ստիպումէն, Ա՛հա՛ն Կիպրոսի մէջ առիթ չիսխցուց դասելու բանակաշինի թարայակամին ու քրքացու ծայրագոյն համեմատութեամբ մը, արարատութեան ու պղծութեան բոլոր մարգերուն մէջ. բոլոր ժայլերումն, յոյներու թէ քուրճիկը առիթով հաստարապէս:

* *

... Նիկիտիային Ծամակուսթա տանող ճամբան 35 մղոն ներկարութեան միայն ունեւորէ ճամբուն վրայ, սակայն, ճամբորդը ստեղծուած 25 անգամ շնութեան կ'ենթարկուի՝ պարբերաբար բարձրացուած ճամբու արգելակներէն անցած աստի, թրքական բանակի զինուորներուն կողմէ, որոնց անհիւանդ դուրսերը, ցցուն այտակները եւ զինուորական կոնստանդուպոլիսերը կ'ըզրոտեան Ատիոյ պաշտպանը կը բերեն Արեւելքի շնութեան մէջ:

Ոտարականները չեն միայն, որ ենթակայ են այդ շնութեանց, այլ կիպրացի թուրքերը եւս, որոնք իբրեւ թէ չիմա կ'ապրին իրենց սեփական երկրին մէջ: Անոնք՝ կիպրացի թուրքերը զիւրեքն կամ քաղաքէն դուրս ելած աստի պարտաւոր են արձանագրուելու, յայտնելու իրենց տնունն ու սղղանունը, իրենց սեղանիտութեան նպատակը եւ երթալիք տեղը:

Ըստ թրքական բանակի պատասխանատուներու յատարարութեանց, կիպրացի թուրքերը իրենք են պատճառը այս կացութեան, որովհետեւ չեն կրցած զսպել իրենց թալանի արձանագրութիւնները: Այդ հակողութեանց բուն պատճառը, կ'ըսեն զինուորականները, ոտակոտեան հակողութիւն մը կատարելն է, ստուշը առնելու համար թուրք քաղաքացիներու կատարելիք թալաններուն: Ծամակուսթան, կ'ըսեն, ապաստեցու ալան-թալանէն, որովհետեւ բանակը իսկոյն առանձնացուց թրքական թաղամասը, շղթայի տակ առնելով զայն: Փիրնիկային բնակարանները մինչև այսօր կ'ենթարկուին կողոպուտի եւ, որովհետեւ մեծ բան մնացած չէ թալանելու համար, մանր-մունր առարկաներ միայն մնացած են, դժգոհ ու զայրացած թաղանոցները կը դիմեն վանտալութեան, կը կոտորեն, կը փլուրեն ձեռքերին անցածը:

(«Ճեմնամիտ», 21 Մեպտեմբեր 1974)

ԿՏՐԻՃՆԵՐՈՒՆ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Համատարած ազդեցի այն սեւ օրերուն, Սեւակի բանաստեղծութեան (137) մէջ յիշատակուած կէտերուն վրայ՝ մեր «անյայտ-անլանի սրբազան խենթերը» քուրճերուն ենթադրածէն ի՛րապէս տարբեր կամք մը յայտնաբերեցին, մահասփիւռ ոսոխին ամենագորբանակներուն միտորները շմեցնելու չափ գորեղ հարուածներու փառքը արձանագրելով պատմութեան տումարներուն:

Քուրճերուն թափուն միտքը մերկացնելու անսխալ հետաուութեան եւ մարտական մեր ռզիին կայտառութեան շօշափելի ապացոյցներ են անոնք, ու բարոյական անկշռելի ուժ՝ հայոց նորագոյն պատմութեան մէջ:

Ինքնապաշտպանութեան այդ կոխները պայթեցան Մեծ Եղեռնին սկսած առաջին ամիսներուն, բայց յաջորդող բառամեակին շարունակուող քրքական բարբարոսութիւններուն դիմաց ձեռնածալ չմնացին աղէտէն հեռու մնացած կամ անկէ նողոսրած մեր ժողովուրդին խռովայոյզ գաւակները, այլ կազմակերպուեցան ու նետուեցան քուրճ բանակներուն բացած կրակի ամենատաք գիծերուն եւ, իրենց կարգին, արութեան վիթխարի որակի մը տէր յայտարարել տուին իրենց ցեղը:

Կ'ակնարկենք ռուսական, ֆրանսական ու անգլիական բանակներուն կողմէն, կովկասեան ճակատներուն թէ Արարայի բարձունքներուն վրայ՝ քուրճ բանակներուն անուղոք հարուածներ տուած կամաւորական մեր գունդերուն, որոնց յայտնութիւնը միջիջարութիւն մը եղաւ մնացորդացին դէռ սաստկօրէն կոտորացող սրտին, եւ օր մը, անտարակոյս, պիտի դառնայ մեր դիւցազներգութեանց շարքը հարստացնող ամէնէն սխրայի էջերէն մէկը:

Աշխարհի չորս կողմերէն շտապած ու համաշխարհային չարիքին դէմ զենք բարձրացուցած կամաւորական գունդերու այդ շունդալից կտրիմներուն դառնանք ու փառք տանք կըրկին եւ ապա հետեւինք դիւցազնամարտներուն եւ սհարեկիչ դիւցազուններու ժապաւէններուն...

Գ. Ն Գ Ր Ո Ի Բ Ե Ա Ն

ԱՐԽԻՐԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ
ԿԱՄԱՈՑ

1915ը միայն կուտարածներու եւ աւերի թուական մը շեղաւ հայութեան համար :

Համատարած լքումի եւ մարտիրոսութեան օրերուն, հայկական քնաշխարհի բոլոր անկիւններէն բարձրացող ողբի ու արտառութեան ձայներուն ընդմէջէն, կարելի չէ չլսել որոտները այն հերոսական մարտնչումներուն, որոնք մեր պատմութեան ամէնէն դժգոհ ժամանակները լուսաւորեցին եւ յարմունք ուժգնութեամբ կը շարունակեն արձագանկել յանորդներու հոգիներուն մէջ :

«Ներք քշնամին վատարար կոխ յայտարարեց Բաղաւաղը քուրթեան դէմ, մե՛ր դէմ. մե՛նք հաւատով փարեցինք մեր գէնքին եւ մեր հոգիի խորքէն բոցացինք, որ յազքանակը մերը պիտի ըլլայ այս կռուին մէջ, վասնզի մեր կոխը խաւարի դէմ էր, տգիտութեան ու բռնութեան դէմ՝ նշմարտութեան եւ արդարութեան համար :

Եւ վերցուցինք գէնքը...» :

Վասպուրականի Սպրիշեան յողթական կոխներուն յաջորդող ինքնապաշտպանութեան Մարմնի կոչին մէջ, որ հարազատ պատկերացումն է այդ օրերուն վտանգ հայութեան աղբար զերպոյն խանդավառութեան, վերի տողերէն ետք, կ'ուրուալծուի նաեւ տեսիլքը ապաղայ Հայաստանին :

«Մեր հերոսական կոխներով մենք արդէն հիւր դրինք այն հոյակապ ազատութեան, որուն երազեցին մեր հանճարները մեր ժողովուրդին հետ, որու հա-



մար երեսնամեայ կոխներով միլիոնաւոր կեանքեր գոհաբերեցինք եւ որու առաջին արշալոյսը կը ծագի ահա բախտաւոր Վասպուրականի հպարտ լեռներուն վրայ...» :

Հայկական յեղափոխական ապստամբաբախտներուն, յամառ ու հերոսական պայքարներն ու ժողովուրդին մէջ տարուած դաստիարակչական հետեւողական աշխատանքները կը ստեղծէին մեր աւանդութիւններուն հատարելի արի սերունդ մը, որ ո՛չ միայն պատ-

մութեան առջեւ կը նուիրագործէր հայ յեղափոխութեան արդարութիւնը, այլեւ կը հաստատէր անոր անխուսափելի անհրաժեշտութիւնը:

Ժամանակագրական կարգով, առաջին անգամ հերոսական Վասպուրականն էր, որ տուաւ ըմբոստութեան ազդանշանը: Թրքական կառավարութեան հետքահետէ խտացող բռնութիւնները, Վանի շրջակայ դիւղերուն մէջ ծայր տուած մասնակի կոտորածներն ու ի վերջոյ, Իշխանի եւ Վասիւնի դաւադրական սպանութիւնները լոյսին կը բերէին իթթիհատական Թուրքիոյ դիւալին ծրագիրը:

Ու 5 Ապրիլ 1915ին, կը պայթէր համաժողովրդական ապստամբութիւնը: Լրիւ մէկ ամիս Վասպուրականը քաջութեամբ եւ պատուով մարտնչու թշնամի զինրացոյց ուժերուն դէմ, խեղախութեան եւ հնարամտութեան քաղաքիւփայլուն օրինակներ արձանագրելով: Մայիս 3ին, Թրքական բանակը մոլեղնորէն կը ուժրակոծէր հայկական դիրքերն ու թաղամասերը, սակայն, նոյն օրը, երեկոյան, հայ կողմէր ուժերը հակայարձակումի կ'անցնին եւ իրարու ետեւէ կը գրաւեն Թրքական զօրանոցներն ու դիրքերը: Ոճրային դաւադրութեանց եւ բռնութիւններու այդ որչերը կը մոխրանան հրդեհներու մէջ: Ռուս բանակին եւ հայ կամաւորական զուեղերու ստեղծայնորուն առջեւ՝ արիւնարբու ձէւտէթ փախուստ տուած էր՝ ամբողջ Վասպուրականը ձղելով մարտնչող հայութեան: Երեք օր, Մայիս 3, 4 եւ 5 անասելի խանդավառութեան եւ յուզումի պաշներ կ'ապրէր Վասպուրականը: Գարաւս բերդի ճակատին կը ծածանէր յեղափոխութեան կարմիր դրօշը եւ խելայեղ բազմութիւնները կ'ողջունէին կամաւորական շարքերուն մուտքը հերոսական քաղաքէն ներս:

Կը յաջողեն վառ յոյսերու զեղեցիկ օրեր: Այգա առասկան բանակներու դաւախից «նահանջ» եւ Վասպուրականի



ՇԱՊՈՆ ԳԱՐԱՆՆԱՐԻ ԹԵՐԻՐ

հայութեան զանգուածային տեղաշարժ: Սակայն իրողութիւնը կը մնայ այն, որ Վանի հերոսամարտը անխուսափելի մահէն փրկեց աւելի քան երեք հարիւր հազար հայ կեանքեր եւ ծանրօրէն հարուածեց թշնամին...:

Վասպուրականի հերոսամարտին յաջորդեց Եապին Գարահիտարը:

1915 Յունիս 2ին, քաղաքի հայաբնակ բոլոր թաղերուն մէջ սրտաւ խնքուպաշտպանութիւնը: Երջակայ դիւղերէն եւ աւաններէն շուրջ 2) հաշար հայութիւն բռնած էր տարազրութեան ճամբան եւ ջարդուած: Կը մնար քաղաքը: Եթ ճազար հայեր օրերով իրենց տուններէն գիւմազեցին թշնամիին, սակայն երբ Թուրքերը յաջողեցան կրակի տալ հայկական թաղամասերը, ժողովուրդը բարձրացաւ բերդը եւ ամբողջ 23 օրեր դիմադրեց իր վրայ յարձակող Թրքական կանոնաւոր ուժերուն: Ծանր կորուստներու զնով միայն թշնամին կրցաւ քանդել հայկական դիրքերը եւ հայ մարտիկներու գիակներուն վրայէն միայն յաջողեցաւ մտնել բերդէն ներս: Կորսուեցան զրեթէ բոլոր այր մարդիկը, իսկ մնացածները նետուեցան տարազրութեան արիւնտ ճամբաներուն վրայ:

Պուժր մը քաղեր, որոնք վերջին գիւղերը յաջողած էին ճեղքել թշնամիին



ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԼԵՐՈՒՄԱՐՔԻՆԻ ՅՈՒՇԱՐՔԱՆՆԸ

պաշարման շրջանը, ամիսներով լեռնա-
բուս վրայ, տաժանելի պայմաններու մէջ
շարունակեցին կռուիլ, մինչեւ որ մէկ
առ մէկ ինկան հայրենի հողին վրայ:

Հերոսական ինքնապաշտպանութեան
երրորդ արժուեքոյնը հանդիսացաւ Մու-
սա լեռը:

Յուլիս 30ին, տրուած էր տեղահա-
նութեան հրահանգը, սակայն շրջանի
մէջ գիւղերու շուրջ 4500 հայերը օրեր
առաջ, կարելի ըլլալով պատրաստութիւն-
ներով բարձրացած էին լեռ՝ «պատուով
ընդունելու համար նահատակութիւնը»:

Մուսա լեռան բարձունքին վրայ 40
օր տեւեց կռիւլը: Շուրջ 600 հայ կտրիճ-
ներ քաջութեամբ դիմադրեցին թիւով
տասնապատիկ թուրք զօրքին յարձակում-
ներուն եւ յաջողեցան ծանր կորուստներ
պատճառել թշնամիին:

40 օր ետք, պատահաբար այդ կող-
մերէն անցնող ֆրանսական «Կիլիզն»
մարտանաւը կը նշմարէ ապստամբները,
որոնցմէ խումբ մը, այդ նպատակով,
մշտական պահակութիւն կ'ընէր ծովե-
զերքը: Հրամանատարը նաևակի մը մի-
ջոցով վեր կ'առնէ ֆրանսերէն զիտցող
ապստամբ մը եւ, կացութեան տեղեկա-
նալով՝ կ'որոշէ օդնել հայ ժողովուրդի

այդ հերոս բեկորին: Հեռապրով քանի մը
ուրիշ մարտանաւեր եւս բերել կու տայ
եւ մէկ-երկու օրուան ընթացքին ամբողջ
ժողովուրդը կը փոխադրէ մարտանաւե-
րուն վրայ:

Եղիպտոս, Փոքր Սայիտ քաղաքին
մօտ, Սուէզի ջրանցքի ափին, չորս տա-
րի Սուէտիոյ ժողովուրդը կը մնայ օտա-
րութեան մէջ: Այստեղ է, որ հարիւրաւոր
երիտասարդներ դիմում կ'ընեն դաշնա-
կից հրամանատարութեան ղեկավարու-
նելու եւ ցեղին վրէժը լուծելու համար
թուրքէն: Կը կազմուի Արեւելեան Լե-
զէնը, որ Արարայի փայլուն յաղթանա-
կէն ետք, Կիլիկեան գրաւող ֆրանսա-
կան բանակին մէջ իր խիզախութեամբ
մեծապէս կը դնահատուի:

Մուստադի հերոսամարտը համալ-
խարհային ճանաչում ստացաւ մեծ պա-
զէտ Ֆրանց Վերֆելի «Մուստադի 40
օրերը» գրքով:

Ուրֆայի հերոսամարտը սկսաւ
Սեպտեմբեր 29ին, ղեկավարութեամբը
խումբ մը անձնագր՝ հերոսներու, որոնց
մէջ նշանակելի քաջազործութիւններ կա-
տարեցին յատկապէս Յարութիւն Ռա-
կէլէնեան եւ Մկրտիչ Եօթնեղբայրեան:
Մայիսէն սկսելով թուրք կառավարութիւ-
նը ժողովուրդը դիտատելու եւ մարտու-
նակ տարբերէն գրկելու զիտաւորու-
թեամբ, սկսած էր ձերբակալութիւններն
ու սպանութիւնները: Սակայն, մօտա-
լուտ աղէտին նախատեսութեամբ Ուր-
ֆայի ղեկավարութիւնը պատրաստու-
թիւններ տեսած էր ինքնապաշտպանու-
թեան եւ յարձակողականի դիմելու հա-
մար:

Մինչեւ Հոկտեմբեր 23, կատաղի
կռիւններ մղուեցան: Փրօճներն ու հակա-
պրօճները իրարու կը յաջորդէին: Մեծ
յաջողութեամբ հայերը կը դիմադարձէին
եւ անհամեմատօրէն աւելի զոհեր կը խլէին
թշնամիին: Ի վերջոյ թուրքերը դիմեցին
ծանր պլանքերու օդնութեան: Թնդանօթ-
ներու ուժով քանդեցին հայկական զիտ-
քերը եւ կրակի տուին հայաքանակ ըն-
դարձակ թաղամասը:



ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԱՅՐԵԱՆ

Ուրֆայի ամբողջ հայութիւնը, ա-
նորինակ քաղութիամբ կուսեցաւ աւելի
քան երեք շաբաթ: Մերեր, կիներ ու մա-
նուկներ մահը արհամարհելով՝ օղնեցին
պատնէջի վրայ՝ զոնուող իրենց հարա-
զաաններուն, որոնք սեղացող ուռմբերու
տարափին տակ կառչած մնացին իրենց
դիրքերուն ու վերջին փամփուշտը ար-
ձակելով ինկան:

Յիշատակուած վայրերէն զուրս,
Տարօնի, Մասունի եւ հետաւային բազ-
մաթիւ այլ վայրերու մէջ, հայ ժողո-
վուրդը իր կարելի միջոցներով փորձեց
գիծագրել թշնամիին՝ պահպանելու հա-
մար իր ապրելու եւ ստեղծագործելու
իրաւունքը:

Գերմարդկային այդ ըմբոսդացում-
ներուն վերջիւումը նոր սերունդին առջեւ
պիտի պարզէ ջրաօդին, բայց միաժամա-
նակ այնքան իրախուսիչ եւ թելադրա-
կան մեր երէկը:

ԳՐԻԳՈՐ ՆԳՐՈՒՐԵԱՆ



«Աւարի սեղանքին շուրջ.— 1) Սահտ Հալիմ փաշա, 2) Միտհատ Շիւքրի, 3) Անտոն Թիգու, 4) Հիւսէյն Տահիտ, 5) Էնվեր, 6) Թալատք, 7) Ուսմի, 8) Ճեմալ փաշա:

Ինքին ծնած թուրք բանասերն թէ՛վիք Ֆիքրէթ, ըստ իր կեանքը ուսումնասիրած մտաւորականներուն՝ անդուլ պաշտօնը մը ծառայած է Կարմիր Սուլթանի բռնապետութեան եւ զորածն սեփերու ղէմ: Մեծ Մարդասպանին անկումը ցնծութեամբ կը լեցնէ զինք եւս ու խանգաղատութեամբ կ'ողջունէ Սահմանադրութիւնը, բայց շուտով պտարանաթափ կ'ըլլայ ու կը ձաղկէ Համիտի Հարազատ ժառանգորդները, զիս իր մահէն (1914) ու Մեծ Եղեռնէն առաջ:

«Աւարի սեղանք» մէկն է սուրբատուները խարանդ իր բանասերներէն, որմէ կ'արտադրենք ջանի մը Հատուած, ընդդէմը Համար Ֆիքրէթի գուշակութիւնը, թէ «Այս կային, կազմաւորին վերքը կուգայ»:

Կողպուտին վերջը եկաւ, կողպուտիներուն ալ միտին, եւ ինչպէ՛ս... Յաջորդ էջերուն ուրուագծուած է աւարի սեղաններէն մէկուն շուրջ թուրքուած վերի արիւնարուններուն վախճանական զգեստը:

ԱՒԱՐԻ ՍԵՂԱՆԸ

Այս սեղանը այսրթի ձերն է, էֆէնտինե՛ր, ճաշակեցէք, կշտամալու, յոփամալու, ճաքելու աստիճան կերէք:

Վնաս չունի, եթէ ծանր ալ ըլլայ մարտադուրիւնը դիքի, Ունի հրճուամբ վրէժի, կպարտութիւնը փառքի, Զուր եւ յոգնութիւն կը յուսայ այս սեղանը մեծարամբի, Զերն են այս բոլոր պատանները արիւնտ, գլուխ, ուղեղ, քոֆ:

Այս սեղանը կեճարար ձերն է, էֆէնտինե՛ր, ճաշակեցէք, կշտամալու, յափրամալու, պայքելու աստիճան կերէք:

Կուտայ ինզճ երկիրը, կու սայ ի՛նչ որ ունի, գոյութիւնը, ինչքը, մարմինը, կեանքը, յոյսը, երեսկայութիւնը: Արտին համակ խանգը, սունցած մերկայ անգործութիւնը, Կուլ տուէք անմիտապէս, մի խորհիք արդարը, ասորէնը:

Այս սեղանը ձերն է, էֆէնտինե՛ր, կերէք, կշտամալու, յեցուելու, պայքելու՝ աստիճան լափեցէք:

Այս կային, կազմաւորին վերքը կու գայ, շորքեցէք մինչ այդ, Կարելի է կը մարի ճարճատոյգ օժանդ այտորում: Քանի ստամոքսները այսօր գորեղ են, ապուրները՝ տաք, Կուլ տուէք, շորքեցէք, իրելով իրարմէ պնտկ-պնակ:

Այս սեղանը լիակատար ձերն է, էֆէնտինե՛ր, կերէք, կշտամալու, յափրամալու, ճաքելու՝ աստիճան կերէք:

Թելմիթ Ֆիթրէթ Թարգմ. Մ. Թ.

ԹԱԼԱԼԹ ՓԱՇԱՅԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ



Լծակի այն հասարակական վեր տարաւ, ձեռքով հակադր շփեց, ներս մտաւ: Նայեցի ժամացոյցին: տաւ էր, Ռեյանտ գնալու իր սովորական ժամը: Ձեռքը առի վրաս, պատրաստ դուրս գրեցաւ: Յանկարծ նա յայտնուեց զբան մօտ ու փոքի պէս ծանրորէն սկսեց վար իջնել: Երբ դուրս ելայ փողոց, դիմացի մայրքով արդէն բռնել էր Ռեյանտի ուղին: Սառը դատադուրքիւնը ինձ տօտմ էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ազատուիլ ձեռքիցս, բայց եւ յուզումը բազմալեզու աղաղակներով փոքորկում էր ինձ:

— «Հասի՛ր, վագի՛ր. անցի՛ր միւս մայրքը, ու շեղակի կռնակից, մէջքի՛ն, գլխի՛ն. շո՛ւտ, անցի՛ր փողոցը...»

Մայրքից իջայ փողոց՝ յետեւը անցնելու համար բայց յանկարծ մի բան յետ մղեց ինձ. հագար անգամ պարզուած բանը այդ պահին մէկէն մէկ կասկածելի բուաց. նա՞ է արդեօք...

— «Անցի՛ր դիմացքը, դիմացքը, դիմացքը, ուղղակի՛՛ հակատին, շո՛ւտ, շո՛ւտ. վագի՛ր»...

Դիմացի մայրքով հաւասարուեցի ներքան, արագ քայլերով բաւական յառաջացայ. անցայ նոյն մայրքը, ուսկից գրեմում էր նա: Յետ դարձայ: Մտնելում էիմի իրար: Նա գալիս էր նետելու ձեռով՝ ձեռնափայտը անփոյթ հօնելով: Մի կարճ տարածութիւն մնացած՝ անգործութիւնը համակեց էութիւնս: Հաւասարելու վրայ Թալաաթը շեշտակի նայեց ինձ. աչքերի մէջ առկայծեց մտնումս

սարսուռը: Վերջին քայլը թեկուեց. մի քիչ թեժուեց օր խուսափի, բայց գեճը քաշելու ու գլխին պարպելու մէկ եզու... Թալաաթը հաբուածից կարծես ցրեցրեց ու մի ակնթարթ հօգր մարմինը պրկուեց ձիգ. բայց երեքուն, ապա՝ սրգացուած կաղնու բունի պէս երեսի վրայ տապալուեց թնդիւնով... Քիչ դէմը մի կին նշաց ու գետին փռուեց. մի մարդ վագեց դէպի նա... Բնու չէի կարող երեսակաշէտքը ար այդպիսի դիւրութեամբ գետին պիտի փռուի գագանը: Մի վայրկեան մտում ունեցայ բայց գեղակները պարպիլ մէջքին. բայց փոխանակ կրակելու՝ ասորհանակս նետեցի: Սեւ. բանձր արիւնը վայրկեանապէս լեցաւ Թալաաթի գլխի շուրջ: կարծես ցարդուած անօրից մագութ էր դուրս թափում...

— Մարդ սպանեց՝. — լսեցի... Նայեցի վեր, վար, դիմացքը, ամէն կողմ մարդիկ կանգ առած՝ նայում էին ինձ... — Մա՛րդ սպանեց, բռնեցէ՛ք, — նշաց մէկը, ցանցաձեւ պարզելով դէպի ինձ ձեռքերը... Բայց լեցաղ արիւնը կարծես դիւրեւ էր ինձ:

ՍՈՂՈՄՈՆ ԹԻՂԻՐԵԱՆ



ՊԵՆԱԵՏՏԻՆ ԸԱՔԻՐԻ ԱՆՎԵԿՈՒՄԸ

Եւ երկու զնդակ զանկերու մէջ դամեկ
ակնթարթ մը միայն տեսց :

Վարկեանական քարացած լուռ-
թեան մը յաջորդեց լալադին ողբուկոծ
մը. «սպաս», «սպաս...», երբ երկու
գիակներ փուռեցան մոյթին վրայ :

Ինչպէ՞ս եղաւ. չեմ գիտեր : Տեսայ
միայն, որ գետնը ճանկերու վրայ ին-
կած է նաեւ թ... , ատրճանակը թռած՝
ձեռքէն : Իսկ տիկին թալաթ, հակառակ
բոլորին վիզուկներուն եւ զիակներու
վրայ թափուելուն, կը փորձէ բռնել
թ...ն :

... Ոչ մէկ ասարակոյս, որ անխու-
սափելիօրէն մեր ճամբուն վրայ պիտի
զիմաւորէինք զիրենք, որովհետեւ կը
քալէինք դէպի Ազմի պէյի տունը, այն
մայթին վրայէն, ուրկէ խումբը պէտք էր
ստաջանար :

Կտրեցինք մայթը : Մեր ակնարկները
զարնուեցան իրարու : Հասկցանք իրար :
Հրամանը վճռական էր : Եւ մենք կրկին
մեր կէտերուն վրայ էինք :

Անցաւ խումբը մեր առջեւէն, երբ
կը կտրէր փողոցը, որ երկու հարիւր
քայլ հեռու ձեւայ Ազմիի դռնէն՝ կը
բացուէր Ռուսրոնտի վրայ : Մենք դուրս
կու գայինք, իբր կողմնակի փողոցէն ե-
կող պատահական անցորդ :

Առջեւէն կը քալէր Բուհսի պէյ, ան-
պէտ տիպ մը, որ տիկին թալաթի հետ
կը բնակէր եւ կը ծառայէր իբր հոգածու
եւ քարտուղար : Ձեւայ Ազմիի եւ Պեհա-
կատինի կիները շրջապատուած իրենց
զաւակներով՝ կը քալէին խմբովին. իսկ
տիկին թալաթ, մէջտեղը ձեւայ Ազ-
միին ու Պեհակատինին, տաք-տաք եւ ու-
րախ խօսակցութեամբ կը հետեւէին
խումբին :

Խումբը հասաւ դուռը :
Մենք՝ անոնց կռնակը :
Տիկին թալաթը դէպի առաջ հրել

Ատրճանակիս փողը կուրծքին՝ ըն-
կրթել տուաւ զինքը : Նորէն քայլ մը եւ
բռնելու ճիգ մը : կրկին փորձ եւ կրկին
սպառնալիք, մինչեւ որ սաստանալի ճեղու-
նութեամբ թ... արդէն ցատկած էր :

Գնդակ մը ելեկտրական լոյսի լամ-
բարին, որ սակայն վրիպեցաւ : Բայց
մենք արդէն Լուսովիզտրասէի վրայ ենք,
երբ ուշ մնացող քանի մը անցորդներ դեռ
չեն սթափած սնահկակին քարացնող նե-
րարկումէն :

Իսկ երբ վիզուկներն ու օդնութեան
աղաղակները կը սթափեցնէին քարացած
անցորդներն ու կը բացուէին պատու-
հանները, մենք արդէն դարձած էինք փո-
ղոցները, ուր այլեւս չէին հասներ լա-
ցերն ու ճիւղերը :

Գերլինի փողոցները անսովոր ոչինչ
ունէին, երբ թալաթին գիտ կը սանէր դէ-
պի Ռանաէր-Դէն-Լինդէն եւ ուրիշ թաք-
սի մը ետ՝ դէպի իմ սենեակը :

Այնքան թեթեւ կը զգայի, կարծես
լեռ մը ինկած էր կուրծքիս վրայէն :

Վստահ էի գնդակիս մահացութեան
մասին :

Հատուցուած էր ուրաք Հայ Մեռե-
լոցին :

ԱՐԱՄ ԵՐԿԻՐԵԱՆ

ՍԱԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ԱՎԱԲԵԿՈՒՄԸ

... Տանկարծ, վերէն լուսեցաւ կառ-
քի մը դորդիւնը: Մէկէն մարմնէս ան-
ծանօթ սարսուռ մը անցաւ, երբ տեսայ
հսկայ ձիերը, որոնց բաշերը հովէն կ'ա-
լեծփէին: Կառքին մէջն էր Սաիտ Հալիմ
փաշան՝ իր թիկնապահին հետ: Փողոցին
միւս ծայրը նայեցայ. Մ. դեռ հասած
չէր: Վայրկենապէս «ցոնեսութիւն» ըսի
Հեյնեային, պատուիրեցի, որ շուտ ներս
մտնէ, քանի որ «շայք» կու գար...

Անմիջապէս ֆալցեցի միւս մայրը,
արդէսգի լաւագոյն դիրքով մը անարե-
կույն կատարեմ. բայց քանի մը ակըն-
թարթ ուշացած ըլլալուս, քիչ մնաց ձիե-
րու տակ մնայի. ձեռքս վերցուցի,
բռունցքս ցցած. ձիերը խրոչեցան եւ
ծառայեցան: Այդ իրարանցումին մէջ, տ-
րագ ուսումով մը անցայ եւ ցատկեցի
կառքին վրայ, կռիւնով ոտնատնդիւն:
Մէկ ձեռքով բռնեցի կառքին յեմարանը,
քիչ մը երեւցի. բայց հաւասարակշռու-
թիւնս կրցայ պահել: Մինչ թիկնապահը
կառապանին կը նայէր աւ բաներ մը կ'ը-
սէր, երեւի հասկնալու համար ձիերուն
խրոչիլը, Սաիտ Հալիմ փաշային աչքերը
հանդիպեցան աչքերուս: «Նքէն», բաւ-
թիկնապահին: Այս եղաւ Սաւարազա-
մին վերջին բառը: Աչքերը սարսփով լե-
ցուն էին, երբ ատրճանակիս փողը ուղ-
ղեցի աջ ֆունքին եւ կրակեցի: Նրկրորդ
փամփուշտի մը հարկ չմնաց: Խապտու
ժայն մը եւ փաշան նստած տեղէն տապա-
լեցաւ կառքին մէջ, գլուխը իմ կողմս,
գրեթէ ուռեհուս տակ: Կառքը դեռ
կ'արշաւէր: Թէվֆիք Ազմին, առաջին շը-
փաթէն սքափած, ատրճանակ մը հանեց
ու կը պատրաստուէր կրակել, երբ ատրը-
նանակիս փողը անոր ալ հսկտին ուղղե-
լով՝ գոռացի թուրքերէնով.

— Ա՛թ աշաղը, կեպերթերերը՞ (նե-
տէ՛ վար, կը ստակեցնեմ):



Հնազանդեաւ եւ ատրճանակը կառ-
քէն դուռն նետեց, անարեկ դէմքով: Ա-
տրճանակիս կորովը այս անգամ սկսայ
հարուածել կառապանին կոնակին, պա-
ռալով, իտալերէն. *մարեթա, մարեթա*
(կեցի՛ր, կեցի՛ր): Կեղծ կառապանը վա-
խէն կը դողար եւ յուսահատական ճիչե-
րով զիս վկայութեան կը կանչէր, ըսել
ուզելով: — Տե՛ս, կեցնել կ'ուզեմ, բայց
ձիերը չեմ կեցար:

Կր վերջիչեմ տակաին. տարօրինակ
ու անհատատի տեսարան մըն էր: Ձիե-
րուն խելակորոյս վագրը, փաշային կախ
ինկած գլուխը, որ կը ճօճէր կառքէն
դուրս, սարսփահար թիկնապահը, որ
ձեռքերը վեր՝ հստած կը մնար մամի
պէս: Խուճապահար կառապանը եւ ես,
մէկ ոտնս կռիւնով տեղին վրայ, եւ՝
միւսը ներս, ու ատրճանակը՝ ձեռքս:
Ուժգին հովէն վերարկուս կը ծածանէր
կոնակիս վրայ, հսկայ թռչունի մը ձեւ
տալով ինձի: Այս պատկերը, որ կ'աւ-
բողջացնէր դէմքիս իջած սեւ գլխարկը,
անցորդներէն ռմանց երեւակայութիւնը
զրգոած էր եւ հետագային ոտիկանա-
կան հարցաքննութեան ընթացքին, անի-
տուած էր անոնց ըսելու, թէ սպաննողը
ուրուական մըն էր — *Փանթոմա*:

ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱՅԵԱՆ

Ա Շ Ո Տ Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՔԱՂԱՅՐ
ԷՆՉԷՐ
ՃԵՄԱԼ

Թալաթը եւ ԷնՉԷր, երկուսն ալ իրենց արժանի պատիժը ստացան, բնույթով յափազանց մեղմ: Առաջինը Պետրոսի մէջ եայ ուսանողի մը գնդակով 1921, միւսը առասպալան գրեւորի մը փամփուռուով:

Պետրոսը կիլպարակի

Մարդակեր զաղաններուն ստատական պատմութիւնները գրեթէ բոլորին ծանօթ է այսօր: Հայ մարդը իր տրամադրութեան տակ ունի հատորի անցած Քեչիբեանի, Երկանեանի, Շիրակեանի ու Քորյաբեանի յուշերը, ուր ամենայն ծանրամասնութեամբ արձանագրուած են գիտաւոր դասնապետներէն Քալաթի, Պէտրոսի Եւզեբի, Ճեմալ Աղմի, Սահա Նալիմի եւ Ջրանչի Երազիմի գրքին վարկեանները:

Անարեկիչներուն զործակից կամ ժամանակակից անձներուն կողմէ զրուցեալ նաեւ Ճեմալի շանթահարման պատմութիւնը, որ ծանօթ է համարեալ իր բոլոր ծայրերով:

Մանրամասնօրէն ըն արձանագրուած ու տարտած է միայն Մեծ Եղեռնը յղացող ու զործադրող հրէշներէն երկրորդը նկատուած ԷնՉԷրի ստատական պատմութիւնը թէ՛ Հայ ընթերցողին մաշին եւ թէ՛ մեր պատմութեան քաջատեղեակ օտար մտաւորականներուն ժառ, ինչպէս ցոյց կու տայ կիլպարակիի գերոյնչեալ պարբերութիւնը:

Արասասանանի մտաւորականներէն Արտա Արծրունի, որ Ճեմալի թէ ԷնՉԷրի ստատական օրերուն Հայաստան կը գտնուէր եւ ժողովն հետեւած է անոնց աշարակման զործողութիւններուն պատմութեան, հետադարձ կ'ընթացն անմոտաբար է իր ծանօթութիւնները, որոնց երկրորդ մասը կը ներկայացնէ առանձին շանթահարման ժողովը: Արտա Արծրունիի զրոյթներէն ետք, մեր յաջորդ թիւով պիտի տանք նաեւ Հայրենի մտաւորական Ասատրեանի մէկ յարուածին ԷնՉԷրի ոչնչացման վերաբերող բաժինը, որովհետք վերջապէս փորձով մուշը եւ աւելի որոգ տարածուի պատմական ճշմարտութիւնը:

Թալաթ, Ճեմալ եւ ԷնՉԷր փաշտանները եղան Մահմանադրական թուրքիան կառավարող եռապետութիւնը:

Երկը Երազիմի, որոնք հանդիսացան ղլիսաւոր պատասխանատուները Ապրիլեան Մեծ Եղեռնին:

Սողոմոն Քեչիբեանի վրիժառու բազուկը Պետրոսի մէջ պետին տապալից ներքին զործոց նախարար Թալաթի:

Պատմութիւնը ծանօթ է բոլորին:

Սակայն քիչերուն ծանօթ է, թէ ի՞նչ պարագաներու տակ իրենց արժանի պատիժը կրեցին Ճեմալ եւ ԷնՉԷր փաշաները:

Ահաւասիկ այդ երկուքին ստատական համառօտ պատմութիւնը:

**

1917 Հոկտեմբեր 25ին, երբ բուլշեւիկները յաղթանակեցին եւ տիրացան իշխանութեան, նոր հունի մէջ մտաւ Ռուսիոյ արեւելեան քաղաքականութիւնը: Ռուսաստան, որ նախընթաց երկու տարիներուն ընթացքին եղած էր թուրքերուն մղձաւանջը, 1917ին ետք Հանդիսացաւ անոնց փրկարար հրեշտակը:

Պարտուած թուրքիոյ վարիչ զէմքերը փախան հայտերտկան Գերմանիա, ուրիչ սերտ յարտերութիւններ Հաստատեցին Քրեմլինի Հետ: Պերլին-Մոսկուա ջուրի ճամբայ դարձու աւատապետական թուրքիոյ փաշաներու եւ պրոյկտարիտար ներկայացնող բոլշեւիկեան իշխանութեան միջեւ:

Ճեմալ եւ Էնփէր ասանձին ետանդով մը էր պրծակցէին Լենինի կոռաւարութեան Հետ՝ ի նպատ քեմալական շարժման:

Բոլշեւիկեան կոռաւարութիւնը զէմք, պարէն եւ ոսկի կը Հայթալթէր Քեմալին, իսկ Ճեմալ, Էնփէր եւ այլ փաշաներ կ'օժանդակէին Մոսկուային՝ տարածելու իր իշխանութիւնը մահմետական երկիրներու վրայ: Ազրպէյճանի խաղաղ խորհրդայնացումը (1920 Ապրիլին) Ռուսիա կը պարտի թուրք փաշաներուն: Քրեմլին փորձեց օգտագործել Էնփէրը, զսպելու Համար անդրկասպեան երկիրներու մահմետականները, որոնք ապշտամբական դրօշ էին պարզած խորհրդային իշխանութեան զէմ:

Հ. Յ. Դաշնակցութեան Ծրգ Ընդհ. Ժողովին մէջ (Երեւան, 1919), կազմուած էր ցանկը իթթիհատական այն պարազլուներուն, որոնք զլիաւոր դերակատարները եղած էին Ապրիլեան Եղեռնին: Այդ ցանկը յղուած էր կուսակցական բոյր մարմիններուն, որոնք պարտաւոր էին ահարեկուծի ենթարկել Հոն յիշատակուած անձերէն ուե՛՛ մէկը, եթէ գտնուէր իրենց շրջանին մէջ:

1922 Յուլիին, թուրքիոյ նախկին ծովային նախարար Ճեմալ փաշա կը դանուէր Թիֆլիս, ընկերակցութեամբ իր երկու ճամհարցիներուն:

Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի կեդրոնական կոմիտէն, տեղեկանալով Ճեմալի ներկայութեան մասին, անյապաղ գործի կ'անցնի եւ կը յանձնարարէ իր կազմի անդամներէն Տիգրան Աւետիսեանին, որ կազմակերպէ Ճեմալի ահարեկուծը: Այն ատեն Տիգրան Աւետիսեան



ՃԵՄԱԼ ՓԱՇԱ

35 տարեկան երիտասարդ իրաւաբան մըն էր, որ 1919-20 թուականներուն եղած էր Վրաստանի երեսփոխանական Ժողովի անդամ: Տիգրանը կը դիմէ Ստեփան Օսպիկեանին եւ երկուքը միասին կը ձեռնարկեն ահարեկման գործին:

Ստ. Օսպիկեան շուրջ 40 տարեկան էին Հայդուկ մըն էր, որ Հայաստանի Հանրապետութեան օրերուն գորավար Սեպուհի բրիկատայի Հեծեալ Հարիւրակի պետն էր: Ըլլալով խոտորջուրցի՝ Ստեփան մեծ հեղինակութիւն կը վայելէր իր Հայրենակիցներուն մօտ, որոնք ցրուած կ'ապրէին Կովկասի եւ Հարաւային Ռուսիոյ մէջ, մեծ մասամբ Հացագործ:

Մտ. Օսպիկեան իբրեւ ահարեկիչներ կ'ընտրէ խոտորջուրցի երկու երիտասարդներ՝ Արասէս Գէորգեանը եւ Պետրոս Տէր Պօղոսեանը:

Արտաշէս Գէորգեան յաղթանգամ, ահուելի ուժի տէր երիտասարդ մըն էր, որ եղած էր կամաւոր՝ Անդրանիկի բանակին մէջ: Թիֆլիսի մէջ ան կը գրաղէր Հացագործութեամբ:

Պետրոս Տէր Պօղոսեան միջաւա-

սակ, նիւարակազմ, արագաչարժ ու փառլուռն երկտասարդ մըն էր, հաղիւ 25 տարեկան:

Երբ ուսական բանակը գրաւեց Տըրապիզոնի նահանգը, Ռուսիայէն խուժը մը խոտորջուրցիներ վերադարձան իրենց հայրենի գիւղը, իսկ երբ բուլեւիկեան կառավարութեան հրահանգով սուսեքը լքեցին թուրքերէն վերադարձուած հայկական հողամասերը, թրքական բանակը պաշարեց Խոտորջուրը եւ բուռ մը հայեր հարիւր օր դիմադրեցին հինգ հազար թուրք զինուորներու դրոհներուն:

Պետրոս ինքնապաշտպանութեան այդ մարտերուն ղեկավարներէն մէկն էր:

Ապառելով փամփուշտն ու պարէնը՝ ողջ մնացած հերոսները կը բռնեն նահանջի ճամբան: Պոստոսի լեռներուն մէջ, կիսամեռ եւ հիւժած, կը ձերբազատուին ու կը նետուին բանտ: Զինադադարին՝ ազատ կ'արձակուին եւ Պետրոս Տէր Պողոսեան կ'անցնի Ռուսաստան:



Թիֆլիսի մէջ, Արտաշէս Գէորգեան եւ Պետրոս Տէր Պողոսեան օրեր անդադար կը հետեւին ձեմալի շարժումներուն, կը հետապնդեն անոր բարձր քայլերը եւ, Յուլիս 22ին՝ կը կատարուի ահաբեկումը:

Արտաշէս եւ Պետրոս Չեկայէն ոչ հեռու կը գնդակահարեն ձեմալը եւ անոր երկու համհարզները ու կ'անյայտանան, անցնելով Կուր գետի հակառակ կողմը:

Այդ առիթով, Չեկայի կողմէ կը ձերբակալուին Կեդրոնական Կոմիտէի կազմը եւ շուրջ 800 Գաշնակցականներ, որոնց մէջ կը գտնուէր նաեւ Արտաշէսի հայրը: Ահաբեկիչները եւ ահտրեկումը կազմակերպած Տիգրան Աւետիսեանն ու Ստեփան Ծաղիկեանը խոյս կու տան Չեկայի ճանկերէն եւ կը մնան Կուրսը: Պետրոս կ'անցնի Ռուսաստան, իսկ Տիգրան եւ Ստեփան զաղանօրէն կ'այսրին Թիֆլիսի մէջ:

Կասկած չկայ, որ եթէ Չեկան դիտարար ահաբեկիչներուն անունները եւ զա-

նոնք ձեռք անցնէր, երկուքն ալ առանց զատ ու դատաստանի իսկոյն կը գնդակահարուէին:



Պուխարայի էմիրութիւնը կը գտնուէր Միջին Ասիոյ մէջ, Կասպից ծովէն հիւսիս արեւելք, որ եղած է օրրանը սելճուկ եւ մոնղոլ վայրագ ցեղերու:

1917ի յեղափոխութենէն ետք, Ռուսիոյ հպատակ շատ մը ժողովուրդներ ինքնիշխան պետութիւններ դարձան: Սակայն, քաղաքացիական կռիւններէն յաղթական ելլելով՝ բուլեւիկները սկսան հաւաքել ուսական հողերը եւ մէկիկ-մէկիկ գրաւել անկախ հռչակուած այդ երկիրները:

Կարմիր բանակը գրաւեց նաեւ Պուխարայի էմիրութիւնը:

Էմիրը փախաւ Աֆղանիստան եւ, Քապուլ հաստատուելով՝ կազմակերպեց դիւնական պայքար մը ընդդէմ խորհրդային իշխանութեան: Ապստամբները կը կոչուէին պասմաղիներ: Անոնց դէմ պայքարելու համար՝ սովետները կազմեցին յատուկ զօրապունդ մը, հրամանատարութեամբ հայազգի գնդապետ Յակոբ Մելքումեանի:

Մոսկուա գիտէր, որ էնվէր մեծ հեղինակութիւն կը վայելէր մահմետական աշխարհին մէջ եւ ծրագրեց օպտագործել այդ հեղինակութիւնը, զսպելու համար բարձր պասմաղիները:

Բաքուի մէջ կազմակերպուած Արեւելեան ժողովուրդներու համագումարէն ետք (1920 Մեպտեմբեր), Քրեմլին էնվէր փաշան կ'ուղարկէ Պուխարա, համոզելու համար էմիրը, որ վերջ տայ ապստամբութեան եւ հպատակի խորհրդային իշխանութեան: Էնվէր սիրով յանձն կ'առնէ միջնորդի դերը եւ կը մեկնի Պուխարա, սակայն որոճալով տարբեր ծրագիրներ:

Տեղ հասնելով, էնվէր փոխանակ կատարելու ստանձնած առաքելութիւնը, կ'անցնի էմիրի կողմը եւ անձամբ կը գլխաւորէ հակախորհրդային պայքարը: Կը կազմակերպէ զօրաւոր բանակ մը եւ

երեք տարի շարունակ կը հարուածէ կարմիր զօրամասերը, որոնք անձանօթ էին անզրկասպեան տափաստաններուն: Էնփէրի դէմ կոռուելու հրամանատար կը նշանակուի գնդապետ Յակոբ Մելքումեան, որուն զօրագունդին մէջ կը գրանդէին շատ մը հայ զինուորներ:

Այդ օրերուն Պուխարա կը գտնուէր նաեւ Աղաբեկեան անունով հայ շեկիստ մը, որուն գնդապետ Մելքումեան կը յանձնարարէ գտնել Էնփէրի հետքը: Իրրեւ թաթար շրջուն մանրավաճառ ծրարաւած՝ Աղաբեկեան կը գտնէ Էնփէրի բանակատեղին եւ լուր կու տայ հայ գնդապետին: Գիշերը, Մելքումեան իր զօրագունդը կը շարժէ առաջ եւ կը շրջապատէ այն դիւղը, ուր կը գտնուէր Էնփէր, իր սպայակոյտին հետ: Կը պատրաստուէր Քապուլ մեկնել՝ հանդիպելու համար էմիրին:

Մեկնելէ առաջ, Էնփէր եւ իր շքախումբը ազօթելու համար մզկիթ կը մտնեն: Երբ դուրս կու գան մզկիթէն, Մելքումեան կը հրամայէ իր գնդաջիրակիրներուն կրակել: Էնփէր եւ իր ընկերակիցները աննշագած գետին կը փրուին:

Հայու մը վրիժառու բազուկը վերջ կը գնէ այս արկածախնդիրին կեանքին, որ կ'երազէր Աֆղանիստանէն մինչեւ թուրքիա թուրանական պետութիւն մը հիմնել ու հագնել խալիֆայի պատմունճանը:

24 Մարտ 1975
Պէյրուք



Էնփէր ՓԱՇԱ

••

Արգար է, որ Սողոմոն Քեհլիբեանի, Արամ Երկանեանի, Արշաւիր Շիրակեանի՝ եւ Միսաք Քորլաքեանի անուններուն ընդ արձանագրուին ու միշտ յիշատակուին նաեւ անունները Արտաշէս Գեորգեանի, Պետրոս Տէր Պողոսեանի եւ զընդապետ Յակոբ Մելքումեանի:

ԱՇՈՏ ԱՐՄԻՈՒՆԻ



Հայ աշխատանքային ֆազաֆական ու մտաւորական անկախութեան, մեր արիւնոտ ազատագրութեան համարուն վրայ ինկած մեծ թէ փոքր բոլոր զինուորներուն ու հայ լեզուին աւանդութիւնը իրենց սրտին խորը կրող մեր բոլոր մեծ թէ պզտիկ, բայց հաւատարապէս խնկելի մեռելներուն յիշատակին առջեւ՝ ես միշտ կեցած եմ երկիրդ ու գլխարկս վար ու հեզ սրտով: Ուսերս կ'իմայ ու գլուխս խոնարհ երախտագիտութեան մեծ քեռի մը տակ:

ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Անոնց, որ կեանքին բոլոր պարտքներէն վոնտուեցան, երբ թիթեռնիկ էին, ու զացին աւագներուն համբոյրին,

Անոնց, որ հեփիաթներու տղոց նման, ուրուականի գիշեր մը, ֆակուեցան իրենց մօրը բազուկներէն, նետուելու համար բանտին,

Անոնց, որ դուրս եկան վանդակէն ու անապատէն, դա՛րձեալ հայ ապրելու համար,

Իմ հիացումս ու անսահման համբոյրս:

Յ. ՕՇԱԿԱՆ



✽

Եղեռնի զոհերուն յիշատակին նուիրում մերկայ բացառիկը ունէր ու-
թերաբոյ բաժին մը, մեր պատմական իրաւունքներուն եւ արիւնոտ ճակատա-
գրին մասին միջագային մեծ դէմքերէ առնուած վկայութիւններ, որոնք,
տեղի անձկութեան պատճառով՝ յետագուեցան յաջորդ թիւին:

✽

Մեր յաջորդ թիւով պիտի տանք նաեւ «Հանդիպումներ» խորագրեալ
Սուրէն Սանինեանի մէկ գրութիւնը, որ նկարագրուած են ահաբեկումի են-
թարկուած ձիվանջիւրի, համ հոյսկիւի, Գալիցիոյ պարագաներուն հետ գրո-
ղին ունեցած անակնկալ հանդիպումները, ինչպէս նաեւ հանդիպումները ա-
հաբեկիչ մեր կտրիւններուն հետ:

✽

Դա՛րձեալ տեղի անձկութեան պատճառով՝ «Քաղին»ի Մայիսի համա-
րին համար խոստացուած կարգ մը գրութիւնները պիտի տանք աւելի ուշ:

✽

Լիբանանի ընկալման կեանքը խախտող ծանօթ դէպքերուն հետեւան-
քով՝ այս թիւին տպագրութիւնը ուշացաւ: Խմբագրութիւնն միզ պիտի չխնա-
յէ «Քաղին»ի հետագայ համարները հնարաւոր արագութեամբ մը փութա-
ցընելու համար ընթերցողին:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱԹ 4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك فزانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԴԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•

ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban